

Գիրքը յուսադատճեցահանվել է

"Նամահայկական էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

ՄԱՌԻ ԱՆՅԱՆՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԻ ՆՅՐԿՈՒՄՆԸ ԱՐԿԵԱՆ ԸՅՅԱՅԱՌ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՐԱԾՐՈՒ
ԼՈՒՄԳՈՍՁԵՆԱՄԱՆԵԼ ԳՐԵՐ:

Ք-ՈՒՅՆ ԳՐԵՐԻ ՍՏԵՂՈՄԱՆ ՄԱՆԸՄԱՄԱՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՏԱՐԱԾՄԱՆ ԻՆՎԵՏԻՆԱՅԻՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՑՅԻՆ:

www.freebooks.do.am

ԵՆԴՐՈՒՄԱՆ ԵՎՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿՈՑՅԻՆ:
ՏՆՎԱԿՈՒՄ ԵՎՔ ՀԱՇՎԻ ԸՆԹՐՏՈՒՄՔՆԻՆ:



ԳՐԵՐ ՄԻՔ freebooks@yambler.ru

אֱלֹהֵינוּ

יְהוָה יֵחַד
וְיֵחַד יֵחַד


וְיֵחַד יֵחַד

וְיֵחַד יֵחַד
וְיֵחַד יֵחַד

ԱՏԵՇԱԼ

ԱՌՁԱՄՏԻ

ԿՅԱՆՔԸ



ՊՈՐԱ

ԿՊՄԸ

ԳՄԴ 84.4 ֆր

Ս 883

Ֆրանսերենից թարգմանեց
ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

Ստենդալ

Ս 883 Մոցարտի կյանքը և շորս նուվել: (Ֆրանս. թարգմ. Ն. Վարդանյանը.— Եր.: Սովետ. գրող, 1982.— 176 էջ:

Գրքում զետեղված են Ստենդալի մի շարք նովելները՝ «Մոցարտի կյանքը», «Վանինա Վանինի», «Մինա դը Վանգել», «Սրնդուկը և ոգին», «Էռնեստին կամ սիրո ծագումը»: Այս նովելները հայ ընթերցողին ներկայացվում են առաջին անգամ:

4703000000 (770)
Ս 705(01)82 82 «Տ»

ԳՄԴ 84.4 ֆր
4 (ֆր)

ՄՈՑՍՐՏԻ
ԿՅՍՆՔԸ

ՆԱՄԱԿ

Վենետիկ, 21 հուլիսի, 1814 թ.

Սիրելի բարեկամ, դուք Մոցարտի կյանքի վերաբերյալ փաստեր եք ցանկանում: Ես հարցում արեցի՝ իմանալու այդ հրաշալի մարդու մասին մինչ այժմ եղած տեղեկություններից ամենից ավելի արժեք ներկայացնողները, և, այնուհետև, համբերությամբ զինված, սկսեցի ձեզ համար թարգմանել նրա կենսագրությունը, որ ստացա պարոն Շլիսթեգրոլից: Իմ կարծիքով անկեղծ է զրված: Ձեզ եմ ներկայացնում այն. ներեցե՛ք, որ արտախուսա պարզունակ է թվում:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Մոցարտի հայրը շատ մեծ ազդեցություն ունեցավ որդու ոչ սովորական ճակատագրի վրա. նա դարձացրեց դավակի ընդունակությունները, գուցեև նպաստեց դրանց դրսևորմանը: Ուրեմն, նախ և առաջ, անհրաժեշտ է մի քանի խոսք նրա մասին:

Լեոպոլդ Մոցարտ հայրը Աուգսբուրգցի կազմարարի որդի էր: Ուսում ստացավ Զալցբուրգում և 1745 թվականին ընդունվեց տեղի իշխան-արքեպիսկոպոսի երաժշտախումբը: 1762 թվականին դարձավ իշխանական մատուռի երաժշտապետի օգնական: Քանի որ ամբողջ ժամանակը չէր սպառում աշխատանքի մեջ, քաղաքում երաժշտական կոմպոզիցիայի և ջութակի դասեր էլ էր տալիս: Նույնիսկ հրատարակեց «Versuch» կամ «Ջութակի հիմնավոր դասավանդման փորձ» խորագրով մի աշխատություն, որը մեծ հաջողություն ունեցավ: Ամուսնացած էր Աննա-Մարիա Պերտլի հետ: Ուշագրավ է, որ երաժշտական աշխարհին այդքան ամբողջական ու կատարյալ արվեստագետին կյանք պարզևոզ այս դույզը Զալցբուրգում հայտնի էր իր հազվագյուտ զեղեցկությամբ:

Այդ միությունից ծնված յոթ երեխաներից միայն երկուսն ապրեցին. դուստրը՝ Մարի-Աննան, և որդին, որի մասին խոսելու ենք:

Ժան-Քրիզոսթոմ-Վոլֆգանգ-Թեոֆիլ Մոցարտը ծնվել է 1756 թվականի հունվարի 27-ին, Զալցբուրգում: Մի քանի տարի անց հայր Մոցարտը ընդհատում է դասավանդումները և որոշում՝ իշխանի մոտ պարտականությունները կատա-

րելուց հետո, մնացած ժամանակը հատկացնել ղավակների երաժշտական կրթությանը: Դուստրը, որ Վուֆզանգից մի քանի տարով էր մեծ, շատ օգուտ քաղեց այդ դասերից, իսկ հետո, ընտանիքի հետ կատարած ճանապարհորդությունների ժամանակ, կիսեց այն ընդհանուր հիացմունքը, որին արժանանում էր եղբայրը մեծ տաղանդի շնորհիվ: Եվ, ի վերջո, ամուսնացավ Զալցբուրգի իշխան-արքեպիսկոպոսի խորհրդատուներից մեկի հետ, տաղանդը գրսևորելուց առավել նախընտրելով ընտանեկան երջանկությունը:

Փոքրիկ Մոցարտը երեք տարեկան էր, երբ հայրն սկսեց յոթնամյա քրոջը կլավեսինի դասեր տալ: Մոցարտն այդ ժամանակից իսկ գրսևորեց երաժշտական զարմանալի ունակություններ: Դաշնամուրի վրա եռահնչյուններ փնտրելը նրան պերագույն հաճույք էր պատճառում, և ուրախությունը հասնում էր բարձրակետին, երբ գտնում էր ներդաշնակակորդը:

Ուզում եմ որոշ մանրամասների մեջ խորանալ, որոնք կարծում եմ կհետաքրքրեն ընթերցողին:

Երբ լրացավ Մոցարտի յոթ տարին, հայրը, գրեթե որպես խաղ, սկսեց սովորեցնել նրան մի քանի մենուետ և երաժշտական պիես: Այս զբաղմունքը հավասարապես հաճելի էր և՛ ուսուցչին, և՛ աշակերտին: Մեկ մենուետ սովորելու համար Մոցարտին հարկավոր էր կես ժամ, իսկ ավելի ծավալուն պիեսի համար՝ համարյա կրկնակին: Անմիջապես հետո նա նվագում էր դրանք ամենայն հստակությամբ և ճշգրիտ շափերով: Դեռ մեկ տարի էլ չէր անցել, նա սչնպիսի բարձր առաջադիմություն ունեցավ, որ հինգ տարեկանում արդեն երաժշտական հատվածներ էր ստեղծում և նվագում էր հոր համար: Վերջինս, որդու աճող տաղանդը խրախուսելու նպատակով, նույնպես ստեղծագործում էր նախքան երաժշտությանը ծանոթանալը, նրա հրապույրը ճաշակելը, փոքրիկ Մոցարտը շատ էր սիրում զբաղվել իր տարիքին հատուկ մանկական խաղերով և այնքան էր սարվում, որ մոռանում էր հաց ուտել: Ամեն առիթով գրսևորում էր ղզայուն հոգի և խանդաղատանք: Շատ հաճախ, մինչև իսկ օրական տասն անգամ, նա իրեն շրջապատող մարդկանց պիմում էր հետևյալ հարցով.

— Միրո՞ւմ եք ինձ:

Եթե կատակով պատասխանեին՝ ոչ, աչքերից անմիջապես արցունքներ էին հոսում: Հենց որ ըմբռնեց երաժշտության ոգին, մարեց սերը խաղերի և մանկական զվարճությունների հանդեպ, կամ էլ դրանք պետք է զուգակցվեին երաժշտությամբ, որ հաճույք ստանար: Ընտանիքի բարեկամներից մեկը հաճախ էր նրա հետ նման խաղեր կազմակերպում. երբեմն հանդիսավոր պայմաններում մի սենյակից մյուսն էին տեղափոխում խաղալիքներ, և երբ նրանցից մեկի ձեռքին այլևս ոչինչ չէր մնում, որևէ քայլերգ էր երգում, կամ ջութակ նվագում:

Մի քանի ամսում վոլֆգանգը այնպիսի ուժգնությամբ կապվեց սովորական դասերին, որ ամեն ինչ զոհաբերեց, մինչև իսկ՝ երաժշտությունը: Երբ հաշվել սովորեց, ամենուրեք հայտնվեցին կավճի հետքեր, թվանշաններով էին լցվել աթոռները, սեղանները, պատերը, նույնիսկ հատակը: Ունենալով սուր միտք, նա հեշտությամբ էր կապվում դասավանդող նոր առարկաներին: Սակայն երաժշտությանը դառնալուց հետո նախապատվությունը նորից տվեց դրան: Այնպիսի հսկայական քայլերով առաջ գնաց, որ հայրը, միշտ լինելով նրա կողքին, յուրաքանչյուր քայլին հետևելով հանդերձ, դա հրաշք համարեց: Ժամանակակիցներից մեկը պատմում է հետևյալ դեպքը.

Մի օր հայր Մոցարտը ընկերոջ հետ եկեղեցուց վերադառնալով տուն, որդուն գտնում է խորասուզված ինչ-որ բան գրելիս:

— Ի՞նչ ես անում, բարեկամ,— հարցնում է նրան:

— Կլավեսինի համար կոնցերտ եմ գրում, առաջին մասը համարյա վերջացրել եմ:

— Ցույց տուր տեսնեմ այդ հետաքրքիր խզբզոցը:

— Ոչ, խնդրում եմ, մի վերցրու, դեռ չեմ ավարտել:

Սակայն հայրը վերցնում է թուղթը և ցույց տալիս ընկերոջը. նոտաների խզբզանք էր, թանաքի բծերն այնքան շատ էին, որ անկարելի էր որևէ բան վերծանել: Ընկերներն սկզբում լիաթոք ծիծաղում են այս խազմզոցի վրա, բայց քիչ անց, երբ հայր Մոցարտն ավելի ուշադիր է նայում թղթին, աչքերը երկար ժամանակ չի կարողանում կտրել նոտանե-

րից, և ուրախութեան ու հրճւանքի արցունքներն սկսում են հոսել աչքերից:

— Նայեցեր, բարեկամ,— հուզւած ու ժպտալով դիմում է բնկերոջը,— այստեղ ամեն ինչ շարադրւած է կանոնի համաձայն, ցավալի է, որ նվագել չենք կարող, քանի որ բարդ է շարադրանքը, ոչ ոք չի կարող կատարել այս դորձը:

— Չէ որ սա կոնցերտ է,— միջամտում է փոքրիկ Մոցարտը,— մինչև կատարելը պետք է շատ լավ ուսումնասիրել: Տեսեք, այսպես պետք է նվագել:

Անմիջապես փորձում է նվագել, բայց հազիվ միայն կարողանում է արտահայտել իր մտահղացումը: Դա այն շրջանն էր, երբ փոքրիկ Մոցարտը մտածում էր, թե կոնցերտ նվագելն ու հրաշք գործելը նույն բանն է: Եվ հետո, վերոհիշյալ ստեղծագործութունը նոտաների կույտ էր, որոնք ճշտութեամբ տեղադրւած էին, բայց այնպիսի բարդութուն էին ներկայացնում իրենցից, որ վիրտուոզ երաժիշտն անգամ չէր կարողանա նվագել:

Փոքրիկ Մոցարտն այնքան էր զարմացնում հորը, որ վերջինիս մոտ միտք ծագեց ճանապարհորդել ու կիսել հիացմունքը գերմանական և օտարերկրյա արքունիքներում: Այդ երկրում նման միտք փայփայելը ամենևին էլ տարօրինակ չէր: Այսպիսով, հենց որ Վոլֆգանգը բոլորեց կյանքի վեց տարին, Մոցարտ ընտանիքը ճանապարհ ընկավ դեպի Մյունխեն: Արքունիքում իշխանը լսեց երկու երեխաներին և անսահման գովեստների արժանացրեց նրանց: Առաջին փորձը պսակվեց հաջողութեամբ: Զալցբուրգ վերադառնալուց հետո փոքրիկ վիրտուոզները, ջերմ ընդունելութունից ոգևորւած, կրկնապատկեցին ջանքերը և այնպիսի վարպետութեամբ տիրապետեցին դաշնամուրի գաղտնիքներին, որ շնայած դեռ շատ փոքր էին, բայց կարող էին հռչակավոր համարվել: 1762 թվականի աշնանը նրանց ընտանիքը մեկնեց Վիեննա, և երեխաները արքայական պալատում համերգ տվին:

Ֆրանց առաջին կայսրը կատակով դիմեց մանուկ Մոցարտին.

— Բոլոր մատներով նվագելն այնքան էլ դժվար չէ, այլ քան է մեկ մատով նվագելը, հետո՝ կտորով ծածկած կլա-

վեսինի վրա. այ դա իրոք արժանի կլիներ հիացմունքի: Նույնիսկ շնչին դարմանք շարտահայտելով այս տարօրինակ առաջարկության հանդեպ, երեխան մեկ մատով անմիջապես սկսեց նվագել, որքան հնարավոր էր մաքուր ու ճշգրիտ: Այնուհետև պահանջեց ծածկել կլավեսինի ստեղները քողով և նույն ոճով շարունակեց նվագել, կարծես երկար տարիների փորձ ուներ:

Ամենավաղ հասակից օժտված լինելով իսկական արվեստագետի արժանապատվության զգացումով, Մոցարտը երբեք չէր գոռոզանում մեծ մարդկանց գովեստից: Աննշան ու անարժեք դորժեր էր կատարում նրանց ներկայությամբ, ովքեր երաժշտություն չէին հասկանում: Ընդհակառակը, ամբողջ հոգով, սղջ ուշադրությունը կենտրոնացնելով էր նվագում, երբ դանվում էր բանիմաց մարդկանց շրջապատում: Հաճախ հայրն ստիպված էր հնարքներ բանեցնել, Մոցարտի մոտ բարձրաստիճան սինյորներին ներկայացնելով որպես իսկական երաժշտասերների: Երբ մեկ անգամ վեցամյա Մոցարտը Ֆրանց կայսեր համար կլավեսին էր նվագելու, դիմեց նրան այսպիսի խոսքերով.

— Պարոն Վագենզայլն այստեղ չէ՞: Պետք է կանչել նրան: Նա երաժշտությունից գաղափար ունի:

Կայսրը կանչել տվեց Վագենզայլին և կլավեսինի մոտ տեղը զիջեց նրան:

— Պարոն,— այդ ժամանակ ասաց Մոցարտը կոմպոզիտորին,— ձեր կոնցերտն եմ նվագելու, պետք է շրջեք էջերը:

Մինչ այդ Վոլֆգանգը միայն կլավեսին էր նվագել: Այդ գործիքին տիրապետելու նրա արտակարգ հմտությունը կարծես բացառում էր այն միտքը, թե նա կարող է այլ գործիք էլ նվագել: Սակայն նրա մեջ բորբոքվող հանճարի հուրը գերազանցեց մարդկային ամենահանդուգն երազանքներն անգամ: Նույնիսկ կարիք չզգացվեց սովորելու:

Ծնողների հետ Վիեննայից Զալցբուրգ վերադառնալիս նա հետը մի փոքրիկ ջութակ էր բերել: Նվիրել էին մայրաքաղաքում, սլարդապես խաղալու համար: Մի քանի օր հետո նրբաճաշակ ջութակահար Վենցլը, որ սկսել էր միաժամանակ

սանդձագործել, եկավ հայր Մոցարտի մոտ իր վեց տրիոնների վերաբերյալ նրա դիտողությունները լսելու: Այդ տրիոները նա գրել էր Վիեննա կատարած ճանապարհորդության ժամանակ: Շախտները՝ արքեպիսկոպոսի նվագախմբի փողահարը, որի հետ ամենից շատ էր կապված փոքրիկ Մոցարտը, այդ օրը նրանց տանն էր: Խոսքը տանք նրան:

«Հայրը,— ասում է Շախտները,— թավջութակ էր նվագում, Վենցլը՝ առաջին ջութակ, իսկ ես պետք է նվագել երկրորդ ջութակ: Փոքրիկ Մոցարտը վերջին մասը կատարելու թույլատվություն խնդրեց, բայց հայրը բարկացավ նրա մանկական պահանջի վրա, ասելով, որ ջութակի համար բավարար պատրաստվածություն չունի, չի կարող լավ նվագել: Որպին հակաճառեց, նրա կարծիքով երկրորդ ջութակ նվագելու համար սովորելու անհրաժեշտություն չկար: Պատասխանից բարկացած՝ հայրը հրամայեց հեռանալ և այլևս չխանդարել: Վոլֆգանգն այնքան ազդվեց, որ սկսեց դառնագին արտասովել: Երբ տղան փոքրիկ ջութակը ձեռքին դուրս էր գալիս սենյակից, խնդրեցի թույլ տալ նրան ինձ հետ նվագելու: Հայրը դժկամությամբ համաձայնեց:

— Դե լավ,— ասաց Վոլֆգանգին,— պարոն Շախտների հետ կնվագես, բայց պայմանով, որ համարյա չլսենք քեզ, թե չէ անմիջապես դուրս կհանեմ:

Սկսեցինք կատարել տրիոն, փոքրիկ Մոցարտը նվագում էր ինձ հետ: Կարճ ժամանակում զարմանքս աճեց, մեծացավ, երբ նկատեցի, որ զուր եմ նվագում: Անխոս նայելով հորը, որին այդ տեսարանը քաղցր արցունքներ էր պարգևում, ջութակս ցած դրի: Երեխան նույն ձևով նվագեց վեց տրիոները: Մեր կողմից շոալված գովասանքները համարձակություն ներշնչեցին նրան համոզվելու, որ կարող է առաջին ջութակ էլ նվագել: Կատակի համար թույլ տվինք, որ փորձի և չէինք կարողանում դսպել ծիծաղներս, երբ կատարում էր պիեսը. իհարկե, կատարումը միանգամայն սխալ էր, բայց՝ ինքնավստահ»:

Յուրաքանչյուր օրը իր հետ նոր ապացույցներ էր բերում Մոցարտի բնածին ընդունակությունների մասին: Նա հմտորեն կարողանում էր տարբերակել և ցույց տալ հնչյունների միջև եղած ամենանուրբ տատանումները, իսկ ալորդի մեջ

արտահայտված ամեն մի սխալ կամ կոպիտ հնչյուն տանջում էր նրան: Գուցե սա էր պատճառը, որ ամենավաղ հասակից մինչև տաաք տարեկան դառնալը անհաղթահարելի նողկանք էր զգում շեփորի հանդեպ, եթե այն երաժշտական որևէ հասվածի շէր ուղեկցում: Երբ ցույց էին տալիս այդ գործիքը, տհաճ տպավորություն էր ստանում, ինչպես այն երեխաները, որոնց հետ կատակելու համար լիցքավորված ատրճանակով նշան են բռնում: Հորը թվում էր, թե կկարողանա նրան բուժել այդ սարսափից, և մի օր, հաշվի շառնելով փոքրիկ Մոցարտի պաղատանքները, որ խնայեն իրեն, նրա ներկայությամբ հնչեցրեց շեփորը: Առաջին իսկ հրնչյունից սա զունատվեց, բնկավ հատակին և անկասկած ջղաձգումներ էլ կունենար, եթե անմիջապես շքնոճատեր հայրը:

Ջութակ նվագելու փորձեր անելիս երբեմն օգտվում էր Մոցարտ ընտանիքի վերոհիշյալ բարեկամի՝ Շախտների գործիքից: Մեծ դավասանքով էր խոսում այդ ջութակի մասին, որովհետև շատ նուրբ էր հնչում: Շախտները մի օր եկավ փոքրիկ Մոցարտի մոտ, երբ վերջինս սեփական ջութակն էր նվագում:

— Ինչպե՞ս է ձեր ջութակը, — եղավ երեխայի առաջին հարցը, որից հետո շարունակեց ֆանտազիաներ նվագել: Ի վերջո, մի քանի բույե մտածելուց հետո, ավելացրեց, — չէի՞ք կարող ձեր ջութակը այնպես լարել, ինչպես վերջին անգամն էր. իմ ջութակից կես քառորդ տոնով ցածր է:

Սկզբում ծիծաղեցին այս մանրակրկիտ ճշգրտության վրա, բայց հայր Մոցարտը, որ բազմիցս առիթ էր ունեցել քննելու որդու արտակարգ հիշողությունը տոնայնությունները որսալիս, բերել տվեց ջութակը: Ի դարմանս ներկաների, կեսքառորդ տոնով ցածր էր Վուլֆգանգի լարված ջութակից:

Չնայած երեխան ամեն օր զգում էր, որ իր տաղանդը դարմանք և հիացմունք է առաջացնում, նա ոչ համառ դարձավ, ոչ գոռոզամիտ: Տաղանդավոր լինելուց բացի ամենահաճույսկատար ու հնազանդ երեխան էր: Երբեք չէր դժգոհում հոր հրամաններից: Եթե նույնիսկ ամբողջ օրը նվագած լիներ, և հայրը դարձյալ պահանջեր, առանց դժգոհելու կշարունակեր: Մտոզների կատարած ամենաաննշան շարժումները հասկանում էր և իսկույն իրագործում նրանց ցանկություն-

ներքի նրա հնազանդությունը հասնում էր այն աստիճանի, որ առանց թույլտվության չէր վերցնի իրեն առաջարկված կոնֆեսները:

1763 թվի հուլիսին, երբ լրացավ Մոցարտի յոթ տարին, ընտանիքը որոշեց կատարել առաջին ճանապարհորդությունը Գերմանիայի սահմաններից դուրս, և այդ ժամանակից Եվրոպայով մեկ տարածվեց Մոցարտի հռչակը: Շրջագայությունն սկսեցին Մյունխենից, որտեղ փոքրիկ վիրտուոզը մեծ հասարակության ներկայությամբ կատարեց ջութակի մի կոնցերտ: Ֆանտազիան հանպատրաստից էր: Աուդսբուրգում, Մանհայմում, Ֆրանկֆուրտում, Կոբլենցում, Բրյուսելում քույր ու եղբայր համերգներ տվին լայն հասարակության համար, նվագեցին երկրի իշխանների ներկայությամբ և ամենուրեք բարձր գովասանքի արժանացան:

Նույեմբերին հասան Փարիզ և հինգ ամիս մնացին այնտեղ: Նրանց լսեցին Վերսալում: Վոլֆգանգը երգեհոն նվագեց արքայական տաճարում, դրանիկի ներկայությամբ: Փարիզում հանդես եկան երկու մեծ համերգով, և հոծ բազմությունը ամենասրտառու ընդունելությունը ցույց տվեց նրանց: Արժանացան նկարվելու պատվին. Կարմոնտելի յուզանկարներից մեկի օրինակով Մոցարտ հորը տեղավորեցին երկու երեխաների միջև: Իր առաջին երկու ստեղծագործությունները պատանի Մոցարտը գրեց և հրատարակեց հենց Փարիզում: Գրանցից մեկը նվիրեց աիկին Վիկտուարին՝ Լյուդովիկոս 15-րդի երկրորդ աղջկան, մյուսը՝ կոմսուհի Տեսսերին:

1764 թվին Մոցարտ ընտանիքը մեկնեց Անգլիա և մնաց մինչև հաջորդ տարվա կեսերը: Երեխաները նվագեցին թագավորի ներկայությամբ և, ինչպես Վերսալում, Վոլֆգանգը արքայական տաճարում երգեհոն նվագեց: Լոնդոնում երգեհոնային երաժշտությանը հարգանքի տվելի մեծ տուրք մատուցվեց, քան կլավեսինային երաժշտությանը: Մոցարտը բոլոր սիմֆոնիաները սեփական ստեղծագործություններ էին:

Իհարկե, երեխաները, հատկապես Վոլֆգանգը, չբավարարվեցին կատարելության այն աստիճանով, որը նրանց ապա-

հովում էր ամենօրյա ծափահարություններ: Անկախ այն բանից, որ անընդհատ քաղաքից քաղաք էին տեղափոխվում, նրանք աշխատում էին արտակարգ օրինապահություններ: Լոնդոնում սկսեցին երկու կլավեսինով կոնցերտներ կատարել: Վոլֆգանգը մեծ պաշտոնքով երգեց նաև գեղեցիկ արիաներ: Փարիզում և Լոնդոնում թերահավատները նրան ներկայացրին Բախի, Հենդելի և այլ վարպետների երաժշտական դժվարին ստեղծագործություններ. մի հայացք գցելուց հետո նա տեղն ու տեղը նվագեց զբանք ամենայն ճշտությամբ: Մի անգամ Անգլիայի թագավորի ներկայությամբ առաջարկված մեկ բասով կատարեց մեղեդիով հարուստ երաժշտական պիես: Մեկ ուրիշ անգամ Քրիստիան Բախը՝ թագուհու երաժրշտախմբի մահատրոն, փոքրիկ Մոցարտին տեղավորեց ծնկների արանքում և սկսեց մի քանի տակտ նվագել: Մոցարտը շարունակեց նրան, և այսպես, մեկընդմեջ, նվագեցին ամբողջական մի սոնատ այնպիսի մաքրությամբ, որ ներկաներից շատերը հնարավորություն չունենալով տեսնել նրանց, կարծում էին մեկ հոգի է կատարում սոնատը: Անգլիա կատարած համափորձության ժամանակ ութ տարեկան Վոլֆգանգը վեց սոնատ գրեց, տպագրեց Լոնդոնում և նվիրեց թագուհուն:

1765 թվի հուլիսին Մոցարտ բնտանիքը մեկնեց Կալե, այնտեղից համափորձությունը շարունակեց զեպի Ֆլամանդիա, որտեղ փոքրիկ վիրտուոզը մենաստանների, տաճարների կեղեցիկներում երգեհոն էր նվագում:

Հետագայում երեխաները մեկը մյուսի կտից ծանր հիվանդացան: Չորս ամիս տևեց մինչև որ Վոլֆգանգը առողջացավ: Ապաքինման օրերին նա վեց սոնատ գրեց դաշնամուրի համար և նվիրեց նասու-վալբուրգ իշխանուհուն: 1766 թվականի սկզբին Մոցարտ բնտանիքը մեկ ամիս մնաց Ամստերդամում, այնտեղից անցավ Հաագա՝ ներկա գտնվելու Օրանի իշխանի օժման արարողությանը: Այս հանդիսավորության առթիվ Վոլֆգանգը գրեց մի զուտ libet* բոլոր գործիքների համար, ինչպես նաև տարբեր վարիացիաներ ու մի քանի արիա նվիրեց իշխանուհուն: Սթադուգերի* ներկայությամբ բաղմիցս նվագելուց հետո զնացին Փարիզ, ուր մնացին երկու ամիս: Վերջապես, Գեր-

մանիա փերսպորձի ճանապարհին, անցան Կոննով և Շվեյցարիայով: Մյունխենում իշխանը փոքրիկ Մոցարտից երաժրչապետական մի թեմա խնդրեց, որը պետք է տեղում ստեղծեր ու գրի առներ: Առանց կլավեսինից կամ ջութակից օտարվելու, Վոլֆգանգը արքունական իշխանի ներկայությամբ կատարեց նրա խնդրանքը: Գործն ավարտելուց հետո նվագեց, զերազույն զարմանք պատճառելով և՛ իշխանին, և՛ ողջ արքունիքին: 1766 թվականի վերջին, երեք տարվա բացակայությունից հետո, Մոցարտները վերադարձան Ստրասբուրգ և մնացին այնտեղ մինչև հաջորդ տարվա աշունը: Վոլֆգանգը ավելի հանդիստ պայմաններում կրկնապատկեց ստադանդի ուժը: 1768 թվականին երեխաները Վիեննայում նվագեցին Յոզեֆ 2-րդ կայսեր համար, որը փոքրիկ Մոցարտին պատվիրեց գրել օպերա-բուֆ: Դա «Finta semplice»*-ն էր: Շատ մեծ ընդունելության արժանացավ արքունական երաժշտախմբի ղեկավարի՝ Հասսերի և Մետաստադիոյի* կողմից, բայց օպերայի շենքում շներկայացրին: Շատ անգամներ նվագախմբի ղեկավարների՝ Բոննոյի*, Հասսերի, Մետաստադիոյի, Բրադանցա դուքսի, Քաունից իշխանի ներկայությամբ հայրը ձևերի տակ ընկած պատահական ուրե՛ իտալական արիա տալիս էր որդուն, և վերջինս տեղում գրում էր երաժրչապետին՝ բոլոր գործիքների համար: Օրֆեյին եկեղեցու բացման առիթով դրեց երաժշտություն մեսսայի համար, հոգևոր երգեր և զուգանվաղ՝ շեփորի համար: Չնայած տասներկու տարեկան պատանի էր, ողջ արքունիքի ներկայությամբ անձամբ ղեկավարեց այդ հանդիսավոր երաժշտությունը:

1769 թվականին վերադարձան Զալցբուրգ: Դեկտեմբերին հայրը նրան տարավ Իտալիա: Վոլֆգանգին նշանակել էին Զալցբուրգի արքեպիսկոպոսարանի նվագախմբի ղեկավար: Դժվար չէ պատկերացնել, թե ինչ ընդունելության արժանույցով հռչակավոր երեխան Իտալիայում, նա, որ արդեն այնքան հիացմունք էր պատճառել եվրոպական մյուս երկրներում:

Միլանում նրա փոռքի հռչակման համերգասրահը դարձավ Ֆիրմիան կոմսի՝ ընդհանուր քաղաքապետի տունը: Ստանալով օպերայի լիբրետոն (օպերան պետք է ներկայացնեին 1771 թվականին, դիմակահանդեսի օրը, և Վոլֆ-

գանգը հանձնարարություն էր ստացել գրել երաժշտութունը), 1770 թվականի մարտին դուրս եկավ Միլանից: Բուլոնիայում նա հանդիպեց չափազանց մեծ ոգևորությամբ տոգորված մի երկրպագուի՝ պազրե Մարտինիին*, այն նույն Մարտինիին, որի մոտ ուսանել էր Յոմելլին*: Պազրե Մարտինիին և Բուլոնիայի երկրպագուները անզուսպ ցանկություն ունեցան տեսնելու տասներեքամյա Լեբխային, որն ամենևին չէր համապատասխանում իր տարիքին. խիստ փոքրակազմ էր, հազիվ տասը տարեկան Լեբխայի կազմվածքով: Մոցարտը դաշնամուրի վրա նվագեց ֆուգաներ Մարտինիի առաջարկած թեմաներով, առանց երկընտրելու, ամենամոտ ճշգրտությամբ: Նույն դարմանքը պատեց Ֆլորենցիայի հանդիսատեսին, երբ փոքրիկ Լեբխայի մեկ անգամ նայելով տեքստերին ամենայն ճշտությամբ ու անթերի կատարեց ֆուգաներն ու դժվարագույն թեմաներ, որոնք առաջարկել էր հանրահայտ երաժշտամուլ մարկիզ դը Լինչըվիլը: Երաժշտական կյանքում մնացել է հետաքրքիր մի պատմություն կապված Ֆլորենցիայի հետ. այս քաղաքում Մոցարտը ծանոթացավ մոտավորապես տասնչորս տարեկան Քոմաս Լինչեյ* անունով մի պատանի անգլիացու հետ: Համարյա հասակակիցներ էին: Լինչեյը Մարտինիի աշակերտն էր, արդեն հռչակված ջութակահար, գործիքի վրա նվագում էր մեծ շնորհալիությամբ ու հիացմունք պատճառող ճկունությամբ: Երեխաների մտերմությունը չափ ու սահման չէր ճանաչում: Բաժանման օրը Լինչեյը ընկերոջը նվիրեց բանաստեղծություններ, որ խնդրել էր գրել հռչակավոր բանաստեղծուհի Բորիլլային*: Մինչև քաղաքի ծայրը ուղեկցեց Վոլֆգանգի կառքը, և Լեբխաները արցունքի հեղեղ թափելով բաժանվեցին իրարից:

Զատիկի ավագ շաբաթին մասնակցելու կապակցությամբ հայր Մոցարտը և որդին մեկնեցին Հոոմ: Հասան ավագ շաբաթի Լեբխայի և իսկույն զնացին Սիքստինյան մատուռ հռչակավոր «Misereere»*-ն լսելու: Քանի որ այդ ժամանակաշրջանում պապի երաժիշտներին բանադրանքի ենթարկվելու պատժի չափով արգելված էր դուրս բերել այդ ստեղծագործության նոտաները, Վոլֆգանգը որոշեց ամբողջությամբ անդիր հիշել այն: Պանդոկ վերադառնալուն պես

զրի տոտով: Նույն ավագ ուրբաթ օրվա դիշերը, երբ դարձյալ կրկնում էին Miserere-ն, մայսնակցեց և զլխարկի մեջ պահելով ձեռագիրը, տեղն ու տեղը մի քանի ուղղում կատարեց: Այս ղվարճալի պատմությունը մեծ աղմուկ բարձրացրեց քաղաքում: Հոտմեացիները կասկածում էին. նրանք պարտադրեցին կրեխաչին համերգի ժամանակ երգել Miserere-ն, Արպյո՞ւնքը. հիացրեց բոլորին: Քրիստոֆորին, որ երգել էր Սիրստինյան մատուռում և ներկա էր համերգին, դարձացավ՝ կատարյալ հաղթանակի զնահատական տալով Մոցարտին:

Այն դժվարությունները, որ հաղթահարեց Մոցարտը, շատ տվելի մեծ էին, քան կարող է երևալ առաջին հայացքից, սակայն, աղաչում եմ, թույլ տվեք մի քանի մանրամասնություն հաղորդել Սիրստինյան մատուռի և Miserere-ի մասին:

Սովորաբար այս մատուռում երգում են երեսուներկու խմբերգիչներ, որոնց չի ձայնակցում ոչ երգեհոնը, ոչ էլ սրնկ, այլ դորժիք: Ճարտարապետական այս կառույցը կատարելության հասավ 18-րդ դարի սկզբին: Այդ ժամանակաշրջանից պապի մատուռում հոգևոր երգեր կատարողների աշխատավարձը մնացել էր նույնը, հետևաբար, նկատելիորեն քածր էր: Այնինչ, օպերան առավելություն էր ձեռք բերում, և վարպետ երգիչներին վճարում էին մինչ այդ չլաված բարձր գներով: Սիրստինյան մատուռից կամաց-կամաց հեռացան տոտյանդավոր արվեստագետները:

Miserere-ն, որ սուրբ գատիկի շաբաթվա մեջ կատարում են երկու անգամ, մեծ տպավորություն է գործում ունկնդիրների վրա: Մոտ երկու հարյուր տարի առաջ այն ստեղծել է սմն Գրեգորիո Ալեգրի, որը սերում է Անտոնիո Ալեգրիի տոհմից և հայտնի է Քորեջո անունով: Այն պահին, երբ սկսվում է երգը, առաջին իսկ հնչյուններից պապն ու կարգինալները երկրպագում են. կերոններն ու մոմերը լուսավորում են խորանի պատին Միքելանջելոյի «Վերջին դատաստանը»: Որքան առաջանում է Miserere-ի երաժշտությունը, այնքան մեկը մյուսի ետեից մարում են կերոնները: Բաղմաթիվ զրժրախտ մարդկանց դեմքերը, որ ահռելի ոգևորվածությամբ է նկարել Միքելանջելոն, վերջին մոմերի թույլ լուսավորու-

թյան տակ դառնում են ավելի ազդեցիկ: Երբ Miserere-ն մոտենում է ավարտին, երգչախմբի ղեկավարը աննշան մեղմացնում է շարժումները, երգիչները թուլացնում են ձայնի ուժգնությունը, մեղեդին կամաց-կամաց հանգում է, և մեղապարտը, հուշախոռով կանգնած վեհապանժ Աստծո առջև, երկրպագում է նրա գահը ու կարծես լռության միջոց լսվում է Աստծո դատապարտող ձայնը:

Այդ երաժշտական հատվածի վեհասքանչ ազդեցությունն է լռությունը, իմ կարծիքով, երգի կատարողակախությունն և մատուռի առանձնահատկությունն մեջ է: Պապի երգիչները ավանդաբար սովորել են որոշ ելևէջներով խիստ տպավորիչ ձգել ձայնը, որն անհնար է գրի առնել նոտաներով: Երգի կատարման արվեստով է պայմանավորված երաժշտությունն ազդեցիկությունը: Նույն մեղեդին կրկնվում է սաղմոսի բոլոր քառյակներում, սակայն համախմբված երաժշտությունը մանրամասնությունների մեջ տարբերակվում է: Այսպիսով, հեշտությամբ է բնկալվում այն և զերծ է մնում ձանձրալի լինելուց: Սիքստինյան մատուռի երգչախմբին բնորոշ է որոշ բառերի ուժգնացումը կամ թուլացումը, հետևելով խոսքի իմաստին՝ հնչյունների երկարացումն ու կարճացումը, մի քառյակն ամբողջությամբ՝ մյուսների համեմատությամբ, ավելի աշխույժ կատարելը:

Այժմ կարող ենք ասել, թե ինչումն էր կայանում Մոցարտի ճարտարությունը Miserere-ն կատարելու ժամանակ: Պատմում են, սր թագավոր Լեոպոլդ առաջինը, որը ոչ միայն երաժշտասեր էր, այլև լավ կոմպոզիտոր, իր դեսպանի միջոցով խնդրեց պապին՝ թույլ տալ Վիեննայի մայր տաճարում կատարել Ալլեգրիի Miserere-ն: Պապը շմրթեց: Սիքստինյան մատուռի տնօրենը արտագրել տվեց մի օրինակ և շտապ ուղարկեց թագավորին, որի մոտ ծառայում էին ժամանակի ամենալավ երգիչները: Որքան էլ այդ երգիչները ներշնչված էին տաղանդի ուժով, Ալլեգրիի Miserere-ն Վիեննայի պալատում բոոի բղղոցի նման տափակ հնչեց, և թագավորն ու պալատականները մտածեցին, թե պապի տաճարի տնօրենը նախանձից մղված թաքցրել է Miserere-ն, անտեսել է տիրոջ կամքը և փոխարենն ուղարկել է պարզունակ մի ստեղծագործություն: Թագավորն անմի-

չապես գրություն ուղարկեց պապին՝ բողոքելով տնօրենի տնհարգալից վերաբերմունքի մասին, և տաճարի տնօրենին վտարեցին. պապը նույնիսկ հարկ շհամարեց լսել նրա արդարացումը: Խեղճ մարդը, այնուամենայնիվ, կարդինալներից մեկին խնդրեց պաշտպանել իր դատը և պապին հայտնել, որ Miserere-ի կատարումը անհնար է սոսկ նոտաների միջոցով արտահայտել, այն պետք է սովորել երկար տարիների ընթացքում, կրկնել տաճարի երգիչների հետ, որոնք տվանպար են տիրապետում դրան: Երաժշտությունից համարյա ոչինչ շհասկացող նորին սրբությունը մի կերպ ընկալեց, որ նույն նոտաները տարբեր արժեք են ստանում՝ Վիեննայում և Հռոմում: Հրամայեց տաճարի խեղճ տնօրենին գրել իր պաշտպանական ելույթը թագավորին ուղարկելու համար: Որոշ ժամանակ անց նրան ներում շհորհվեց:

Այս հանրաժանոթ պատմությունն էր, որ առիթ տվեց հուճեհաններին ցնցվելու, երբ տեսան, թե ինչպես մի փոքրիկ երեխա, ընդամենը երկու անգամ լսելով Miserere-ն, այն երգում է կատարելապես: Եվ ավելի դժվար էլ ի՞նչ կարող է լինել, քան արվեստի բնագավառում Հռոմի զարմանքը շարժելը: Յուրաքանչյուր հեղինակություն այս հռչակավոր բաղարը մտնելիս փոքրանում է, այստեղ յուրաքանչյուր գեղեցկություն դառնում է սովորական:

Չգիտեմ, միգուցե ընձեռված հաջողությունն էր պատճառը, բայց կարծում եմ Miserere-ի հանդիսավոր և թախծոտ երգը այնպիսի խոր ազդեցություն թողեց Մոցարտի հոգում, որ նա այդ պահից նախամեծարությամբ լցվեց Հենդելի և բնութիւն Բոբերինիի* հանդեպ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԳ

ՄՈՑԱՐՏԻ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Մոցարտ ընտանիքը Հռոմից մեկնեց նեապոլ, որտեղ Վոլֆգանգը Conservatorio alla pieta-ում հանդես եկավ իր նվագով դաշնամուրի վրա: Երբ հասել էր սոնատի կեսին, ունկնդիրները այն եզրակացություն հանգան, որ նրա մատանին կախարդական էր. հարկավոր էր հասկանալ նրանց բողոքի ձիչերի նշանակությունը և հանել տալ կարծեցյալ կախարդական մատանին: Պատկերացրեք, թե ինչ կատարվեց ունկնդիրների հետ, երբ մատանին հանելուց հետո երաժրշտությունը հնչեց նույն փառահեղությամբ: Վոլֆգանգը երկրորդ մեծ համերգը տվեց թագավորի դեսպանի՝ Քոչնից կոմսի տանը, ապա վերագործավ Հռոմ: Պատը ցանկություն հայտնեց տեսնել և Մոցարտին հանձնել Ոսկե Խթանի ասպետի խաչն ու շքանշանը (auratae Militiae eques*): Բոլոնիայում նա միաձայն ընտրվեց ֆիլհարմոնիկ ակադեմիայի անդամ և մաեստրո: Ըստ ընդունված կարգի նրան փակել էին առանձին սենյակում, ուր կես ժամ շունցած նա գրեց քառաձայն անտիֆոն:

Հայր Մոցարտը շտապեց վերադառնալ Միլան, որպեսզի որդին կարողանար աշխատել ստանձնած օպերայի վրա: Գործը ուշանում էր: 1770 թվականի հոկտեմբերի վերջին հաղիվ տեղ հասան: Առանց այդ խոստումի էլ Մոցարտը կկարողանար ձեռք բերել այն, ինչը Իտալիայում երաժշտի համար համարվում է ամենամեծ պատիվ՝ Հռոմի թատրոնի համար օպերա-սերիա դրելու պայմանագիր ստորագրել:

Գեկաեմբերի 26-ին առաջին անգամ Միլանում ներկայացրին «Միթրիդատես» օպերան: Վոլֆգանգը տասնչորս տարեկան էր: Այս օպերան անընդմեջ բեմադրվեց ավելի քան քսան անգամ: Հաջողության մասին կարելի է դատել հետևյալից. պատվիրատուն անմիջապես գրավոր պայմանագիր կնքեց 1773 թվականի առաջին օպերայի համար: Մոցարտը հեռացավ իր անվան փառքն արձագանքող Միլանից

և հոր հետ գնաց Վենետիկ՝ դիմակահանդեսի վերջին օրերին մասնակցելու: Վերոնայում, որտեղով միայն անցնում էր, նրան հանձնեցին այդ քաղաքի ֆիլհարմոնիկ ընկերության անդամի դիպլոմը: Ամենուր, Իտալիայի որ քաղաքում էլ լիներ, նա արժանանում էր ամենաբարձր ընդունելության: նրան անվանում էին *il cavaliere filarmonico**:

1771 թվականի մարտ ամսին, երբ Մոցարտը հոր հետ վերադարձավ Զալցբուրգ, Միլանից ստացվել էր կոմս Ֆիրմիանի նամակը, որով Մարիա-Թերեզիա թագուհու անունից հանձնարարվում էր թատերական մի կանտատ գրել արքայուհու ֆերդինանդի հարսանեկան արարողության համար: Կայսրուհին օպերա գրելու համար ընտրել էր տաճարի տմենահին մանսորոյին՝ Հոչակավոր Հասսեին, և ցանկացել էր, որ կանտատը գրեր ամենաերիտասարդ կամպոպիտորը, «*Ascanio in Alba*»* թեմայով: Մոցարտը խոստացավ ձեռնարկել այդ աշխատանքը և օգոստոսին մեկնեց Միլան, որտեղ հարսանեկան հանդիսավորության ժամանակ կատարեցին օպերան և սերենադը:

1772 թվականին Զալցբուրգի նոր արքեպիսկոպոսի ընտրության առիթով Մոցարտը գրեց «Սկիպիոնի երազանքը» կանտատը: Հաջորդ տարվա ձմեռն անցկացրեց Միլանում և այստեղ գրեց «*Lucio Silla*» օպերա-ներիան, որը անընդմեջ ներկայացվեց քսանվեց անգամ: 1773 թվականի գարնանը Մոցարտը վերադարձավ Զալցբուրգ: Հոր հետ կատարած այդ և հաջորդ տարվա ճամփորդությունը Վիեննայում, Մյունխենում, հնարավորություն ընձեռեցին նրան գրելու այնպիսի անգնահատելի ստեղծագործություններ, որոնցից հիշատակելի է մի օպերա-բուֆ «*La Finta Giardiniera*»-ն, երկու մեծ մեսսա՝ Բավիերի իշխանի տաճարի համար, և այլն: 1775 թվականին գերդուքս Մաքսիմիլիանը որոշ ժամանակով կանգ առավ Զալցբուրգում, և դա էլ առիթ հանդիսացավ, որ Մոցարտը գրի «*Il Re Pastore*» կանտատը:

Մոցարտի կյանքի ամենաարտառոց մասը նրա մանկությունն է. այդ շրջանի առանձին մանրամասնությունների կարող են հաճույք պատճառել փիլիսոփային ու արվեստագետներն: Մնացած տարիների շատ կարճ ապրելաշրջանի մասին կիսոսենք ավելի հակիրճ:

ԳՎՈՒՆ ԵՐՐՈՐԴ

Տասնինը տարեկան հասակում Մոցարտը կարող էր համարել, որ հասել է իր արվեստի ծաղկման բարձրագույն աստիճանին, որովհետև բոլորը միաբերան խոսում էին այդ մասին, սկսած Լոնդոնից մինչև Նեապոլ: Նա իրավունք ուներ իր բնորոշվածը նվիրույթի ցանկացած մայրաքաղաքում բնակություն հաստատելու: Վաստա՛հ էր, որ ամեն տեղ կտրժանանար հասարակության ամենաջերմ ընդունելության: Նա ի վիճակի էր ամենուրեք ստեղծելու կարողություն և հասարակական դիրք: Հայրը մտածեց, որ ամենահարմար քաղաքը Փարիզն է, և 1777 թվականի սեպտեմբերին Մոցարտը միայն մոր ուղեկցությամբ մեկնեց այդ մայրաքաղաքը:

Անտարակույս, նրա համար խիստ շահեկան պետք է լիներ այնտեղ հաստատվելը, բայց, նախ և առաջ, այդ ժամանակվա ֆրանսիական երաժշտությունը չէր համապատասխանում նրա ճաշակին, վոկալ երաժշտության հաստատումը թույլ չէր տա խորանայու նրան գործիրային երաժշտության ժանրի մեջ, և հետո, մեկ տարի շանցած դժբախտություն ունեցավ կորցնելու մորը: Այդ ժամանակից սկսած փարիզյան օրերը դարձան անտանելի: Հոգևոր երաժշտության համար սիմֆոնիա գրելուց հետո, ինչպես նաև մի քանի այլ երաժշտական հատվածներ, 1779 թվականի սկզբին շտապեց վերադառնալ հոր մոտ:

Հաջորդ տարվա նոյեմբեր ամսին Վոլֆգանգը դնաց Վիեննա, ուր կանչեց նրան իր հոգևոր առաջնորդը՝ Զալցբուրգի արքեպիսկոպոսը: Այդ ժամանակ քանչորս տարեկան էր: Այնքան Վիեննայում, առավել ևս այդ քաղաքի օրիորդների գեղեցկությունը, հրապուրում էին նրան: Համենայն դեպս, նա հաստատվեց այդտեղ և այլևս ոչինչ երբեք չկարողացավ Վիեննայից պոկել նրան: Խիստ զգայուն հոգում բուն դրած ևռանգը և իր արվեստի տեխնիկային կատարելապես տիրապետելու հմտությունը նրան արագորեն դարձրին դարի ամենասիրած կոմպոզիտորը, և մեծ մարդու հռչակ ստացած երևիսյի առաջին օրինակը դարձավ նա:

Մոցարտը վարպետորեն ստեղծեց «Իգումեննյ» օպերայի երաժշտությունը: Բավարիայի իշխանը, որ միշտ էր նրան

նախապատվություն տալիս, այդ օպերան պատվիրել էր Մյունխենի թատրոնում բեմադրելու համար, և նրա նվա-
զտիումբը Գերմանիայում համարվում էր լավագույնը: Մո-
ցարտն իր տաղանդի ծաղկման շրջանում էր, քսանհինգ տա-
րեկան, և խելակորույս սիրահարված էր հռչակավոր երգչուհի
Կոնստանցե Վեբերին, որը հայտնի էր վիրտուոզ կատարու-
մով: Հետագայում ամուսնացավ նրա հետ: Սիրած աղջկա
րնտանիքը հաշվի առնելով նրա կայուն մասնագիտություն
չունենալու, անընդհատ ճանապարհորդության մեջ գտնվելու,
նրա բարբերում օրինական հասկանիչների բացակայության
հանդամանքները, համաձայն չէր նրանց ամուսնությանը:
Մոցարտը նպատակադրվեց ապացուցել այդ ընտանիքին, որ
ինչքան էլ հասարակության մեջ կայուն դիրք չունեն, այ-
նուամենայնիվ հնարավորություն ունեն ականածանք ներշնչ-
ելու իր հանդեպ, և դեպի Կոնստանցեն տաժած իր զգաց-
մունքների մեջ հոգեզմայլ երաժշտության մոտիվներ գտավ,
որոնց կարիքն զգում էր իր աշխատանքի ընթացքում: Ծաղ-
կուն շրջանին հասած կոմպոզիտորի սերն ու ինքնասիրու-
թյունը երիտասարդ Մոցարտին մղեցին գրել այնպիսի մի
օպերա, որը նա մինչև մահ համարեց իր լավագույն ստեղծա-
դարձությունը և որից հաճախ նոր երաժշտական մտքեր էր
բաղում հետագա ստեղծագործությունների համար:

Շատ երկար ու գծվարին աշխատանք կլիներ Մոցարտի
չորսարանչյուր ստեղծագործությունը մասնավոր վերլուծու-
թյան ենթարկելը: Երաժշտասերներին երևի ծանոթ են բոլո-
րը: Օպերաների մեծ մասը ստեղծվել է Վիեննայում և մեծ
հաջողություն է ունեցել, բայց ոչ մեկն այնքան հաճույքով
չի լավել, որքան «Կախարդական սրինգը», որը մեկ տարվա
ընթացքում ներկայացվեց հարյուր անգամ:

Ռաֆայելի նման, Մոցարտն էլ արվեստն ընդգրկեց իր
ողջ տարածքով: Ռաֆայելից կարժես միայն մի բան էր վրի-
պել. առաստաղին մանր կերպարներ նկարելու եղանակը: Նա
միշտ ստեղծում էր երեակայական տղավորություն, իբր
կաավր նույնություն է կազմում կամարի հետ, կամ հենված
է ինչ-որ այլաբանական կերպարների վրա: Մոցարտը լիա-
կատար հաղթանակ է տարել երաժշտական բոլոր ժանրերում՝
օպերա, սիմֆոնիա, երգ, պարային երաժշտություն, ամեն

տեղ մեծ է: Բարոն վան Սվիտենը՝ Հայդնի ընկերը, նույնխաղ
ասել է, որ եթե Մոցարտը մի քիչ ավելի ապրեր: Հայդնից
կիւլեր գործիքային երաժշտության մենաշնորհը: Օպերա-
բուֆում նրա մոտ պակասում է կենտրոնացումը և զրա-
նով նա դիջում է Գալուպպիին, Գուլիելմիին, Սարտինին*:

Նրա երաժշտության մեջ աչքի ընկնող տեխնիկական
հատկությունները, անկախ տաղանդից, նորություն են նվա-
պախմբի համար, հատկապես փողային գործիքների բնագա-
վառում: Զարմանալի կիրառում ունի ֆլեյտան, մի գործիք,
որից հազվադեպ է օգտվել Զիմարոզան*: Նվագակցության
մեջ նա հանդես է բերում ամենահարուստ սիմֆոնիաների
ամենատարբեր գեղեցկությունները:

Մոցարտին մեղադրում են այն բանում, որ նա միայն իր
երաժշտությամբ է հետաքրքրվել և ճանաչել է միայն սե-
փական ստեղծագործությունները: Աննշան սնափառությունը
կայանում է հետևյալում. ամբողջ կյանքում զբաղված լինե-
լով գրառելու սեփական մտքերը, Մոցարտն իրոք ժամանակ
չի ունեցել կարդալու ուրիշների գործերը: Մյուս կողմից, նա
անկեղծությամբ էր ընդունում այն ամենը, ինչ լավ էր, թե-
կուզ ամենապարզ երգը, եթե իհարկե ինքնատիպ էր: Սակայն
նա իտալացի մեծ արվեստագետների պես դիվանագետ չէր.
անողոք էր միջակությունների հանդեպ:

Հարգում էր հատկապես Պորպորային, Գուրանտին,
Էնոչին, Ալեսսանդրո Սկարլատտին*, բայց բոլորից բարձր
էր դասում Հենդելին: Անդիր գիտեր մեծ վարպետի բոլոր
դիսպոնոր ստեղծագործությունները: «Բոլորիցս ավելի լավ
Հենդելը գիտե, — ասում էր նա, — թե ինչը կարող է մեծ
սպասվորություն թողնել: Երբ ցանկանում է, առաջ է մղվում
և շանթում է կայծակի պես»:

Յոմեկի մասին ասում էր. «Այս արվեստագետը որոշ
տեղերում փայլում է և ընդմիջտ կփայլեր, եթե շքանկանաբ
հնաոճ հոգեւոր երաժշտություն գրել»: Չէր սիրում Վինչենցո
Մարտինիին*, որի «Cosa rara»-ն ժամանակին մեծ հաջո-
ղություն ուներ: «Այնտեղ շատ գեղեցիկ մասեր կան, — ասում
էր նա, — բայց քսան տարի շանցած ոչ ոք այլևս ուշադրու-
թյուն չի դարձնի»: Մոցարտից մեղ մնացել է ինը օպերա
իտալերեն խոսքերով. «La Finta semplice»-ն՝ օպերա-բուֆ-

առաջին մասը գրված է գրամատիկ ժանրով, «Mithridate»-ն՝ օպերա-սերիա, «Licio Silla»-ն՝ նույնը, «La giardiniera»-ն՝ օպերա-բուֆ, «Idomeneo»-ն՝ օպերա-սերիա, «Le nozze di Figaro»-ն և «Don Giovanni»-ն, որոնք գրել է 1787 թվականին, «Cosi fan tutte»-ն՝ օպերա-բուֆ, «La Clemenza di Tito» Մետաստազոսի խոսքերով օպերան՝ ներկայացված 1792 թվականին:

Գերմաներենով Մոցարտը միայն երեք օպերային երաժրշտություն գրեց. «Առեանգում հարեմից», «Թատրոնի դիրեկտորը», «Կախարդական սրինգը»՝ 1792 թվականին:

Ռոզել է տասնյոթ սիմֆոնիա և բազմապիսի գործիքային պիեսներ:

Որպես կատարող Մոցարտը եվրոպայի առաջնակարգ դաշնակահարներից էր: Արտակարգ արագ էր նվագում, հատկապես հիացնում էր նրա ձախ ձեռքը:

Գեռ 1785 թվականին հռչակավոր Յոզեֆ Հայդներ Վիեննայում ասել էր Մոցարտի հորը. «Հայտարարում եմ ձեզ բացառապես, ինչպես Աստծու առաջ, և որպես պատվավոր մարդ, որ ձեր որդուն համարում եմ մինչև այժմ լսածս կոմպոզիտորներից ամենամեծը»:

Ահա թե ինչպիսին էր Մոցարտը որպես երաժիշտ:

Նա ով ծանոթ է մարդկային բնավորությունը, չի դարձնում, որ իր տաղանդի ուժով բնահանուրի հիացմունքին արժանացած այդ մարդը կյանքի այլ իրավիճակներում նույնքան մեծ չի եղել: Մոցարտը ոչ դիմագծերի զեղեցկություններ է աչքի ընկել, ոչ մարմնի բարետես կազմվածքով, չնայած նրա հաշրն ու մայրը իրենց զեղեցկություններ հռչակավոր են եղել:

Կարանիսն ասել է. «Թվում է զգայունությունը հեղուկ է, որն իր շափերով ամբողջական է և ամեն անգամ, երբ մեծ հորձանքով խուժում է անոթներից մեկի մեջ, համամասնաբար քշանում է մյուսների մեջ»:

Մոցարտը մեծանալով՝ այդպես էլ նորմալ հասակ չունեցավ: Ամբողջ կյանքում թուլակազմ էր, վտիտ, դալուկ. չնայած դիմագծերի արտակարգ դասավորությունը, ֆիզիկապես ոչնչով աչքի չէր ընկնում, բացի ծայրահեղ շարժունությունից: Գեմքի արտահայտությունը ամեն վայրկյան փոխվում

էր, բայց նշում էր միայն պահի ազդեցութեան տակ զգացած վիշտը կամ հաճույքը: Նրա մոտ նկատելի էր մտքի տկարութեան մի մոլուցք, որը սովորաբար մտավոր թերզարգացածութեան նշան է. մարմինը մշտական շարժման մեջ էր. նա անընդհատ խաղում էր ձեռքերի հետ, կամ ոտքով խփում գետնին: Ոչ մի արտառոցություն չկար սովորությունների մեջ, եթե հաշվի չառնենք կրթոտ սերը բիլիարդի հանդեպ: Տանը բիլիարդի սեղան ուներ և ամեն օր, եթե խաղընկեր էլ չունենար, միայնակ կխաղար: Մոցարտի ձեռքերը այնքան էին հմտացած կլավեսին նվագելու մեջ, որ այլ գործերում անճարակ էին: Ճաշի ժամանակ նա երբեք չէր կտրի իր ուտելիքը, իսկ եթե ձեռնարկեր այդ գործողությունը, մեծ դժվարութեամբ և անհաջող էր անում: Սովորաբար կնոջն էր խընդրում այդ ծառայությունը մատուցել:

Այս նույն մարդը, որը մանուկ հասակում որպես արվեստագետ հասել է զարգացման բարձրագույն աստիճանին, կյանքի մնացած բնադավառներում մնացել է միշտ երեխա: Երբեք չի կարողացել ինքնուրույն ղեկավարվել: Ընտանեկան գործերի կարգ ու կանոնը, նյութական հարցերը, հաճույքների ողջախոհությունն ու խելացի ընտրությունը երբեք չեն զբաղեցրել նրան: Նա միշտ տարվում էր պահի հաճույքով: Մտքերի առատութեամբ խճողված ուղեղը, որ անկարող էր դառնում այն գատողությունների առջև, ինչ անվանում ենք լուրջ գործեր, ամբողջ կյանքում կարիք ունեցավ մի խնամակալի՝ առօրեական գործերը տնօրինելու համար: Հայրը քաջ ծանոթ էր նրա այս թուլությունը: 1777 թվականին նա ստիպված էր կնոջ ուղեկցությամբ Փարիզ ուղարկել Մոցարտին, որովհետև անձնական գործերը թույլ չէին տալիս իրեն հեռանալ Զալցբուրգից:

Բայց այս նույն մարդը, որ մշտապես ցրված էր, տարված խաղով ու հաճույքներով, գերմարդ էր դառնում դաշնամուրի առջև: Այդ ժամանակ հոգին հառնում էր, և ողջ ուշադրությունը սեռվում էր միակ նպատակակետին, որի համար ծնվել էր՝ հնչյունների ներդաշնակությամբ: Ամենամեծ նվագախումբն անգամ չէր խանգարում նրան, որ երաժշտության կատարման պահին որսա աննշան սխալ հնչյունը և տեղը ու տեղը ընդհատելով ամենազարմանալի ճշգրտությամբ

սյույց տա, թե որ գործիքն էր սխալ նվագել ու փոխարենը ինչ հնչյուն պետք է լիներ:

Բեռլին ճամփորդելիս այնպես պատահեց, որ շատ ուշ տեղ հասավ: Կառքից իջնելուն պես պանդոկի սպասավորին հարցրեց, թե ինչ օպերային ներկայացում կար այդ օրը:

— «Առևանդում հարեմից»:

— Հրաշալի է, — պատասխանեց Մոցարտը և անմիջապես ճանապարհվեց ներկայացումը լսելու:

Կանգնեց պարտերի մուտքի մոտ, ուզում էր լսել առանց ճանաչվելու: Մերթ շատ դո՛հ որոշ հատվածների լավ կատարումից, մերթ խիստ դժգոհ այլ հատվածների վատ նվագելուց, շարժումներից, դերասանների անտեղի պաճուճանքից, սկսեց արտահայտել գոհունակությունն ու դժգոհությունը և տնդիտակցարար հասավ նվագախմբի բաղրիքին: Տնօրենն իրեն թույլ էր տվել երաժշտական հատվածներից մեկում փոփոխություն մտցնել: Այդ մասը կատարելու ժամանակ Մոցարտն այլևս չկարողանալով զսպել իրեն՝ բարձրաձայն գոռաց՝ նվագախմբին հիշեցնելով, որ չի կարելի այդպես նվագել: Բոլորը շրջվեցին տեսնելու համար, թե ով է այդ ճանապարհորդական սյուրտուկով աղմկարարը: Մի քանիսը ճանաչեցին նրան, և անմիջապես երաժիշտներն ու դերասաններն իմացան, որ Մոցարտը հանդիսատեսների մեջ է: Նրանցից մի քանիսը, ինչպես նաև առաջնակարգ մի երգչուհի, ցնցվեցին այդ նորությունից և հրաժարվեցին բեմ դուրս գալ: Տնօրենը Մոցարտին հայտնեց, թե ինչպիսի դժվարին կացություն մեջ են ընկել այդ հրաժարումների պատճառով: Վոլֆգանգն իսկույն նետվեց կուլիսները և դերասաններին պովասանական խոսքեր ասելով համոզեց նրանց շարունակել օպերան:

Երաժշտությունը նրա կյանքի դբաղմունքն էր և միաժամանակ ամենասիրելի հանգիստը: Երբեք կարիք չզգացվեց, նույնիսկ ամենավաղ մանկության տարիներին, ստիպողաբար նրան նստեցնել դաշնամուրի առաջ: Ընդհակառակը, անհրաժեշտ էր հսկել, որ ինքնամոռացության մեջ չընկնի և չսպառի առողջությունը: Պատանեկության տարիներից նրա մոտ հակում առաջացավ գիշերները ստեղծագործելու: Երեկոյան մամը իննին, երբ նստում էր կլավեսինի առջև, կեսգիշերից

շուտ անդից վեր շէր կենում: Այդպիսի դեպքերում նրան ուժով էին վերկացնում, այլապես ամբողջ գիշեր կշարունակեր ֆանտազիաներ ստեղծել ու նվագել:

Աոօրյա կյանքում ամենամեղմ մարդն էր, բայց երաժրշտություն լսելիս ամենաշնչին աղմուկը կարող էր նրան խիստ ջղայնացնել: Մոցարտին խորթ էր կեղծ ու անտեղի համեմատությունը, կատարումից առաջ իրեն շատ խնդրել տալը, որ հատուկ է վիրտուոզներից շատերին: Վիեննայի բարձրաստիճան սինյորները հաճախ են հանդիմանել Մոցարտին այն պատճառով, որ նա միևնույն ոգևորվածությամբ նվագում է բոլորի համար, ովքեր հաճույք են ստանում իրեն լսելուց:

ԳՆՈՒՆ ԶՈՐՐՈՐԴ

Մի բազաբում, որ ժամանել էր Մոցարտը, երկրպագուներից մեկը ստվար բազմություն հավաքեց իր տանը, որպեսզի հռչակավոր երաժշտին ունկնդրելու հաճույքը պատճառի նրանց: Մոցարտը խոստացավ գնալ: Ներս մտնելուն պես, համարյա առանց խոսելու, նստեց դաշնամուրի առջև: Մտածելով, որ շրջապատված է միայն երաժշտագետներով, շատ հանդարտ սկսեց նուրբ ներդաշնակությամբ հագեցած, բայց միաժամանակ շափազանց պարզ երաժշտական մի հատված կատարել: Այսպիսով ուղում էր ունկնդիրներին նախապատրաստել այն դպացմունքների համար, որ մտադիր էր քիչ հետո արտահայտել: Հասարակությունը խիստ պարզունակ համարեց այս հատվածը: Շուտով երաժշտությունն աշխուժացավ. բավականին ղեղեցիկ համարեցին: Այնուհետև դարձավ խիստ ու հանդիսավոր, ցնցող, բարձրաժողովուրդի և միաժամանակ ավելի բարդ: Կանանցից մի քանիսը այն համարեցին որոշակիորեն ձանձրալի և սկսեցին քննադատական

խոսքեր փոխանակել, դահլիճի կեսից ավելին սկսեց խոսել: Տանտերը փշերի վրա էր: Ի վերջո Մոցարտն էլ նկատեց երաժրշտության ազդեցությունը լսարանի վրա, բայց ամենին չհրաժարվեց այն գլխավոր մտքից, որ սկսել էր արտահայտել, և որքան հնարավոր էր առավել ուժգնությամբ զարգացրեց այն: Դարձյալ ուշադրություն չդարձրին: Այդ ժամանակ նա սկսեց կոպիտ խոսքերով պախարակել լսարանին՝ շարունակելով նվագել: Բարբախտաբար արտահայտվեց խտալերենով, և համարյա ոչ ոք չհասկացավ նրան: Կամաց-կամաց սկսեցին հանդարտվել: Երբ Մոցարտի բարկությունը մի փոքր իջավ, չկարողացավ զսպել ծիծաղը իր գայրույթի վրա: Նա մտածեց, ավարտել երաժշտությունը հանրաճանաչ ստեղծագործությամբ, որը կատարեց տասը-տասներկու հրաշալի տարբերակներով: Դահլիճը հիացած էր, և ներկաներից բերրը նկատեցին, թե ինչ տեղի ունեցավ: Իրեն ուղեկցող տանտիրոջն ու երաժշտությունից հասկացող մի քանի հոգու նույն երեկոյան հրավիրելով այն պանդոկը, ուր իջևանել էր, Մոցարտն իսկույն հեռացավ: Երեկոյան նրանց ճաշի պահեց: Հենց որ հյուրերը ցանկություն հայտնեցին նրան լսելու, անմիջապես սկսեց կլավեսինի վրա ֆանտազիաներ նվագել և, ի մեծ զարմանս ունկնդիրների, ինքնամոռացություն մեջ ընկավ մինչև կեսգիշեր:

Ճանապարհորդական դաշնամուրը լարելու համար նրա մոտ էր եկել կլավեսին լարող մի ծերունի:

— Բարի ծերուկ, որքա՞ն պետք է վճարեմ, վաղը մեկնում եմ,— ասաց Մոցարտը:

Խեղճ մարդը նրան աստժո տեղ էր դրել, շփոթահար, շունչը պահած, կմկմալով պատասխանեց.

— Բարձրագույն տեր... Բարձրագույն տիրոջ տաճարի պարտն մահստրո, շեմ կարող... ճիշտ է, մի քանի անգամ խղել եմ ձեզ մոտ... դե լավ, տվեք ինձ մեկ էքյու:

— Մեկ էքյու՞, դե՛, դե՛, այնպիսի բարի մարդ, ինչպիսին դուք եք, մեկ էքյուի համար չպետք է նեղություն տար իրեն,— և նրան մեկնեց մի քանի դուկատ:

Հեռանալիս ծերուկը ամենահարգալից ձևով խոնարհվում էր նրա առջև ու անընդհատ կրկնում.

— Ա՛, բարձրագույն տեր:

«Իդոմենևոն» և «Դոն ժուանը» Մոցարտի ամենասիրած օպերաներն էին: Չէր սիրում խոսել իր ստեղծագործությունների մասին, կամ եթե նույնիսկ խոսեր, միայն մի քանի խոսք էր ասում: «Դոն ժուանի» մասին մի օր ասաց.

— Այս օպերան վիեննայի համար չի ստեղծված, այն ավելի կհամոզատասխաներ Պրագայի հանդիսատեսին, բայց իրականում գրել եմ ինձ և բարեկամներիս համար:

Շատ մեծ հաճույքով նա աշխատում էր առավոտյան ժամը վեցից, յոթից մինչև տասը: Օրվա մնացած ժամերին, եթե շտապ ավարտելու գործ չուներ, չէր ստեղծագործում: Նա միշտ անկանոն էր աշխատում: Երբ որևէ ստեղծագործական միտք էր զբաղեցնում նրան, անկարելի էր աշխատանքից պակել: Եթե գաշնամուրից հեռացնեին՝ ընկերների շրջապատում կշարունակեր ստեղծագործել, այնուհետև գիշերներ էր լուսացնում փետրադրիչը ձեռքին: Երբեմն հոգին այնպես էր ապստամբում հանապազօրյա աշխատանքի դեմ, որ երաժշտական ստեղծագործությունն ավարտում էր հանձնելուց անմիջապես առաջ: Մի օր նույնիսկ այնպես պատահեց, որ պալատի նվագախմբի համար պատվիրված գործը շատ ձգձգվեց և ժամանակ չունեցավ ավարտելու այն բաժինը, որ ինքը պիտի կատարեր: Յոզեֆ կայսրը, որ տեղում չէր կանգնում, պատահաբար աչք զցելով Մոցարտի նոտաների տետրին, զարմացավ դատարկ էջը տեսնելով և ասաց.

— Իսկ որտե՞ղ է ձեր կատարելիք բաժինը:

— Այստեղ,— պատասխանեց Մոցարտը ձեռքը տանելով ճակատին:

Քիչ էր մնում նույն բանը կատարվեր «Դոն ժուանի» ուվերտյուրայի կատարման ժամանակ: Բազմիցս են ասել, որ դա նրա լավագույն ուվերտյուրաներից է: Մինչդեռ դրավրա աշխատել է միայն առաջին ներկայացմանը նախորդող գիշերը, երբ գլխավոր փորձն արդեն կատարել էին: Երեկոյան ժամը տասնմեկին, քաշվելով իր սենյակը, կնոջը խնդրեց փունջ պատրաստել և նստել կողքին, որ չքնի: Կինը համաձայնեց և սկսեց կախարդական հեքիաթներ, արտառոց արկածային պատմություններ պատմել, որոնք արտասովոր աստիճան ծիծաղ էին պատճառում Մոցարտին: Մինչդեռ

փունջից բունը սկսում էր տանել և աշխատում էր միայն այն ժամանակ, երբ կինը պատմում էր. հենց ընդհատում էր պատմությունը, Մոցարտը փակում էր աչքերը: Արթուն մնալու ջանքերը և քնելու ցանկությունը այնպես էին հաջորդում իրար, որ ի վերջո հողնեցրին նրան, և կինն ստիպեց մի քիչ հանգստանալ, խոստանալով մեկ ժամ հետո արթնացնել: Այնքան խորն էր քունը, որ կինը արթնացրեց երկու ժամ հետո, առավոտյան ժամը 5-ին: Մոցարտը արտագրողների հետ ժամագրվել էր ժամը յոթին, և երբ եկան, արդեն ավարտել էր ուվերտյուրան: Հազիվ ժամանակ ունեցան անհրաժեշտ արտագրությունները կատարել նվագախմբի համար, իսկ երաժիշտներն ստիպված էին նվագել առանց փորձելու: Որոշ մարդիկ հավակնություն ունեն ճանաչելու ուվերտյուրայի այն հատվածները, որտեղ Մոցարտի քունը տարել է, և այն հատվածները, որտեղ ընդոստ արթնացել է:

«Դոն ժուանը», որպես նորություն, վիեննայում մեծ ընդունելություն չարժանացավ: Առաջին ներկայացումից հետո, բազմամարդ հավաքություններից մեկում, ուր գտնվում էր մայրաքաղաքի երաժշտասերների մեծ մասը, որոնց թվում նաև Հայդը, խոսում էին այդ օպերայի մասին: Մոցարտը չկար: Բոլորն էլ ուզում էին ասել, որ հրաշալի գործ է ստեղծված, փայլուն երևակայությամբ և հարուստ տաղանդով, բայց միաժամանակ կային նաև պարսավողներ: Բոլորն արտահայտվել էին, բացի համեստ Հայդից: Նրան էլ խնդրեցին իր կարծիքը հայտնել:

— Ես ի վիճակի չեմ դատել այս վիճաբանությունը,— ասաց իր սովորական վերապահությամբ,— ինձ միայն մի բան է հայտնի, որ ժամանակակից կոմպոզիտորներից ամենամեծը Մոցարտն է:

Խոսեցին այլ թեմաների շուրջ:

Իր հերթին Մոցարտն էլ շատ էր հարգում Հայդին, Հայդինին նվիրել է կվարտետների ծողովածու, որ կարելի է դասել այդ կարգի ամենագեղեցիկ գործերի շարքին:

Որոշ արժանիքներով օժտված վիեննացի մի կոմպոզիտոր, որը սակայն շատ էր դիջում Հայդին, հաճույք էր ստանում վերջինիս կոմպոզիցիաներում աննշան վրիպումներ հայտնաբերելուց: Հաճախ գալիս էր Մոցարտի մոտ,

տւրախութեամբ ցույց տալիս այն սիմֆոնիաները կամ կվարտետները, որոնց պարտիտուրաները արտագրելիս որոշ ոճական թերութիւններ էր հայտնաբերել: Մոցարտն այդպիսի դեպքերում աշխատում էր փոխել խոսակցութեան նյութը, ի վերջո, մի անգամ, չկարողանալով զսպել իրեն, բավականին կոպիտ տոնով ասաց նրան.

— Պարոն, եթէ մեզ երկուսիս իրար ձուլեն, մի Հայդն չէր ստացվի:

Ոմն նկարիչ Չիմարոզային շողոքորթելու համար մի օր ասաց, որ Մոցարտից բարձր էր դասում նրան:

— Ե՞ս, պարոն,— աշխուժորեն արձագանքեց Չիմարոզան,— ի՞նչ կասեք այն մարդուն, որը աշխատի համոզել, թէ ձեզ Ռաֆայելից բարձր է դասում:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Մոցարտն իր սեփական գործերի մասին դատում էր անկողմնակալ և հաճախ այնպիսի խստութեամբ, որ երևի հեշտութեամբ շաներ մեկ ուրիշի նկատմամբ: Յոզեֆ Զորդ կայսրը սիրում էր Մոցարտին, նրան նշանակել էր իր կապելլայի մանստրո և ուզում էր ցույց տալ, որ ինքը երաժշտասեր է: Իտալիա կատարած ճանապարհորդութիւնը նրան դարձրել էր իտալական երաժշտութեան երկրպագու, և պալատում զրտնըվող մի քանի իտալացիներ օգտագործում էին այդ հանգամանքը, որն, իմ կարծիքով, հիմնավոր էր:

Մոցարտի առաջին փորձերի մասին նախանձով էին արտահայտվում, ոչ արդարացիորեն, իսկ թագավորը, շունենալով սեփական կարծիք, հեշտութեամբ տուրք տվեց այդ երկրպագուների քննադատութիւններին: Մի օր, իր պատվիրած կոմիկական օպերայի («Առեանգում հարեմից») փորձը լսելուց հետո, կոմպոզիտորին ասաց.

— Սիրելի Մոցարտ, դա շատ գեղեցիկ է հնչում մեր ականջին, բայց օպերայում շափից շատ նոտաներ են օգտագործված:

— Ներողություն եմ խնդրում, Ձերդ գերազանցություն,— չորությամբ պատասխանեց Մոցարտը,— այնտեղ այնքան նոտա կա, որքան պահանջվում է:

Յուզեֆը ոչինչ չասաց, կարծես նույնիսկ մի փոքր սըրտնեղեց պատասխանից, բայց հրե բեմադրեցին օպերան, շոալեց ամենափքուն գովասանքները:

Մոցարտն, այնուամենայնիվ, այնքան էլ գոհ չմնաց իր գործից, շատ ուղղումներ մտցրեց, կրճատումներ արեց և գրանից հետո դաշնամուրով երաժշտական որևէ հատված կատարելիս, հրե շատ էին ծափահարում, ասում էր.

— Պալատի համար լավ է, բայց ներկայացնելու համար ավելորդարանություն շատ կա: Ժամանակին, այդ օպերան ստեղծելիս, աշխատանքիս արդյունքը բավարարում էր ինձ և երկարարանություն չէի գտնում:

Մոցարտն ամենեին շահամոլ չէր, ընդհակառակը, առատաձեռնությունը նրա բնավորության մի մասն էր կազմում: Հաճախ, առանց ընտրության, և երբեմն նույնիսկ աննպատակ, շոալում էր գրամը:

Բեռլին կատարած ուղևորության ժամանակ Ֆրիդրիխ-Վիլհելմ 2-րդը նրան երեք հազար էքյու (11000 ֆրանկ) աշխատավարձ նշանակեց, եթե համաձայնեի մնալ պալատում և ղեկավարել իր նվագախումբը: Մոցարտը միայն ասաց.

— Պետք է լքե՞մ իմ բարի տիրակալին:

Մոցարտը Վիեննայում դեռ կայուն աշխատավարձ չուներ, հետագայում ընկերներից մեկը հանդիմանեց նրան սրբուսական արքայի առաջարկությունը չընդունելու համար:

— Նախընտրում եմ ապրել Վիեննայում,— պատասխանեց Մոցարտը,— թագավորն ինձ սիրում է, նյութականը ինձ չի մտահոգում:

Արքունիքում նրա դեմ հարուցված բանսարկությունները ստիպեցին Յուզեֆից հեռանալու թուլյալություն խնդրել, բայց թագավորը, որ շատ էր սիրում կոմպոզիտորին, և հատ-

կապես նրա երաժշտությունը, կարողացավ տեղնուտեղը հրաժարեցնել նրան իր որոշումից: Մոցարտը խորամանկություն չունեցավ օգտվելու այս հարմար առիթից և կայուն աշխատավարձ պահանջելու: Ռազավորն ինքը միտք հղացավ նրա բախտը տնօրինելու: Դժբախտաբար նա խորհրդակցեց մի մարդու հետ, որ Մոցարտի բարեկամը չէր, և վերջինս առաջարկեց ութ հարյուր ֆլորին (երկու հազար երկու հարյուր ֆրանկից պակաս): Մոցարտը դրանից բարձր երբեք չստացավ: Աշխատավարձը ստանում էր որպես պալատական կոմպոզիտոր, բայց երբեք այդպիսին չդարձավ: Ըստ կառավարության ընդհանուր օրենքների, որ բավական շատ են Վիեննայում, մի անգամ հարցում արին պալատից ստացած աշխատավարձի չափի մասին: Մոցարտը փակ ծրարով ուղարկեց հետևյալ պատասխանը. «Բավական շատ՝ այն ամենի համար, որ արել եմ, շատ քիչ՝ այն ամենի համար, որ կարող էի անել»:

Նոտաներ վաճառողները, թատրոնի դիրեկտորները և նյութականի հետ առնչվող այլ մարդիկ ամեն օր օգտվում էին նրա հայտնի դարձած անշահախնդրությունից: Այդ էր պատճառը, որ դաշնամուրի համար գրված գործերի մեծ մասը նյութական ոչ մի շահույթ չբերեց նրան: Մոցարտը գրում էր նրանց օղտին, որոնք հավաստիացնում էին, թե նրա ձեռքով գրված որևէ գործ կուզենային ունենալ: Եվ մեծ ջանքեր գործադրելու գնով ստիպված էր հարմարվել այդ մարդկանց երաժշտական պատրաստության մակարդակին: Սրանով կարելի է բացատրել, թե ինչու կլավեսինի համար գրած մեծ թվով ստեղծագործություններ թվում է այնքան էլ արժանի չեն նրա անվանը: Նոտաներ վաճառող վիեննացի ոմն Արսարիա, ինչպես նաև նրա գործընկերներից շատերը հաջողացնում էին ձեռք բերել նրա ձեռագրերը և հրատարակել դրանք, առանց հեղինակի համաձայնությունը հարցնելու, և հատկապես առանց հոնորար առաջարկելու:

ԳՆՈՒՆ ՎԵՅՆԵՐՈՐԴ

Թատրոններից մեկի դիրեկտորը, որի գործերը վատ վիճակում էին, հուսահատված եկավ Մոցարտի մոտ սիրտը բացելու վերջում ավելացրեց.

— Միակ մարդն էր աշխարհում, որ կարող է հանել ինձ այս վիճակից.

— Ե՞ս, — տասց Մոցարտը, — այդ ինչպե՞ս:

— Եթե այնպիսի մի օպերա գրեք ինձ համար, որ համապատասխանի իմ թատրոնը հաճախող հանդիսատեսի ճաշակին: Որոշակի սահմաններում կարող եք աշխատել նաև երաժշտագետների և ձեր փառքի համար, բայց հաշվի առեք հատկապես ժողովրդական խավերին, որոնք բարձրաճաշակ երաժշտությունից սշինչ չեն հասկանում: Ես կհոգամ, որ լիբրետոն շուտ ունենաք, գեկորացիաները գեղեցիկ լինեն, մի խոսքով, ամեն ինչ պետք է լինի հավուր պատշաճի*:

Մոցարտը խիստ զգացվեց այդ ձախորդ մարդու խնդրանքից, խոստացավ օգնել:

— Որբա՞ն հոնորար եք պահանջում, — հարցրեց թատրոնի դիրեկտորը:

— Բայց դուք ոչինչ չունեք, — ասաց Մոցարտը, — սակայն, ահա թե ինչպես գործը զլուխ կբերենք, որպեսզի դուք էլ կարողանաք վատ վիճակից դուրս գալ, ես էլ միաժամանակ չկորցնեմ աշխատանքիս պտուղը. օպերայի պարտիտուրան կհանձնեմ միայն ձեզ. կվճարեք ինձ, ինչքան համար գտնեք, մի պայմանով՝ ոչ ոք չպետք է արտագրի ձեռագիրը: Եթե օպերան հաջողություն ունենա, կվճառեմ ուրիշ թատրոնների:

Դիրեկտորը, հիացած նրա մեծահոգությունից, շուտ խոստումներ է տալիս: Մոցարտը շտապում է գրել օպերան ճիշտ ցուցումների համաձայն: Օպերան ներկայացնում են, դահլիճը միշտ լեփ-լեցուն է, ամբողջ Գերմանիայում խոսում են դրա մասին, և մի քանի շաբաթ անց բեմադրում են հինգ-վեց տարբեր թատրոններում, չնայած ոչ մեկը, իբրև թե, պարտիտուրան չէր ստացել այդ շաբաբաստիկ դիրեկտորից:

Այլ առիթներով էլ է հանդիպել ապերախտ մարդկանց, ծառայություններ է մատուցել, բայց ոչ մի փորձություն դժբախտներին օգնելու այդ մղումից նրան չի բուժել: Բազմիցս վիճենալով անցնելիս, երբ տարաբախտ վիրտուտյուններից շատերը, ոչ ոքի չճանաչելով այդ քաղաքում, դիմում էին նրան, Մոցարտը նրանց նախ և առաջ իր սեղանն ու բնակարանն էր տրամադրում, ծանոթացնում էր այնպիսի մարդկանց հետ, որոնք կարող էին օգտակար լինել և հետո, ճանապարհ դնելուց առաջ, համարյա միշտ կոնցերտներ էր կրում նրանց համար, նույնիսկ սեագրությունը չէր պահում, որպեսզի միայն նրանք լինեն այդ գործի միակ կատարողները և ավելի շատ օգուտ քաղեն զրանից:

Մոցարտը հաճախ կիրակի օրերին համերգներ էր կազմակերպում իր տանը: Մի շարք մասնակիցների հետ այդ օրը նրանց տուն էր եկել նաև մի լեհ կոմս: Բոլորը հիացան առաջին անգամ կատարվող հինգ գործիքի համար գրված երաժշտական ստեղծագործությամբ: Կոմսը Մոցարտին խոստովանեց այդ գործից ստացած մեծագույն հաճույքի մասին և խնդրեց, որ եթե ազատ ժամանակ ունենա, ֆելետայի համար տրիո զրի: Մոցարտը համաձայնեց այն պայմանով, որ շտապեցնի իրեն: Տուն վերադառնալուն պես կոմսը կոմպոզիտորին ուղարկեց հարյուր կես-սուվերեն ոսկի (2000 ֆրանկից մի քիչ ավելի) քաղաքավարի երկտողով, որտեղ շնորհակալություն էր հայտնում վայելած հաճույքի համար: Մոցարտը կոմսին ուղարկեց նրան զուր եկած հինգ գործիքի համար գրած երաժշտական կտորի բնագիր օրինակը: Կոմսը մեկնեց: Մեկ տարի անց Մոցարտին այցելության եկավ և հարցրեց իր պատվիրած տրիոյի մասին:

— Պարոն,— պատասխանեց կոմպոզիտորը,— դեռ համար պահ չեմ գտել, որ ձեր ճաշակին համապատասխան գործ ստեղծեմ:

— Հետևաբար,— պատասխանեց կոմսը,— ավելի համար պահ չեք գտնի վերադարձնելու հարյուր կես-սուվերեն ոսկին, սր նախօրոք վճարել եմ այդ երաժշտության համար:

Չայրացած Մոցարտը անմիջապես վերադարձրեց նրա ոսկիները, բայց կոմսն ամենեին շանդրադարձավ հինգ գործիքի համար գրված երաժշտական հատվածի բնագիր օրի-

նակին, որը շուտով հայտնվեց Արտարիայի մոտ որպես կլավեսինի համար գրված կվարտետ՝ ջութակի, ալտի և թավջութակի ուղեկցությամբ:

Մոցարտի մոտ ականառու էր շատ արագ նոր սովորություններ ձևաբան հատկանիշը: Կինը, որին միշտ ջերմորեն սիրում էր, անկայուն առողջական վիճակում էր: Երկարատև հիվանդություններից մեկի ընթացքում Մոցարտը նետվում էր կնոջը այցելության եկած մարդկանց ընդառաջ, մատր դնում էր շուրթերին, հասկացնելով, որ շաղմկեն: Կինն առողջացավ, բայց դրանից հետո էլ նա մարդկանց դիմավորում էր մատր դնելով շուրթերին և շշուկով էր խոսում նրանց հետ:

Այդ հիվանդության ժամանակ նա երբեմն վաղ առավոտյան ձիով դնում էր մենակ զբոսնելու, բայց դուրս գալուց առաջ կնոջ մոտ միշտ թողնում էր մի գրություն, որ նման էր բժշկական ցուցումների: Ահա այդ թղթերից մեկը. «Բարև, անուշիկ աիկինս, հուսով եմ, որ լավ ես քնել և ոչինչ չի խռովել քեզ, զգուշացիր մրսելուց և կռանալու ժամանակ քեզ ցավ պատճառելուց, մի բարկացիր սպասավորների վրա, մինչև իմ վերադարձը խուսափիր ամեն տեսակի հուզումներից: Պահպանիր քեզ, կվերադառնամ ժամը իննին»:

Կոնստանցե Վերերը Մոցարտի համար եղել է անզուգական կողակից և շատ անգամներ օգտակար խորհուրդներ է տվել նրան: Մոցարտը նրանից երկու զալակ ունեցավ, սրոնց հետ ջերմորեն կապվեց: Նա ուրախանում էր, երբ մեծ դուրս էր անցնում ձեռքը, բայց հաճույքների հանդեպ ունեցած անսանձ սերը և ընտանեկան դործերում ցուցաբերած անփութությունը պատճառ դարձան, որ ընտանիքին թողնելու միայն իր փառապանծ անունը և Վիեննայի հասարակության ջերմ վերաբերմունքը: Մեծ կոմպոզիտորի մահից հետո վիեննացիները ջանում էին իրենց երախտագիտությունը հայտնել նրա երեխաներին, քանի որ Մոցարտը հաճախ էր հաճույք պարզեցնել նրանց:

Կյանքի վերջին տարիներին Մոցարտի առանց այն էլ թույլ առողջությունը արագորեն դեպի անկում էր գնում: Նա վախենում էր ապագա դժբախտություններից: Այգպիսին ևն բոլոր երեակայնությամբ հարուստ մարդիկ: Վախենում էր նաև

այն մտքից, որ քիչ ժամանակ է մնացել ապրելու և շատ էր հույզվում, սկսում էր ավելի շատ աշխատել, այնպիսի արագություններ և ուշադրություն լարումով, որ երբեմն մոռանում էր, թե իր արվեստին ինչը չի համապատասխանում: Ողևորության պահերին ուժերը հաճախ լքում էին նրան, նա ուժասպառ ընկնում էր, և ստիպված անկողին էին տեղափոխում: Բոլորն էլ նկատում էին, որ այս անհանգիստ աշխատանքը քայքայում է նրա առողջությունը: Կինն ու բարեկամները ամեն ինչ անում էին, որ ցրեն նրա մտքերը: Նրանց հաճույք պատճառելու համար Մոցարտը զբոսանքի, այցելությունների էր գնում նրանց հետ, զնամ էր ուր որ տանեին, բայց միտքն ուրիշ տեղ էր: Ժամանակ առ ժամանակ այդ սովորական վիճակից և լուսամտ մեկամաղձից նրան դուրս էր հանում իր մոտալուտ վախճանի կոնխազգացումը միայն, որի մասին ամեն անգամ նա ավելի մեծ սարսափով էր մտածում: Մեզ հայտնի է Տասսոյի յուրատեսակ մոլագարությունը, ինչպես նաև Ռուսսոյինը, որն այնքան երջանիկ էր Շերմետի հովտում: Մոտալուտ մահվան վախից առաջացած մոլագարությունը հանգեցրեց նրան իր միակ փիլիսոփայությանը. օգտվել ներկայից և մոռանալ վշտերը: Գուցե առանց նյարդային սուր բորբոքման, որ հասնում է խելագարության, չկա բարձրագույն տաղանդ՝ հոգու զղայունություն պահանջող արվեստի մեջ:

Մոցարտի կինը, անհանդստացած նրա այս արտառոց վիճակից, աշխատում էր ամուսնու մոտ հավաքել նրա սիրելիներին, և վերջիններիս ձեռքնում էին, թե ճիշտ ժամանակին ևն ևկել, քանի որ ժամերով աշխատելուց հետո Մոցարտը պետք է հանգստանալու մասին մտածեր: Այս այցելությունները հաճելի էին նրան, բայց փետուրը ձեռքից ցած չէր դնում: Զրուցում էին, աշխատում էին խոսակցության մեջ ներգրավել, սակայն ոչ մի մասնակցություն չէր ցուցաբերում, խոսքն ուղղում էին նրան, մի քանի շոկախ բառերով պատասխանում էր և շարունակում գրել:

Մտքի այսպիսի ծայրահեղ լարվածությունը երբեմն ուղեկցում է տաղանդին, բայց ամենևին՝ զրա գրսևորման ապացույցը չէ: Տեսեք Ռոմասին, ո՞վ կարող է կարգալ նրա գերազրական աստիճաններով ճոռոմ հավաքածուն, մինչդեռ

այնպես էր մխրճված ճարտար լինելու միջոցների մասին խոհերի մեջ, որ Մոնմորենսիում, երբ ծառան նրա մոտ տարավ ձիուն, որով սիրում էր զբոսնել, այդ նույն ձիուն, ցըրված պահին, ծխախոտ առաջարկեց: Ռաֆայել Մենզը նույնպես խիստ մտազբաղ մարդու կերպար է եղել, այնինչ երրորդ կարգի նկարիչ է: Իսկ Լե Գիզը, մարզկանցից ամենախաղամուրը, որ կյանքի վերջին տարիներին օրտկան երեք կտավ էր նկարում, որպեսզի դիշերը պարտքերը մարի, այնպիսի գործեր է թողել, որոնցից ամենաթույլը շատ ավելի մեծ հաճույք է պատճառում, քան Մենզի կամ Յարլո Մարատտիի՝ խիստ մտազբաղ նկարիչների լավագույն կտավները: Մի օր կանանցից մեկն այսպես արտահայտվեց ինձ մոտ. «Ո՞ւմն պարոն երգվում է, որ ընդմիշտ տիրելու եմ նրա սրտին: Աստված իմ, հավատում եմ, բայց ինչի՞ս է պետք, եթե այդ սիրտն ինձ դուր չի գալիս»: Ո՞ւմ է պետք առանց տաղանդի գերմտազբաղությունը: Մոցարտը գուցե տասնութերորդ դարում եղել է երկու երևույթների միավորման ամենացայտուն օրինակը: Բենդան* «Արիադենն նաքսոս կըզզում» գործի հեղինակը, նույնպես մտազբաղության ուժեղ հատկանիշներ է դրսևորել:

ԳԼՈՒԽ ՅՈՒԵՐՈՐԴ

Մոցարտն այս վիճակում գրեց «Կախարդական սրինգը», «Տիտուսի գթությունը», «Ռեքվիեմը» և այլ ավելի քիչ հայտնի գործեր: Առաջին երկու օպերաները գրելու ժամանակից սկսեցին նկատվել ուշաթափության դեպքեր, որի մասին խոսվել է վերը: Շատ էր սիրում «Կախարդական սրինգը», շնայած այնքան էլ գոհ չէր հասարակության կողմից ոգևորությունամբ ընդունված և անընդհատ ծափահարությունների արժանացած հատվածներից: Այս օպերան բազմիցս բեմադրվեց,

բայց Մոցարտը առողջական վատ վիճակի պատճառով հնարավորութիւն ունեցաւ միայն առաջին ինը-տասը ներկայացումները ղեկավարել: Երբ անհնար էր լինում թատրոն գնալ, նա ժամացույցը դնում էր կողքին և կարծես մտքով հետևում էր նվագախմբին. «Ահա վերջացաւ առաջին գործողութիւնը, — ասում էր նա, — հիմա այս կամ այն արիան են կատարում» և այլն: Հետո նորից սլաշարվում էր այն մտքով, թե շուտով լքելու է այս ամենը:

Բավականին տարօրինակ մի միջադեպ վրա հասաւ արագացնելու անխուսափելի վախճանը, որ հետեանքն էր այդ շարադետ տրամադրութեան: Խնդրում եմ թույլ տալ մանրամասնորեն նկարագրելու այդ իրադարձութիւնը, քանի որ գրան Լնք պարտական հռչակավոր «Ռեքվիեմի» ստեղծման համար, որն իրավամբ համարվում է Մոցարտի դուխ-գործոցներից մեկը:

Մի օր, երբ նա թաղված էր խոր մտորումների մեջ, լսում է իրենց դռան մոտ կանգնող ձիակառքի անիվների դղրդիւնը: Հայտնում են, որ մի անձանոթ ցանկանում է խոսել իր հետ: Ներս են հրավիրում: Մոցարտը տեսնում է իր առջև կանգնած որոշակի տարիքի, շատ լավ հագնված, ամենապնդվական շարժուձևերով, մինչև իսկ տպավորիչ մեկին:

— Ես Լեկել եմ ձեզ մոտ շատ կարևոր մարդու հանձնարարութեամբ:

— Ո՞վ է այդ մարդը, — ընդհատում է նրան Մոցարտը:

— Ցանկանում է անհայտ մնալ:

— Շատ լավ, իսկ ի՞նչ է կամենում:

— Վերջերս նա կորցրեց շատ սիրելի մի մարդու, որի հիշատակը հավերժ թանկագին է: Նա ցանկանում է ամեն տարի հանդիսավոր արարողութեամբ նշել մահվան տարեդարձը: Խնդրում է ձեզնից այդ արարողութեան համար «Ռեքվիեմ» գրել:

Մոցարտը խորապես ցնցվում է այս խոսակցութիւնից, լրջութեամբ արտասանված բառերից, նրա խորհրդավոր տեսքից, որ կարծես սփռվում է այս ամբողջ մթնոլորտի վրա: Խոստանում է գրել «Ռեքվիեմը»: Անձանոթը շարունակում է.

— Այս գործի մեջ ներդրեք ձեր ողջ տաղանդը, դուք աշխատում եք երաժշտագետի համար:

- Ավելի լավ:
- Որքա՞ն ժամանակ է հարկավոր:
- Չորս շաբաթ:
- Շատ լավ, կվերադառնամ չորս շաբաթից: Ի՞նչ գին եք առաջարկում ձեր աշխատանքի համար:
- Հարյուր դոլար:

Անձանոթը դրամը թողնում է սեղանին և անհետանում: Մոցարտը երկար ժամանակ ընկնում է խոր մտորումների մեջ, հետո անմիջապես պահանջում է գրիչ, թանաք, թուղթ և, չնայած կնոջ հանդիմանություններին, սկսում է գրել: Այս աշխատանքային փոթորիկը տևում է մի քանի օր: Գիշեր ցերեկ ստեղծագործում է օր օրի սաստկացող հափշտակությամբ: Սակայն թուլացած մարմինը չի դիմանում այդպիսի լարվածության: Ի վերջո, մի առավոտ ուշադնաց ընկնում է դեպի և ստիպված ընդհատում է աշխատանքը: Երկու-երեք օր հետո կնոջը, որը ջանում էր ցրել նրա միտմած մտերիքը, հանկարծ պատասխանում է.

- Ոչ մի կոսկած չի կարող լինել, ինձ համար եմ գրում այս «Ռեքվիեմը», իմ թաղման արարողությունը կձառայի: Այդ միտքը ոչ մի թույլ չի լքում նրան:

Որքան աշխատում է, այնքան զգում է, որ ուժերն սպառվում են, իսկ գործը դանդաղ է ընթանում: Պահանջված չորս շաբաթը լրանալուն պես կրկին հայտնվում է նույն անձանոթը:

- Անհնար էր, — ասում է Մոցարտը, — խոսքիս տերը մնալ:

— Մի անհանգստացե՛ք, — պատասխանում է անձանոթը, — որքա՞ն ժամանակ է ձեզ հարկավոր:

- Չորս շաբաթ: Շատ ավելի հրապուրեց ինձ այս գործը, քան կարծում էի և նախատեսածիցս ավելի ծավալվեցի:

— Այդ դեպքում արդարացի կլինի հոնորարն ավելացնել, ահա ես հիսուն դոլար:

- Պարոն, — ասում է Մոցարտը ավելի ու ավելի զարմանալով, — ս՞ի՞ էք գուք վերջապես:

— Դա գործին օգուտ չի տա, չորս շաբաթից կվերադառնամ:

Մոցարտն անմիջապես հրամայում է ծառաներից մեկին հետևել այդ տարօրինակ մարդուն և իմանալ, թե ով է նա, բայց ձախորդ սպասավորը վերագառնալով հայտնում է, որ կորցրել է հետքը:

Խեղճ Մոցարտը գլուխն է մտցնում այն միտքը, թե այդ անծանոթը սովորական էակ չէ, որ նա անկասկած այն աշխարհի հետ կապ ունի և ուղարկված է իր մոտալուտ վախճանը հայտնելու: Ավելի մեծ հուսնությով է աշխատում «Ռեքվիեմի» վրա, որը համարում է իր տաղանդի ամենատեական հուշարձանը: Այս աշխատանքի ընթացքում մի քանի անգամ տազնապալի ուշագնացություններ է ունենում: Ի վերջո, չորս շաբաթը չլրացած, գործն ավարտվում է: Անծանոթը գալիս է ճիշտ ժամանակին: Իսկ Մոցարտն այլևս չկար:

Որքան կարճ, այնքան փայլուն եղավ Մոցարտի կյանքի ուղին: Նա մահացավ երեսունվեց տարին հազիվ բոլորած, բայց այս կարճ տարիների ընթացքում նա վաստակեց մի անուն, որ կհարատևի այնքան ժամանակ, որքան երկրի վրա զգայուն սրտեր կբաբախեն:

ՎԱՆԻՆԱ ՎԱՆԻՆԻ
ԿԱՄ
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պապի նահանգներում հայտնաբերված կաբոնաթիների
վերջին վեցտեղի մասին*

182... թվականի դարնանային երևկոներից մեկն էր: Հոռոմ քաղաքը աշխույժով էր լցված: Հռչակավոր բանկիր պարոն դուքս B-ն վեներտիկի հրապարակի վրա գտնվող իր նոր պալատում պարահանդես էր կազմակերպել: Իտալիայի արվեստը, Փարիզի և Լոնդոնի ճոխության բոլոր հրաշալիքները, որոնք կարող են ամեն մի պալատի հմայք հաղորդել, կենտրոնացել էին այստեղ: Մեծ ընտրանի էր: Անգլիայի ազնվականական դասի շիկահեր, խստաբարո գեղուհիները իրենց սղջ հմայքն ի սպաս էին դրել այդ պարահանդեսին մասնակցելու պատվին արժանանալու համար: Գալիս էին հորձանքով: Հոռոմի ամենասիրուն կանայք մրցում էին նրանց հետ իրենց գրավչությամբ: Հոր ուղեկցությամբ դահլիճ մտավ մի գեռատի սղջիկ, որի աչքերի ցուրը, էբենոսե մազերը մատնում էին նրա հասմուհի լինելը: Բոլոր հայացքները ուղղվեցին նրան: Նրա ամեն մի շարժումից արտակարգ հպարտություն էր ճառագում:

Օտարերկրացի հյուրերը ապշած էին պարահանդեսի փառահեղությունից: «Եվրոպական ոչ մի թագավորի տոնախորհրություն,— ասում էին նրանք,— չի հասնի սրան»: Եվրոպայի արքաները հոռոմեական ճարտարապետությամբ կառուցված պալատներ շունեն: Եվ հետո նրանք ստիպված են հրավիրել միմիայն իրենց արքունիքի ղեկավարներին, մինչ-

դեռ պարոն գուբա B...-ն հրավիրում էր միայն գեղեցիկ կանանց: Հյուրերի համար ուրախ երեկո էր: Ուրոշվեց այդ նշանավոր կանանցից ընտրել ամենագեղեցիկին: Երկար ժամանակ չէին կարողանում վճիռ կայացնել, բայց, ի վերջո, իշխանուհի Վանինա Վանինին՝ սևահեր, բոցեղեն հայացքով աղջիկը, հռչակվեց պարահանդեսի թագուհի: Օտարերկրացիներն ու երիտասարդ հոտմեացիները, իսկույն դուրս գալով տարբեր սրահներից, բազմախուռն հավաքվեցին պարահանդեսի դահլիճում:

Վանինացի հայրը՝ իշխան գոն Ասդրուբալ Վանինին, նախ ցանկություն հայտնեց, որ գուտորը պարի երկու-երեք գերմանացի անկախ իշխանների* հետ: Այնուհետև Վանինան ընդունեց մի քանի չափազանց գեղեցիկ ու ազնվական անվախիցների առաջարկությունը: Նրանց բռնազբոսիկ շարժուձևերը ձանձրալի էին: Վանինան կարծես մեծ հաճույք էր ստանում երիտասարդ կիվիո Սավելլին շարշարելով, որը թվում էր զլսվոր կորցնելու չափ սիրահարվել էր նրան: Լիվիոն Հոտմի ամենափառլուն երիտասարդներից մեկն էր, և նույնպես իշխան էր, բայց եթե նրան կարգալու սրեւ վեպ առաջարկեին, մի քսան և ջ թերթելուց հետո գիրքը մի կողմ կնետեր, ընթերցանությունը համարելով վլխացավանք: Վանինացի համար դա մեծ թերություն էր:

Կեպիշերին պարահանդեսում մեծ տպավորություն գործող լուր տարածվեց. Սենտ-Անժ քերդի* կալանավորներից մեկը, մի երիտասարդ կարբոնարո, այդ իրիկուն ծպտված փախել էր: Նա արիություն էր ցուցաբերել՝ հասնելով բանափ վերջին պարսպին, գաշտյնով հարձակվել էր գինվորների վրա և ինքն ևլ վիրավորվել էր: Իսկ հիմա ստիկանական պահնորդները փնտրում էին նրան, առաջանալով արշան հետքերով, և հույս ունեին գտնել:

Մինչ բոլորը խոսում էին այդ փախուստի մասին, դոն կիվիո Սավելլին, շլացած Վանինացի գեղեցկությունից, ինչպես նաև նրա հետ պարելու պատվին արժանանալու հաջողությունից, սիրուց համարյա խելքը կորցրած, պարից հետո հարցնում էր նրան, ուղեկցելով տեղը:

— Բայց, ի սեր ասածո, ո՞վ կարող է վերջիվերջո ձեզ դուր գալ:

— Բերդից փախած երիտասարդ կարբոնարոն,— պատասխանեց Վանինան,— նա դոնե ինչ-որ բան արել է, բացի ծնվելու նեղությունը կրելուց:

Իշխան դոն Ասդրուբալը մտեցավ դստերը: Այս մեծահարուստ մարդը արդեն քսան տարի է հնչ հաշիվ չէր պահանջել վերակացուից, որից բարձր տոկոսներով պարտք էր վերցնում իր իսկ զրամը: Եթե փողոցում հանդիպեք իշխանին, կկարծեք, թե փորձված դերասան է և չէր էլ նկատի մատներին շարված խոշոր ազամանդներով մատանիները: Նրա երկու որդիները ճիզվիա դարձան, խելագարվեցին ու մահացան: Մոռացավ նրանց: Այժմ սրտնեղում էր, որ միակ աղջիկը՝ Վանինան, չի ցանկանում ամուսնանալ: Արդեն տասնինը տարեկան է և մերժել է ամենափայլուն թեկնածուներին: Ի՞նչն էր պատճառը: Նույնը, ինչ որ սափալեց Սուլայիկն հրաժարվել իշխանությունից, հոռմեացիների հանդեպ լցված արհամարհանքով:

Պարահանդեսի հաջորդ օրը Վանինան նկատեց, որ հայրը՝ այդ բացառիկ անհոգ մարդը, որն իր էյանքում ձեռքը բանալի վերցնելու մասին անգամ չէր մտածել, մեծագույն զգուշությամբ փակում էր պալատի շորրորդ հարկաբաժինը տանող աստիճանների դուռը: Այդ հարկաբաժնի պատուհանները բացվում էին նարնջենիներով պարզարված պատշգամբի վրա:

Վանինան դնաց բաղաժ՝ այցելությունների: Վերադարձին պալատի գլխավոր մուտքի առջև հրավառության պատրաստությունների առիթով ճանապարհը փակ էր: Կտոքը բակի կողմից մտավ: Վանինան բարձրացրեց աչքերը և դարձանքով նկատեց, որ հոր խնամքով փակած հարկաբաժնի լուսամուտներից մեկը բաց է: Ազատվելով ուղեկցորդուհուց, բարձրացավ պալատի վերնահարկը և երկար որսնումներից հետո գտավ ճաղապատված փոքրիկ լուսամուտը, որ բացվում էր նարնջենիներով ծառագարդ պատշգամբի վրա: Պատուհանը երկու քայլի վրա էր: Անկասկած այս սենյակում մարդ կար, բայց ո՞վ:

Հաջորդ օրը Վանինան կարողացավ ձեռք բերել դեպի նարնջենիների պատշգամբը բացվող դռնակի բանալին: Անշուկ մտեցավ բաց պատուհանին: Թաքնվեց փեղկերի ետե-

վում: Սենյակի խորքում մահճակալ կար և ինչ-որ մեկը պառկած էր: Իսկույն մտածեց այդտեղից հեռանալ, բայց միաժամանակ նկատեց աթոռին նետված կանացի հագուստ: Ավելի ուշադիր նայելով պառկածին, տեսավ, որ շիկահեր էր և շատ երիտասարդ: Այլևս կասկած չկար. կին էր: Աթոռին նետված հագուստը ամբողջովին արյունոտված էր, արյունոտ էին նաև սեղանին դրված կանացի կոշիկները: Անծանոթը շարժվեց: Վանինան տեսավ, որ վիրավոր է: Սավանի կարմրած մի մեծ կտոր էր կապված կրծքավանդակի շուրջը: Վիրաբույժի ձեռքն այդպես չէր աշխատի:

Իրանից հետո Վանինան նկատեց, որ ամեն օր ժամը շորսին հայրը փակվում էր իր հարկաբաժնում, հետո այցելում էր անձանոթուհուն, քիչ անց իջնում էր ու կառքով դնում կոմսուհի Վիտաելեշիի մոտ: Մեկնելուն պես Վանինան բարձրանում էր փոքրիկ պատշգամբը, սրտեղից կարող էր տեսնել անձանոթուհուն: Նա շատ էր հուզվում ականելով այդ երիտասարդ դժբախտ կնոջը: Փորձում էր գուշակել նրա արկածները: Աթոռին նետված հագուստը կարծես դաշույնի հարվածներից ծակծկված լիներ: Վանինան կարող էր հաշվել պատվածքները:

Մի օր նա ավելի պարզորոշ տեսավ անձանոթուհուն. կապույտ աչքերը հստակ էր երկնքին, կարծես աղոթում էր, և հանկարծ նրա գեղեցիկ աչքերը լցվեցին արցունքով: Երիտասարդ իշխանուհին շատ ափսոսաց, որ խոսելու հնարավորություն չունի:

Հաջորդ օրը Վանինան համարձակվեց հոր ժամանումից առաջ թաքնվել փոքրիկ պատշգամբում: Եվ տեսավ, թե ինչպես դոն Ասդրուբալը մթերքներով լցված փոքր դամբյուղը ձեռքին եկավ անձանոթուհու մոտ: Իշխանը կարծես անհանգիստ էր և համարյա չէր խոսում: Չայնն էլ այնքան ցածր էր, որ չնայած ապակեպատ դուռը բաց էր մնացել, Վանինան ոչ մի բան չկարողացավ որսալ: Դոն Ասդրուբալը շատ շուտ դուրս եկավ նրա մոտից:

— Այս խեղճ կինը երևի հզոր թշնամիներ ունի, — մտածեց Վանինան, — որ այդքան հանգիստ բնավորության տեր հայրս չի համարձակվում որևէ մեկին վստահել նրան և ամեն օր տանջում է իրեն՝ բարձրանալով հարյուր քսան աստիճան:

Մի երեկո, երբ Վանինան պլուխը կամացուկ մոտեցնում էր անձանոթուհու պատուհանին, հանդիպեց նրա հայացքին, և ամեն ինչ բացահայտվեց: Վանինան ծնկի իջավ նրա առջև ու ասաց.

— Ես ձեզ սիրում եմ և ուզում եմ ձեր բարեկամը լինել:

Անձանոթուհին նշանով ներս հրավիրեց նրան:

— Ներեցեք, խնդրում եմ,— ասաց Վանինան,— իմ հիմար հետաքրքրասիրությունը երևի շատ վիրավորական է ձեզ համար: Բայց երզվում եմ պահել գաղտնիքը, իսկ եթե ուզում եք, այլևս չեմ վերադառնա:

— Մի՞թե մարդ իրեն երջանիկ չի զգա տեսնելով ձեզ,— ասաց անձանոթուհին,— այս պալատում եք սպրում:

— Իհարկե,— պատասխանեց Վանինան,— բայց երևում է ինձ չեք ճանաչում, ես Վանինան եմ, դո՛ն Ասդրուբալի դուստրը:

Անձանոթուհին դարմացած նայեց նրան, շիկնեց, հետո ավելացրեց.

— Թույլ տվեք հուսալ, որ ամեն օր կգաք ինձ մոտ, իսկ եթե հնարավոր է, իշխանին մի հայտնեք ձեր այցելություններին:

Վանինայի սիրտն ուժղին բաբախում էր, անձանոթուհին շատ վաշխուշ էր պահում իրեն: Այս խեղճ երիտասարդ կինը համարաբար վիրավորել էր հզոր մի մարդու, գուցեև խանդի պահին սպանել էր իր սիրածին: Վանինան նրա այս դժբախտ վիճակի մեջ հասարակ, գոեհիկ վարքադիժ չէր տեսնում: Անձանոթուհին ասաց, որ վիրավորված է ուսից ու կրծքից և սոսկալի ցավեր ունի: Հաճախ արյուն է թքում:

— Եվ վիրաբույժ չե՞ն հրավիրել,— բացականչեց Վանինան:

— Ձեզ հայտնի է, որ Հոռոմում վիրաբույժները պարտավոր են ոստիկանությունն անհապաղ ղեկուցել բուժվողի մասին, որ վերք է ստացել,— ասաց անձանոթուհին,— իշխանը ցանկանում է անձամբ վիրակապել իմ վերքը, թեկուզ այս աավաններով:

Անձանոթուհին նրբորեն խոսափում էր խղճալի երևալուց: Վանինան մեծ սիրով էր լցված նրա հանդեպ, բայց

մի հանգամանք խիստ զարմացնում էր երիտասարդ իշխու-
նուհուն. ամենալուրջ նյութի շուրջը խոսելիս անծանոթուհին
հանկարծ փորձում էր զսպել ծիծաղը:

— Յանկալի է իմանալ ձեր անունը,— ասաց Վանինան:

— Քլեմանթին:

— Կա՛վ, սիրելի Քլեմանթին, վաղը ժամը հինգին դար-
ձյալ կգամ:

Մի օր անց Վանինան նոր քնկերուհուն շատ վատ վիճա-
կում գտավ:

— Ես հիմա վիրաբույժ կհրավիրեմ,— ասաց Վանինան
համբուրելով նրան:

— Ոչ, ավելի լավ է մեռնեմ,— ասաց անծանոթուհին,—
մի՞թե կարող եմ վտանգի ենթարկել իմ բարերարներին:

— Հոռմի քաղաքապետի՝ մեծարգո Սավելլի-Կատանձա-
բայի վիրաբույժը մեր սպասավորի որդին է,— աշխուժորեն
վրա բերեց Վանինան,— շատ նվիրված է մեզ և իր զբաղեց-
րած պաշտոնի շնորհիվ ոչ մեկից չի վախենում: Հայրս նրա
հավասարմության մասին ճիշտ պատկերացում չունի, և
հրավիրել կտամ նրան:

— Վիրաբույժ չեմ ուզում,— այնպիսի սթափությամբ
բացականչեց անծանոթուհին, որ զարմացրեց Վանինային,—
այցելեք ինձ, իսկ եթե Աստված իր մոտ կանչի իմ հոգին,
երջանիկ կավանդեմ այն ձեր թևերի վրա:

Հաջորդ օրը անծանոթուհին սավելի վատ վիճակում էր:

— Եթե սիրում եք ինձ,— հեռանալու պահին ասաց Վա-
նինան,— թույլ տվեք վիրաբույժ հրավիրել:

— Եթե գա, իմ երջանկությունն էլ կմարի:

— Մարդ եմ ուղարկել, որ կանչեն,— պնդեց Վանինան:

Առանց որևէ բառ ավելացնելու անծանոթուհին պահեց
նրան և ձեռքը համբույրներով ծածկեց: Տիրեց երկարատև
լռություն, անծանոթուհու աչքերը արցունքով էին լցված: Ի
վերջո բաց թողեց Վանինայի ձեռքը և այնպիսի հայացքով,
որ կարծես մահվան ընդառաջ էր գնում, ասաց.

— Խոստովանել եմ ուզում: Անցյալ օրը ստեցի, անունս
Քլեմանթին չէ: Ես դժբախտ կարբոնարո եմ:

Վանինան զարմացած ետ տարավ աթոռը և իսկույն վեր
կացավ տեղից:

— Զգում եմ,— շարունակեց կարբոնարոն,— որ այս խոստովանությունը խորտակելու է կյանքին կապող վերջին հույսըս, բայց ես ապերախա կհամարեմ ինձ, եթե շարունակեմ ձեզ խաբել: Իմ անունը Պիետրո Միսսիրիլի է, տասնինը տարեկան եմ, հայրս Սենտ-Անջելո-ին-Վաղոյի ազգատ վիրաբույժ է, ես կարբոնարո եմ: Հայանաբերեցին մեր վենսան. ինձ Ռոմանիայից շղթայակապ տարան Հոռոմ: Խաղար զընդանի մեջ նեւոված՝ գիշեր-ցերեկ տասներեք ամիս անցկացրի լամպի ազոտ լույսի տակ: Մի մարդ ողորմածարար միտք հղացավ ինձ աղատել: Կանացի զգեստներ բերեց ինձ համար: Երբ բանախց դուրս էի գալիս, վերջին գոան պահնորդների կողքով անցնելիս լսեցի, թե ինչպես նրանցից մեկը զազրելի հայհոյանքներ թափեց կարբոնարոների հասցեին. ես նրան ապառախեցի: Հավատացնում եմ, անսեղի հոխորտանք չէր, այլ պարզապես ինքնամոռացություն: Այս անպուշտ բայլից հետո Հոռոմի փողոցներում հալածված, սվիններից խոցստված, ուժասպառ ինձ գցեցի ինչ-որ բաց դռան ետեր: Լսում էի ինձ հետապնդող զինվորներին, նետվեցի պարտեղ, ընկա զբոսանքի դուրս եկած ինչ-որ կնոջ ոտքերի տակ:

— Կոմսուհի Վիատելիշին, հորս ընկերուհին,— ասաց վանինան:

— Ի՛նչ, ձեզ ասե՞լ է,— բացականչեց Միսսիրիլին,— ով էլ լինի այդ կինը, անունը չպետք է արտասանվի, նա փրկեց իմ կյանքը: Երբ զինվորները ինձ բռնելու հույսով ներխուժեցին նրա բնակարանը, ձեր հայրն արդեն կառքով տեղափոխում էր ինձ: Շատ վատ եմ պոում, արդեն քանի օր է շունչս կտրվում է ուսիս վրա բացված վերքից: Ես շուտով կմեռնեմ և հուսահատ կմեռնեմ, քանի որ այլևս չեմ տեսնելու ձեզ:

Վանինան, որ այս ամենը լսում էր անհամբերությամբ, արագ դուրս եկավ սենյակից: Միսսիրիլին նրա գեղեցիկ աչքերում գուլի փոխարեն նկատեց հպարտ բնավորությանը հատուկ վիրավորված ինքնասիրության արտահայտություն:

Նույն երեկոյան հայանվեց վիրաբույժը: Միսսիրիլին հուսահատվել էր. վախենում էր այլևս շտեմնել վանինային: Հարցեր տվեց վիրաբույժին, որն առանց պատասխանելու արյուն քաշեց նրանից: Նույն լուսնունն էր և հաջորդ օրե-

րին: Պիևորոյի աշքերը չէին հեռանում լուսամուտից, որտեղ սովորաբար հայտնվում էր Վանինան. շատ դժբախտ էր: Մի օր, կեսգիշերին մոտ, նրան թվաց, թե պատշգամբի խավարում մարդկային կերպարանք է տեսնում: Վանինան էր:

Վանինան ամեն դիշեր գալիս էր և դեմքը հենում երիտասարդ կարբոնարոյի պատուհանի ապակուն: «Եթե հետը խոսեմ, կորած եմ,— մտածում էր նա,— ոչ, երբեք չպետք է հանդիպեմ նրա հետ»:

Բայց հակառակ իր սյղ որոշման, նա ակամայից հիշում էր այն բարեկամական դպացմունքը, որ տածել էր երիտասարդի հանդեպ, երբ հիմարաբար կնոջ տեղ էր դրել նրան: Եվ այդքան հաճելի մտերմությունից հետո մոռանա՞լ նրան: Ամենազոն վիճակում Վանինան սարսափում էր այն փոփոխությունից, որ կատարվել էր իր հոգում: Երբ Միսսիրիլին հայտնեց իր իսկական անունը, կարծես ամեն ինչ, որ իր սեփական մտքի արդասիքն էր, ծածկվեց քողով՝ հայտնվելով միայն հեռու-հեռվում:

Մեկ շաբաթ էլ չէր անցել, որ մի օր գունատված դեմքով ու զոզոջուն քայլերով Վանինան վիրաբույժի հետ մտավ երիտասարդ էտրբոնարոյի սենյակը: Եկել էր ասելու, որ անհրաժեշտ էր համոզել իշխանին՝ որևէ ծառայի հանձնարարել հիվանդի խնամքը: Տասը բույկից ավելի շմնաց, մի քանի օր հետո, մարգասիրությունից մզված, կրկին եկավ վիրաբույժի հետ: Բայց մի երեկո, երբ Միսսիրիլիի վիճակը ավելի բարվոք էր, և Վանինան ոչ մի պատճառ չունեի անհանգրստանալու նրա կյանքի համար, համարձակություն ստացավ մեն-մենակ գալու: Միսսիրիլին շատ ուրախացավ, սակայն որոշեց թաքցնել հուզմունքը. նախ և առաջ չէր ուզում գրկվել մարդկային արժանապատվությունից: Վանինան, որ շիկնած այտերով էր մտել նրա մոտ և վախենում էր սիրո խոստովանություն լսել, շփոթվեց նրա անձնվեր, զգայուն ու ազնիվ ընկերական վերաբերմունքից: Միսսիրիլին նույնիսկ շիրտնեց պահել նրան. Վանինան դուրս եկավ նրա մոտից:

Մի քանի օր անց, երբ կրկին վերադարձավ, նրան դիմավորեց նույն հարգալից նվիրվածության ու հավատ երախտագիտության հավաստիքը: Այժմ Վանինան բոլորովին չէր ձգտում սառնեցնել երիտասարդ կարբոնարոյի զգացմունքնե-

րը՝ ընդհակառակը, մտածում էր՝ չլինի՞ թե միայն ինքն էր սիրահարված: Երիտասարդ աղջիկը, որ մինչ այդ ծայրահեղ հպարտ անձնավորություն էր համարվում, դառնորեն զգաց, թե ինչ մեծ չափերի էր հասնում իր խենթությունը: Նա ջանում էր կենսուրախ երևալ և նույնիսկ սառնության նշանների ցույց տալ. ավելի քիչ էր գալիս նրա մոտ, բայց չէր կարողանում բռնանալ ինքն իր վրա, որ ընդհանրապես չաչցելեր երիտասարդ հիվանդին:

Միսսիրիլին տոշորվում էր սիրուց, բայց մտածում էր իր հասարակ ծագման ու պարտականության մասին և ինքն իրեն խոստացավ, թեկուղ նսեմանալու գնով, խոստովանել իր սերը, եթե վանինան ութ օրվա ընթացքում չերևար: Երիտասարդ իշխանուհու զոռողությունը քայլ առ քայլ հաղթահարվեց: «Դե, ինչ,— ի վերջո մտածեց նա,— նրա մոտ գնում եմ ինձ համար, ինձ հաճույք պատճառելու համար, բայց ես երբեք չեմ խոստովանի նրան իմ զգացմունքները»: Վանինան ժամերով նստում էր հիվանդի մոտ, իսկ Միսսիրիլին այնպես էր դիմում նրան, կարծես քսան հոգի ներկա լինեին խոսակցությանը: Մի անգամ երեկոյան, երբ ամբողջ օրը նրա հանդեպ ատելությամբ էր լցված և հաստատորեն ինքն իրեն խոստացել էր սովորականից ավելի սառը և ավելի խիստ վերարելովել, վանինան հանկարծ խոստովանեց, որ սիրում է նրան: Եվ շատ ժամանակ շանցած նրանք լիովին տրվեցին իրենց զգացմունքներին:

Ճիշտ է, նրա արածը խենթություն էր, բայց պետք է խոստովանել, որ վանինան կատարյալ երջանիկ էր: Միսսիրիլին այլևս չէր մտածում մարդկային արժանապատվության, պարտքի մասին: Նա սիրեց այնպես, ինչպես սիրում են առաջին անգամ, տասնինը տարեկան հասակում, այն էլ Իտալիայում: Նա ապրեց կրքոտ սիրո բոլոր տվայտանքները, այն սուտիճան, որ հպարտ իշխանուհուն խոստովանեց իր կատարած խորամանկ քայլը, նրա սիրուն արժանանալու համար: Զարմացած էր կատարյալ երջանկության հայտնությունից: Շատ արագ անցան այդ շորս ամիսները: Մի օր էլ վիրարույժը ազատություն տվեց իր հիվանդին:

«Ի՞նչ եմ անելու,— մտածում էր Միսսիրիլին,— թաքնվեմ Հոոմի ամենագեղեցիկ աղջկա տա՞նը, իսկ այդ անարգ բըռ-

նակալները, որոնք տասներեք ամիս պաճեցին ինձ բանտում՝ շխտողներով օրվա լույսն անգամ տեսնել, շե՛ն կարծի, թե վճատեցրել են ինձ: Իտալիա՞, իրոք պժրախա ես, քանի որ պավակներդ այսպիսի դյուրությամբ լքում են քեզ»:

Վանինան հավատացած էր, որ Պիետրոյի ամենամեծ երջանկությունը իր հավերժական սերն էր: Թվում էր, թե նա իրոք բախտավոր է, բայց դեներալ Բոնապարտի արտահայտած մի միտք որպես դուր հանդիմանություն արձագանքելով երիտասարդի հոգում, ազդում էր կանանց հանդեպ նրա վերաբերմունքի վրա: 1796 թվին երբ դեներալ Բոնապարտը հեռանում էր Բրեշիայից*, մինչև բաղաքի պարպասները ուղեկցող ղեկավարները նրան ասացին, որ ամենաշատ տղատություն սիրողները Իտալիայում իրենց համաքաղաքացիներն են: «Այս՝ — պատասխանել էր Բոնապարտը, — այդ մասին նրանք սիրում են շաղակրտակել իրենց սիրուհիների հետ»:

Միսսիրիլին սրտնեղած դիմեց Վանինային.

— Այսօր մութն բնկնելուն պես ես պետք է դուրս գամ այստեղից:

— Աշխատիր մինչև լուսաբաց վերադառնալ, կապահամ:

— Մինչև լուսաբաց ես Հոսմից հաղարտվոր վերստեր հետո կլինեմ:

— Ահա թե ինչ, — ստոնորեն ասաց Վանինան, — իսկ ո՞ր եք գնալու:

— Ռոմանիա, վրեժ լուծելու:

— Որ այդպես է, — շարունակեց Վանինան ամենայն հանդրստությունը, — ես հարուստ եմ, հուսով եմ ինձնից դրամ ու զենքեր կրնդուներ:

Միսսիրիլին մի քանի վայրկյան առանց աչքերը թարթելու նայեց նրան, հետո գիրկը նետվելով բացականչեց.

— Հոգուս հատոր, դու ամեն ինչ մոռացնել ես տալիս ինձ, նույնիսկ պարտականությունս: Բայց որքան ազնիվ է հոգիդ, այնքան ավելի լավ պետք է ինձ հասկանաս:

Վանինան շատ արցունք թափեց, բայց ի վերջո պայմանավորվեցին, որ նա Հոսմից կհեռանա երկու օր հետո:

— Պետրո, — հաջորդ օրն ասաց Վանինան, — հաճախ եք ինձ ասել, որ հանրաճանաչ մի մարդ, օրինակ, Հոսմեացի մի

ազնվական, եթե շատ հարուստ է, կարող է մեծ օգուտ տալ ազատության գործին, եթե Լրբեկիցե Ավստրիան մեզնից հետո պետերագմի մեջ մտնի սրևէ մեծ երկրի հետ:

— Իհարկե,— զարմացած պատասխանեց Պիետրոն:

— Լավ, դուք քաջ մարդ եք, ձեզ պակասում է միայն բարձր զիրքը, ձեզ առաջարկում եմ իմ ձեռքը և երկու հարյուր հազար դա՛հեկանի եկամուտ: Հորս համաձայնությունը ինքս ձեռք կբերեմ:

Պիետրոն ծնկի իջավ նրա առջև: Վանինան ուրախությունից փայլում էր:

— Ամբողջ հոգով սիրում եմ ձեզ,— ասաց Պիետրոն,— սակայն հայրենիքիս խեղճ ծառան եմ, և քանի դեռ Իտալիան դժբախտության մեջ է, պետք է նրան հավատարիմ մնամ: Դո՛ն Ասպրուբալի համաձայնությունը ձեռք բերելու համար անհրաժեշտ կլինի երկար տարիներ խղճուկ դեր ստանձնել: Վանինա, ես մերժում եմ քո առաջարկությունը:

Միսսիրիլին շտապեց կառչել այս մտքից: Քաջությունը լքում էր նրան:

— Իմ դժբախտությունն այն է, որ կյանքիցս ավելի եմ սիրում քեզ: Ինձ համար Հոռմից հեռանալը շահագանց մեծ տանջանք է: Ախ, միայն Իտալիան աղաաւլեր բարբարոսներից: Ինչ հաճույքով կգնայի քեզ հետ Ամերիկա, այնտեղ ապրելու:

Վանինան սառած կանգնել էր: Առաջարկության մերժումը խոցել էր հպարտությունը: Բայց և այնպես միանգամից նետվեց Միսսիրիլիի գիրկը ու բացականչեց.

— Նրբեր այսքան սիրելի չես եղել ինձ համար, այո, իմ փոքրիկ գյուղական վիրաբույժ, ես քոնն եմ ընդմիշտ, հին հոռմեացիների պես դո՛ւ էլ մեծ ես:

Ապագայի բոլոր հարցերը, տրամաբանական բոլոր տխուր արտահայտություններն անհետացան, իշխեց կատարյալ սիրո պահը: Այնուհետև երբ սկսեցին լրջությամբ դատել, Վանինան ասաց.

— Մեկնելուցդ համարյա անմիջապես հետո կգնամ Ռոմանիա: Արտոնություն կխնդրեմ Պորետտայում հանդատանալու համար: Կիջևանեմ Սան Նիկոլոյի մեր զղյակում, Ֆորլիի մոտ...

— Այնտեղ ամբողջ կյանքս քեզ հետ կանցկացնեմ,—
 քացազանչեց Միսսիրիլին:

— Դժբախտաբար, բնավորութիւնս է այդպիսին, ամեն
 ինչում հանդգնել,— հառաչելով շարունակեց Վանինան,—
 կկործանուիմ հանուն քեզ, բայց ինչ փուլթ: Կարո՞ղ ես բա-
 րոյազրկված աղջկա սիրել:

— Մի՞թե իմ կինը չես,— ասաց Միսսիրիլին,— այն էլ հավերժ
 պաշտելի կինը: Ես կարող եմ սիրել ու սատար կանդնել քեզ:

Վանինան անհրաժեշտաբար մասնակցելու էր ինչ-որ հան-
 դեսի: Հենց որ հեռացավ Միսսիրիլիի մոտից, վերջինս իր
 կատարած քայլը բարբարոսութիւն համարեց:

— Ի՞նչ բան է հայրենիքը.— հարց էր տալիս նա ինքն
 իրեն,— շնչավոր արարած չէ, որի ընձեռած բարի գործի դի-
 մաց վարձահատույց լինելու մասին մտածես և երբ թերա-
 նաս պարտականութիւններդ մեջ, զժբախտութեան պահին
 անեծք թափի գլխիդ: Հայրենիքը, ինչպես և ազատութիւնը,
 նման են վերարկուի, եթե անհրաժեշտ է, պետք է գնել, այն
 էլ, իհարկե, եթե հայրդ ժառանգութիւն չի թողել: Ըստ էու-
 թեան ես սիրում եմ հայրենիքն ու ազատութիւնը, սրովհետեւ
 երկուսի անհրաժեշտութիւնն էլ զգում եմ: Իսկ եթե չգի-
 տեմ ինչպես վերարկելի գրանց, եթե գրանք նման են այն
 վերարկուին, որը պետք է հագնել օգոստոս ամսին, կարիք
 կա՞ արդյոք դա գնելու, այն էլ այդքան մեծ գնով: Վանինան
 չափազանց զեղեցիկ է, արտակարգ տաղանդով օժտված:
 Շատերը կաշխատեն դուր գալ նրան, իսկ ինքը կմոռանա ինձ:
 Էլ ինչ կին, որ մի սիրեկան էլ չունենա: Այդ հոռմեացի իշ-
 խանները, որոնց ևս արհամարհում եմ որպես քաղաքացու,
 առավելութիւն ունեն իմ նկատմամբ: Նրանք պետք է որ
 շատ հմայիչ լինեն: Է, եթե գնամ, Վանինան ինձ կմոռանա և
 հավիտյան կկորցնեմ նրան:

Կեողիշերին Վանինան եկավ: Միսսիրիլին նրան քացա-
 հայտեց այն անորոշ վիճակը, որի մեջ միւրճվել էր, և հայտ-
 նեց իր ներսում բուն գրած երկընտրանքի մասին սիրո և
 հայրենիքի միջև Վանինան ցնծում էր:

— Եթե նա ընտրութիւն է կատարելու հայրենիքի և իմ
 միջև,— մտածում էր Վանինան,— առավելութիւնն անպայ-
 ման ինձ կտա:

Հարեան եկեղեցու զանգերը ժամը երեքն էին աղղարարում. հասել էր վերջին հրաժեշտի պահը: Պիետրոն գրկել էր Վանինային: Իջնում էին փոքր աստիճաններով, երբ վերջինս, զսպելով արցունքները, ժպիտը երեսին ասաց.

— Եթե քեզ խնամած լինեիր մի աղքատ գեղջկուհի, վարձահատույց չէի՞ր լինելու, չէի՞ր ցանկանալու վճարել նրան: Ապագան անորոշ է, անցնելու ես թշնամիներիդ միջով, շնորհիւր ինձ երեք օր որպէս վարձատրություն: Պատկերացրու, որ մի խեղճ կին եմ, և դու վճարում ես ինձ ցուցաբերածս հոգատարութեան դիմաց:

Միսսիրիլին մնաց: Իսկ մի քանի օր հետո մեկնեց Հոռմից:

Շնորհիւր օտարերկրյա գեսպանատնից գնված անձնագրի, նա հասավ իր ընտանիքի գիրկը: Ուրախությունն անսահման էր: Նրան մեռած լին կարծում: Ընկերները նրա գալուտը նշելու համար ուզեցին մեկ-երկու կարաբինիերների (պապի նահանգներում այդպէս են անվանում ոստիկաններին) սպանել:

— Առանց անհրաժեշտութեան կարիք չկա խաւացի սղանել, մանավանդ, եթե զենք գործածել գիտե,— ասաց Միսսիրիլին,— մեր հայրենիքը երջանիկ Անդլիայի նման մի կղզի չէ: Մեր զինվորներն այնքան էլ շատ չեն, որ կարողանան զիմազրել Նվրոպայի թագավորների հարձակումներին:

Որոշ ժամանակ անց Միսսիրիլին, որին նեղն էին զցել կարաբինիերները, Վանինայի նվիրած ատրճանակով երկուսին սպանեց: Նրա գլխի համար գումար խոստացան:

Վանինան շերեաց Ռոմանիայում: Միսսիրիլին մտածեց, որ մոռացել է իրեն: Հպարտությունը խոցված էր: Անընդհատ մտորում էր այն մասին, որ դասակարգային տարբերությունը պատենը չի պէս կանգնել է իր և սիրուհու միջև: Խանդաղատանքի և երջանիկ անցյալի մասին ամոսոսանքով հիշելով՝ մի պահ մտքով անցավ վերագառնուլ Հոռմ, տեսնելու, թե ինչով է զբաղված Վանինան: Քիչ էր մնացել, որ այդ խելագար միտքը հաղթեր բանականութեանը, երբ մի երեկո դողանջեցին լեռան բարձունքին գտնվող եկեղեցու տոսվոտյան ժամերգութեան զանգերը, բայց այնքան տարօրինակ ձևով, որ թվում էր ժամհարը խաղ է անում: Դա կարբոնա-

բիսերի վե՛նՏՆԻ համախմբման աղղանշանն էր. Միսսի-
րիլին Ռոմանիա հասնելուն պես մտել էր այդ վենետի կազմի-
մեջ: Նույն գիշերը բոլորը հավարվեցին անտառի մենաբան-
ներից մեկում: Երկու Շոնաւլըր, մրափելով թմրադեղի ալ-
դեցության տակ, ամենեին շիմացան, թե ինչ նպատակի
էր ծառայել իրենց տնակը, Միսսիրիլին եկավ նրանց մոտ շատ
տխուր տրամադրության մեջ և այդտեղ էլ իմացաւ, որ
վե՛նՏՆԻ ղեկավարը ձերբակալված է, իսկ իրեն, որի քսան
տարին դեռ նոր էր բուրբել, կարբոնարիները սրռել էին
ընտրել նրա փոխարեն, շնայած վենետի կազմում կային
հիսունից բարձր տարիքի, դեռևս 1815 թվականին Մյուրաաի
արշավանքից մնացած դավադրության մասնակիցներ: Այս
անսպասելի պատվին արժանանալով Պիետրոն զգաց, թե
ինչպես է տրոփում սիրտը: Մենակ մնալուն պես որոշեց
այլևս շմտածել իրեն մոռացած հոռմեուհու մասին և ամբողջ
մտքերը կենտրոնացնել Իտալիան բարբարոսներից՝ ազատու-
գրելու գործի շուրջը:

Երկու օր անց շրաբերներից ստացած գրավոր պեկուց-
ման մեջ, որ անձամբ հանձնում էին վենետի ղեկավարին,
հայտնվում էր իշխանուհի վանինայի Սան-Նիկոլո ղզյակ
ժամանելու լուրը: Կարդալով նրա անունը, Միսսիրիլին ավե-
լի շատ հուզվեց, քան ուրախացավ: Իզուր էր ջանում համո-
ղել իրեն, թե ինքը հայրենիքի հավատարիմ դավակն է, աշ-
խատում էր գսպել իրեն, որ հենց նույն երեկոյան Սան-
Նիկոլոս ղզյակը չթռչի. վանինան, որին նա փորձեց անտեսել,
այժմ խանգարում էր կատարել իր պարտքը: Հաջորդ օրը
միայն տեսավ նրան: Վանինան առաջվա պես, ինչպես Հոռ-
մում, սիրում էր իրեն: Հայրը ցանկացել էր ամուսնացնել
նրան, այդ էր պատճառը, որ ուշացել էր: Հետը բերել էր եր-
կու հաղար սրբեն: Այս անսպասելի օգնությունը հրաշալի
կերպով օգնեց Միսսիրիլին՝ արժանավոր կերպով կատա-
րելու իր նոր պատվավոր պարտականությունը: Կորֆու կրդ-
ղում դաշույններ պատվիրեցին, կաշառեցին Հոռմի պապի

¹ Liberal l'Italia de barbari—1350 թ. Պետրարբան մեկ անգամ ևս
արտասանեց այս նախադասությունը, որ կրկնվել է սկսած Հուլիոս 2-րդի
Մաքիավելլու, կոմս Ալֆիերիի ժամանակներից:

ներկայացուցչի անձնական քարտուղարին, որին հանձնարար-
ված էր հետևել կարբոնարիներին: Այսպիսով ձեռք բերին
այն բահանների ցուցակը, որոնք որպես լրտես ծառայում
էին կառավարութեանը:

Հենց այդ շրջանում կազմակերպվում էր դավադրություն,
որը բազմաշարժար Իտալիայում երբևէ բանկվածներից ամե-
նից քիչ անխոհեմն էր: Անտոդի մանրամասնությունների մեջ
չեմ խորանա: Կրավարարվեմ ասելով, որ Լիև հաջողու-
թյամբ պատկեր այս նախաձեռնումը, Միսսիրիլին ամենա-
մեծ փառքին էր սորձանանարու: Հաղարավոր ապստամբներ
նրա մեկ ազդանշանով ոտքի էին կանգնելու և զինված սպա-
սելու էին մինչև գլխավոր ղեկավարները հասնեին: Եվ, ինչ-
պես սովորաբար լինում է նման դեպքերում, վճռական
պահին, ղեկավարների ձերբակալման պատճառով, դավա-
դրությունը տապալվեց:

Հազիվ Ռոմանիա հասած՝ վանինան համոզվեց, որ հայ-
րենիքի հանդեպ տածած սերը իր սիրեկանին մոռացնել էր
տալիս ամեն տեսակի զգացմունք: Հոռմեուհու հպարտու-
թյանը գլուխ բարձրացրեց: Զուր էր փորձում դիմել բանա-
կանությունը, սև թախիծը համակեց նրան ամբողջապես, զար-
մացավ, զգալով, որ անիծում է ազատությունը: Մի օր, երբ
Ֆուրլի էր եկել Միսսիրիլին տեսնելու, շարողացավ սանձել
մինչ այդ հպարտության քողի տակ պահված վիշտը:

— Դուք իրոք ինձ ամուսնու պես եք սիրում, — ասաց
վանինան, — ես այդ շէի սպասում ձեզանից:

Եվ հորդեցին իսկույն արցունքի հեղեղներ, նա ամաչում
էր, որ պախարակվելու աստիճան ստորացել էր: Միսսիրիլին
հանգստացնում էր նրան, սակայն երևում էր, որ տարված
է այլ հոգսերով: Հանկարծ վանինան միանգամից որոշեց լքել
նրան և վերադառնալ Հոռմ: Նա երջանկություն համարեց դա-
ժանարար պատժելու ինքն իրեն այդպես թույլ գտնվելու
համար, որ արտահայտվել էր նրա ներկայությամբ: Կարճա-
տև լռությունից հետո որոշումը կայացված էր. նա արժանա-
պատվությունից դուրի մարդ պիտի դառնար Միսսիրիլիի աչ-
քին, Լիև շքեր նրան: Արդեն ուրախանում էր, վստօրոք զգա-
լով նրա վշտախառն դարմանքը, երբ իզուր փնտրելու էր
իրեն: Բայց մտածելով, որ այլևս չէր կարող ձեռք բերել այն

մարդու սերը, որի համար այդքան խենթություններ էր արել, իսկույն անսահմանորեն քնքշացավ: Այդ ժամանակ Վանինա՞ն խզեց լուսթյունը և ամեն ջանք գործադրեց սիրո բռներ կորզելու նրանից: Միսսիրիլին, ցրված արտահայտությունը դեմքին, քնքուշ բռներ արտասանեց, բայց նրա խոսքըն ավելի խորադգաց շեշտով արտահայտվեց քաղաքական հարցերի մասին խոսելիս, երբ վշտագին բացականչեց.

— Ահ, եթե այս գործը հաջողությամբ շպսակվի, եթե կառավարությունը մեկ անգամ ևս հայտնաբերի այն, կհեռանամ հայրենիքից:

Վանինան քարացավ տեղում: Մեկ ժամից ավելի արդեն համոզված էր, որ վերջին անգամն է տեսնում սիրեկանին: Նրա վերջին արտահայտությունը շարադես լույս սփռեց ուղեղում: Եվ այսպիսի շար միտք փայլատակեց ուղեղում.

«Կարբոնարիները ինձնից մի քանի հազար սըքեններ են ստացել: Չեն կարող կասկածել իմ հավատարմությանը»:

Երբ դուրս եկավ խոհերից, Պիետրոյին ասաց.

— Կցանկանայի՞ր ինձ հետ քսանչորս ժամ անցկացնել Սան-Նիկոլո դղչակում: Այսօրվա հավաքում քո ներկայությունը պարտադիր չէ: Առավոտյան կզբոսենք Սան-Նիկոլոյում, կմեղմանա հուզմունքդ, կվերագտնես այս մեծ իրադարձությունների համար խիստ անհրաժեշտ սառնասրտությունը:

Պիետրոն համաձայնեց:

Ճամփորդական պատրաստություն տեսնելու պատրվակով Վանինան դուրս եկավ և, ըստ սովորության, բանալիով փակեց փոքրիկ սենյակի դուռը, որտեղ թաքցրել էր նրան:

Վազեց իր նախկին սպասուհիներից մեկի տունը, որ ամուսնանալու կապակցությամբ հեռացել էր իր մոտից և ֆորլիում մանր առևտրով էր զբաղվում: Տեղ հասնելով, սենյակում գտնվող ժամագրքի լուսանցքում արագ-արագ գրեց այն վայրի ճշգրիտ անունը, ուր այդ գիշեր կարբոնարոնների վենտիլի հավաքն էր կայանալու: Մասնությունն ավարտեց հետեյալ բռներով. «Վենտեն կաղմված է տասնինը անդամներից, ահա նրանց անուններն ու հասցեները»: Բացի Միսսիրիլու անունից ամբողջական ցուցակը ներկայացնելուց հետո՝ վստահելի սպասուհուն ասաց.

— Այս դիրքը հասցրու պապի ներկայացուցիչ կարգինա-
լին: Քող կարգա այստեղ գրվածը և վերագարձնի գիրքը: Ահա
տասը սրբեն, և թե երբեիցե պապի ներկայացուցիչը արտա-
սանի անունդ, մահդ անխուսափելի կլինի, բայց կփրկես իմ
կյանքը, և թե պապի ներկայացուցիչն կարգալ տաս գրա-
ծրս:

Ամեն ինչ բարեհաջող անցավ: Կարգինալն այնքան էր
վախեցել, որ ամենեին սինյորին վայել չպահեց իրեն: Նույ-
նիսկ ժողովրդի ծոցից ելած կնոջը, որ խնդրում էր քոզը երե-
սին ներկայանալ, համաձայնեց ընդունել ձեռքերը կապելու
պայմանով: Այսպես, վաճառական կինը ներկայացավ առաի-
ճանավորին, որին տեսավ կանաչ գորգով պատած հսկայա-
կան սեղանի ետևում կուած:

Պապի ներկայացուցիչը կարգաց ժամապրքի էջը բավական
մեծ հեռավորութունից, վախենալով թունավորման ճարպիկ
միջոցներից: Հետո այն վերագարձրեց վաճառական կնոջը և
հարկ շահմարեց լրտեսել նրան: Մոտ քառասուն րոպե անց,
նախկին սպասուհու վերագարձից հետո, վանինան եկավ սի-
րեկանի մոտ՝ մտածելով, որ այսուհետև նա ամբողջովին
իրեն է պատկանելու: Հայտնեց, որ քաղաքում արտակարգ
իրարանցում կար, կարաբիներների խմբերը հայտնվում էին
այնպիսի փողոցներում, ուր երբեք չէին երևացել:

— Եթե ինձ լսես, իսկույն կմեկնենք Սան-Նիկոլո, — ավե-
լացրեց վանինան:

Միսսիրիլին համաձայնեց: Քայլելով հասան երիտասարդ
իշխանուհու կառքի մոտ, որն իրեն ուղեկցող հավատարիմ,
դադանապահ և լավ վճարված կնոջ հետ սպասում էր քաղա-
րից կես վերստ հեռու:

Հասնելով Սան-Նիկոլո գղջակը, իր տարօրինակ արարքից
հուզված՝ վանինան կրկնապատկեց սիրեկանի հանգիստ տա-
ծած դորովանքի նշանները: Բայց սիրո թեմային անդրա-
դառնալու ժամանակ Պիետրոյին թվաց, թե նա կատակեր-
դույթյուն է խաղում: Նախորդ օրը մատնություն դործելով՝
վանինան մոռացել էր խղճի խայթի մասին: Սիրեկանին գրկի
մեջ սեղմած մտածում էր.

«Մի խոսք կա, որ կարելի է ասել նրան, բայց այդ խոսքն
արտասանելը այժմ և ընդմիշտ սարսափեցնում է ինձ»:

Կեսդիշերին վանինայի ծառաներից մեկը հանկարծակի մտալ նրա սենյակը: Կարբոնարո էր, վանինան չէր կասկածում: Ուրեմն Միսսիրիլին գազտնիքներ էր պահում իրենից նույնիսկ այսպիսի հանդամանքներում: Վանինան ցնցվեց: Այս մարդն եկել էր Միսսիրիլին հայտնելու, որ դիշերը Ֆորլիում պաշարել էին տասնինը կարբոնարիների տները, իսկ նրանք ձերբակալված էին վենտեից վերագառնալու ժամանակ: Չնայած անակնկալ հարձակում էր, ինքը կարողացել էր փախչել: Կարաբիներները կարողացել էին աստին հասցրնել ամրոցի բանար: Ներս մտնելու ժամանակ նրանցից երկուսը նետվել էին անհատակ ջրհորի մեջ և մահացել: Վանինան շփոթված էր, բարեբախտաբար Պիետրոն չնկատեց, ալլապես նոա աչքերում կկարդար ոճիրը...—Շենց հիմա,— ավելացրեց ծառան,— Ֆորլիի պահակագործը բոլոր փողոցներում շղթա է կապել: Զինվորներն այնքան մոտ են կանդնած իրար, որ կարող են խոսքեր փոխանակել: Բնակիչներին թույլատրում են փողոցն անցնել միայն այն տեղով, որտեղ կանգնած է սպան:

Այդ մարդու գնալուց հետո Պիետրոն միայն մի պահ տարվեց խոհերով:

— Այժմ ոչինչ հնարավոր չէ անել,— վերջտպես խոսեց նա:

Վանինան կիսամեռ էր, դողդողում էր սիրեկանի հայացքի տակ:

— Վանինա, ի՞նչ է պատահել ձեզ. մի տեսակ արտասովոր վիճակում եք,— ասաց Պիետրոն:

Շատ սկսեց մտածել ուրիշ հարցերի շուրջ և այլևս շնայեց նրան: Օրվա կեսին Վանինան համարձակվեց խոսել:

— Ահա մի վենտե ևս բացահայտվեց. կարծում եմ որոշ ժամանակ հանգիստ կլինեք:

— Շատ հանգիստ,— պատասխանեց Միսսիրիլին այնպիսի ժպիտով, որից սարսուց վանինան:

Վերջինս անհետաձգելի տեսակցության համար գնաց Սան-Նիկոլո՝ գյուղի քահանայի, հովանաբար ճիզվիտների լրտեսի մոտ: Ժամը չոթին, երբ վերագարձավ տուն ընթրելու, փոքրիկ սենյակը, ուր թաքնվում էր սիրեկանը, դատարկ էր: Գլախը կորցրած սկսեց տնով մեկ վազել նրան դաննելու:

Նույսով, ոչ մի տեղ չկար: Հուսահատված վերադարձավ փոքրիկ սենյակը և միայն այդ ժամանակ նկատեց երկտողը, կարգաց. «Գնում եմ սյուպի ներկայացուցչին հանձնվելու, շատ եմ ցավում, որ մեր դործն այսպես ստացվեց, նախախնամությունը մեր դեմ է: Ո՞վ գավաճանեց մեզ. հավանաբար այն թշվառականը, որ նկատեց ջրհո՞րը: Քանի որ իմ կյանքը օգտակար չի կարող լինել թշվառ Իտալիային, չեմ ցանկանում, որ քնկերներս, ազատ տեսնելով ինձ, վորձեն մտածել, թե ես եմ իրենց մատնել: Մնաք բարով: Եթե ինձ սիրում եք, մտածեք վրեժխնդիր լինելու մասին: Կորսույցան մատնեք, ոչնչացրեք այն ստոր արարածին, որ գավաճանեց մեզ, թեկուզ այդ մարդը հայրս լինի»:

Վանինան փլվեց աթոռին կիսանվազած վիճակում և մխրձված ամենադաժան ու դառը մտորումների մեջ: Ընդունակ չէր որևէ բառ արտաբերելու, աչքերը շոր էին ու անզգադին:

Ի վերջո ծնկի չոքեց.

— Ամենազոր Տեր,— բացականչեց նա,— ընդունեցեք իմ ուխտը, այո, կպատժեմ գավաճան ստորին, բայց նախ և սուաջ հարկավոր է ազատել Պիեարոյին:

Մեկ ժամ շանցած, բռնեց Հոսմ տանող ճամփան: Հայրը վաղուց էր շտապեցնում վերադառնալ: Նրա բացակայության ժամանակ կարգավորել էր ամուսնության հարցը իշխան Լիվիո Սավելլիի հետ: Նոր էր Վանինան տուն մտել, երբ հայրը վախվիտելով խոսեց հետը: Ի դարձմանս նրա, առաջին իսկ խոսքից Վանինան համաձայնեց: Նույն երեկոյան Վիտտելեչի կոմսուհու տանը, համարյա պաշտոնապես, հայրը ներկայացրեց նրան դոն Լիվիոյին: Վանինան բավականին երկար խոսեց նրա հետ: Նա ամենավաղելու էր Լրիտասարդն էր, և ամենազեղեցիկ ձիերը նրան էին պատկանում: Չնայած ասում էին խելացի մարդ է, բայց վարժադժում այնքան թնթկություն էին նկատում, որ կառավարությունն ամենևին չէր վստահում նրան: Վանինան ուզում էր հմայել Լիվիոյին և գարձնել հարմար դորձակալ: Քանի որ դոն Լիվիոն մոնսիոյոր Սավելլի-Կատանձարայի՝ Հոսմի հրահանգչի և ոստիկանության մինիստրի եղբորորդին էր, Վանինան անթաղրում էր, որ լրտեսները չեն հետևի նրան:

Մի քանի օր շարունակ սիրաւոր գոն Լիվիոյի հանդերձ ջերմ վերաբերմունք ցուցաբերելուց հետո Վանինան հայտնեց, որ նա չի կարող իր ամուսինը զառնալ, իր կարծիքով նա զեռես մանկական բնավորութիւն ունի:

— Եթե երեխա չի նկիր,— ասաց նրան,— ձեր հորեղբոր գործակալները ձեզնից զաղանիքներ չէին պահի: Օրինակ, ի՞նչ միջոցներ են ձեռնարկել Ֆորլիում վերջերս հայտնաբերված կարբոնարիների նկատմամբ:

Երկու օր անց գոն Լիվիոն հայտնեց նրան, որ Ֆորլիում բռնված բոլոր կարբոնարիները փախել են: Վանինան նրա վրա սեռեց խոշոր սև աչքերը շտոր և ամենախոր արհամարհանքի ժպիտով՝ շքանկանալով աչքես նրա հետ խոսելը մնացած երեկոյի ընթացքում:

— Բայց,— ասաց գոն Լիվիոն,— ես ձեռք եմ բերել հորեղբորս աշխատասենյակի բանալին: Գտածս թղթերի մեջ նկատեցի, որ հուշժ դադանի մի հանձնախումբ է հավաքվում. այն պետք է բաղկացած լինի ամենավաստահի կարդինալներից և պրելատներից*, նրանք հավաքվելու են խորհրդի՝ որոշելու, թե որտեղ հարմար կգտնեն դատել կարբոնարիներին՝ Ռաֆիննայում թե Հոմոում: Ֆորլիում բռնված ինք կարբոնարիները և նրանց ղեկավարը՝ ոմն Միսսիրիլի, որ հիմարարար հանձնվել է, այս պահին բանտարկված են Սան Լեոյի զղջակում:

«Հիմարարար» բառի վրա Վանինան ինչքան ուժ ուներ կամթեց իշխանին:

— Անձամբ եմ սպում ահանել այդ պաշտոնական գրութիւնները,— ասաց Վանինան,— և ձեզ հետ միասին մտնել ձեր հորեղբոր գրասենյակը, երեք լավ շք կարողացել:

Այս բառերը լսելով գոն Լիվիոն սարսռաց. Վանինան իրենից համարյա անկարելին էր պահանջում, սակայն այդ աղջկա ինքնահաճո բնավորութիւնը կրկնապատկում էր նրա սերը: Մի քանի օր հետո Վանինան տղամարդու կերպարանքով՝ գեղեցիկ համազգեստով, ինչպիսին կրում էին Սովելլիի տան սպասավորները, հնարավորութիւն ունեցավ մոտ կես ժամ մնալու սասիկանութեան մինիստրի հուշժ գաղանի թրղթերի հետ: Նա ուրախութիւնից ցնցվեց, երբ հայտնաբերեց

ամբաստանյալ Պիետրո Միսսիրիլիի մասին գաղտնի գրությունը: Թուղթը վերցնելիս ձեռքերը պոզում էին: Հոռմի կառավարչի պալատից դուրս գալու ժամանակ Վանինան թույլ տվեց դոն Լիվիոյին համբուրել իրեն և ասաց.

— Դուք լավ դիմանում եք իմ առաջարկած փորձություններին:

Այդ խոսքից հետո երիտասարդ իշխանը վատիկանն էլ կայրեր Վանինային դուր գալու համար: Երեկոյան Ֆրանսիայի գեոպոլիտիկ պարահանդես էր կազմակերպել: Վանինան շատ պարեց և համարյա միշտ նրա հետ: Դոն Լիվիոն երջանկությունից հարբել էր. անհրաժեշտ էր թույլ շտալ նրան ուշքի գալու:

— Հայրս երբեմն տարօրինակ է պահում իրեն,— մի օր ասաց Վանինան, այսօր առավոտյան իր ծառաներից երկուսին վտարեց, եկան ինձ մոտ, արցունք թափեցին: Նրանցից մեկը խնդրեց տեղավորվել ձեր հորեղբոր՝ Հոռմի կառավարչի մոտ, մյուսը, որ Ֆրանսիացիների տիրապետության օրոք հրետանային գումարտակի զինվոր է եղել, ուզում է ծառայել Սենտ-Անժի զոյակում:

— Երկուսին էլ կվերցնեմ ինձ մոտ ծառայության,— աշխուժորեն վրա բերեց երիտասարդ իշխանը:

— Մի՞թե դա էի պահանջում ձեզանից,— տիրական տոնով ասաց Վանինան,— բառացիորեն կրկնում եմ այդ խեղճ մարդկանց ազերսը, նրանք պետք է ձեռք բերեն այն, ինչ խնդրել են, և ուրիշ ոչինչ:

Շատ դժվար պահանջ էր: Մոնսինյոր Կատանձարան վախկոտ մարդ էր և իր տան մեջ ընդունում էր միայն շատ լավ ծանոթ մարդկանց: Արտաբուստ ամեն տեսակի հաճույքներից հազեցած Վանինան, խղճի խայթից տապակվելով, դժբախտ էր զգում իրեն: Իրագործությունների գանդաղությունը սպանում էր նրան: Արդյոք կփախչե՞ր հայրական տնից և կդնա՞ր Ռոմանիա՝ փորձելով սիրեկանին փախցնել: Որքան էլ անո՞րիտ թվար, նա ամեն զնով պատրաստ էր իրագործել իր առաքելությունը, և հանկարծ պատահականությունը խղճաց նրան:

Դոն Լիվիոն մի օր ասաց նրան.

— Շուտով Միասիրիլիի տառը կարբոնարիներին կտանեն Հռոմ, իսկ եթե նրանց մահվան դատապարտեն, մահապատիժը տեղի կունենա Ռոմանիայում: Այսօր երեկոյան է հորեղբայրս պապից իմացել: Ամբողջ Հռոմում դուր և ես գիտենք այդ գաղտնիքը: Գո՞հ եր:

— Տղամարդ եք դառնում,— պատասխանեց վանինան,— նվիրեր ինձ ձեր նկարը:

Միասիրիլիի Հռոմ հասնելու նախօրեին վանինան ինչ-որ պատրվակով գնաց Սիսա-Կաստելլանա: Այս քաղաքի բանտում էին պահում կարբոնարիներին, որոնց Ռոմանիայից Հռոմ էին տեղափոխելու: Առավոտյան, երբ բանտից դուրս էին բերում Միասիրիլիին, վանինան տեսավ նրան: Կառքի մեջ մեն-մենակ էր, շղթայակապ: Սարսափելի գունատ երևաց աչքին, բայց ընկճված չէր: Մի սյուռավ մանուշակների փունջ նետեց նրան: Միասիրիլին յայտաց, շնորհակալություն հայտնեց:

Վանինան տեսավ սիրեկանին, մտքերը կարծես ամբողջապես կենտրոնացան, նոր արիություն ստացավ:

Վանինան պարոն արբա Կարիին վաղուց էր նախապատվություն տալիս. նա Սենտ-Անժ վանքի երեցն էր: Այդ նույն վանքում էին բանտարկելու իր սիրեկանին: Վանինան բարի քահանային ընտրել էր սրպես խոստովանահայր: Հռոմում մեծ պատիվ էր իշխանուհու և կառավարչի ազդականուհու խոստովանահայր լինելը:

Ֆարլիի կարբոնարիների գառը երկար շտեկեց: Չկարողանալով խանդարել նրանց Հռոմ տեղափոխելու վճիռը, բարձրագույն կուսակցությունը ամենափառասեր Եկեղեցական դասի ներկայացուցիչներին կալմեց հանձնախումբ, նրանց պատժի ենթարկելու համար: Հանձնախումբը ղեկավարելու էր ոստիկանության մինիստրը:

Կարբոնարիների դեմ գործող օրենքը պարզ է. Ֆարլիի կալանավորները փախուստի ոչ մի հույս չէին կարող փաշտալի: Նրանք մեծ գնով էին պաշտպանում իրենց կյանքը՝ դիմելով ամեն տեսակի հնարավոր փախուստների Դատավորները ոչ միայն մահվան դատապարտեցին նրանց, այլև շատերը պնդեցին սարսափելի կտտանքների ենթարկել, օրի-

նակ՝ անդամահատել: Ոստիկանություն մինիստրը, որ արդեն հասել էր իր նպատակին և երջանիկ էր զգում իրեն (որովհետև այդ պաշտոնը լքում են միայն կարդինալի աստիճան ստանալու համար), մարդկանց անդամահատելու կարիքն ամենեին չէր զգում, դատավճիռը պապի մոտ տանելուց հետո մի քանի տարով իջեցրեց գատապարտվածների բանտարկություն ժամկետը: Բացառություն կազմեց միայն Պիետրո Միսսիրիլին: Մինիստրը, հանձինս այս երիտասարդի, տեսնում էր վտանգավոր ֆանատիկոսի և, բացի այդ, նա մահվան էր գատապարտված որպես վերոհիշյալ կարաբիներների սպանության մասնակից: Մինիստրը նոր էր վերադարձել պապի մոտից, Վանինան արդեն զիտեր գատավճռի և ներման մասին:

Հաջորդ օրը մոնսինյոր Կատանձարան կեսգիշերին վերադարձավ պալատ ու ոչ մի տեղ չգտավ սենեկապանին: Մինիստրը, դարմացած, մի քանի անգամ հնչեցրեց զանգակը, վերջապես հայտնվեց հիմար տեսքով մի սպասավոր. մինիստրը համբերությունից դուրս եկավ և սրռեց անձամբ հանվել: Դուռը բանալիով կողպեց. շատ շուգ էր, հագուստը ծրարի նման շարտեց աթոռի վրա: Թափով շարտված հագուստը աթոռի վրայից անցնելով դիպավ պատուհանի մուսլինե վարազույրին և նրա ետևում ուրվագծվեց մարդկային մի կերպարանք: Մինիստրն արագ նետվեց մահճակալի մոտ և վերցրեց ատրճանակը: Երբ վերադառնում էր դեպի պատուհանը, համազգեստ հագած սլացիկ տեսքով մի երիտասարդ տարճանակը ձեռքին մոտեցավ նրան: Տեսնելով այդ, մինիստրը դենքը մոտեցրեց նրա աչքին. կրակելու էր: Երիտասարդը ծիծաղելով ասաց.

— Այդ ինչպես, մոնսինյոր, շե՞ք ճանաչում Վանինա Վանինային:

— Ի՞նչ է նշանակում այս հիմար կատակը, — զայրացած դուռաց մինիստրը:

— Խոսենք հանպիստ, — շարունակեց պարմանուհին, — նախ և առաջ ձեր ատրճանակը լիցքավորված չէ:

Ապշած մինիստրը փաստի առջև կանգնեց, բայց իսկույն դուրս քաշեց դաշույնը ժիլետի գրպանից:

Վանինան հանդիսավոր և հմայիչ տեսքով ասաց.

— Նստեք, մոնսինյոր:

Ի՞նչ է հանգիստ տեղավորվեց բազմոցին:

— Գոնև մենա՞կ եք,— հարցրեց մինիստրը:

— Բացարձակապես մենակ, երգվում եմ:

Մինիստրը նեղութուն կրեց ստուգելու. նայեց շորս կողմը, որից հետո նստեց Վանինայից երեք քայլ հեռու:

— Ի՞նչ շահ պիտի ունենայի,— անուշիկ ու հանգիստ տեսքով սկսեց Վանինան,— դավ նյութել այսքան կաղմակերսված մի մարդու դեմ, որին հավանաբար փոխարինելու կգա և՛ իրեն, և՛ ուրիշներին կործանելու ընդունակ ինչ-որ տաքզուխ, թուլամիտ մի անձնավորություն:

— Ի՞նչ եք ուզում ուրեմն, օրիորդ,— ասաց մինիստրը դժկամած,— այս տեսարանը բոլորովին դուր չի գալիս ինձ և չպետք է շարունակվի:

— Այն, ինչ ավելացնելու եմ,— հպարտությամբ շարունակեց Վանինան, մոռանալով հանկարծ իր շնորհագիլությունը,— ավելի շատ ձեզ համար է մեծ կարևորություն ներկայացնում, քան ինձ: Ուզում ենք, որ կարբոնարս Միսսիրիլի կյանքն անվտանգ լինի, ևթե մահվան դատապարտվի, մեկ շաբաթից ոչ ուշ կհետևեր նրան: Այս հարցում ես ոչ մի շահ չունեմ, այն խենթությունը, որի համար բողոքում եք, նախ և առաջ գործեցի մի փոքր զվարճանալու համար և հետո՝ օգնելու իմ ընկերուհիներից մեկին: Յանկացա,— շարունակեց Վանինան վերստանալով բարեհամբույր խոսակցի տեսք,— ցանկացա ծառայություն մատուցել խելացի մի մարդու, որը շուտով իմ ազգականն է դառնալու և արտաքին երևույթներից դատելով, իր տան հարստությունը շատ հեռուները կտանի:

Մինիստրի դժգոհ արտահայտությունն անհետացավ. Վանինայի գեղեցկությունն անկասկած ներգործեց այս արագ փոփոխության վրա: Հոռմում մոնսինյոր կատանձարան հայտնի էր գեղեցիկ կանանց հանդես ունեցած թուլությամբ, իսկ Վանինան շատ հմայիչ էր Սավելիլի տան սպասավորի համազգեստի մեջ ծպտված, մետաքսյա ձիգ դուլպաներով, կարմիր բաճկոնով, կարճ, երկնագույն արծաթածոպ զգեստով և ատրճանակը ձեռքին:

— Ապաղա հարսս,— համարյա ծիծաղելով ասաց մի-

նիստորը,— դուք շատ մեծ խենթություն եք դործել և թող դա վերջինը լինի:

— Հուսով եմ, որ նման խելամիտ մարդը,— պատասխանեց Վանինան,— կպահի գաղտնիքը, հատկապես դոն կիվիոյի մոտ, և որպեսզի կարողանամ պարտավորեցնել ձեզ, սիրելի ազգական, ընկերուհուս պաշտպանյալի կյանքը շնորհելու հարցում, փոխարենը մի համբույր կստանաք:

Նման կես-կատակ տոնով, որ հոռմեացի կանայք հաճախ են կիրառում ամենակարևոր գործերը տնօրինելու ժամանակ, շարունակելով խոսակցութունը՝ Վանինան, սկզբում ատրոհանակը ձեռքին, կարողացավ այս տեսակցությանն այնպիսի երանգ տալ, իբր թե երիտասարդ իշխանուհի Սավելլին այցելության էր եկել աղգականին՝ Հոռմի կառավարչին:

Շուտով մոնսինյոր Կատանձարան, մեծապետորեն մի կողմ նետելով վախին անձնատուր լինելու դաղափարը, սկսեց եզրոր հարսին պատմել այն բոլոր դժվարությունների մասին, որոնց հետ բախվելու էր Միսսիրիլիի կյանքը փրկելու ժամանակ: Այս հարցը վիճարկելու ընթացքում մինիստրը Վանինայի հետ քայլում էր սենյակում, և բուխարիկի վրայից հենց այնպես վերցրեց լիմոնադի շիշն ու լցրեց բյուրեղապակե բաժակի մեջ: Երբ պատրաստվում էր մոտեցնել շուրթերին, Վանինան ուժով խլեց այն ձեռքից և մի քանի բուրբուկ պահելուց հետո, կարծես մտքերի մեջ ընկած, նետեց պարտեզ: Մի քիչ հետո մինիստրը քաղցրավենու տուփի միջից շոկոլադի մի սալիկ հանեց, Վանինան այդ էլ վերցրեց ձեռքից ու ծիծաղելով ասաց.

— Ուրեմն զգուշացեք, ձեր տան մեջ ամեն ինչ թունավորված է, որովհետև ձեր մահն են ցանկանում: Ես եմ իմ ապագա աղգականի համար շնորհ խնդրել, որպեսզի Սավելլի ընտանիքի մեջ բացարձակապես դատարկ ձեռքերով չմտնեմ:

Մոնսինյոր Կատանձարան, խիստ ապշած, շնորհակալություն հայտնեց եղբոր հարսին և մեծ հույսեր ներշնչեց Միսսիրիլիի կյանքը պահպանելու համար:

— Մեր գործարքն ավարտված համարենք,— բացականչեց Վանինան,— իսկ երաշխիքը, ահա, վարձատրությունն է,— ասաց համբուրելով նրան:

Մինիստրը վարձահատույց եղավ:

— Պետք է իմանաք, սիրելի վանինա,— ավելացրից նա,— որ ես արյուն չեմ սիրում: Նախ և առաջ դեռ երիտասարդ եմ, չնայած հնարավոր է, որ ձեր աչքին շատ ծեր երեւում, և կարող է այնպիսի մի ժամանակաշրջան ապրեմ, որ այսօրվա թափած արյունը հետքեր թողնի:

Հնչում էր գիշերվա ժամը Երկուսը, երբ մոնսիեյոր Կատանձարան ուղեկցեց վանինային մինչև պարտեզի դռնակը:

Հաջորդ օրը, երբ մինիստրը հայտնվեց պապի մոտ ստանձնած որոշման պատճառով բավական շփոթված տեսքով, սրբազնագույնը ասաց նրան.

— Ամենից առաջ շնորհ եմ հայցելու ձեզից: Միայն Ֆորլիի կարբոնարիներից մեկն է մնացել մահվան դատապարտված: Այս միտքը խանգարում է ինձ հանգիստ քնել, պետք է ազատել այդ մարդուն:

Մինիստրը տեսնելով, որ պապն իր որոշումը արդեն կայացրել է, սկզբում անարկեց, բայց ի վերջո մի գեկրետ կամ, ավելի ճիշտ, կոնդակ կաղմեց, որը, հակառակ ընդունված կարգի, պապը ինքը ստորագրեց:

Վանինան մտածում էր, թե գուցե հաջողվի սիրեկանի համար ներում հայցել, բայց դրանից հետո կփորձեին թունավորել նրան: Դեռ նախորդ օրվանից Միսսիրիլին արբա Կարիից՝ վանինայի խոստովանահորից, ստացել էր ծովային պաքսիմատի մի քանի փոքր տուփ և նախազգուշացում՝ ձեռք չտալ բանտում տրվող ուտելիքին:

Դրանից հետո վանինան տեղեկանալով, որ Ֆորլիի կարբոնարիներին տեղափոխելու են Սան Լեոյի զղջակը, փորձեց Միտա-Կաստելանոյի ճանապարհին տեսնել Միսսիրիլին: Քաղաք հասավ բանտարկյալներից քսանչորս ժամ առաջ, հանդիպեց արբա Կարին, որ իրենից մի քանի օր շուտ էր եկել: Բանտապահից իմացել էր, որ Միսսիրիլին բանտի մատուռում կարող էր կեսդիշերային պատարագին մասնակցել: Նույնիսկ գործը ավելի առաջ տարան. եթե Միսսիրիլին համաձայներ, որ թևերն ու ոտքերը շղթայով կապեն, բանտապահը, առանց լսելու խոսակցությունը, կկանգներ մատուռի դռան մոտ, այնպես, որ աչքից չհեռացներ բանտարկյալին,

քանի որ պատասխանատու էր նրա համար: Վերջապես հասավ այն օրը, երբ պետք է վճուվեր Վանինայի ճակատագիրը: Առավոտվանից թափնվեց բանտի մատուռում: Ո՞վ կարող է պատկերացնել, թե այս երկարատև օրվա ընթացքում ինչպիսի մտքեր պաշարեցին նրան: Միսսիրիլին արդյոք այնքան սիրո՞ւմ էր իրեն, որ կարողանար ներել: Ինքը մատնել էր նրա վեհտեն, բայց փոխարենը փրկել իր կյանքը: Երբ Վանինայի հուզախոռով հոգում գլուխ էր բարձրացնում բանականությունը, նա սկսում էր հույսով լցվել, թե Միսսիրիլին կհամաձայնի իր հետ հեռանալ Իտալիայից: Եթե ինքը մեղանչել էր, ապա՝ հանուն մեծ սիրո: Երբ հնչեց ժամը չորսը, հեռվից սալաքարերի վրա լսեց կարաբիններների ձիերի սմբակների ձայնը: Յուրաքանչյուր դոփյուն կարծես արձագանքում էր սրտում: Կամաց-կամաց սկսեց տարբերել բանտարկյալներ տեղափոխող պանազան սայլերի անիվների ղղրղոցը: Նրանք կանգ առան բանտի առջևի հրապարակում. Վանինան տեսավ Միսսիրիլիին բարձրացնող երկու կարաբիններներին. նա մեն-մենակ էր սայլակի մեջ, ծանր երկաթներով, շարժվել չէր կարողանում: «Գոնե ապրում է,— մտածեց Վանինան արցունքն աչքերին,— դեռ չեն թունավորել»: Սարսափելի երեկո էր: Շատ բարձր տեղում տեղավորված ճրագը հագիվհազ մթին խորանն էր լուսավորում, բանտապահը խնայում էր յուղը: Վանինայի աչքերը թափառում էին հարևան բանտում վախճանված միջնադարյան մի քանի սինյորների շիրիմների վրա: Նրանց քարե քանդակները շարագույժ տեսք ունեին:

Ամեն տեսակի աղմուկ վաղուց դադարել էր, Վանինան սպասում էր՝ խորասուզված մոռյլ մտքերի մեջ: Գիշերվա կեսին նրան թվաց, որ թեթև աղմուկ է լսում, ասես շղջիկ էր թռչում: Ուղեց առաջ գնալ, բայց համարյա նվազած ընկավ խորանի բազրիքին: Նույն պահին երկու ուրվականներ կանգնեցին դիմացը, նրանց ոտնաձայնը չէր լսել: Բանտապահն ու Միսսիրիլին էին: Վերջինս այնպես էր կապկպած շղթաներով, կարծես խանձարուրի մեջ լիներ: Բանտապահը վառեց ճրագը և տեղավորեց խորանի բազրիքին, Վանինայի կողքին, սրպեսզի կարողանար լավ տեսնել իր բանտարկյալին: Այնուհետև քաշվեց խորքը, մինչև դռան մոտ: Հազիվ էր բան-

տապահը հեռացել, Վանինան փարվեց Միսսիրիլին՝ սեղմեց նրան գրկում, զգալով շղթաների սառն ու ծակող նիստերը: — Ո՞վ է նրան շղթայել,— մտածեց նա: Սիրեկանին համբուրելիս սառնություն զղաց: Այնուհետև ասես խոցվեց սուր ցավից: Վանինային մի պահ թվաց, թե Միսսիրիլին հայտնի է իր գործած ոճիրը, այնքան սառն էր այս հանդիպումը:

— Սիրելի բարեկամուհի,— վերջապես խոսեց Միսսիրիլին,— ցավում եմ, որ այսքան մեծ սեր եք տածում իմ հանդեպ, շեմ գտնում իմ մեջ մի արժանիք, որը ներշնչած լինեք ձեզ այդ Հավատացեք, ավելի լավ է տրվեք առավել բարեպաշտ զգացմունքների, մոռանանք այն պատրանքները, որ ժամանակին մոլորեցրել են մեզ: Նս այլևս չեմ կարող ձեզ պատկանել: Այն անողորմ զժրախտությունը, որ հաջորդեց իմ նախածեղծումներին, միգուցե գործածս երկրային մեղքերի արդյունքն է: Նույնիսկ եթե միայն անսանք մարդկային խոհեմությունը, ինչո՞ւ Ֆորլիի ճակատագրական դիշերը չձերբակալվեցի ընկերներիս հետ: Ինչո՞ւ վառանդի սլահին իմ դիրքերում չէի: Ինչո՞ւ իմ բացակայությունը ամենազածան կասկածների սեղիք տվեց: Որովհետև Իտալիայի ազատագրությունից բացի այլ կիրք ունեի:

Վանինան ուշքի չէր գալիս Միսսիրիլիի մտտ առաջացած անակնկալ փոփոխությունից: Այնքան էլ չէր նիհարել, բայց կարծես երեսուն տարեկան հասուն մարդու զեմ էր կանգնած: Վանինան այս փոփոխությունը վերագրեց այն տառապանքներին, որ նա կրել էր բանտում և լայն եղավ:

— Ախ,— բացականչեց նա,— չէ՞ որ բանտապահները խոստացել էին լավ վերաբերվել քեզ հետ:

Վանինան շփոթեր, որ մահվան մոտալուտ զգացողությունը երիտասարդ կարբոնարիի սրտում արթնացրել էր բոլոր այն հոգևոր զգացումները, որոնք կարող էին համադրվել միայն Իտալիայի ազատագրության համար ծառայության հետ: Նա կամաց-կամաց հասկացավ, որ իր սիրածի մոտ ի հայտ եկած զարմանալի փոփոխությունը զուտ բարոյական իմաստ է կրում և ամենևին չէր առնչվում մարմնական տանջանքների հետ: Իր վիշտը, որ կարծում էր մեծ է, ավելի խորացավ:

Միսսիբիլին լուռ էր. Վանինային թվում էր, թե ուր որ է
զսպված հեկեկանքից շնչահեղձ կլինի: Միսսիբիլին, նույնպես
մի փոքր հուզված՝ ավելացրեց:

— Եթե աշխարհում ես սիրել էմ որևէ մեկին, Վանինա,
այդ դուք եք, բայց Աստծո ողորմածությամբ այժմ կյան-
քում ես մի նպատակ ունեմ միայն. մեռնել բանտում, կամ գոհ-
վել Իտալիայի ազատագրության համար մղվող պայքարում:

Դարձյալ տիրեց լուռություն, Վանինան չէր կարողանում
խոսել. փորձում էր, բայց ապարդյուն: Միսսիբիլին շարու-
նակեց.

— Սիրելի բարեկամ, դաժան են պարտականության պա-
հանջները, բայց եթե հաղթահարման դժվարությունը չլիներ,
էլ ինչո՞ւմ կլիներ հերոսությունը: Երգվեք, որ այլևս չեք
ջանա ինձ տեսնելու— Եվ, որքան թույլ կտային պիրկ շղթա-
ները, մի փոքր շարժեց դաստակն ու մատները մեկնեց Վա-
նինային:— Թույլ տվեք ինձ, որ մի ժամանակ թանկ էմ եղել
ձեզ համար, մի խորհուրդ տալ ձեզ. ամուսնացեք այն ար-
ժանավոր երիտասարդի հետ, որին ձեր հայրն է հարմար
դասում: Բլ չմի ծանր խոստովանություն մի արեք, մյուս
կողմից՝ ջանք մի գործադրեք տեսնել ինձ, օտար մնանք իրար,
Դուք պատկանելի գումար եք հատկացրել հայրենիքի ծառա-
յության օգտին: Եթե երբևիցե հայրենիքը ազատագրվի իր
բռնակալներից, այդ գումարը կվերագարձվի ձեզ ազգային
սեփականությունից:

Վանինան ցնցված էր. ամբողջ գրույցի ընթացքում Պիեռ-
րոյի աչքերը շողացել էին միայն հայրենիք բառն արտա-
սանելիս:

Ի վերջո հպարտությունն օղնության հասավ երիտասարդ
իշխանուհուն. նա աղամանդներ ու փոքրիկ խարսոցներ էր
վերցրել հետը: Առանց պատասխանելու Միսսիբիլին, տվեց
դրանք:

— Ընդունում էմ, որովհետև ես պարտավոր եմ փախչելու
փորձ անել, բայց ձեզ երբեք չեմ տեսնի, երգվում էմ ձեր նոր
բարեբարություններով: Մնաք բարով, Վանինա, խոստացեք,
որ երբեք չեք դրի, երբեք չեք հանդիպի ինձ: Ամբողջապես
թողեք ինձ հայրենիքին, ես ձեզ համար մեռած էմ, մնաք
բարով:

— Ոչ,— կատաղած ճշաց Վանինան,— սպասիր, ուզում եմ
իմանաս, թե ինչ եմ արել հանուն քո սիրո:

Եվ ամեն ինչ պատմեց, սկսած այն պահից, երբ Միս-
սիրիլին հեռացել էր Սան-Նիկոլո գղջակից՝ եկեղեցական կու-
սակալին ներկայանալու համար, և վերջում ավելացրեց.

— Այս ամենը դեռ ոչինչ, քո սիրո համար ես ավելին եմ
արել:

Եվ պատմեց իր դավաճանության մասին.

— Ա՛խ, հրե՛շ,— մոլեղնած բացականչեց Պիետրոն,
նետվելով Վանինայի վրա և փորձեց շղթաներով խեղդամահ
անել նրան: Ու կհասներ նպատակին, եթե պահակը ճիշդ
չսեղով վրա չհասներ: Նա բռնեց Միսսիրիլին:

— Վերցրու, հրեշ, ոչինչ չեմ ուզում քեզանից,— ասաց
Միսսիրիլին Վանինայի վրա շարտելով խարտոցներն ու
ադամանդները, որքան թույլ կտային շղթաները, և արագ հե-
ռացավ:

Վանինան արձանացած կանգնել էր: Վերադարձով Հոռմ:
Շուտով լրագրում հայտարարություն տպեցին, որ նա ամուս-
նանում է իշխան Լիվիո Սավելլիի հետ:

ՄԻՆԱ ԴԸ ՎԱՆԳԵԼ

Մինա զը Վանգելը ծնվել է Քյոնիգզբերգում՝ փիլիսոփայության ու երևակայության երկրում*։ 1814 թվականին, Ֆրանսիական արշավանքից* հետո, պրուսական գեներալ կոմս Վանգելը անուկնկալ հեռացավ և արքունիքից և բանակից։ Մի երեկո, Շամպանյի նահանգի Քրան քաղաքում սարսափելի մարտից հետո, երբ նրա հրամանատարության ներքո գտնվող ռազմախմբերը հաղթանակ տարան, կոմսը լցվեց մի անսրռոշ կասկածով. որևէ ժողովուրդ իրավունք ունի՞ խախտելու ներքին ու բանական այնպիսի մի պայման, ըստ որի այլ ժողովուրդներ ցանկանում են կարգավորել իրենց նյութական ու բարոյական գոյությունը։ Մտորելով այս մեծ հարցի շուրջը, գեներալը եղբակացրեց, որ այսուհետև այլևս առանց մտածելու սուր չի բարձրացնելու և քաշվեց Քյոնիգզբերգի իր կալվածքը։

Գտնվելով Բեռլինի ոստիկանության խիստ հսկողության տակ, կոմս Վանգելի միակ մտահոգությունը դարձավ փիլիսոփայության ուսումնասիրումն ու իր միակ աղջկա՝ Մինայի ճակատագիրը։ Շատ ժամանակ շանցած, դեռևս երիտասարդ, գեներալը վախճանվեց, աղջկան թողնելով անսահման հարստություն, թուլակալմ մի մայր և արքունիքի շնորհազրկամբ, որ չպետք է անտեսել հպարտ Գերմանիայում։ Մինան նոր էր բոլորել տասնվեց տարին, երբ հոր շրջապատի երիտասարդ զինվորականները նրա հանդեպ տաժած զգացմունքը վերածեցին մեծարման և հանդես բերեցին ոգևորվածություն, սիրեցին նրա աչքերի մեջ երբեմն ճառագող ոսմանտիկ ու թախծոտ արտահայտությունը։

Անցավ մեկ տարի. սուգից դուրս եկավ, բայց հոր մահը խոր կնիք թողեց նրա հոգում: Դը Վանգել ընտանիքի բարեկամներն սկսեցին արտասանել սարսափելի «թոքախտ» բառը: Հաղիվ սուգից դուրս եկած, Մինան ստիպված եղավ հաճախակի հայտնվել բարձրաշխարհիկ իշխաններից մեկի պալատում, որի հեռավոր ազգականը լինելու պատիվն ուներ: Ուղեորվելով Ս... արքայազնի նահանգների մայրաքաղաքը, տիկինը Վանգելը շատ էր վախենում իր աղջկա ռոմանտիկ հայացքներից, խոր վշտից, սակայն միութարում էր իրեն այն հույսով, որ նրա դիրքին հարմար ամուսնական առաջարկը, իսկ գուցեև սերը, ի վերջո կվերադարձնեն նրան իր տարիքին հարմար մտքերի:

— Որքան կուզեի,— ասում էր նա,— ամուսնացած տեսնել քեզ այստեղ, մեր հայրենիքում:

— Այս ապերախտ երկրում,— մտասույդ պատասխանում էր աղջիկը,— մի երկիր, ուր հայրս իր վերքերի և քսան տարիների նվիրվածության դիմաց որպես վարձատրություն ամենանողկալի ստտիկանության հսկողությանն արժանացավ: Ոչ, կնախընտրեմ փոխել դավանանքս և որևէ կաթոլիկ եկեղեցու խուլ մենաստանում մինչև կյանքիս վերջը միանձնուհի մնալ:

Մինան իր հայրենակից Ավգուստ Լաֆոնտենի* վեպերից էր միայն ճանաչում պալատական կյանքը: Ալբանիի* ոճի այդ պատկերները հաճախ ներկայացնում են ինչ-որ հարուստ ժառանգորդուհու սիրտ պատմություն, որտեղ պատահականության բերումով նա հանդիպում է գայթակղիչ երիտասարդ գնդապետի՝ թեթևամիտ ու խրոխտ թագավորական համհարգի: Նման սերը, որ հիմնված է նյութական հաշիվների վրա, նողկանք էր պատճառում Մինային:

— Ինչը կարող է ավելի գոհճիկ ու տափակ լինել,— ասում էր նա մորը,— քան հարսանիքից մեկ տարի անց այն գույգի կյանքը, երբ ամուսինը ամուսնական կապի շնորհիվ դառնում է գեներալ-գնդապետ, իսկ կինը՝ արքայազստեր շքախմբի ազնվազարմ տիկիհներից մեկը: Ի՞նչ կլինի նրանց երջանկությունը, եթե սնանկանան:

Ս...-ի դուքսը, որ բնավ չէր մտածում Ավգուստ Լաֆոնտենի հրամցրած արգելքների մասին, ցանկացավ արքունիքում

կենտրոնացնել Մինայի անսահման հարստությունը: Ամենամեծ ցավն այն էր, որ նրա համհարզներից մեկը, գուցե բարձրագույն հրամանով, սկսեց սիրահետել Մինային: Երկար բարակ մտածելու ժամանակ չկար, և Մինան որոշեց փախչել Գերմանիայից: Սակայն դա իրագործելն այնքան էլ հեշտ չէր:

— Մայրիկ, — դիմեց մի օր մորը, — ես ուզում եմ հեռանալ այստեղից, ուզում եմ հրաժարվել հայրենիքից:

— Սոսկում եմ, երբ այսպես ես խոսում, աչքերդ հիշեցնում են խեղճ հորդ, — պատասխանեց տիկին ղը Վանգելը, — ինչ արած, ես չեզոք կլինեմ, չեմ օգտվի հմ մայրական իրավունքներից, բայց շահնկալես նաև, որ մեծն զուբսի նախարարներից օտար երկիր ճամփորդելու անհրաժեշտ թույլտվություն իրավունք հայցեմ:

Մինան շատ դժբախտ զգաց իրեն: Խոշոր, կապույտ, քնքուշ աչքերի և աղնվատես արտաքինի շնորհիվ ձեռք բերած հաջողությունները արագորեն խամրեցին արքունիքում, երբ հայտնի դարձավ, որ նրա ու նորին գերազանցություն Սերենիսիմի գաղափարները հակադրվում են իրար: Այսպես անցավ մեկ տարի. Մինան հույսը կտրել էր անհրաժեշտ թույլտվություն ձեռք բերելուց: Նա միտք հղացավ ծպտվել, տղամարդու կերպարանքով անցնել Անգլիա և ապրել այնտեղ իր աղամանյները վաճառելով: Տիկին ղը Վանգելը սարսափով նկատեց, որ Մինան մաշկի դույնը փոխելու ինչ-որ արտառոց փորձեր է անում: Շուտով իմացավ նաև, որ Մինան տղամարդու հագուստներ է պատվիրել, վերջինս ձիով ղբոսանքներ կատարելիս հաճախ էր նկատում մեծ ղուբսի ոստիկաններին, սակայն հորից ժառանգած գերմանական բուռն երեվակայության ուժով, ղժվարությունները ամենևին: արգելք չէր համարում ձեռնարկած ղործից ետ կանգնելու համար, րնդհակառակը այս ամենի մեջ ավելի շատ էր հրապույր տեսնում:

Ինքն էլ ղիմանալով, թե ինչպես, Մինան ղուր էր եկել կոմսուհի Դ...-ին՝ նորին գերազանցություն ղուբսի սիրուհուն, որ տարօրինակ և շատ ղոմանտիկ կին էր: Մի օր նրա հետ ձիով ղբոսնելու ժամանակ Մինան ղարձյալ հանդիպեց հեռվից-հեռու իրեն հետևող ոստիկանին: Այդ մարդու ներկայությունը համբերությունից հանեց նրան, և նա կոմսուհուն

վստահեց իր փախուստի ծրագիրը: Մի քանի ժամ շանցած տիկին դը Վանդելը նորին դերապանցություն դուքսի ձեռքով գրված մի գրություն ստացավ, որի համաձայն թույլ էր տրրվում վեց ամսով բացակայել հայրենիքից՝ Բանիեր* առողջարան մեկնելու կապակցությամբ. Երեկոյան ժամը ինն էր: Ժամը տասին մայր ու աղջիկ արդեն, ճանապարհ էին ընկել և, բարեբախտաբար, հաջորդ օրը, նախքան նորին գերազանցություն դուքսի մինիստրները կարթնանային, անցել էին սահմանը:

182... Թվականի ձմռան սկզբին տիկին դը Վանդելն ու աղջիկը հասան Փարիզ: Դիվանագետների պարահանգեսներում Մինան մեծ հաջողություններ ունեցավ: Կարելի էր մտածել, թե այդ պարոնները գաղտնի հրահանգ էին ստացել նրա բանկատորեն խանդարելու մի քանի միլիոնի հասնող հարքստությունը որևէ ֆրանսիացու ավարը դառնալուն: Գերմանիայում դեռևս կարծում են, թե Փարիզի երիտասարդները հետաքրքրվում են կանանցով:

Չնայած իր՝ գերմանացիներին հատուկ երազկոտությանը, տասնութամյա Մինան սկսում էր առողջ դատողության կայծեր արձակել: Նա նկատեց, որ չէր կարող ֆրանսիացի կանանց հետ մտերմակտն կապեր հաստատել: Բոլորի մոտ արտակարգ քաղաքավարություն էր նկատում և վեց ամսվա ծանոթությունից հետո ավելի քիչ մտերմություն էր ձեռք բերել, քան առաջին օրերին: Ընկճված այդ հանգամանքից, Մինան ենթադրեց, թե իր վարվեցողության մեջ ինչ-որ անքաղաքավարի ու ահաճ բան կա, որը չի ընդունվում ֆրանսիական բարեկրթության կողմից: Երբեք նման դիրքի տեր մի անձնավորություն այդքան համեստություն չէր ցուցաբերել: Սուր հակասությամբ նրա վճռական դործունեության եռանդն ու անմիջականությունը դրոշմված էին դեմքին, որոնք դեռևս պահպանում էին մանկության ողջ միամտությունն ու հրապույրը, և այդ դեմքին հետագայում էլ չերևաց այն ծանրախոհությունը, որը բանականության դրավականն է: Բանականությունը, իրոք, երբեք նրա բնավորության էական հատկանիշը չհանդիսացավ:

Չնայած բնակիչների քաղաքավարի անմերձենալիությանը, Փարիզը շատ էր դուր և կել Մինային: Իր հայրենիքում

սարսափով էր համակվում, երբ փողոցում ողջունում էին իրեն, կամ երբ զգում էր, որ ճանաչել են իր կառքը: Ս...ում աղքատիկ հագնված մարդկանց կերպարանքի սակ, որոնք իր ճանապարհին զլխարկ էին հանում, լրտեսների էր տեսնում: Ծպտչալ մնալու հնարավորությունը Փարիզ կոչվող այս հանրապետության մեջ հմայեց տարօրինակ բնավորության տեր աղջկան: Մտերմիկ ընկերական շրջապատի բացակայության պայմաններում, որին Մինայի զուտ գերմանական հոգին դեռևս անկարող էր ընտելանալ, այստեղ ամեն երեկո նա պարահանդես կամ զվարճալի ներկայացում հաճախելու հնարավորություն ուներ:

Մինան փնտրեց այն տունը, ուր 1814 թվականին ապրել էր հայրը և հաճախ իրեն էլ տարել էր հետը: Հենց որ բնակություն հաստատեց այստեղ, որի համար հարկ եղավ մեծ ջանքեր գործադրել վարձակալին հանելու, Փարիզն այլևս օտար չթվաց իրեն, օրիորդ Վանգելին ծանոթ էր այս բնակարանի յուրաքանչյուր անկյունը:

Որքան էլ ժամանակին խաչերով ու շքանշաններով էր ծածկված կոմս դը Վանգելի կուրծքը, նրա հոգու խորքում նստած էր երազող-փիլիսոփան, Գեկարան ու Սպինոզան*: Մինան սիրում էր գերմանական փիլիսոփայության մթին ուրբանները-և Ֆիխտեի ստոիցիզմը այնպես, ինչպես քնքուշ հոգին է սիրում պահպանել գեղեցիկ բնության հիշողությունը: Կանտի սմենախրթին խոսքերը Մինային հիշեցնում էին հոր ձայնի ելեղները միայն: Ո՞ր փիլիսոփայությունը այգալիսի երաշխավորության պայմաններում պայտաջունց չի լինի և մինչև իսկ հասկանալի: Նա համաձայնության եկավ մի քանի ակադեմիստ գիտնականների հետ իրենց սանը փիլիսոփայության պարսպամուկներ անցկացնելու համար, որոնց մասնակցելու էին միայն ինքն ու մայրը:

Կյանքի այսպիսի ընթացքի մեջ, սրն առավոտյան անցնում էր գիտնականների հետ, երեկոյան դեսպանների պարահանդեսներում, սերը երբեք չմոտեցավ հարուստ ժառանգորդուհու սրտին: Ֆրանսիացիները զվարճացնում էին նրան, բայց չէին հուզում:

— Անկասկած,— ասում էր մորը, որը հաճախ էր գովում ֆրանսիացիներին,— այսպիսի հաճոյակատար մարդկանց

որ մի տեղ շեւ հանդիպի: Հիանում եմ նրանց փայլուն ուղեղով, նրանց նուրբ ծաղրը միշտ զարմացրել է ինձ, պլարձացրել, սակայն շե՞ք գտնում, որ նրանք ձախորդ ու ղավեշտական են դառնում, հենց որ փորձում են հուզական երևալ: Արդյոք երբեքցե նրանք հուզվում են:

— Ո՞ւմ են հարկավոր այս քննադատությունները,— պատասխանում էր խելամիտ տիկինը Վանդելը,— եթե Ֆրանսիան քեզ դուր չի գալիս, վերադառնանք Քյոնիգզբերգ: Սակայն մի մոռացիր, որ տասնինը տարեկան ես, և հնարավոր է ևս էլ մի օր հեռանամ կյանքից, մտածիր նեցուկ ունենալու մասին: Եթե այն ժամանակ մահացած լինեի,— ավելացրեց նա մեղամաղձուտ ժպտով,— Ս...ի մեծ դուքսը անպայման կամուսնացներ քեզ իր համհարդի հետ:

Ամառային մի դեղեցիկ օր տիկինը Վանդելը և աղջիկը դնացին Քոմփիեն* քաղաքը՝ թագավորի որսի տեսարանը դիտելու: Պիերըֆոնի ավերակները*, որ հանկարծ Մինան նկատեց անտառում, անսահման զարմանք պատճառեցին նրան: Նա որ մինչև հիմա գերմանական նախապաշարումների դեքին էր, կարծում էր, թե բոլոր հսկայական հուշարձանները, որ ներառնում է Փարիզը՝ այս նոր Բարելոնը, ինչ-որ շորություն, հեղնանք ու շարություն են պարունակում իրենց մեջ: Պիերըֆոնի ավերակները, ընդհակառակը, նրան հուզեցին, ինչպես Բրոկենի գաղաթները պսակող հնադարյան ավերված դղյակները: Մինան համոզեց մորը մի քանի օրով իջևանել Պիերըֆոն դյուղի փոքրիկ պանդոկում: Շատ վնաս պայմաններում տեղավորվեցին: Հաջորդեց անձրևային օր: Մինան, տասներկու տարեկան աղջնակի պես հմայված, կծկվել էր պանդոկի դարբասի տակ և կլանված նայում էր անձրևին: Հանկարծ նկատեց մի ցուցանակ, որտեղ նշված էր մոտակայքում վաճառվող հողակտորի մասին: Քառորդ ժամ շանցած, պանդոկի սպասուհիներից մեկի ուղեկցությամբ, որ հովանոցն էր պահել իր գլխին, հայտնվեց նոտարի մոտ: Վերջինս շատ զարմացավ տեսնելով այդքան պարզ հագնված երիտասարդ աղջկան, որը մի քանի հարյուր հազար ֆրանկի հասնող հողերի գնի շուրջն էր սակարկում. այնուհետև խընդրում պայմանագիր ստորագրել և որպես առևտրական երաշ-

խավորութիւն՝ ընդունել ֆրանսիական բանկից հազար ֆրանկնոց մի քանի պարտատոմս:

Պատահականութեան բերումով, որը պետք է զգուշանամ տրտասովոր անվանելուց, Մինային շատ քիչ խաբեցին: Այս հոգաբարձուքը կոչվում էր Փըթի-Վերբերի: Վաճառողը Պիկար-դիում* գտնվող զոլյակների մեջ ամենահոշակավոր սեփականատեր կոմս դը Ռուպերն էր: Բարձրահասակ, շափազանց զեղեցիկ երիտասարդն առաջին իսկ հայացքից շլացնում էր բոլորին, բայց շատ ժամանակ շանցած որևէ գոեհիկ արարքով կամ կոպիտ վերարերմունքով. մարդկանց միանգամից վանում էր իրենից: Կոմս Ռուպերն իսկույն շահեց տիկին դը Վանդելի համակրանքը. հոճելի էր նրա ներկայութիւնը: Իր ժամանակվա երիտասարդների մեջ գուցե միակն էր, որ հիշեցնում էր դը Լոզենի* և դը Տիլի* հուշերում տեղ գտած վեպերի հաճելի անառակներին: Պարոն դը Ռուպերը հասցրել էր քամուն տալ անհամար հարստութիւնը. նա ընդօրինակում էր Լյուդովիկոս 14-րդի շրջանում ապրած սինյորներին անհեթեթութիւնները և չէր պատկերացնում, թե Փարիզը ինչ հնարքներ պիտի դորժադրեր բացառապէս իրենով շքեղ-վելու համար: Փառասիրական դադափարների հանդեպ հուսախաբութեամբ լցված, նա խենթի պես սիրահարված էր դրամին: Բեռլինից ստացած իր հարցումի պատասխանի հիման վրա օրիորդ դը Վանդելի հանդեպ առաջացած սիրո զղացմունքը հասավ գազաթնակետին: Վեց ամիս հետո Մինան ասում էր մորը.

— Իրոք, հարկավոր էր հողամաս գնել բարեկամներ ձեռք բերելու համար: Գուցե մի քանի հազար ֆրանկ կորցնենք, եթե ցանկութիւն ունենանք վաճառել Փըթի Վերբերին, բայց դրա փոխարեն մեր ծանոթների շարքում ահագին հաճելի կանայք դարձել են մեր մտերիմները:

Եվ այնուամենայնիվ Մինան երիտասարդ ֆրանսուհու վար-վելակերպը շուրացրեց: Հիանալով հանդերձ նրանց հրապուրիչ շնորհագեղութեամբ, նա պահպանեց գերմանական վար-վելակերպի բնականութիւնն ու ազատութիւնը: Տիկին դը Սելին՝ նրա նոր բարեկամուհիներից ամենամտերիմը, Մինայի մասին ասում էր, որ նա յուրատեսակ կին է, բայց ոչ տարօրինակ. հմայիչ շնորհագեղութիւնը ամեն ինչ ներել

էր տալիս: Նրա պահվածքից ոչ ոք չէր կռահի, որ նա մի-
լիոնատեր է. նա ոչ միայն գեղեցիկ բնկերակցութեան պար-
զութեամբ ունէր, այլև իսկական հմայք:

Նրանց կյանքի հանդիստ բնթացքը կարծես միանգամից
ալեկոսովեց. Մինան կորցրեց մորը: Հենց որ վիշտը ժամանակ
տվեց մտորելու սեփական դիրքի մասին, Մինան պղտց, որ
այն շատ է խանդարում իրեն: Տիկինը դր Սելին նրան տարավ
իր զղակը: Երեսնամյա այդ կինն ասում էր.

— Քեզ հարկավոր է Պրուսիա վերադառնալ, դա է ամե-
նախելամիտ ելքը, հակառակ դեպքում, հենց որ սուղից դուրս
գաս, ամուսնացիր այստեղ, իսկ մինչ այդ պետք է Քյոնիգզ-
բերգից կանչես մտերիմ մի բարեկամուհու, լավ կլինի՝ ազգա-
կաններիցդ մեկին:

Շատ դժվար հարց էր: Բոլոր գերմանուհիները, մինչև իսկ
հարուստ ազնիվները, այն համոզմունքն ունեն, որ պետք է
ամուսնանալ միայն սիրած մարդու հետ: Տիկինը դր Սելին
օրիորդ դր Վանգելին առաջարկում էր տասնյակ հարմար
թեկնածուներ, սակայն դրանք բոլորը Մինային թվում էին
հասարակ, դավեշտական, համարյա տհաճ:

Մինան զլորեց կյանքի ամենազժբտիտ տարին. տուղ-
ջական վիճակը վատացավ, գեղեցկությունը համարյա ան-
հետացավ: Մի օր, երբ եկել էր տիկինը դր Սելիի մոտ, իմա-
ցավ, որ բնթրիքի է հրավիրված հոշակավոր տիկինը դր Լար-
սեյը, որը ամենահարուստ և ամենահմայիչ կնոջ համբավն
ունէր այդ շրջանում: Հաճախ էին հասարակութեան մեջ գո-
վաբանում նրա կազմակերպած սոնախմբութեանների նըր-
բաճաշակութունն ու նրա կատարյալ սիրալիր վերաբերմուն-
քը. նա պիտեր ինչպես տնօրինել իր անսահման հարստու-
թեանը: Մինան զարմացավ տիկինը դր Լարսեյի բնավորութեան
մեջ շափից դուրս պրոպիկութեան հայտնաբերելով: «Ահա
թե ինչպիսին պետք է լինել հարգանքի արժանանալու հա-
մար», — մտածում էր նա: Քանի որ գեղեցկութեան հետ կապ-
ված հույսի անհետացումը մեծ ցավ է պատճառում գերմա-
նական հոգեբանութեամբ սնված սրտերին, իր խոր հուսա-
հատութեան մեջ Մինան այլևս ուշադրություն չդարձրեց տի-
կինը դր Լարսեյին և առ քաղաքավարութեան, սկսեց զրուցել

նրա ամուսնու հետ: Շատ պարզ մարդ էր, մեծարանքի արժանի, Ռուսաստանից նահանջելու ժամանակ եղել էր Նապոլեոն կայսրի պաշտոնակատարը և հայտնի էր դարձել այս և հետագա արշավանքների ժամանակ իր տարիքին անհամապատասխան քաջագործություններով: Նա ամենայն պարզությամբ խոսեց Հունաստանի մասին, որտեղ երկու տարի մնացել էր և կովել հույների համար: Նրա զրույցը դուր եկավ Մինային: Ասես երկար ժամանակով բաժանված մտերիմ բարեկամի էր հանդիպել:

Ընթրիքից հետո գնացին Կոմպինյի անտառ մի քանի հռչակավոր շինություններ դիտելու: Մինան բազմիցս մտադրվեց խորհրդակցել պարոն դը Լարսեյի հետ իրեն անհանդրստացնող հարցերի շուրջը: Այդ օրը ձի նստած նրանց կառքերի կողքով վարգում էր նաև կոմս դը Ռուպերը, որի նրբաճաշակ շարժումները կարծես ընդգծում էին պարոն դը Լարսեյի բնական և նույնիսկ միամիտ բնավորության գծերը: Մեծ իրապարծությունների մեջ, որ լուսավորել էին վերջինիս կյանքի ուղին, հնարավորություն տալով նրան տեսնելու մարդկային հողին այնպես, ինչպես կա, միաժամանակ նպաստել էին այն բանին, որ նրա մոտ կազմավորվի աննկուն, սառը, զրական, կենսախինդ, բայց երևակայությունից զուրկ բնավորություն: Նման անձնավորությունները արտակարգ ազդեցություն են դործում այն մարդկանց վրա, որոնք միայն երևակայությամբ են ապրում: Մինան զարմացավ ֆրանսիացու մեջ այդքան պարզություն տեսնելով:

Երեկոյան, երբ պարոն դը Լարսեյը մեկնեց, Մինային թվաց, թե բաժանվել է տարիների շարունակ իր գաղտնիքներին ծանոթ մտերիմ բարեկամից: Ամեն ինչ շոր ու տաղտկալի էր, նույնիսկ այնքան սիրալիր տիկին դը Սելիի ընկերակցությունը: Մինան ամենևին անհրաժեշտություն չէր գտնում քողարկել մտքերը իր նոր բարեկամից: Ֆրանսիական նուրբ հեգնանքը նրան բոլորովին չէր ստիպել ամեն առիթով քող սփռել իր սնկեղծությամբ լի գերմանական մտածողության վրա: Պարոն դը Լարսեյը ձերբազատում էր Մինային անհրաժեշտաբար օգտագործվող մի շարք բռների գործածությունից և նրբաճաշակություն պահանջող մանր շարժումներից: Դա նրան ութից տասը տարով մեծացնում էր, բայց հենց այդ իսկ

պատճառով իր մեկնումից մի ամբողջ ժամ լիովին գրադեցրել էր Մինայի ուղեղը:

Հաջորդ օրը Մինան ստիպված էր ջանք գործադրել նույնիսկ տիկին դը Սելիին լսելու համար: Ամեն ինչ նրան շոր ու անբարյացակամ էր թվում: Այլևս որպես պատրանք չէր դիտում այն միտքը, թե հարկավոր է հույսը շկորցնել անկեղծ ու ազնիվ սիրտ գտնելու հարցում, որ պետք չէ ամենապարզ արտահայտության մեջ անընդհատ փնտրել հեղինանքի պահ: Ամբողջ օրը կարծես երազի մեջ լիներ: Երեկոյան տիկին դը Սելին հայտնեց պարոն դը Լարսեյի ժամանումը: Մինան ցնցվեց, թռավ տեղից, կարծես իրեն էին կանչել, շտապումնեց և դժվարությամբ կարողացավ բացատրել այս տարօրինակ խոռվքի պատճառը: Հուզմունքի մեջ անմիջապես ինքն իրեն պարզարանեց այն, ինչ անհրաժեշտ էր թաքցնել ուրիշներից: Փախավ մտավ իր սենյակը. «Խենթ եմ», — մտածում էր նա: Այդ պահից սկսեց նրա դժբախտությունը. հսկայի քայլերով էր այն առաջանում: Որոշ ժամանակ անց խղճի խայթ զգաց. «Միրահարված եմ, և սիրում եմ ամուսնացած մարդու»: Այս հոգեկան տապնապն ամբողջ դիշեր տանջեց նրան:

Պարոն դը Լարսեյը, որ պատրաստվում էր կնոջ հետ կուրսորտային էքս ան Սավուա քաղաքը մեկնել, տիկին դը Սելիի տանն էր մոռացել մի քարտեզ, որի վրա Մինային ու տիկին Սելիին ցույց էր տվել իր նշումները՝ ճանապարհորդական մի փոքր շեղումի, որ որոշել էր կատարել մինչև էքս հասնելը:

Տիկին Սելիի երեխաներից մեկը գտավ քարտեզը, Մինան խլեց նրա ձեռքից ու փախավ պարտեզ: Մեկ ժամ կորցրեց պարոն դը Լարսեյի ճամփորդական ծրագիրն ուսումնասիրելու վրա: Փոքրիկ քաղաքները, որտեղով նա անցնելու էր, Մինային հրաշալի ու արտաոտց էին թվում: Երևակայության մեջ դրանց գրաված դիրքի շուրջը ամենահրաշալի պատկերներն էր կառուցում. նախանձում էր այդտեղի բնակիչների երջանկությանը: Այս շնչին խենթությունն այնքան ուժգնացավ, որ մի կողմ նետեց խղճի խայթը: Մի քանի օր հետո տիկին դը Սելիի տանը հայտնեցին, որ Լարսեյները մեկնել են Սավուա: Նորությունը հեղաշրջում առաջացրեց Մինայի

հողում, նա մեծագույն ցանկություն ունեցաւ ճամփորդելու: Տասնհինգ օր շանցած անհայտ տարիքի մի դերմանուհի ժնկից վարձած կառքով ժամանել էր էքս ան Սաւուա: Այս կինն իր հետ վերցրել էր մի սպասուհու և սյնքան վատ էր վարվում նրա հետ, որ փոքրիկ պանդոկի տիրուհին՝ տիկին Թուանոն, որի մոտ իջևանել էին նրանք, շատ ազդվել էր պրանից: Տիկին Քրամերը (աշղպես էր գերմանուհու անունը) կանչել տվեց տիկին Թուանոյին:

— Ուզում եմ ծառայության վերցնել այս շրջանի աղջիկներուց մեկին, որ ճանաչի էքս քաղաքի ու նրա շրջակայքի բոլոր մարդկանց, թե չէ, ինչիս է պետք այս գեղեցիկ օրիորդը, որին հետս վերցնելու հիմարությունն ունեցա, սա բոլորովին անձանոթ է տեղանքին:

— Աստված իմ, ձեր տիրուհին շատ զայրացած է երեւում,— ասաց տիկին Թուանոն սպասուհուն, հենց որ մենակ մնացին:

— Մի խոսեք նրա մասին,— արցունքն աչքերին ասաց Անիկենը,— ես պետք է հեռանայի Ֆրանկֆուրտից, ծնողներս այնտեղ կրպակ ունեն: Մորս տրամադրության տակ աշխատում են ամենալավ գերձակները, որոնք ոչնչով չեն զիջում Փարիզի վարպետներին:

— Ձեր տիրուհին ասաց, որ երեք հարյուր ֆրանկ կտա ձեզ, եթե համաձայնեք Ֆրանկֆուրտ վերադառնալ:

— Այնտեղ ինձ վատ կընդունեն, մայրս երբեք չի հավատա, որ տիկին Քրամերն ինձ առանց պատճառի ետ է ուղարկել:

— Դե լավ, մնացեք էքսում, ձեզ համար մի տեղ կգրտնեմ, Տեղավորման գրասենյակ ունեմ, ես եմ հանգստացողներին սպասուհիներով ապահովում: Վաթսուն ֆրանկ արժեն ընդհանուր ծախսերը, և տիկին Քրամերի տված երեք հարյուր ֆրանկից դեռ տասը լուիզոր էլ կմնա ձեզ:

— Վաթսուն ֆրանկի փոխարեն հարյուր ֆրանկ կստանաք,— ասաց Անիկենը,— եթե ֆրանսիացու ընտանիքում տեղավորեք ինձ, ուզում եմ ֆրանսերենս կատարելագործել և աշխատել Փարիզում: Շատ լավ կարում եմ և որպես հավատարմության դրավական իմ տերերին պահ կտամ քսան լուիզոր, որ բերել եմ Ֆրանկֆուրտից:

Պատահականությունը լավ ընթացք տվեց դեպքերին, որ արդեն երկու, երեք հարյուր ֆրանկ էր նստել օրիորդ Վանգելի վրա: Տիկին և պարոն Լարսեյները եկան Քրուա դը Սափուա մողաչիկ հյուրանոցը: Տիկին դը Լարսեյը գտավ, որ շատ աղմկոտ է այստեղ և մի գեղեցիկ տան մեջ, լճափին, բնակարան վարձեց: Այդ տարի շատ հաճելի էր այստեղ. հարուստ մարդկանց մեծ բաղմություն էր հավաքվել, հաճախակի կաղմակերպվում էին պարահանդեսներ, կանայք սլոճներվում էին, ինչպես Փարիզում, իսկ ամեն երեկո ամբողջ հասարակությունը հավաքվում էր պարասրահում: Տիկին դը Լարսեյը ուղեց մի աղջիկ վարձել տեղի բնակչուհիներից, որը նաև կարելու շնորհք ունենար: Նրան ուղարկեցին տիկին Թուանոյի գրասենյակը: Վերջինս տեղացի աղջիկներից շատերին ներկայացրեց, որոնք բավականին անճարակ էին: Վերջապես հայտնվեց Անիկենը, որից ստացած հարյուր ֆրանկը կրկնապատկել էր տիկին Թուանոյի բնական ճարակությունը: Երիտասարդ գերմանուհու լուրջ տեսքը դուր եկավ տիկին դը Լարսեյին, ընդունեց նրան և մարդ ուղարկեց, որ նրա ճամպրուկը բերեն:

Նույն երեկոյան, երբ տերերը գնացին պարասրահ, Անիկենն սկսեց երազկոտ դբոսնել պարտեղում, լճակի ափին: «Վերջապես,— մտածում էր նա,— այս է իմ մեծ խելագարություն վարձատրությունը: Ի՞նչ կպատահի, եթե մեկն ու մեկը ճանաչի ինձ այստեղ: Ի՞նչ կասի տիկին դը Սելին, որը կարծում է, թե ես Քյոնիգզբերգ եմ գնացել»:

Միշտ էլ անհրաժեշտ դեպքերում խիզախությունը սատար էր կանգնել Մինային, իսկ այժմ սկսում էր լքել նրան: Հողին խիստ խոռոված էր, ու շունչը կտրվում էր: Ջղջումը, ամոթն ու վախը տանջում էին նրան: Բայց, ի վերջո, լուսինը բարձրացաւ: Օտ-Կոմբ լեռան հտեից: Նրա փայլուն սկավառակը արտայտվում էր լճակի ջրերի մեջ, որոնք մեղմորեն հուղվում էին հյուսիսից հասնող հովիկից: Տարօրինակ պատկերներով խոշոր ճերմակ ամպերը արագ անցնում էին լուսնի առջևով և ներկայանում Մինային որպես վիթխարի հսկաներ: «Իմ Լրկրից են գալիս— մտածում էր նա— ուղում են տեսնել ինձ և արիություն ներշնչել ստանձնածս տարօրինակ դերի համար»: Ուշադիր և կրքոտ հայացքով հետևում էր նրանց

արագընթաց շարժումներին: «Նախնյաց ստվերներ, ճանաչեք ձեր արյունը, քաջ եմ ես էլ ձեզ նման: Մի սարսափեք այս տարօրինակ զգեստից, որ կրում եմ ես այժմ, պատվիս հավատարիմ կմնամ: Պատվի և հերոսության գաղտնի հուրը, որ փոխանցել եք ինձ, այս պրոզաիկ դարում, ուր բախտի բմահաճույքով եմ նկատվել, արժանի ոչինչ չի գտնում: Կարհամարհե՞ք ինձ այն բանի համար, որ անօրինում եմ բախտըս, ինչպես թելադրում է ինձ հոգուս մեջ վառվող հուրը»: Մինան այլևս դժբախտ չէր զգում:

Անուշ մի երգ լավեց հեռվից, հավանաբար ձայնը գալիս էր լճակի դիմացի ափից: Մարող հնչյունները հաղիվ-հաղ էին հասնում Մինայի ականջին. համակ ուշադրություն դարձած լսում էր: Նրա մտքերը փոխեցին իրենց ընթացքը, նա համակերպվեց ճակատագրին: «Ինչ փույթ թե ինչ ջանքեր եմ թափում ես: Գոնե կարող եմ վստահ լինել, որ աշխարհում դոյություն ունի երազածս երկնային ու անբիծ հոգին: Թեկուզ անտես մնա ինձ համար: Արդյոք երբեիցե խոսե՞լ եմ իմ սպասուհու հետ: Այս տարաբախտ կերպարանափոխության հետևանքով ես ստիպված կլինեմ ժամանակս անցկացնել Ալֆրեդի սպասավորների բնկերակցությամբ: Նա երբեք չի հաճի խոսել ինձ հետ»: Շատ արցունք թափեց Մինան: «Գոնե ամեն օր կտեսնեմ նրան,— մտածեց նա միանգամից վերագտնելով արիությունը,— ավելի մեծ երջանկություն չէր սպասում ինձ... Խեղճ մայրս իրավացի էր, երբ ասում էր. «Եթե երբեիցե սիրես, ինչ խենթություն ասես չես գործի»:

Լճակի վրա նորից լավեց երգի ձայնը, բայց այս անգամ ավելի մոտիկից: Մինան հասկացավ, որ նավակից էր գալիս: Լուսնյակից արծաթագօծված կոհակները շարժվեցին. նա լսում էր Մոցարտի դրչին արժանի անուշ մեղեդի: Քառորդ ժամ անց մոռացավ ինքն իրեն ուղղած բոլոր հանդիմանանքները և մտածեց միայն Ալֆրեդին ամեն օր տեսնելու երջանկության մասին: «Եվ, ի վերջո, պետք չէ՞, որ յուրարանչյուր ոք ինքը տնօրինի իր ճակատագիրը,— մտածեց նա:— Չնայած ծաղումիս և ունեցվածքիս երջանիկ դուզապիպությանը, ճակատագրի բերումով վիճակված չե՞ ինձ շողալ սպալատում և սարահանդեսներում: Ինձ վրա հայացքներ են սևեռվել, զգացել եմ, թե ինչպես են հիանում ինձանով, սա-

կայն այդ հասարակության մեջ անձկությունս հասել է ամենամոռայ մեղամաղձության: Բոլորը ձգտում էին խոսել ինձ հետ, իսկ ես ձանձրանում էի: Մնողներին մահից հետո միակ երջանիկ պահերս նրանք էին, երբ ձանձրալի հարևաններից հեռու, լսում էի Մոցարտի երաժշտությունը: Մեղավոր եմ արդյոք, որ յուրաքանչյուր մարդու համար այդքան անհրաժեշտ երջանկության որոնումը չինձ մղում է այս տարօրինակ քայլին: Ամենայն հավանականությամբ, այս տարօրինակ քայլս ինձ կպատվաղրկի. դե՛, ինչ արած, կաթոլիկ եկեղեցու որևէ մենաստան ապաստան կտա ինձ»:

Լճակի հանդիպակաց տափի զանգուկները կեսգիշերվա զողանջներն էին արձակում: Այս հանդիսավոր պահը ցնցեց Մինային, լուսինն այլևս չէր լուսավորում. աղջիկը վերադարձավ տուն: Հենված պատշգամբի բազրիքին, որ լճակի ու փոքրիկ պարտեզի կողմն էր նայում, Մինան, Անիկենի հասարակ անվան տակ ծպտված, սպասում էր տերերի գալուն: Երաժշտությունը վերադարձրել էր ողջ արիությունը: «Իմ նախնիները,— ասում էր նա,— հեռանում էին Քյոնիգզբերգի իրենց հոյակապ զղյակից, որպեսզի հասնեն Սուրբ Հոգին: Մի քանի տարի հետո նրանք վերադառնում էին մեն-մենակ՝ անցնելով հագար ու մի արհամիրքների միջով, ինձ նման ծպտված: Այն քաջությունը, որ նրանց կենսախինդ էր դարձնում, ինձ նետում է վտանգների զիրկը՝ իմ սեռի համար միակ հասանելի բանը այս սին, տափակ ու անշուք դարում: Թող ես պատվով դուրս գամ, իսկ մեծահոգի սրտերը, իմ խենթության վրա զարմանալով հանդերձ, զաղտնաբար կներեն ինձ»:

Օրերն անցնում էին, և շատ շուտով Մինան համակերպվեց իր ճակատագրին: Ստիպված էր շատ կարել, ուրախություններ էր այս նոր վիճակի պարտականությունները կատարում: Հաճախ նրան թվում էր կատակերգություն է խաղում, երբ որևէ արտառոց շարժումով շեղվում էր դերից, ծիծաղում էր ինքն իր վրա: Մի օր ճաշից հետո, չբոսանքի ժամին, երբ ծառան բաց արեց կառքի դռնակը և իջեցրեց աստիճանը, նա թեթևաքայլ առաջացավ, որ նստի:

— Խենթ է այս աղջիկը,— ասաց տիկին դը Լարսելը:

Ալֆրեդը երկար զննեց Մինային՝ կատարյալ շնորհագեղություն նկատելով նրա մոտ: Վերջինս ամենևին չէր հուզ-

վում իր նոր պարտականություններից, կամ ծիծաղելի երևալու վախից: Մարդկության ղգուշավորությունից նա հեռու էր կանգնած:

Ամեն տեսակի անպատշաճություն, որ հանդես էր բերում ինքն իր դեմ, բխում էր տիկին դը Լարսեյի մոտ կասկածներ հարուցելու վախից: Վեց շաբաթվա ընթացքում հազիվ մեկ օրվա տեղում էր նրա կողքին եղել, այն էլ տարբեր դերերում:

Մինան ամեն օր վեր էր կենում վաղ առավոտյան, որպեսզի կարողանար երկու ժամ նվիրել տղեղանալու գործին: Նրա անշաղի գեղեցիկ, խարտյաշ մազերը, որի մասին հաճախ էին ակնարկել, թե մի անգամ տեսնողը երբեք չի մոռանա, մկրատի մի բանի հարվածով ձևափոխվել և քիմիական պատրաստուկի շնորհիվ տհաճ ու անբնական, համարյա մուգ շագանակագույն երանգ էին ստացել: Ժանտափշի տերևներից պատրաստված հեղուկը, որ ամեն առավոտ քսում էր նուրբ ձեռքերին, կոպտացրել էր մաշկը: Մի ուրիշ քսուքով դեմքը ստացել էր այնպիսի տհաճ գույն, ինչպիսին լինում է գուղութներից եկող սպիտակամորթներինը, որոնք նեգրի ու սպիտակի խառնուրդ են: Գոհ իր կերպարանափոխությունից, որով համարյա տղեղ տեսք էր ստացել, Մինան աշխատում էր խելքով էլ շմատնել իրեն: Երջանկության մեջ խորասուզված՝ խոսելու ցանկություն անգամ չունի: Տեղավորվում էր տիկին դը Լարսեյի սենյակի պատուհանի առջև, դբաղվում երեկոյի համար հագուստներ հարդարելով, օրը մի քսան անգամ լսում էր Ալֆրեդին և նորանոր առիթներ էր ունենում նրա բնավորությամբ հիանալու: Համարձակվե՞նք այսպես արտահայտվել... Ինչու չէ, քանի որ գերմանական հոգեբանությունն ենք վերլուծում: Այնպիսի երջանիկ ու ողևորված պահեր եղան, որ մինչև իսկ սկսեց պատկերացնել, թե Ալֆրեդը գերբնական էակ է: Իր նոր պարտականությունների մեջ հանդես բերած ողևորությունն ու անկեղծ եռանդը, որի համար Մինան հատուցված էր զգում, բնական տպավորությունն զործեցին պարզունակ հոգու տեր տիկին դը Լարսեյի վրա. նա բարձրից էր նայում Մինային և վարվում էր հետը որպես մի խղճուկ աղջկա, որը պետք է որ երջանիկ զգա իրեն, քանի որ ապաստարան ունի: «Մի՞թե այն, ինչ անկեղծ

է ու կենդանի, տեղ շունի՞ այս մարդկանց մոտ» — մտածում էր Մինան, նա զգացնել տվեց, որ կուզենար նորից արժանանալ տիկին Քրամերի բարեկամությանը: Համարյա ամեն օր թույլտվություն էր խնդրում նրա մոտ գնալու:

Մինան վախենում էր, որ իր շարժումները ստորօրինակ գաղափարներ կհուշեն տիկին զը կարսեյին: Ուրախությամբ իմացավ, որ կարելու գործում նոր տիրուհին իրեն ավելի դանդաղաշարժ է համարում, քան Փարիզում թողած սենեկապանուհուն: Պարոն Դյուբուան՝ Ալֆրեդի սենյակի սպասավորը, շատ ավելի տաղտկալի մարդ էր: Քառասնամյա փարիզաբնակը հագնվում էր խնամքով, ինքնավստահ էր զբաղեցրած պաշտոնի պատճառով և կարծում էր, թե կարող է հաջողության հասնել սիրահետելով նոր ընկերուհուն: Անիկներ խոսեցրեց նրան և նկատեց, որ նրա միակ կիրքը, բարոբախտաբար, Փարիզում սրճարան բացելու նպատակով մի փոքրիկ գումար կուտակելն է: Այդ ժամանակ, առանց քաշվելու, Մինան մանր նվերներ տվեց նրան: Շատ շանցած Դյուբուան այնպիսի հարդանքով ծառայեց Մինային, ինչպես կվերաբերվեր տիկին կարսեյին:

Ալֆրեդը նկատեց, որ երբեմն շատ ձախտրդ ու երկչոտ թվացող երիտասարդ գերմանուհին այնպիսի իրարամերժ շարժումներ ունի, այնքան ուղղամիտ ու նուրբ գաղափարների ներ անձնավորություն է, որ արժե լսել նրան: Մինան նրա աչքերում կարդաց ուշադրության արտահայտությունը և թույլ տվեց իրեն մի քանի արդարամիտ ու խորիմաստ դատողություններ անել, հատկապես այն ժամանակ, երբ հույս ուներ, որ տիկին զը կարսեյը չի լսում, կամ չի հասկանում ասածները:

էքսում անցկացրած երկու ամսվա ընթացքում եթե որեէ փիլիսոփա օրիորդ զը Վանդելին հարցներ, թե ինչ նպատակներ ունի, վերջինիս պատասխանի մանկականությունը կզարմացներ փիլիսոփային և մի փոքր կկատկածեր անկեղծության մեջ. ամեն վաչրկյան տեսնել ու լսել այն մարդուն, որի համար իսկնթանում է. սա էր նրա կյանքի միակ նպատակը, և ուրիշ ոչինչ: Այնքան երջանիկ էր, որ ապագայի մասին չէր էլ մտածում: Եթե փիլիսոփան նրան ասած լիներ, որ այդ սերը կարող էր դադարել անաղարտ լինելուց, նա

ավելի շուտ կկատարեր, քան կհայտեր: Մինան հաճույքով էր ուսումնասիրում պաշտելի մարդու բնավորությունը: Կարծես Լարսելյի հանգիստ բնավորությունը հատկապես փայլում էր այն ժամանակ, երբ հակասության մեջ էր դնում իր հորը՝ բարձրագույն ատյանի անդամին, շրջապատող բարձր հասարակության անդամների հետ, այն հասարակության հետ, ուր հարստության ու պաշտոնի շնորհիվ ապահովել էր իր դիրքը: Եթե Ալֆրեդը քաղքենիների շրջապատում լիներ, իր շարժումների պարզությունը, ձևականության և բարձր հովեր ընդունելու հանդեպ զղացած նողկանքը նրանց աչքին կհամարվեր կատարյալ հասարակություն: Այս բնավորության պիծն էր, որ առաջին իսկ օրից գրավեց Մինայի ուշադրությունը: Դիտելով ֆրանսիացիներին իր հայրենիքին հատուկ դատողությունների ուղորտում, Ալֆրեդը նրանց վարած զրույցները անընդհատ նմանեցնում էր սպորտը զույգի վողեվիլի ավարտին: Նա կյանքում շատ էր հանդիպել բարձր խավի ներկայացուցիչների և հանճարեղ ձևով կարող էր եզրահանդումներ անել ու նմանվել նրանց, բայց փոքրություն էր համարում և երբևէ չէր արտասանում բարեհաճ բառեր, որ հնարված լինեին պահի ազդեցության տակ և ունկնդիրներին անհասկանալի թվային:

Ամեն երեկո Ալֆրեդը կնոջն ուղեկցում էր պարասրահ, որից հետո վերադառնում էր տուն, տրվելով բուսաբանության մեծագույն հաճույքին: Այդ սերը ծագել էր շնորհիվ այն վայրի մոտիկության, ուր անց էր կացրել իր երիտասարդությունը ժան ժակ Ռուսոն: Ալֆրեդն իր տուփերն ու բույսերը տեղավորել էր Անիկենի աշխատասենյակում: Ամեն երեկո ժամերով նրանք մնում էին մենակ, շնայած ոչ մեկը, ոչ մյուսը, ոչ մի բառ չէր արտասանում: Երկուսն էլ շփոթված էին լինում, բայց՝ երջանիկ: Անիկենը Ալֆրեդի համար սիրահոժար իսեծ էր հալեցնում, որպեսզի նա բուսաբանական ալբոմի մեջ շորացրած բույսերը սոսնձի: Անկախ պարտականությունից, Անիկենը այդ գործը կատարում էր միայն մասնակից դառնալու համար նրա աշխատանքին: Երբ Ալֆրեդն այստեղ չէր լինում, Մինան հիանում էր Բուրժեի լճափին բարձրացող դեղատեսիլ լեռներից բերված գեղեցիկ բույսերով: Մինան անկեղծ հետաքրքրությամբ

լցվեց բուսաբանության հանդեպ, Ալֆրեդն սկզբում դա բնական էր համարում, հետո նրան տարօրինակ թվաց: «Նա համակրում է ինձ,— մտածեց Մինան,— նկատում եմ նաև, որ պարտականություններիս հանդեպ ցուցաբերած իմ նուանդը ազդում է տիկին ղը Լարսեյի վրա»:

Տիկին Քրամերը ձևացրեց, թե հիվանդ է: Մինան թույլտրվություն ստացավ երեկոները իր նախկին տիրուհու մոտ անցկացնելու: Ալֆրեդը դարձանում էր զգալով, որ բույսերի հանդեպ զգացած սերը ղնալով մարում է, նույնիսկ անհետանում: Երեկոյան մնում էր պարասրահում, իսկ կինը ծաղրում էր նրան, որ ձանձրանում է մենակությունից: Ալֆրեդն ինքն իրեն խոստովանում էր, որ այդ երիտասարդ աղջիկը դուր է գալիս իրեն: Նրա կողքին դանվելու ժամանակ հանդես բերած երկշտություն դեմ դայրանալով, մի պահ տրվելով սեթևեթության, մտածեց. «Ինչո՞ւ ես էլ չվարվեմ աշնպես, ինչպես կվարվեի ընկերներիցս յուրաքանչյուրը: Վերջիվերջո ընդամենը սպասուհի է»:

Մի երեկո անձրևի պատճառով Մինան մնաց տանը: Ալֆրեդը մի բանի բույս միայն երևաց պարասրահում: Երբ վերադարձավ տուն, ձևացրեց, թե Մինայի ներկայությունը հյուրասենյակում անակնկալի է բերել իրեն: Այս աննշան կեղծիքը նկատելով՝ Մինայի մոտ անհետացավ այդ երեկոյի համար նախապես սպասված երջանկությունը: Գուցե այս տրամադրությունն էր պարտական այն ճշմարիտ ցուտումը, որով վանեց Ալֆրեդի մտադրությունները: Քաշվեց իր սենյակը: «Սխալվել եմ,— մտածում էր Մինան արտասվելով,— բոլոր ֆրանսիացիներն էլ նույնն են»: Ամբողջ գիշեր մտածեց Փարիզ վերադառնալու մասին:

Հաջորդ օրը Ալֆրեդին ուղղած արհամարհական հայացքի մեջ ոչ մի դիտումնալորություն չկար: Ալֆրեդը վիրավորված էր. այլևս ուշադրություն չդարձրեց Մինային և ամեն երեկո ղնում էր պարասրահ ժամանակ անցկացնելու: Իրենից անկախ ամենաճիշտ ուղին էր ընտրել: Այս սառնությունը մոռացնել տվեց Մինային Փարիզ վերադառնալու ծրագիրը. «Ոչ մի վտանգ չի սպառնում ինձ այս մարդու ներկայությամբ»,— մտածեց նա և ութ օր շանցած զգաց, որ ներում է ֆրանսիացիներին հատուկ այս բնավորությունը: Ալֆրեդն

էլ իր հերթին զգում էր, որ պարասրահում ձանձրանում է մեծարգո կանանց շրջապատում և սիրահարված է ավելի, քան կարծում է: Այնուամենայնիվ քաջաբար զսպում էր իրեն: Աչքերը հաճույքով կանգ էին առնում Մինայի վրա, խոսում էր նրա հետ, բայց երեկոյան երբևր տուն շէր վերադառնում: Մինան գժբախտ զգաց իրեն, համարյա առանց մտածելու պաղարեց առաջվա պես խնամքով տգեղանալու գործով զբաղվել: «Երա՞զ է,— մտածում էր Ալֆրեդը,— Անիկենը դառնում է տեսածս կանանցից ամենագեղեցիկը»: Մի երեկո, երբ պատահաբար վերադարձել էր տուն, տրվելով սիրո պոռթկումին, ներողություն խնդրեց Անիկենից իր թեթևաբարձ վարմունքի համար:

— Նկատում էի,— ասաց Ալֆրեդը,— որ դուք հետաքրքրություն եք ներշնչում ինձ, այնպիսի հետաքրքրություն, որ ոչ մեկի հանդեպ չեմ զգացել. վախեցա, ուզեցի բուժվել կամ ընդհարվել ձեզ հետ և այդ պահից սկսած ամենազբախտ մարդը դարձա:

— Ախ, Ալֆրեդ,— ինչպիսի երջանկություն,— ասաց Մինան բերկրանքի մեջ:

Այդ երեկո, ինչպես նաև հաջորդող մնացած օրերին խոստովանեցին, որ խելագարի պես սիրում են իրար, խոստանալով նաև միշտ խելամիտ մնալ:

Ալֆրեդը, լինելով խելացի, պատրանքներին ամենևին անձնատուր չէր լինում: Նա գիտեր, որ սիրահարվածները դարձանալի կատարելություններ են հայտնաբերում սիրած մարդու մոտ: Մտավոր կարողության և նրբազգացության առատությունը, որ հայտնաբերում էր Մինայի մոտ, համոզում էին նրան, որ իսկապես սիրահարված է: «Մի՞թե հնարավոր է, որ սովորական պատրանք լինի»,— ամեն անգամ մտածում էր նա և համեմատում Մինայի նախորդ օրվա ասածները պարահանդեսի կանանց արտահայտած մտքերի հետ: Մինան իր հերթին զգում էր, որ քիչ էր մնում կորցնել Ալֆրեդին: Ի՞նչ կլիներ, եթե նա ամեն երեկո շարունակեր պարասրահ հաճախել: Մոռանալով հասարակ աղջկա իր դերի մասին, Մինան, առավել քան երբևէ, ձգտում էր դուր գալ:

«Պե՞տք է խոստովանեմ Ալֆրեդին իմ ով լինելը,— մտածում էր Մինան,— նա իր անսահման խելքով, նույնիսկ իր

պատճառով գործած խենթությանս համար կարող է հանդիմանել: Եվ վերջապես այստեղ պետք է վճովի իմ ճակատագիրը: Եթե հայտնեմ, որ օրիորդ Վանգելն էմ, կալվածքս գտնվում է նրա հողերից միայն մի քանի վերստ հեռու, նա վստահ կլինի հաճախակի հանդիպել ինձ Փարիզում: Ընդհակառակը, ինձ այլևս շտեմնելու հեռանկարը որոշում կայացնել կտա այս արտաոտոց դեպքերի ընթացքի համար, որոնք, ավա՛ղ, խիստ անհրաժեշտ են մեր երջանկության համար: Ինչպե՞ս կարող է այդքան խելացի մի մարդ դավանանքը փոխելու որոշում կայացնել, ապահարզան տալ կնոջը և որպես ամուսին դալ ինձ հետ Արևելյան Պրուսիայի իմ գեղեցիկ կալվածքներում ապրելու: «Անօրեն» նշանակալից բառը որպես անանցանելի արդելք չէր կանգնում Մինայի նոր ծրարների առջև. նա համոզված էր, որ առաքինության դեմ չի մեղանշում, քանի որ երբեք չէր առատանվի թեկուղ հազար անգամ դո՛հաբերեր կյանքը հանուն Ալֆրեդի:

Կամաց-կամաց տիկինը դը Լարսեյը սկսեց բացարձակորեն խանդել Անիկենին: Աղջկա դեմքի տարօրինակ փոփոխությունը չէր խուսափել նրա հայացքից. այն վերագրեց լոկ պճնամոլության: Տիկինը դը Լարսեյը կարող էր պահանջել նրանից, որ հեռանա: Բայց ընկերուհիները խորհուրդ էին տալիս այդքան էլ անձնատուր չլինել երեսակայական մտքերի, միայն հարկավոր էր կանխել սլարոնը դը Լարսեյի Անիկենին Փարիզ տանելու մտադրությունը: «Եղեք խոհեմ, — ասում էին նրան, — և ձեր մտատանջությունը կանցնի սեղոնի փակման հետ»:

Տեղեկություններ քաղելով աիկին Քրամերից, տիկինը դը Լարսեյը փորձում էր հավատացնել ամուսնուն, որ Անիկենը բախտախնդիր աղջիկ է. իբր վիեննայում, թե Բեռլինում կառավարության կողմից ինչ-որ գործի համար հալածվելով՝ եկել թաքնվել է էքս կուրսրտային քաղաքում և հավանաբար սպասում է իր իսաբերա համադործակցին: Այդ դատողությունը, որ ներկայացվեց որպես խիստ հավանական վարկած, բայց պարզաբանելու համար անհրաժեշտություն չներկայացնող հանգամանք, կասկած առաջացրեց Ալֆրեդի աներեր հոգում: Անժխտելի փաստ էր, որ Անիկենը սպասուհի չէր, բայց այդ ի՞նչ լուրջ պատճառ ուներ նման դժվարին դեր

ստանձնելու համար: Ուրեմն՝ վախր: Մինան առանց դրժ-
վարության կռահեց Ալֆրեդի հայացքում երևացող հուզումը:
Մի երեկո անդգուշություն ունեցավ հարցնելու Ալֆրեդը սիր-
տը բացեց: Մինան քարացավ տեղում: Ալֆրեդի ասածն այն-
քան մոտ էր իրականությանը, որ դժվար էր պաշտպանվել:
Իր դերի մեջ անհավատարիմ այդ, այսպես կոչված, տիկին
Քրամերը, թույլ էր տվել գուշակել, որ Անիկենի համար նյու-
թականը ոչ մի արժեք չունի: Տեսնելով տիկին Քրամերի խոս-
քերի ազդեցությունը Ալֆրեդի հոգում, հուսահատության մեջ
քիչ մնաց խոստովաներ իր ով լինելը: Հավանաբար այն մար-
դը, որ խելագարի պես սիրում էր Անիկենին, կսիրեր նաև
օրիորդ Վանգելին: Բայց իմանալով ճշմարտությունը Ալֆրե-
դը վստահ կլիներ, որ կհանդիպի իրեն Փարիզում և հանուն
սիրտ անհրաժեշտ գոհողություններ չէր անի:

Այսպիսի տառապալից օր անցկացրեց Անիկենը: Ալֆրեդի
հետ մենակ մնալով քաջություն կունենա՞ր նրա աչքերում
երևացող տխրությունը հանդուրժել, տանջվել բնական թվա-
ցող կասկածը հեռացնելու համար կամ նույնիսկ կործաներ
իր սերը: Ալֆրեդը երեկոյան պարասրահ ուղեկցեց կնոջը և
չվերադարձավ: Այդ օրը դիմակահանդես էին կազմակերպել:
էքսի փողոցները խճողված էին հետաքրքրասերների կառքե-
րով. եկել էին Շամբերից և նույնիսկ Ժնևից: Ժողովրդի ուրա-
խության ալիքը կրկնապատկում էր Մինայի թախիժը: Այլևս
չէր կարող մնալ այն սրահում, որտեղ ժամեր շարունակ ան-
օգուտ սպասել էր շատ սիրելի մտրդուն, իսկ նա չէր գա-
լիս: Գնաց իրեն ուղեկցող կնոջ մոտ մի իթարություն դրտ-
նելու: Այստեղ նույնպես դժբախտություն էր սպասում իրեն.
այդ կինը սառնորեն թույլտվություն խնդրեց հեռանալու,
ավելացնելով, որ չնայած ինքը աղքատ էր, բայց այլևս չէր
կարող խաղալ իրեն հանձնարարված անպատվաբեր դերը:
Հեռու լինելով զգուշավոր որոշումներ կայացնելու սեփական
նախաձեռնությունից՝ Մինային միայն մի խոսք էր սլետք,
որ կյանքի ողջ իրավիճակը նոր տեսանկյունով ներկայացնի:
«Իրոք,— մտածեց նա այդ կնոջ դիտողությունից ցնցված,—
իմ կերպարանափոխությունը ոչ մեկի համար կարևորություն
չունի, կորցրի պատիվս: Անկասկած ինձ բախտախնդիր կնոջ
տեղ են գնում: Եթե Ալֆրեդի համար ամեն ինչ կօրցրի,—

ավելացրեց անմիջապես, — հիմար եմ, որ զրկում եմ ինձ նաև նրան տեսնելու երջանկությունից: Դիմակահանդեսում գոնե ուղածիս շափ կարող եմ նայել նրան և ուսումնասիրել նրա ներքին կյանքը»:

Դիմակ ու թիկնոց պահանջեց: Փարիզից բերած ասլամանդները շարեց, որսկեսդի Ալֆրեդի աչքին ավելի անճանաչելի դառնա ու տարրերվի ամբոխի դիմակավորներից, այսպիսով գուցե հասներ այն բանին, որ նա մոտենար իրեն և խոսեր հետը: Մինան ընկերակցուհուն թեանցուկ արած հայտնվեց պարասրահում՝ իր լուակյացությամբ գրավելով դիմակավորների ուշադրությունը: Վերջապես նկատեց Ալֆրեդին, որը շատ տխուր թվաց իրեն: Մինան հայացքով հետեւում էր նրան և երջանիկ էր դգում, երբ ականջին ինչ-որ մեկը ցածրաձայն շշնջաց. «Սերը ճանաչեց օրիորդ զբ Վանդելի կերպարանափոխությունը»: Յնցվեց: Շրջվեց, կոճա Ռուպերն էր: Ավելի շարադետ հանդիպում անհնար էր պատկերացնել:

— Բեռլինում պատրաստված ադամանյե զարդեղենից ճանաչեցի, — ասաց նրան, — Ռոփլիցից, Սպայից, Բադենից եմ գալիս: Ձեզ գտնելու հույսով եղել եմ Եվրոպայի բոլոր հանգստյան քաղաքներում:

— Եթե մի բառ էլ ավելացնեք, — ասաց Մինան, — այլևս ինձ չեք տեսնի: Վաղը, երեկոյան ժամը յոթին, եղեք Շամբելի փողոցի համար 14 տան դիմաց:

«Ինչպե՞ս խանդարեմ պարոն զբ Ռուպերին, որ իր մտերիմ կարսեյներին գաղտնիքս չբացի»: Գիշերը մինչև լույս այս կարևոր հարցը Մինային նետեց ամենատանջալից ալիկոծության դիրկը: Հուսահատության շեմին հասած՝ քանի անգամ փորձեց ձիեր պահանջել անմիջապես հեռանալու համար, «Բայց Ալֆրեդն ամբողջ կյանքում կմտածի, որ իր այլքան սիրած Անիկենը հարգանքի արժանի անձնավորություն չէ և ինչ-որ վատ արարքի պատճառով ծպտված փախուստի է դիմել: Առավել ևս, եթե առանց պարոն զբ Ռուպերին հայտնելու փախչեմ այստեղից, շնայած իմ հարստության հանդեպ տածած սիրուն, ընդունակ է բացել գաղտնիքըս: Իսկ եթե մնամ այստեղ, ինչպե՞ս ցրեմ պարոն զբ Ռուպերի կասկածները: Ի՞նչ հեքիաթ հորինեմ»:

Գիմակահանդեսում, որտեղ Մինան ահաճ հանդիպում ունեցավ պարոն դր Ռուպերի հետ, խորաթափանց մտքից զուրկ բարձր հասարակության ներկայացուցիչները, որոնք հանգստավայրերում անգամ չեն բաժանվում իրենց ձանձրույթից, սովորականի պես շրջապատեցին տիկին դը Լարսեյին: Այդ երեկո այլևս խոսակցության նյութ չունենալով, քանի որ հասարակական վայրերը, սալոնների նմանվելով, կորցնում են գիմակահանդեսի բնույթը, սկսեցին խոսել նրա պերմանացի սպասուհու գեղեցկության մասին: Նույնիսկ նրանց մեջ գտնվեց մի հանդուգն հիմար, որ թույլ տվեց իրեն աննորանկատ արտահայտություններ դուրս տալ տիկին դը Լարսեյին վերադրված խանդի վերաբերյալ: Անտաշ գիմակավորներից մեկ ուրիշը նրան խորհուրդ տվեց ամուսնուց վրեժ լուծելու համար սիրեկան ունենալ. այս խոսքերը ումբի պես պայթեցին խելամիտ, բայց շողոքորթության դափնեպսակ կրելու վարժված կնոջ ուղեղում, որի բարձրաշխարհիկ կյանքը պարփակվում էր իր պիրքի ու հարստության մեջ:

Գիմակահանդեսի հաջորդ օրը լճափին մեծ զրոսանք կար: Մինան ազատ էր, կարողացավ գնալ տիկին Քրամերի մոտ և բնորոնել պարոն դը Ռուպերին: Վերջինս դեռ զարմանքից ուշքի չէր գալիս:

— Մեծագույն դժբախտությունների պատճառով փոփոխության ենթարկված դիրքս,— ասաց Մինան,— ինձ մղեց խորհելու ձեր սիրտ մասին: Հարմար եք գտնում ամուսնանալ մի այրի կնոջ հետ:

— Ինչպե՞ս, դուք դադարի ամուսնությունն եք ունեցել,— ասաց կոմսը գունատվելով:

— Ինչպե՞ս չէիք կռահում, երբ մերժում էի ձեզ և Ֆրանսիացի ամենաշահավետ թեկնածուներին:

— Զարմանալի բնավորություն, բայց և այնպես հրաշալի,— բացականչեց կոմսը ցանկանալով մոռացության տալ զարմանքը:

— Ես կապված եմ մի անարժան մարդու հետ,— շարունակեց օրիորդ դը Վանդելը,— բայց ես բողոքական եմ, իսկ իմ դավանանքը, եթե ձեզ հետևելու երջանկությունն ունենամ, թույլ է տալիս ինձ ամուսնալուծվել: Համենայն դեպս, չկարծեք, որ այժմ ես կարող եմ որևէ մեկին սիրել, նույնիսկ

ինձ մեծ հարդանք ու վստահություն ներշնչող մարդուն, ևս միայն իմ բարեկամությունը կարող եմ առաջարկել ձեզ: Միրում եմ Ֆրանսիայում անցկացրած օրերս, ինչպե՞ս կարելի է մոռանալ այս երկիրը նրան ճանաչելուց հետո: Նեցուկի կարիք ունեմ: Գուք մեծ անուն ունեք, խելացի եք և ունեք բոլոր տվյալները հասարակության մեջ լավ դիրք գրավելու համար: Մեծ հարստության առկայությամբ կարող եք ձեր հյուրանոցը դարձնել Փարիզի ամենաառաջնակարգ աներից մեկը: Կցանկանայի՞ք երեխայի պես հնազանդվել ինձ: Այս գնով, և միմիայն այս գնով մեկ տարի հետո կստանաք իմ ձեռքը:

Այս երկար մենախոսության ժամանակ կոմս Ռուպերը ծանր ու թեթև էր անում տհաճ պատմության պատուղները, բայց և այնպես իր կողքին անընդհատ տեսնում էր անսահման հարստություն և, անկասկած, հրապուրիչ մի կին: Շնորհարար Մինային երզվեց հնազանդ լինել: Ամեն հնարքի դիմեց հնարավորին շափ խորը թափանցելու Մինայի գաղտնիքների մեջ:

— Զուր են ձեր ջանքերը,— ծիծաղելով պատասխանում էր Մինան,— առյուծի քաջություն և երեխայի հնազանդություն կունենա՞ք:

— Ձեր սարուկն եմ,— ասաց կոմսը:

— Կեղծ անունով եմ էքսի մոտակայքում ապրում, բայց բոլոր անցուդարձերին ծանոթ եմ: Ութ-ինը օր հետո, երբ կեսդիշերին եկեղեցու դռանը ներս արձագանքեն, կնայեք լճի կողմը, ջրերի վրա կրակի սափոր կտեսնեք: Հաջորդ օրը ժամը իննին այստեղ կգամ, թույլ եմ տալիս հանդիպել ինձ հետ: Եթե իմ անունը արտասանեք, կամ թեկուզ մեկն ու մեկին մի բառ անդամ ասեք իմ մասին, ամբողջ կյանքում այլևս ինձ չեք տեսնի:

Լճակի վրա զբոսնելուց հետո, որի ընթացքում բազմիցս խոսք էր բացվել Անիկենի գեղեցկության մասին, տիկինը դր Լարսելը վերադարձավ տուն, բավականին գրգռված՝ մի բան, որ հատուկ չէր նրա արժանապատվությամբ լի էությանը: Նա մի քանի շոր դիտողություններով դիմեց Մինային:

Վերջինս խիստ վիրավորվեց, քանի որ դա կատարվեց Ալֆրեդի ներկայությամբ, իսկ նա պաշտպանեց կնոջը: Առա-

ջին անգամ Մինան պատասխանեց սուր և ծաղրալից: Տիկին դը Լարսեյին թվաց, թե նրա խոսքերի մեջ կարողում է սիրուց շափր կորցրած աղջկա ինքնավստահություն, և նրա զայրույթը սահմանն անցավ: Մեղադրեց Մինային տիկին Քրամերի տանը ինչ-որ մարդկանց հետ հանդիպելու մեջ:

«Մի՞թե այդ հրեշ Ռուպերն արդեն հասցրել է մատնել» — մտածեց Մինան: Ալֆրեդն անթարթ նայում էր նրան, կարծես ուզում էր հայտնաբերել ճշմարտությունը: Հայացքի նման աննրբանկատությունը հանուզն արիությունն ներշնչեց Մինային, նա սառնորեն հերքեց իրեն հասցեագրված հերյուրանքն ու այլևս ոչ մի բառ չավելացրեց: Տիկին դը Լարսեյը վառնեց նրան: Գիշերվա ժամը երկուսին հավատարիմ Գյուբուան ուղեկցեց Մինային մինչև տիկին Քրամերի տուն: Մինան, իր սենյակում փակված, կատաղությունից լաց էր լինում և մտածում իր այժմյան վիճակի մեջ ամենափոքր հնարավորության դեպքում վրեժխնդիր լինելու մասին: «Է, ավելի լավ չէ՞ ամեն ինչ թողնել ու վերադառնալ Փարիզ: Այն, ինչ ձեռնարկեցի, իմ ուժերից վեր էր: Բայց Ալֆրեդը արհամարհանքից բացի որևէ հուշ չի պահի իմ մասին, ընդմիշտ երես կթևեթի,— և արցունքները հեղեղի պես թափվեցին, նա ղզաց, որ առհավետ հալածող դաժան մտքի հետ Փարիզում ավելի դժբախտ կզգա իրեն, քան էքսում,— տիկին դը Լարսեյը ամբաստանում է ինձ: Աստված գիտե, թե ինչեր են խոսում պարասրահում իմ մասին: Բոլոր ենթադրությունները կորստյան կմատնեն ինձ Ալֆրեդի հոգում: Ինչպե՞ս կարող է ֆրանսիացին շմտածել ամենհի նման: Իմ ներկայությունամբ նա շատ հանդիստ լսեց այս ամենը և շհակառակեց, ոչ մի մխիթարական խոսք չառաց: Ինչ է, զեռ սիրո՞ւմ եմ նրան: Ինձ տանջող այս սարսափելի տառապանքները արդյոք դժբախտ սիրո վերջին ջղաձգումները չե՞ն: Ստոր արարած կլինեմ, եթե վրեժ չլուծեմ»: Սա էր Մինայի վերջին եզրակացությունը:

Օրը բացվելուն պես կանչեց պարոն դը Ռուպերին: Սպասում էր նրան՝ հուզված զբոսնելով պարտեղում: Ամառային գեղեցիկ արևը կամաց-կամաց բարձրանալով եկավ լուսավորելու լճակը շրջապատող ծիծաղախիտ բարձունքները: Բնության խիղը կրկնապատկեց Մինայի կատաղությունը: Վերջապես հայտնվեց պարոն դը Ռուպերը. «Ստոր արա-

բած,— մտածեց Մինան տեսնելով նրան,— նախ մեկ ժամ կշատախոսի»:

Պարոն զը Ռոպերին ընդունեց հյուրասենյակում, մոռալ հայացքը ժամացույցին հառած վայրկյաններն էր հաշվում: Կոմսը ցնծում էր. այս օտարերկրացի կինը առաջին անգամն էր իր հաճոյախոսությունները ուշագիտ ունկնդրում:

— Գոնե հավատո՞ւմ եք իմ սիրուն,— ասում էր Մինային, երբ ժամացույցի սլաքը հասնում էր համբերանքի ժամն սպառող թվանշանին:

— Վրեժխնդիր՝ եղեք, կհավատամ,— ասաց Մինան:

— Ի՞նչ է հարկավոր անել:

— Դուր գալ տիկին զը Լարսեյին և այնպես անել, որ ամուսինն իմանա կնոջ դավաճանության մասին, կասկածներով տարվի: Այն ժամանակ կյանքս թունավորող բամբասանքները հանդես կգան այդ կնոջ դեմ:

— Ձեր փոքրիկ ծրագիրը խիստ դաժան է,— ասաց կոմսը:

— Ասացեք, որ դժվար է իրագործել,— պատասխանեց Մինան ծաղրական ժպտը շուրթերին:

— Դժվարը դժվար չէ,— վիրավորվեց կոմսը,— բայց կկործանվի նրա բարի անունը, այնուհետև քմծիծաղով ավելացրեց,— ափսո՜ս, նա արժանավոր կին է:

— Նկատի ունեցեք, պարոն, ևս ձեզ ամենեին չեմ պարտադրում իսկականից դուր գալ տիկին զը Լարսեյին,— ասաց Մինան,— միայն ցանկանում եմ ամուսինը կասկածի, որ դուր եք գալիս նրան:

Կոմսը գնաց: Մինան մի փոքր հանդարտվեց. վրեժխնդիր լինել, նշանակում է դորժի անցնել, նշանակում է հույսեր փայփայել: «Նթե Ալֆրեդը մահանա,— մտածում էր նա,— ևս էլ չեմ ապրի»: Եվ ժպտաց: Երջանկությունը, որով համակվեց, մեկրնդմիշտ նրան հանեց առաքինության սահմաններից: Գիշերվա փորձությունը շատ ուժեղ էր ներգործել նրա հոգու վրա: Մտքով երբեք չէր անցել, որ Ալֆրեդի ներկայությամբ անպատվություն կկրի, կամ կտեսնի, թե ինչպես է նա հավատում բամբասանքներին: Այսուհետև առաքինություն քառը նա կարտասանի որպես դատարկ հնչյուն. վրեժխնդրությունն ու սերը համակեցին ամբողջ սիրտը:

Մինան մտքում կշռադատում էր վրեժխնդրության ծրագիրը: Արդյո՞ք հնարավոր է իրականացնել: Կասկածելի էր: Գործելու համար միայն մի ապուշի անձնվիրությունն ուներ և շատ դրամ:

Հայտնվեց պարոն դը Լարսեյը:

— Ինչո՞ւ եք եկել այստեղ, — հպարտությամբ հարցրեց Մինան:

— Ես շատ դժբախտ եմ, եկել եմ վիշտս կիսելու աշխարհի միակ և լավագույն բարեկամուհուս հետ:

— Ինչպես, գուցե նախ ասեք, որ չե՞ք հավատում իմ դեմ ուղղված պարսավանքներին: Հեռացե՛ք:

— Եթե ես ասում եմ, որ ձեզնից հեռու ոչ մի երջանկություն չկա ինձ համար, մի՞թե դա պատասխան չէ ձեզ հասցեագրած հերյուրանքներին, մի՞ բարկացեք, Անիկեն, — հպարտ շեշտով պատասխանեց Ալֆրեդը և ավելացրեց թաց աչքերով, — խելացի ելք գտեք, միանանք, ես պատրաստ եմ ամեն ինչի: Տնօրինեք իմ անձը, հանեք ինձ անդունդից, ուր նետել է ինձ ճակատագիրը. ես ոչ մի միջոց չգիտեմ:

— Ձեր ներկայությունն այստեղ արդարացնում է տիկին դը Լարսեյի բոլոր շարախոսությունները, հանգիստ թողեք ինձ, այլևս չեմ ուզում ձեզ տեսնել:

Ալֆրեդը նրա մոտից հեռացավ ավելի շուտ զայրացած, քան ցավով: «Ոչինչ չգտավ ասելու», մտածեց Մինան: Նա հուսահատվել էր այն մտքից, որ ստիպված էր արհամարհել մի մարդու, որին պաշտում էր:

Ինչպե՞ս ոչ մի հնար չի գտնում իրեն մոտենալու: Եվ սատղամարդ է, զինվորական: Ինքը, երիտասարդ աղջիկ, հենց որ սիրեց, ելք գտավ, ինչ սարսափելի կլք՝ կերպարանափոխություն, որ բացահայտվելու դեպքում մեկընդմիջտ անպատվություն էր բերելու իրեն... բայց Ալֆրեդն ասել էր. «Տնօրինեք իմ անձը, խելացի ելք գտեք...»: Մինայի հոգում բոտ երևույթին դեռևս քնքշանքի մնացորդներ կային, քանի որ այդ բաները մխիթարեցին իրեն. ուրեմն դեռ կարող է գործել: «Մինչդեռ, — շարունակում էր դժբախտ կացությունների փաստաբանը, — Ալֆրեդն այդպես էլ շասաց, որ չի հավատում բամբասանքներին: Փաստորեն, — մտածում էր նա, — իմ խենթությունն իզուր է շափաղանցնում գաղափարների

տարբերությունը գերմանացիներին և ֆրանսիացիներին միջև, ևս ամենևին էլ սպասուհու նման չեմ: Այդ դեպքում իմ տարիքի ազգիկը ինչո՞ւ պիտի ծայտված գար բուժիչ ջրերի քաղար: Ինչպիսին էլ նա լինի... միայն նրա հետ երջանիկ կզգամ ինձ: «Մի ելք դուրս միանանք,— ասաց նա,— պատրաստ եմ ամեն ինչի»: Ինքը թույլ է, ինձ է պարտավորեցնում անօրինելու մեր երջանկությունը: Ստանձնում եմ այդ պարտականությունը,— շարունակեց նա վեր կենալով և սենյակում հուզված քաչկելով,— նախ տեսնենք, նրա սերը կդիմանա՞ մեր բաժանմանը, թե՞ ամեն տեսանկյունից պարտավելի անձնավորություն է, իսկական ծաղր ու ծանակի արժանի մարդ: Այս դեպքում Մինա զը Վանդելը կկարողանա նրան մոռանալ»:

Մեկ ժամ շանցած մեկնեց Շամբերի, էքսից մի քանի վերստ հեռու: Ալֆրեդը մոլի հավատացյալ շլինելով, այնուամենայնիվ գտնում էր, որ մարդ պետք է զավանի որևէ կրոնի: Շամբերի հասնելուն պես տիկին Քրամերը մի երիտասարդ ծնեցու, որն ուսումնասիրում էր բողոքականութուն՝ քահանա կարգվելու նպատակով, խնդրեց ամեն երեկո գալ Աստվածաշունչը մեկնաբանելու իր և Անիկենի համար: Տիկին Քրամերը իր և Մինայի միջև տեղի ունեցած գժտությունը մեղմելու համար ներկայացնում էր նրան իբրև քեռորդի: Տիկին Քրամերը իջևանել էր ամենալավ հյուրանոցում և շատ հեշտ էր հետեկ նրա վարքին: Իրեն համարելով հիվանդ՝ հրավիրում էր Շամբերի ամենահայտնի բժիշկներին ու լավ էլ վարձատրում նրանց: Օգտվելով առիթից, Մինան երբեմն խորհուրդ էր հարցնում նրանից մաշկի հիվանդության վերաբերյալ, որը ժամանակ առ ժամանակ փշաջնում էր նրա գեղեցիկ դույնը, նմանեցնելով խառնածինի մաշկի գույնի:

Ուղեկցորդուհին այժմ ավելի քիչ էր անհանգստանում Քրամեր անունից, որ սախպել էին իրեն կրել, ինչպես նաև օրիսրդ զը Վանդելի ընդհանուր վարքագծից. նրան պարզապես խենթի տեղ էր դնում: Մինան վարձել էր Շարմետ* հովտի մեջ առանձնացած գյուղական մի տնակ, Շամբերիից քառորդ ժամ հեռավորության վրա, ուր ժան ժակ Ռուսսոն, իր իսկ պատմելով, անցկացրել է կյանքի ամենաերջանիկ պահերը: Այդ գրվածքները այժմ Մինայի միակ մխիթարությունն էին:

Մի օր Մինսն էլ չափազանց ևրջանիկ պահ ապրեց այնտեղ-
արահետի շրջապատւոյտի վրա, շաղանակենիների պուրակում,
Շարմետ համետ տնակի դիմաց հանդիպեց Ալֆրեդին: Տաս-
ներհինգ օր կլինէր, որ շէր տեսել նրան: Ալֆրեդը ևրկչոտ
ձայնով առաջարկեց, մի բան, որ հիացմունք պատճառեց
Մինային, հետանալ տիկին Քրամերի մտտ ստանձնած ծառա-
յությունից և իրենից եկամտոտի մի համետ գումար բնդու-
նել:

— Դուք սպասուհի կունենաք, փոխանակ ծառայելու,
երզվում եմ, որ կտեսակցեմ ձեզ հետ միայն նրա ներկա-
յությամբ:

Բարեպաշտությունից ելնելով Անիկենը մերժեց: Ասաց,
որ հիմա տիկին Քրամերը շատ լավ է վարվում իր հետ և
կարծես դղջում է, որ էքստում իրեն սկզբի օրերին վատ էր
գրսևորել:

— Ես շատ լավ եմ հիշում,— ավելացրեց Մինան,— իմ
հասցեին ուղղված տիկին դը Լարսեյի պարսավանքները,
ուստի պարտավորված խնդրում եմ, որ դուք այլևս Շարմետ
չգաք:

Մի քանի օր հետո գնաց էրս. շատ գոհ էր պարոն դը
Ռուպերից: Տիկին դը Լարսեյը և իր նոր ընկերուհիները օպ-
տրվում էին լավ եղանակից շրջակայքում դրոսանքների կազ-
մակերպելու համար: Օթ-Կոմբում (էրսի դիմաց՝ Բուրժեի
հակառակ ափին կառուցված արքայության շէնքը, որ Սա-
վուայի դուրսերի եկեղեցին է՝ Սեն-Գընի անունով) կատարած
հրաշալի դրոսանքի ժամանակ պարոն դը Ռուպերը, որն
ըստ Մինայի ցուցումների երբեք չէր թափանցել տիկին դը
Լարսեյի շրջանակը, եկեղեցին երիզող անտառներում թափա-
ռելով՝ նկատել տվեց իրեն: Տիկին դը Լարսեյի ընկերուհի-
ներին սկսեց զբաղեցնել հանդիմությամբ հռչակված մարդու
ևրկչոտ վերարեմունքը: Նրանք պարզորոշ նկատեցին, որ կոմ-
սը անտարբեր չէ տիկին դը Լարսեյի նկատմամբ: Դյուբուան
հայտնեց Մինային, որ իր տերը չափազանց ախուր է: «Ափ-
սոսում է, որ զրկվել է հաճելի ընկերակցությունից, և հե-
տո,— ավելացրեց Դյուբուան,— վշտանալու այլ սոխի էլ կա.
ո՞վ կմտածեր, որ պարոն կոմս դը Ռուպերը այդքան խելացի
մարդու մտտ իանդի զգացում կարթնացներ»:

Այդ խանդը խիստ զվարճացնում էր պարոն զը Ռուպերին — թույլ կտա՞ք,— ասաց նա օրիորդ զը Վանգելին,— այնպես կազմակերպեմ, որ կնոջն ուղղված սիրային մի նամակ անցնի այդ խեղճ կարսեյի ձեռքը: Շատ զվարճալի կլինի, երբ ամուսնու պահանջած բացատրությունից հետո կինն սկսի ժխտել:

— Հաջողութ՞յուն,— ասաց Մինան և խիստ տոնով ավելացրեց,— բայց հատկապես մտածեք պարոն զը կարսեյի հետ ոչ մի գործ չունենալ, եթե նա սպանվի, ես երբեք չեմ ամուսնանա ձեզ հետ:

Սակայն իսկույն զզջաց խստութ՞յամբ արտասանած բաների համար, հնարքներ փնտրեց ներողություն խնդրելու: Միաժամանակ նկատեց, որ պարոն զը Ռուպերը չէր զգացել ակամայից ստացված կոպիտ տոներ, և զրանից ավելի մեծացավ նրանց միջև գոյութ՞յուն ունեցող անջրպետը: Պարոն զը Ռուպերը կասկած հայտնեց, որ տիկին զը կարսեյն այնքան էլ անտարբեր չէ իր նկատմամբ, և որպեսզի ինքն էլ մի քիչ հաճույք վայելի այդ պարտադիր սիրահետումից, ամեն անգամ մեծ զգուշավորութ՞յամբ առիթ էր գտնում առանձին խոսելու նրա հետ, սակայն խոսում էր խիստ անտարբեր տոնով, ամենադատարկ բաների մասին:

Մինան գոհ էր: Պարոն զը Ռուպերն այնպիսի բնավորութ՞յուն ուներ, որ բանականութ՞յան մի քանի գրսևորումների դեպքում էլ հակառակում էր զրանց և համարյա արհամարհում: Մինան համարձակորեն խորհրդակցեց նրա հետ մի պատկառելի, շահավետ դամարի շուրջը, որն ուզում էր փոխանցել Ֆրանսիա, և տվեց կարգալու Քյոնիգզբերգի գործերի կառավարչի և Փարիզի բանկիրի նամակները: Նա նկատեց, որ այդ նամակները Ռուպերին զսպեցին իրեն տալու մի հարց, որը երբեք չէր ցանկանա բարձրաձայն լսել. իր հետաքրքրությունը պարոն զը կարսեյի հանդեպ:

«Ինչպիսի տարբերություն,— մտածում էր Մինան, երբ պարոն զը Ռուպերը երկար-բարակ կարծիք էր հայտնում զրամի փոխանցման մասին,— և կան մարդիկ, որ կոմսին ավելի խելացի ու սիրալիր են համարում, քան Ալֆրեդին: Անտաշ մարդկանցից կազմված ազգ, վողեվիլիստների ազգ էմ բարի գերմանացիների լուրջ պարզամտությունն ինձ ավել-

լի է դուր գալիս, եթե պալատում երևալու տխուր անհրաժեշտությունն ու թագավորի սիրելի համհարզի հետ ամուսնանալու հանգամանքը չլիներ»:

Գյուբուան եկավ հայտնելու, որ Ալֆրեդը տիկինը զրասելին ուղղված պարոնը դր Ռուպերի տարօրինակ նամակն էր հայտնաբերել: Ալֆրեդը տարեւ էր կնոջ մոտ, վերջինս ենթադրել էր, որ այդ նամակը շար կատակ է: Լսելով այս պատմութիւնը, Մինան այլևս չկարողացավ թաքցնել անհանգստութիւնը: Պարոնը դր Ռուպերը կարող էր ամեն դերում հանդես գալ, բացի խիստ համբերասուտ մարդու դերից: Նրան առաջարկեց ութ օրով Շամբերի գալ: Պարոնը դր Ռուպերն այնքան էլ շտապողականութիւն չցուցաբերեց:

— Բավական ծիծաղելի քայլեր եմ կատարում, նամակ եմ գրում, որ կարող է ինձ անվանարկելու առիթ տալ, գոնե ցույց շտամ, որ փախչում եմ:

— Եվ ճիշտ ժամանակն է, պետք է թարնվեր,— հրամայաբար ասաց Մինան,— ուղտ՞ւմ եք վրեժ լուծել, այո՞, թե ոչ: Բայց չեմ ուզում, որ տիկինը զրասելը այրի մնալու երջանկութիւնը պարգևի ինձ:

— Գրագ կգամ, որ կնախընտրելիք նրա ամուսինն առանց կնոջ մնար:

— Իսկ դա ձեզ վերաբերո՞ւմ է,— ասաց Մինան:

Անախորժ տեսարան բորբոքվեց Մինայի և Պարոնը դր Ռուպերի միջև: Վերջինս նրան կատաղած վիճակում թողեց ու հեռացավ, բայց հարևանցիորեն սկսեց մտորել թեկուզ այն ամենափոքր կասկածելի հավանականութեան շուրջը, թե բամբասանքներ կարող էին ծայր տոնել: Մյուս կողմից՝ փառասիրութիւնը հիշեցրեց նրան, որ ինքը քաջ մարդու համբավ ունի: Մեկ քայլով կարող էր վերականգնել երիտասարդական տարիների բոլոր խենթութիւնները, բայց մեկ րոպեում էլ կարող էր Փարիզի հասարակութեան մեջ հրաշալի դիրք ապահովել. դա առավել շահավետ էր, քան մենամարտը:

Հաջորդ օրը էքսից վերադառնալուց հետո առաջին մարդը, որին հանդիպեց Մինան, պարոնը դր Ռուպերն էր: Ուրախացավ նրան այստեղ տեսնելով, բայց նույն երեկոյան իսկ խոր հուզումների ենթարկվեց. պարոնը դր զրասելը եկել էր իրեն տեսութեան:

— Ո՛չ արդարացում կփնտրեմ, ո՛չ պատճառաբանություն,— պարզորեն ասաց նա,— եթե տասնհինգ օր անցնի ու շտենենմ ձեզ, շեմ դիմանա, Էրեկ լրացալ տասնհինգերորդ օրը:

Մինան նույնպես հաշվել էր օրերը: Երբեք այդքան մեծ հրապուրանք չէր գղացել Ալֆրեդի հանդեպ ու չէր ձգտել նրան, բայց դողում էր, մտածելով, որ կարող էր պարոն գր Ռուպերի հետ հաշիվներ ունենալ: Ամեն ջանք թափեց հայտնաբերված նամակի շուրջը նրանից որևէ խոսք կորզելու համար: Ալֆրեդը մտազբաղ էր, բայց ոչինչ չասաց. միայն այսքանը հայտնեց.

— Խոր վիշտ եմ ապրում, ոչ փառասիրությանն է վերաբերում, ոչ նյութականին, իմ տխուր վիճակի ամենավառ դրսևորումը ձեր հանդեպ տածած անդուսպ բարեկամական կապի ամբողջումն է: Ամենից շատ հուսահատեցնում է ինձ այն, որ պարտքի գագացումը ոչ մի իշխանություն չունի իմ սրտում: Պարզապես առանց ձեզ ապրել չեմ կարող:

— Ես առավել ես, առանց ձեզ չեմ կարող ապրել,— ասաց Մինան նրա ձեռքը համբույրներով ծածկելով և թույլ շտալով, որ գրկի իրեն,— մտածեք միայն ձեր կյանքը պահպանելու մասին, որովհետև ձեզնից հետո մեկ վայրկյան իսկ չեմ ապրի:

— Ահ, ամեն ինչ գիտեք,— ասաց Ալֆրեդը և տիրապետեց իրեն այլևս չշարունակելու համար:

Էքս վերադառնալու հաջորդ օրը Էրկրորդ անստորագիր նամակը տեղեկացնում էր պարոն գր Լարսեյին, որ լեռներում կատարած իր վերջին գրոսանքի ժամանակ, իսկ դա համապատասխանում էր այն ժամանակին, որ գնացել էր Շամբերի, կինն ընդունել էր պարոն գր Ռուպերին: Անստորագիր նամակն ավարտվում էր հետևյալ տողերով. «Լյսօր, կեսգիշերվան մոտ, սպասում ենք պարոն գր Ռ...ին: Համոզված եմ, որ ոչ մի վստահություն չեմ կարող ներշնչել ձեզ, Ռեթևորեն մի ընկալեք ամեն ինչ: Եթե գայրահալու եք, թող լինի միայն տեսնելուց, համոզվելուց հետո: Եթե սխալվում եմ կամ ձեզ սխալ ուղու վրա եմ կանգնեցնում, ինքներդ համոզվեք տիկին գր Լարսեյի սենյակի մոտ թաքստոցում մի գիշեր անցկացնելուց հետո:

Ալֆրեդի հոգին ալեկոծվեց այս նամակից, Քիչ ժամանակ անց Անիկենից դրություն ստացավ. «Գալիս ենք էքս, տիկին Քրամերը իր սենյակումն է: Ազատ եմ: Եկեք»:

Պարոն դը Լարսելը մտածեց, որ նախքան իրենց պարտեզում թաքնվելը տասը բույս կարող էր մնալ Անիկենի մոտ: Չափազանց հուզված հասավ նրա մոտ: Այդ գիշերը վճռական էր լինելու և Մինայի և Ալֆրեդի համար: Բայց Մինան հանգիստ էր: Իր բանականության առաջ քաշած բոլոր առարկությունների դեմ նա միայն մի պատասխան ուներ. մահ:

— Լուսմ եք,— ասաց Մինան,— բայց պարզորոշ երևում է, որ ձեզ հետ արտառոց բան է կատարվում: Չպետք է ինձ վշտացնեիք այդպես ներկայանալով, բայց քանի որ եկել եք, ուզում եմ ամբողջ գիշերը ձեզ հետ անցկացնել:

Հակառակ Մինայի սպասումներին, Ալֆրեդը համաձայնեց: Վճռական պարագաներում ուժեղ հոգին իր շուրջը մի տեսակ վեհանձնություն է սփռում, որն ինքը՝ երջանկությունն է:

— Ամուսնու հիմար պարտականությունն եմ կատարելու,— վերջապես ասաց Ալֆրեդը,— թաքնվելու եմ պարտեզում, կարծում եմ այս հնարավորությունը՝ տանջանքների փոքրագույնը, ինձ դուրս կբերի դժվար կացությունից, որ մխրձվել եմ անստորադիր նամակի պատճառով:

Ցույց տվեց նամակը:

— Ինչ իրավունքով եք տիկին դը Լարսելի անվան հետ խաղում: Մի՞թե ամուսնավորության շեմին չեք կանգնած: Դուք լքել եք նրան և հրաժարվել նրա սրտին տիրելու իրավունքից, բարբարոսաբար այդ հոգին մասնակ էք բնական ձանձրույթի և պահանջում եք, որ երեսնամյա հարուստ հուգու տեր կինը ամենափոքր դժբախտությունն իսկ շղզա՞, նա իրավունք չունի՞ ընտրելու մեկին, որ դուրս բերի իրեն այդ ձանձրույթից: Դուք եք ասում, թե սիրում եք ինձ, ավելի մեծ հանցագործ եք, քանի որ նրանից առաջ եք սրբապղծել ձեր միությունը և խենթ եք, որովհետև ուզում եք նրան հավիտենական ձանձրույթի պատապարտել:

Նման դատողությունը վեր էր Ալֆրեդի հոգեբանությունից, բայց Մինայի ձայնի վստահ տոնը ուժ էր տալիս նրան:

Հիանում էր իր վրա բանեցրած նրա իշխանությունից, հրապուրված էր:

— Այնքան ժամանակ, որ կցանկանաք պահել ինձ ձեզ մոտ,— ի վերջո ասաց նա,— ինձ համար օտար կլինի ձանձրույթը, որի մասին խոսում եք:

Խոր գիշերվա մեջ խաղաղ էր լճափը, կատվի քայլերի ձայնն անգամ հնարավոր էր որսալ: Մինան գաղտնի զնում էր Ալֆրեդի հետքերով, ծառագարգ պատնեշի ետևից, որ մինչև այժմ եղերում են Սալուայի պարտեզները: Հանկարծ պարտեզի մեջ մի տղամարդ ցատկեց, Ալֆրեդն ուզեց վազել նրա ետևից, Մինան ամուր պահեց նրան:

— Ի՞նչ կարող եք իմանալ, եթե սպաներ նրան,— շշուշաց ալանջին,— իսկ եթե այդ մարդը զոդ է, կամ ուրիշ կնոջ սիրեկան, որքան պիտի տանջեր ձեր հոգին, սպանելով նրան:

Ալֆրեդը ճանաչել էր կոմսին, այրվում էր պայրույթից: Մինան դժվարությամբ կարողացավ հտ պահել նրան: Կոմսը պատի ծայրին դրված աստիճանը վերցրեց, արագ շարժումով հենեց ութ-տասր ոտնաշափ բարձրությամբ փայտապատ միջանցքի պատին, որ դրավում էր տան ամբողջ առաջին հարկը: Տիկինն զր լարսեյի սենյակի պատուհաններից մեկը բացվում էր այդ միջանցքի վրա: Պարոն զր Ռուպերը դահլիճի պատուհանից ներս մտավ, Ալֆրեդը վազեց պարտեզի վրա բացվող գետնահարկի փոքրիկ դռան մոտ, Մինան հետևեց նրան: Նա մի քանի բույսեր շահեց, մինչև որ Ալֆրեդին հաջողվեց հանել հրահանը և վառել մոմը: Այդ ժամանակ Մինան ճարպկությամբ խլեց նրա ատրճանակները:

— Ուզում եք կրակոցով մյուս հարկերը զբաղեցնող հանգրստացողներին արթնացնել,— առաց նրան,— վաղը առավոտյան ծիծաղելու լավ առիթ կունենան: Եթե մտածենք վրեժխնդրության մասին, որը իմ կարծիքով ծիծաղելի է, ավելի լավ չէ՞, որ շարասիրտ ու դատարկապորտ հասարակությունը միաժամանակ իմանա և վիրավորանքի, և վրեժխնդրության մասին:

Ալֆրեդը մոտեցավ կնոջ սենյակի դռանը: Մինան անընդհատ հետևում էր նրա ամեն մի քայլին:

— Շատ հետաքրքիր կլինի,— ասաց Ալֆրեդին,— եթե իմ ներկայութեամբ քաջութիւնն ունենաք անպատվել ձեր կնոջը:

Դուան մոտ հասնելուն պես Ալֆրեդը միանգամից բացեց այն: Սենյակի խորքում տեսավ պարոն դը Ռուպերին տիկին դը Լարսեյի մահճակալի ետեից փախչելիս: Պարոն դը Ռուպերը վեց քայլ հեռավորութեան վրա էր կանգնած Ալֆրեդից, նա ժամանակ ունեցավ բացելու լուսամուտը և նետվեց փայտապատ սրահը, իսկ այդտեղից՝ պարտեզ: Առանց հապաղելու պարոն դը Լարսեյը հետևեց նրան, բայց երբ հասավ ցածրիկ պատի մոտ, որ պարտեզը բաժանում էր լճակից, պարոն դը Ռուպերը, նավակի մեջ նստած, արդեն հինգ-վեց մղոն հեռացել էր փից:

— Տոնսութիւնն մինչև վաղը, պարոն դը Ռուպեր,— նրա ետեից ձայն տվեց պարոն դը Լարսեյը:

Պատասխան չսովեց: Պարոն դը Լարսեյը արագ վերադարձավ կնոջ մոտ: Ննջասենյակին նախորդող դահլիճում տեսավ ևտ ու առաջ քայլող հուզախոով Մինային: Մինան կանգնեցրեց նրան:

— Ի՞նչ եք մտադիր անել,— ասաց նա,— սպանել տիկին դը Լարսեյի՞ն: Ի՞նչ իրավունքով: Չեմ կարող հանդուրժել նման երևույթ: Եթե դաշույնը չտաք, ձայնս կբարձրացնեմ, որպեսզի զգուշանա ու փախչի: Չնայած իմ ներկայութիւնն այստեղ՝ ձեր մարդկանց աչքին, խիստ անվանարկելու է ինձ:

Մինան նկատեց, որ խոսքերն ազդեցութիւնն էին գործում:

— Ինչ, սիրում եք ինձ և ուզում եք անպատվութիւնն կրեմ,— ավելացրեց աշխուժորեն:

— Պարոն դը Լարսեյը նրա ոտքերի տակ շարտեց դաշույնը և կատաղած մտավ կնոջ սենյակը: Խե՛ծ մթնոլորտ էր: Կատարյալ անտեղյակ տիկին դը Լարսեյը կարծել էր գող է մտել սենյակը, ոչ տեսել էր նրան, ոչ լսել:

— Դուք խելագարվել եք,— ի վերջո եզրակացրեց տիկին դը Լարսեյը դիմելով ամուսնուն,— երանի թե միայն խելագար լինեիք: Դուք ակնհայտորեն ամուսնալուծութիւնն եք պահանջում, այդպես էլ կլինի: Գոնե խելացի վարվեք, ոչ մե-

կին ոչինչ մի ասեր: Վաղն եեթ ևս վերադառնում եմ Փարիզ: Կասեմ, որ ճամփորդում եք Իտալիայում, իսկ ևս շուգեցի ձեզ հետևել:

— Առավոտյան ժամը քանիսի՞ն եք մենամարտելու, — հարցրեց օրիորդ զը Վանդելը, Լըբ կրկին հանդիպեց Ալֆրեդին:

— Ի՞նչ եք ասում:

— Անօգուտ է ձեացնելը: Նախքան Ռուպերի մոտ գնալը ցանկանում եմ ձեռքս բռնեք և օգնեք ինձ նավակ բարձրանալ: Ուզում եմ լճակի վրա դբոսնել: Եթե այնքան հիմար եք, որ թույլ կտաք ձեզ սպանեն, լճակը վերջ կտա նաև իմ տառապանքներին:

— Դե լավ, սիրելի Անիկեն, Երջանկացրեք ինձ այս գիշեր: Վաղը գուցե այս սիրտը, որ ձեզ ճանաչելու պահից միայն ձեզ համար է բարախել, և այս կուրծքը, որին սեղմում եմ այս հրաշալի ձեռքը, կպատկանեն սավուացի երկու բահանաների հսկողության տակ պանվոզ եկեղեցու անկյունում կերոններով լուսավորված դիակին: Այս դեղեցիկ օրը մեր կյանքի գերագույն պահն է, թող այն ամենաերջանիկը լինի:

Մինան շատ տանջվեց դիմադրելով Ալֆրեդի ցանկասիրությանը:

— Ես ձերը կլինեմ, — ի վերջո ասաց նրան, — եթե ապրեք: Այս պահի գոհողությունը շատ մեծ է լինելու, կուզեի ձեզ տեսնել այնպիսին, ինչպիսին կաք:

Մինայի կյանքում այդ օրը համարվեց ամենագեղեցիկը: Հավանաբար մահվան տեսիլը և գոհողության մեծությունը անհետացնում էին խղճի խայթի վերջին մնացուկները:

Հաջորդ օրը, արևածագից շատ առաջ, Ալֆրեդը ձեռքը մեկնեց նրան և բարձրացրեց դեղեցիկ զբոսանավի մեջ:

— Կարելի՞ է ավելի մեծ երջանկության մասին, երազել, քան այն, որ ըմբռնվում ենք այժմ, — լճի ուղղությամբ իջնելիս ասում էր Ալֆրեդին:

— Այս պահից իսկ ինձ եք պատկանում, դուր իմ կինն եք, — ասաց Ալֆրեդը, — խոստանում եմ ապրել և վերադառնալ ափ, կկանչեմ նավը այս խաչի մոտ:

Այն պահին, որ Մինան ուզում էր հայտնել իր անունը, հնչեց ժամը վեցը: Զուգեց ափից շատ հեռանալ, և նավա-

վարներն սկսեցին ձուկ որսալ, լալ էր, այսպիսով ազատվեց նրանց հայացքներից և գոհ էր դրա համար: Հենց որ ժամը ութը հնչեց, տեսավ Ալֆրեդին, որ վազում էր ափի կողմը: Չափազանց գունատ էր: Մինան իջավ նավից:

— Վիրավոր է, երևի ծանր,— ասաց Ալֆրեդը:

— Նավ բարձրացեք, բարեկամս,— ասաց Մինան,— այս դիպվածի պատճառով կարող եք տեղական իշխանության ձեռքն ընկնել, հեռացեք այստեղից երկու օրով: Գնացեք Լիոն, ինչ էլ պատահի, տեղյակ կպահանամ:

Ալֆրեդը երկմտում էր:

— Մտածեք հանգստացողների շարահստությունների մասին:

Այս նախադասությունը կողմնորոշեց պարոն դը Լարսեյին: Նավ բարձրացավ:

Հաջորդ օրը պարոն դը Ռուպերի կյանքին այլևս վտանգ չէր սպառնում, բայց մեկ-երկու ամիս պետք է պառկեր: Ուշ գիշերին Մինան այցելեց նրան, կատարյալ բարեկամական վերաբերմունք ու շնորհագեղություն հանդես բերեց նրա հանդեպ:

— Դուք իմ ընտրյալը չե՞ք,— ասում էր շինծու անկեղծությամբ:

Նա կարողացավ համոզել պարոն դը Ռուպերին, որ իրենից ընդունի Ֆրանկֆուրտի բանկի վրա փոխանցված պատկառելի մի գումար:

— Մեր հարսանիքից առաջ պետք է Լոզան գնամ,— ասաց Մինան,— ես ուզում եմ ետ գնեք ձեր ընտանիքին պատկանող հույակապ հյուրանոցը, որ ձեր թեթևամտության հետևանքով վաճառել եք: Դրա համար անհրաժեշտ է ազատվել Քուստրենում ունեցածս հողակտորից: Հենց որ կարողանաք ոտքի կանգնել, գնացեք այդ հողակտորը վաճառելու, Լոզանից կուղարկեմ անհրաժեշտ ձևակերպումները, եթե անհրաժեշտ է գինը իջեցնել, համաձայնեք, կամ ստացած նամակների հիման վրա օգտագործեք դրամը: Մի խոսքով, ամեն դեպքում առձեռն փող ունեցեք: Եթե ձեզ հետ ամուսնանամ, լավ կլինի, որ ամուսնական պայմանագիր կնքելու ժամանակ դուք էլ ինձ նման հարուստ լինեք:

Կոմսը դույզն ինչ կասկած չունեցավ, որ Մինան իր հետ վերաբերվում էր որպես ստորին գործակալի, որին վարձահատույց են լինում գրամով:

Մինան Լուզանում շատ երջանիկ էր զգում իրեն, ևրբ բուլոր նամակատարներից լուրեր էր ստանում Ալֆրեդի մասին: Պարոն զր Լարսեյը սկսում էր հասկանալ, թե այս մենամարտը որքան էր նսեմացնում իր դիրքը Մինայի և իր կնոջ աչքին:

«Նա մեղավոր չէ,— գրում էր Մինան Ալֆրեդին,— դուք առաջինը լքեցիք նրան. գուցե նա սխալվել է երկրպագունների բազմությունից ընարելով պարոն զր Ռուպերին, բայց տիկին զր Լարսեյի բարեկեցիկությունը չպետք է ի հաշիվ դրամի տուժի»:

Ալֆրեդը ամսական հիսուն հազար ֆրանկի գումար թողեց կնոջը, որ նրա ևկամուտի կեսից ավելին էր:

«Ինչիս է պետք,— գրում էր Մինային,— Փարիզ կարող եմ վերադառնալ մի քանի տարի հետո միայն, ևրբ այս զավեշտական միջադեպը մոռացվի»:

«Ես էլ հենց այդ չեմ ուզում,— պատասխանեց Մինան,— ձեր վերադարձը որպես իրադարձություն է նշվելու: Դուր պետք է մի տասնհինգ օրից երևար հասարակության մեջ, քանի դեռ նա ձեզնով է զբաղված: Հիշեք, որ ձեր կինը ոչ մի մեղք չունի»:

Մեկ ամիս անց պարոն զր Լարսեյը Բելժիրատ հրաշալի պուզում, Մաժոր լճի մոտ, Բորմենս կղզիներից մի քանի մղոն հեռավորության վրա, միացավ Մինային: Վերջինս ճամփորդում էր կեղծ անվան տակ, Բուռն սիրո պահին նա Ալֆրեդին այսպիսի առաջարկություն արեց.

— Եթե ցանկանում եք, տիկին Քրամերին ասացեք, որ նշանվել եք ինձ հետ, որ իմ ընտրյալն եք, ինչպես ասում են Գերմանիայում, Հաճույքով կընդունեմ ձեզ ինձ մոտ, բայց միշտ տիկին Քրամերի ներկայությամբ:

Պարոն զր Լարսեյը զգում էր, որ ինչ-որ բան պակասում է իր երջանկությանը: Սակայն հագիվ թե որևէ տղամարդ երբևէ այդքան երջանիկ էր զգացել իրեն, ինչպես նա Մինայի հետ սեպտեմբեր ամսին Մաժոր լճի վրա զբոսանքների ժամանակ: Ալֆրեդը այնքան խոհեմ էր պահում իրեն, որ Մի-

նան կամաց-կամաց վերջ տվեց տիկին Քրամերին իրենց հետ զբոսանքների տանելու սովորությունը:

Մի օր լճակի վրա զբոսնելիս Ալֆրեդը ծիծաղելով ասաց նրան.

— Վերջապես դուք ո՞վ եք, կախարդուհի: Դուք չեք կարող ինձ համոզել, որ տիկին Քրամերի սպասուհին եք, անգամ նրա գործընկերը, չեմ հավատում:

— Հավ,— պատասխանեց Մինան, իսկ ո՞վ կցանկանայիք չինելի: Հռչակավոր դերասանուհի՞, որ վիճակախաղից մեծ գումար է շահել և ցանկանում է երիտասարդության մի քանի տարիները կախարդական աշխարհում անցկացնել, թե՞ անառակ մի աղջիկ, որ սիրեկանի մահից հետո ցանկանում է վերափոխվել:

— Եթե այդպես լինի, կամ նույնիսկ ավելի վատ, միևնույն է, եթե վաղը տիկին Լարսեյի մահվան լուրը հայտնեն, հաջորդ օրը ամուսնություն առաջարկություն կանեմ ձեզ:

Մինան զրկեց նրան:

— Ես Մինա ղը Վանգելն եմ, որին դուք տեսել եք տիկին ղը Սելիի տանը: Ինչպե՞ս չճանաչեցիք, է, սերը կույր է,— ավելացրեց ծիծաղելով:

Ինչպիսի երջանկություն էլ վայելեր Ալֆրեդը, որ կարող է վերաբերվել Մինային լիակատար հարգանքով, վերջինիս մոտ այն ավելի մտերմիկ բնույթ կրեց: Նա մտածում էր, որ կատարյալ երջանկության համար ոչինչ չպետք է թաքցնել:

Երբ սիրում ես, խաբելը տառապանք է:

Այնուամենայնիվ օրիորդ ղը Վանգելը ճիշտ վարված կլիներ, եթե անունը հայտնած չլիներ պարոն ղը Լարսեյին: Մի քանի ամիս հետո Մինան նկատեց, որ Ալֆրեդը տխուր է: Նրանք գնացել էին նեպոլ ձմեռն անցկացնելու, ձևքներին ունենալով վկայական՝ ամուսիններ լինելու մասին: Մինան ոչինչ չէր թաքցնում Ալֆրեդից: Վերջինիս վախեցնում էր նրա շափազանց խելացի լինելու հանգամանքը: Մտածեց, որ Ալֆրեդը կարոտել է Փարիզը: Մնկաչոք աղերսեց մեկ ամսով գնալ Փարիզ: Ալֆրեդը երդվեց, որ չէր ցանկանում: Նրա տխրությունը շարունակվում էր:

— Ես իմ երջանկությունը մեծ վտանգի տակ եմ դնում, — մի օր ասաց Մինան, — բայց ձեզ մոտ նկատվող թախիժն ավելի ուժգին է, քան իմ որոշումը:

Ալֆրեդն այնքան էլ շհասկացա՞վ, թե ինչ է ուզում ասել, բայց նրա ուրախությունն անսահման էր, երբ երեկոյան Մինան ասաց.

— Տարևք ինձ Թորրե դել Գրեկո:

Մինային թվաց, թե գուշակել էր Ալֆրեդի խոր տխրության պատճառը, շնայած այն ժամանակվանից, երբ ամբողջապես սլատկանել էր նրան, Ալֆրեդը արդեն կատարյալ երջանիկ էր: Ամբողջովին տարված իր սիրով, Մինան մոռացել էր իր վաղեմի երկյուղները:

«Մահ՞ր և հազարավոր մահեր կարող են վաղը վրա հասնել, — մտածում էր նա, — այն, ինչ ձեռք եմ բերել Ալֆրեդի մենամարտի օրվանից, դա այնքան էլ մեծ զոհողություն չէ... Մինան անսահման հաճույք էր ստանում կատարելով նրա բոլոր ցանկությունները: Երջանկությունից ոգևորված, նա խոհեմություն շունեցա՞վ բողարկելու այն բացառիկ դատողությունները, որոնք իր բնավորության հիմնական հատկանիշներն էին: Երջանկության որոնելու նրա ուղին ոչ միայն տարօրինակ կարող էր համարվել որևէ պարզունակ հոգու համար, այլև նույնիսկ անհաճու նա մինչև հիմա զսպել էր իրեն՝ պարտն դր կարսելի մոտ խնայելով այն ամենը, ինչ վերագրում էր ֆրանսիական նախապաշարմանը: Մինան անհրաժեշտաբար խոստովանեց ինքն իրեն, որ ազդությունների տարբերության պատճառով երբեմն ստիպված էր շհիանալ նրանով: Այս առիթով նա զգաց հոր տված համառ դաստիարակության վնասները, այս նույն դաստիարակությունը կարող էր հեշտությամբ իրեն զզվելի դարձնել:

Հրճվանքի մեջ Մինան անզգուշաբար Ալֆրեդի ներկայությամբ ամեն ինչի մասին բարձրաձայն էր մտածում: Երջանիկ է նա, սլ հասնելով սիրո բարձունքներին, ոչ թե ցանկություն, այլ խիղճ է արթնացնում սիրելի մարդու մոտ: Այնքան խենթ էր Մինան, սիրելիանն իր աչքին այնպիսի տհազոնությամբ էր աշխարհի ամենաազնիվ, ամենազեղեցիկ, ամենասիրալիր ու պաշտելի կերպարը դարձել, որ մինչև իսկ Լթե ցանկանար էլ, քաջություն չէր ունենա բացահայտել նրա

մտքերից և ոչ մեկը: Էքսի գիշերային դեպքի առիթով նյութ-ված օրհասական դավը թարցնելը վաղուց նրա համար անտանելի տանջանք էր դարձել:

Այն պահից, երբ, զգացմունքներով արբած, Մինան ձերբազատվեց Լարսեյի հանդեպ կատարյալ անկեղծութուն շքուցաբերելու ուժից, նրա հազվագյուտ հատկանիշները շրջվեցին հենց իր՝ Մինայի դեմ: Մինան ուշի-ուշով հետևում էր Ալֆրեդի տխրությունը և այն դարձնում իր կատակի առարկան: Ալֆրեդի ներշնչած սերը շուտով հասավ խելահեղություն. «Ինչ հիմարն եմ, ինչու եմ այդքան անհանգստանում,— վերջապես մտածեց Մինան,— պատճառն այն է, որ իմ սերն ավելի խորն է: Տանջում եմ ինձ այնպիսի բանի համար, որ միշտ կարելի է հանդիպել աշխարհում գոյություն ունեցող ամենամեծ երջանկությունների մեջ: Իմ դրժբախտությունը նախ կայանում է նրանում, որ բնավորությունըս ավելի անհանգիստ է, քան նրանը, և, ի վերջո, Աստված արդարամիտ է,— ավելացրեց հառաչելով, որովհետև խղճի խայթը հաճախ էր նրա գերազույն աստիճանի հասած երջանկությունը սասանում,— մի մեծ սխալ եմ գործել, որի համար մեղավոր եմ զգում ինձ. էքսի գիշերը ճնշում է հոգիս»:

Մինան համակերպվեց այն մտքի հետ, որ ըստ Ալֆրեդի բնավորության, սիրո արտահայտման մեջ նա ավելի քիչ կիրք պետք է ցուցաբերեր. «Թեկուզ ավելի քիչ սիրալիր լինի,— մտածում էր նա,— իմ ճակատագիրն է պաշտել նրան: Երջանիկ եմ համարում ինձ այն բանի համար, որ անվանարկող արասաներ չունի: Հոգուս խորքում զգում եմ, որ ամեն տեսակ ոճիս գործելու ընդունակ կլինեմ, եթե ինձ մղի դրան»:

Մի օր ինչ մտքեր պաշարեցին նրան, չգիտեմ, նա Ալֆրեդին հոշոտող մոռյլ անհանգստությունը տեսնելով, տազնապեց: Վերջինս վաղուց էր համակերպվել իր ողջ ունեցվածքի եկամուտը սիկին դը Լարսեյին թողնելու, բողոքական դառնալու և Մինայի հետ ամուսնանալու մտքի հետ: Դա այն օրն էր, երբ Ս...-ի իշխանը տոնախմբություն էր կազմակերպել, ամբողջ նեպոլը ոտքի էր կանգնել, և, բնականաբար, իրենք հրավիրված չէին: Մինան մտածեց, որ սիրեկանը կարոտում է տոնակատարությունների և ճոխ կյանքի: Ամեն կերպ նրան

համոզում էր առաջիկայում մեկնել Քյոնիգզբերգ: Ալֆրեդը կախել էր աչքերը և շէր պատասխանում: Վերջապես բարձրացրեց հայացքը, որտեղ սիրո փոխարեն ամենատանջալից լասկածամտությունն էր դրոշմված: Մինան շանթահար դավ:

— Ասացեք ինձ, Մինա, այն դիշեր, երբ պարոն դր Ռուպերին անակնկալի բերի կնոջս մոտ, ծանոթ էիք կոմսի ծրագրերին: Մի խոսքով, համաձայնությա՞ն էիք եկել նրա հետ:

— Այո, — հպարտությամբ պատասխանեց Մինան, — տիկին դր Լարսելը երբեք չի մտածել կոմսի մասին: Ես համարում էի, որ ինձ եք պատկանում, քանի որ սիրում էի ձեզ: Անստորագիր երկու նամակների հեղինակը ես եմ:

— Ստոր արարք, — սառնորեն շարունակեց Ալֆրեդը, — պատրանքները վերջացել են, ես վերադառնում եմ կնոջս մոտ: Ֆավում եմ, ես այլևս ձեզ չեմ սիրում:

Նրա ձայնի մեջ խոցված ինքնասիրության երանգ կար: Գուրս եկավ:

«Ահա թե ինչ փորձությունների են ենթարկվում ուժեղ հոգիները. սակայն նրանք իրենց հնարքներն ունեն» — մտածում էր Մինան պատուհանի առջև կանգնած, հայացքով հետևելով սիրեկանին մինչև փողոցի ծայրը: Երբ տեսադաշտից անհետացավ, Մինան մտավ Ալֆրեդի սենյակը և ատրճառակը ուղղելով սրտին, կրակելով վերջ տվեց կյանքին: Արդյո՞ք այդ կյանքը սխալ հաշվարկ էր: Երջանկությունը տեղ էր ընդամենը ութ ամիս: Չափից ավելի հրաբորբոք հոգու տեր անձնավորություն լինելու պատճառով իրականությունը շէր կարող նրան գոհացնել:

ՄՆԴՈՒԿԸ ԵՎ ՈԳԻՆ

Իսպանական պատմություն

182... Թվականի մայիսյան գեղեցիկ մի առավոտ դոն Բլաս Բուստոս ի Մոսկերան տասներկու ձիավորների ուղեկցությամբ մտավ Գրենադից մեկ մղոն հեռավորության վրա գտնվող Ալկոլոտ գյուղը: Նրա մոտենալու լուրն առնելուն պես գյուղացիները մտան տներն ու ծածկեցին դռները: Կանաչ պատուհանների անկյունից ահաբեկված նայում էին Գրենադի սարսափազդու ոստիկանության տնօրենին, որին դաժանության համար նախախնամությունը պատժել էր՝ դեմքին դրոշմելով հոգու կնիքը: Յոթ ոտնաչափ հասակով, սև դեմքով, ահավոր նիհար աչք մարդը պաշտոնով ընդամենը ոստիկանության տնօրեն էր, բայց Գրենադի եպիսկոպոսն էլ, կառավարիչն էլ դողում էին նրա առաջ:

Նապոլեոնի դեմ մղվող հերոսամարտում, որի շնորհիվ նույն նապոլեոնը հետագա սերունդների համար պարզեց, որ 19-րդ դարի իսպանացիները, ֆրանսիացիներից հետո, Եվրոպայի բոլոր ժողովուրդների մեջ առաջնակարգ տեղ են գրավում, Գոն Բլասը դարձավ գերիլլաների* ամենահռչակավոր ղեկավարներից մեկը, և եթե օրվա ընթացքում գերիլլան թեկուզ մեկ ֆրանսիացի շապաներ, զոն Բլասը անկողին չէր մտնի. նա երգում էր տվել:

Ֆերգինանդի վերադարձից հետո դոն Բլասին արտօրեցին Սևուտայի տաժանավայրը, որտեղ ամենածանր ու թշվառ պայմաններում մնաց ութ տարի: Նրան մեղադրում էին այն բանի համար, որ երիտասարդ հասակում կապուցին* լինելուց հետո հրաժարվել էր կրոնական դասից: Այնուհետև, չգի-

տես ինչպես, թողություն էր ստացել: Որից հետո դոն Բլասը հայտնի դարձավ իր լուսկյացությամբ, ամենևին չէր խոսում: Նախկինում, պատերազմի գերիներին կախազան բարձրացնելուց առաջ, սուր ծաղրի էր ենթարկում նրանց, որի պատճառով սրախոս մարդու համբավ էր ձեռք բերել: Նրա զվարճախոսությունները կրկնում էին իսպանական բանակներում:

Դոն Բլասը դանդաղ առաջանում էր գյուղի փողոցով և լուսանի աչքերով նայում էր աչ ու ձախ շարված տներին: Երբ անցնում էր եկեղեցու առջևով, հնչեցին պատարագի զանգերը. նա ավելի շուտ ցած նետվեց ձիուց, քան իջավ, և բոլորն էլ տեսան, թե ինչպես ծունկ շոքեց խորանի առջև: Չորս ոստիկանները նույնպես ծնկի եկան նրա աթոռի շուրջը, բայց քիչ անց, երբ նայեցին նրան, բարեպաշտության արտահայտությունը ամբողջովին չքացել էր աչքերից: Չարագուշակ հայացքն ուղղված էր հաճելի արտաքինով մի երիտասարդի կողմը, որ ջերմեռանդորեն աղոթում էր իրենից մի քանի քայլ հեռու:

— Սա ի՞նչ բան է,— մտածեց դոն Բլասը,— արտաքին տվյալներից դատելով, սա պետք է պատկանի հասարակության բարձր խավին, իսկ ինձ անծանոթ է: Այսքան ժամանակ այստեղ եմ, բայց ոչ մի անգամ Գրենադում չեմ տեսել սրան: Ուրեմն թաքնվում է:

Դոն Բլասը, շրջվելով ոստիկանի կողմը, հրամայեց եկեղեցուց դուրս գալուն պես ձերբակալել երիտասարդին: Պատարագի վերջին հնչյունների հետ շտապեց ինքն էլ դուրս գալ և գնաց Ալկոլտի պանդոկը, մեծ դահլիճում սպասելու: Շուտով բերին զարմացած երիտասարդին:

— Ձեր անո՞նր:

— Դոն Ֆերնանդո դելլա Քուէվա:

Դոն Բլասի անողոր դեմքն էլ ավելի սևացավ, երբ մտիկից տեսավ դոն Ֆերնանդոյի անգերազանցելի, գեղեցիկ դիմադժերը: Նա շիկահեր էր և չնայած պահի ծանր ու դժվարին կացությանը, դեմքի արտահայտությունը մեղմ էր: Դոն Բլասը մտախոհ նայում էր երիտասարդին:

— Իսպանական կորտեսների* օրոք ինչո՞վ էիք զբաղված,— վերջապես հարցրեց նա:

— 1823 թվականին Սեիլի կուլեջում էի, այն ժամանակ տասնհինգ տարեկան էի, իսկ հիմա՝ տասնինը:

— Ապրուստի ի՞նչ միջոցներ ուներ:

Երիտասարդը կարծես բարկացավ հարցի կոպտությունից, բայց ինքն իրեն տիրապետելով պատասխանեց.

— Հայրս դոն Կարլոս Քուարտոյի* բանակում (աստված լուսավորի այդ բարի արքայի հիշատակը), հեծելազորի դասապետ էր, այս գյուղի մոտ ինձ մի փոքրիկ կայք է թողել, տասներկու հազար ունալ (3000 ֆրանկ) եկամուտով: Երեք ծառաներիս օգնութեամբ, սեփական ձեռքերով մշակում եմ հողը:

— Որոնք, անշուշտ, ամբողջ հողով նվիրված են ձեզ: Գերիլլայի հրաշալի կորիզ, — դառը ժպիտով սասց դոն Բլասսը, — բա՛նտ, մենախո՛ւց, — հեռանալիս ավելացրեց նա՝ գերուն թողնելով իր մարդկանց հետ:

Մի քանի րոպե անց դոն Բլասսն ընթրում էր:

— Վեց ամիս բանտարկություն, — մտածում էր նա, — արդար դատաստան կլինի և՛ այդ գեղեցիկ դեմքի դույնի, և՛ դիմադծերի թարմության, և՛ անբարիշտ ինքնագոհության համար:

Ճաշասենյակի գոտն առջև կանգնած պահակը հատու շարժումով բարձրացրեց սվինավոր հրացանը և փողը մոտեցրեց ինչ-որ ծերունու կրծքին, որը ջանում էր ընթրիքը բերող սպասավորի ետևից ներս խցկվել: Դոն Բլասսն շտապեց դոտն մոտ. ծերուկի թիկունքում նկատեց մի երիտասարդ աղջկա, և իսկույն ցրվեց դոն Ֆերնանդոյի պատկերը:

— Ի՛նչ լկտիություն, խանգարել ինձ, երբ ես ընթրում եմ, — ասաց ծերունուն, — դե ներս եկեք, վերջապես բացասուրեք ձեր վարմունքի պատճառը:

Դոն Բլասսը հայացքը չէր կտրում երիտասարդ օրիորդից. նրա ճակատին և աչքերի մեջ աննկարագրելի անմեղության ու երկնային բարեպաշտության արտահայտություն կար, նման իտալական գեղանկարչական դպրոցի գեղեցիկ աստվածամայքերի շողարձակող պատկերին: Դոն Բլասսը չէր լսում ծերունուն և ընդհատել էր ուտելը: Ի վերջո դուրս եկավ երազներից: Ծերունին երբսրդ-չորրորդ անգամն էր կրկնում իր ալյատեղ հայտնվելու պատճառը. պետք է ազատ արձակվեր

դոն Ֆերնանդո դելլա Քուէվան, որը վաղուց իր դստեր՝ Ինեսի նշանածն էլու Եկող կիրակի ամուսնանալու էին: Այս խոսքերը լսելով, ոստիկանության վայրագ տնօրենի աչքերն այնպիսի արտասովոր փայլով շողացին, որ Ինեսը, մինչև իսկ հայրը, սարսափեցին:

— Մենք միշտ ասածոս ողորմածությամբ ենք ապրել և հին բրիստոնյաներ* ենք,— շարունակեց վերջինս,— իմ տոհմը դարերի խորքից է սերում, բայց ևս աղքատ եմ, իսկ դոն Ֆերնանդոն իմ աղջկա համար հարմար թեկնածու է: Ո՛չ Ֆրանսիացիների օրոք է բախտս բերել, ո՛չ նրանցից հետո:

Դոն Բլասն իր դաժան լուսթյունից դուրս չէր գալիս:

— Պատկանում եմ Գրենադի թաղավորության ամենահին ազնվականության դասին,— շարունակեց ծերունին,— իսկ հեղափոխությունից առաջ*,— ավելացրեց հառաչելով,— կարող էի կտրել այն անբարիշտ վանականի ականջը, որն ինձ պատասխանի շարժանացներ:

Սերունու աչքերն արցունքով լցվեցին: Վախվորած Ինեսը կրծքից հանեց մի փոքրիկ օրհնաշար, որը դիպել էր դել Պիլար ուխտավայրի կույս Մարիամի* քղանցքին. նրա գեղեցիկ ձեռքերը ջղաձգաբար սեղմեցին փոքրիկ խաչը: Դոն Բլասի սարսափելի աչքերը խաչվեցին նրա ձեռքերին, այնուհետև սկսեցին դիտել երիտասարդ Ինեսի նրբագեղ ու պիրկ իրանը: Գիմազծերը կարող էին ավելի կանոնավոր լինել,— մտածում էր նա,— բայց այսպիսի երկնային նազելիություն դեռ չեմ տեսել»:

— Ջեզ կոչում են դոն Ջեմ Առեգի°,— վերջապես դիմեց ծերունուն:

— Իմ անունն է,— տեղում ձգվելով պատասխանեց դոն Ջեմը:

— Յոթանասուն տարեկա՞ն եք:

— Վաթսունինը:

— Ուրեմն, այդ դուք եք,— առաջ դոն Բլասը, և դեմքի արտահայտությունը նկատելիորեն մեղմացավ,— վաղուց էին փնտրում ձեզ: Մեր մեծապատիվ արքան շնորհ է արել տարեկան շորս հազար ուսուլի (1000 ֆրանկ) թոշակ նշանակել ձեզ: Ինձ մոտ, Գրենադում, արքայական բարիքից երկու տարվա հասանելիք ունեք, վաղը կեսօրին կհանձնեմ ձեզ: Միա-

ժամանակ կապացուցեմ, որ հայրս Հին Կաստիլիայի* հարուստ մշակներից է եղել, ձեզ նման հին քրիստոնյա, իսկ ես երբեք վանական չեմ եղել: Մի խոսքով, իմ դեմ ուղղված կշտամբանքը հանիրավի է:

Ծերունի աղնվականը շհանդգնեց ուշանալ ժամադրությունից: Նա կորցրել էր կնոջը և ապրում էր աղջկա՝ Ինեսի հետ: Գրենադ մեկնելուց առաջ աղջկան տարավ գյուղի քահանայի մոտ և ամեն ինչ այնպես կազմակերպեց, որ կարծես այլևս չէր տեսնելու նրան:

Դոն Բլասը նրան ընդունեց խիստ պճնված տեսքով. համազգեստի վրա անց էր կացրել շքանշանի ժապավենը: Դոն Զեմը իրեն պահում էր քաղաքավարության կանոնները հարգող հին զինվորի պես, որ առիթի բերումով ցանկանում է բարիք գործել և անտեղի ժպտում էր:

Դոն Զեմը եթե համարձակություն ունենար կհրաժարվեր դոն Բլասի ներկայացրած ութ հազար ռեալից: Չկարողացավ մերժել նաև ճաշի հրավերքը: Հետո ոստիկանության դարհուրելի տնօրենը դոն Զեմին ցույց տվեց իր պարգևագրերը, կնունքի վկայականը, նույնիսկ նոտարական փաստաթուղթը, որոնք հաստատում էին թիապարտությունից ազատվելու մասին և ապացուցում, որ երբեք վանական չի եղել:

Վախեցած դոն Զեմը այս ամենի տակ շար կատակ էր տեսնում:

— Ուրեմն, քառասուներեք տարեկան եմ,— ի վերջո ասաց դոն Բլասը,— պատվաբեր աշխատանքի տեր եմ, հիսուն հազար ռեալ եմ ստանում: Նեապոլի բանկում հազար օնսի եկամուտ ունեմ: Չեք աղջկա՝ դոննա Ինես Առեպիի ձեռքըն եմ խնդրում:

Դոն Զեմը գունատվեց: Մի պահ տիրեց լռություն: Հետո դոն Բլասը շարունակեց.

— Չեմ թաքցնի, դոն Ֆերնանդո դելլա Քուէվան մեղադրվում է անօրինական գործի մեջ: Ոստիկանության մինիստրը հետքերն է փնտրում, նրան մահապատիժ է սպասում, կամ, առնվազն՝ թիապարտություն: Ութ տարի եմ անցկացրել այնտեղ, վստահեցնում եմ, զզվելի ժամկետ է,— այս ասելով մոտեցավ ծերունու ականջին,— տասնհինգ օր հետո, կամ երեք շաբաթ անց, մինիստրից հավանաբար հրաման կստա-

նամ դոն Ֆերնանդոյին Ալկոլտայի Գրենադի բանտը տեղափոխելու մասին: Այս հրամանը ի կատար կածվի ուշ գիշերին. եթե դոն Ֆերնանդոն օգտվի խաղարից ու փախչի, աչք կփակեմ, գրղված այն բարեկամական զգացումից, որով ինձ պատվում եք: Մեկ-երկու տարով թող Մաժորկ գնա, այնտեղ նրան ոչ ոք չի ասի՝ աչքիդ վրա ունք կա:

Մերունի ազնվականը ոչինչ չպատասխանեց, կարծես շանթաճարվել էր, մեծ տանջանքով հասավ գյուղ: Ստացած դրամը նողկանք էր պատճառում: «Ուրեմն, սա իմ բարեկամի՝ դոն Ֆերնանդոյի, իմ Ինեսի նշանածի արջան գինն է,— մտածում էր նա»:

Հասնելով հողերը առաջնորդի մոտ, նետվեց Ինեսի դիրկը:

— Աղջիկս,— բացականչեց նա,— սքեմավորն ուզում է ամուսնանալ քեզ հետ:

Ինեսը սրբեց արցունքները, թուշտվութուն խնդրեց զնալ քահանայի մոտ, եկեղեցու խոստովանախույ՝ խորհուրդ հարցնելու: Չնայած տարիքի հետ կապված սառնասրտությանն ու բարձր դիրքին, քահանան արտասովեց: Նրա խորհրդի համաձայն հարկավոր էր ընտրություն կատարել. ամուսնանալ դոն Բլասի հետ, կամ գիշերվա խավորից օգտվելով՝ փախչել, հեռանալ: Դոննա Ինեսն ու հայրը փորձելու էին անցնել Ջիբրալթարը, նավ նստել և հասնել Անգլիա:

— Իսկ ինչպե՞ս ենք ապրելու,— ասաց Ինեսը:

— Կարող եք ձեր տունն ու այգին վաճառել:

— Ո՞վ կգնի,— արցունք թափելով ասաց երիտասարդ աղջիկը:

— Խնայած գումար ունեմ,— պատասխանեց քահանան, մոտ հինգ հազար ռեալ, աղջիկս, տալիս եմ ամբողջ հոգով, եթե համոզված եք, որ ամուսնանալով դոն Բլասի հետ դժբախտանալու եք:

Տասնհինգ օր անց Գրենադի ոստիկանական ոճմակները, հագած տոնական համազգեստ, պաշարել էին Սենտ-Դոմենիկ մոսյատես եկեղեցին: Մինչև կեսօր մարդիկ հաղիվ են երևում այդ կողմերում, իսկ այդ օրը, բացի հրավիրյալներից, ոչ ոք չէր հանդգնում մտնել եկեղեցի:

Հարյուրավոր կերոններով լուսավորված կից մատուռներից մեկում, որից դուրս եկող լույսը հրե սլաքի պես հեռվից

Ճկեղեցու ստվերներն էր ճեղքում, խորանի աստիճաններին մի մարդ ծնկի էր շորել. նա մի գլուխ բարձր էր իրեն շրջապատող մարդկանցից: Այդ գլուխը բարեպաշտորեն խոնարհված էր, իսկ բարակ թևերը խաչված էին կրծքին: Երբ վեր կացավ, ներկա գտնվողները տեսան շքանշաններով զարդարված նրա համազգեստը: Նա բռնել էր երիտասարդ աղջկա ձեռքը, որի թևեկասահ և նուրբ քայլվածքը հակասութուն էր կազմում թախժոտ դեմքի հետ: Հարսնացուի աչքերում արցունքներ էին կայծկլտում. հակառակ խոր վշտին, դեմքին պահպանվել էր հրեշտակային մեղմություն. բոլորը զարմացել էին, երբ այդ տեսքով եկեղեցու դռան առջևից նա կառք բարձրացավ:

Պետք է խոստովանել, որ դոն Բլասը, ամուսնանալուց հետո, առաջվա վայրագությունը չէր ցուցաբերում. մահապատիժները քշացան: Մահապարտներին փոխանակ թիկունքից կրակելու, պարզապես կախաղան էին բարձրացնում: Հաճախ նրանց թույլ էր տալիս մեռնելուց առաջ գրկախառնվել ընտանիքի անդամների հետ: Մի օր նա ասաց կնոջը, որին սիրում էր խելագարի սյես.

— Ես քեզ խանդում եմ Սանչային:

Ինեսի կաթնաքույրն ու ընկերուհին էր: Նա ապրել էր դոն Զեմի տանը որպես դստեր սպասուհի և եկել էր Գրենադի պալատ, երբ Ինեսը վերջնականապես տեղափոխվել էր այնտեղ:

— Ինես, երբ հեռանում եմ ձեր կողքից, — շարունակեց դոն Բլասը, — Սանչայի հետ մնում եք մենակ: Նա բարի է, ուրախացնում է ձեզ. ես դաժան պարտականություններով ծանրաբեռնված ծերացած զինվոր եմ, գիտակցում եմ նաև, որ շատ սիրալիր չեմ: Այդ Սանչան իր ծիծղուն արտաքինով ձեր աչքին կիսով չափ ավելի է ծերացնելու ինձ: Ահա, վերցրեք դանձարկղիս բանալին, որքան դրամ ուզում եք տվեք նրան, տվեք բոլորը, եթե հաճելի է ձեզ, միայն թող գնա, հեռանա, այլևս չտեսնեմ նրան:

Երեկոյան, երբ դոն Բլասը վերադարձավ աշխատանքից, առաջին մարդը, որին հանդիպեց տանը, Սանչան էր: Նա սովորականի պես իր աշխատանքով էր զբաղված: Կատաղած շարժումներով մոտեցավ Սանչային, վերջինս բարձրացրեց աչքերը և հպարտությամբ, իսպանուհուն հատուկ հա-

յացքով, որտեղ սարսափն ու քաջութիւնը զարմանալիորեն միախառնված էին իրար, նայեց նրան: Մի պահ անց դոն Բլասը ժպտաց:

— Սիրելի Սանչա,— ասաց նրան,— դոննա Ինեսն ասե՞ք է, որ տասը հազար ունի եմ տալիս ձեզ:

— Ես միայն իմ ափրուհուց եմ նվիրատվութիւն ընդունում, հայացքը շխոնարհելով պատասխանեց Սանչան:

Դոն Բլասը մտավ կնոջ մոտ:

— Տորրե-Վիեժայի բանտում այս բոպեին քանի՞ բանտարկյալ կա,— հարցրեց Ինեսը:

— Երեսուներկուսը՝ խցերում և կարծեմ երկու հարյուրը՝ բարձր հարկերում:

— Ազատ արձակեք նրանց,— ասաց Ինեսը,— և ես կբաժանվեմ աշխարհի միակ բարեկամուհուցս:

— Այն, ինչ հրամայում եք, վեր է իմ կարողութիւնից,— պատասխանեց դոն Բլասը, և այլևս ոչ մի բառ չասաց ամբողջ երեկո: Լամպի լույսի տակ ձեռագործ անելով, Ինեսը տեսնում էր, թե ինչպես դոն Բլասը մերթ կտրմբում, մերթ գունատվում է. թողեց աշխատանքը և սկսեց աղոթել: Հաջորդ օրը նույն լուծիւնը տիրեց: Իսկ մեկ օր անց Տորրե-Վիեժա բանտում մեծ հրդեհ բռնկվեց: Երկու բանտարկյալ զոհվեց: Եվ, հսկառակ ոստիկանական տնօրենի ու գործակալների աշալուրջ հսկողութեան, բոլորին հաջողվեց փախչել:

Ինեսը ոչինչ չասաց դոն Բլասին, ոչ էլ վերջինս խոսեց: Հաջորդ օրը, երբ դոն Բլասը վերադարձավ տուն, այլևս շտեսավ Սանչային, նետվեց Ինեսի գիրկը:

Տորրե-Վիեժայի հրդեհից հետո անցավ տասնութ ամիս. ամբողջովին փոշու մեջ կորած ոմն ճամփորդ Զուիա գյուղաքաղաքի խղճուկ պանդոկի առջև ցած թռավ ձիուց: Գյուղը գտնվում էր Գրենադից մեկ մղոն հեռու, հարավային մասում, լեռների մեջ ծվարած, իսկ Ալկոլտը ընկած էր հյուսիսային մասում: Գրենադի այդ բնակավայրը Անդալուզիայի իսանձված դաշտավայրում հրապուրիչ օաղիսի է նման և համարվում է Իսպանիայի ամենագեղեցիկ տեղանքից մեկը: Բայց ճամփորդը հետաքրքրութիւնի՞ց զրդված էր եկել այստեղ: Հագուստներից դատելով՝ կատալանցի էր: Մաժուրկում ստացած անձնագիրը հավանաբար կնքել էին Բարսելո-

նում, որտեղ իջեանել էր: Խղճուկ պանդոկի տերը աղքատ մարդ էր: Կատալանցի ճամփորդը երբ դոն Պաբլո Ռոդիլ անունով անձնագիրը հանձնում էր պանդոկապանին, վերջինս աչքի պոչով նայեց նրան:

— Այո, սինյոր,— ասաց նա,— ձերդ մեծությանը կհայտնեմ, երբ Գրենադի ոստիկանությունը ձեր մասին հարցուփորձ անի:

Ճամփորդը բացատրեց, որ եկել էր գեղեցիկ բնաշխարհը դիտելու: Նա վեր էր կենում արևածագից մեկ ժամ առաջ և վերադառնում էր կեսօրին՝ ամենաշուգ ժամին, երբ բոլորը ճաշում էին կամ հանգստանում:

Դոն Ֆերնանդոն ժամեր շարունակ անց էր կացնում մատուղաշ կաղնիներով ծածկված բլրակի վրա: Այստեղից պարզորոշ տեսնում էր Գրենադի հավատաքննության հին պալատը, որտեղ այժմ ապրում էին դոն Բլասն ու Ինեսը: Աչքերը չէին կարողանում լքել պալատի սեամած պատերը, որը հսկայի պես վեր էր խոյանում քաղաքի տների արանքից: Մաժորկից հեռանալով, դոն Ֆերնանդոն ինքն իրեն խոստացել էր Գրենադ չմտնել: Մի օր էլ, շկարողանալով դիմադրել ցանկությունը, գնաց այն նեղլիկ փողոցը, որի դիմաց բարձրանում էր հավատաքննության պալատի հսկայական ճակատը: Մտավ մի արհեստավորի կրպակ և ինչ-որ պատճառաբանությամբ հարցուփորձ արեց նրան: Արհեստավորը ցույց տվեց դոննա Ինեսի հարկաբաժնի լուսամուտները: Դրանք տեղադրված էին շատ բարձր, երրորդ հարկում:

Ետճաշյա հանգստի ժամին դոն Ֆերնանդոն նորից բռնեց Զուիայի ճամփան: Խանդից ծառս եղած կատաղությունը հոշոտում էր սիրտը: Ուզում էր դաշունահար անել Ինեսին, հետո ինքնասպանություն գործել:

— Թուլակամ, ստոր արարած,— կատաղած կրկնում էր ինքն իրեն,— նա կարող է սիրել նրան, մտածելով, որ իր պարտականությունն է:

Փողոցի շրջադարձին հանդիպեց Սանչային:

— Լսիր, սիրելիս,— բացականչեց դոն Ֆերնանդոն առանց նայելու նրան,— անունս դոն Պաբլո Ռոդիլ է, մնում եմ «Հրեշտակ» պանդոկում, Զուիա գյուղում: Կարո՞ղ ես վաղը երեկոյան ժամերգության պահին գալ մեծ եկեղեցու մոտ:

— Կգամ,— պատասխանեց Սանչան, ինքն էլ շնայելով նրան:

Հաջորդ օրը դոն Ֆերնանդոն տեսավ Սանչային և անխոս շարժվեց պանդոկի կողմը: Սանչան աննկատ սողոսկեց ներս: Ֆերնանդոն փակեց դուռը:

— Դե, ինչպե՞ս է նա,— ասաց վերջինս արցունքն աչքերին:

— Այլևս նրա մոտ չեմ ծառայում,— պատասխանեց Սանչան,— տասնութ ամիս առաջ առանց պատճառի, առանց բացատրության վունդեց: Գրողը տանի, ինձ թվում է, թե սիրում է դոն Բլասին:

— Սիրում է դոն Բլասին,— բացականչեց դոն Ֆերնանդոն սրբելով արցունքները,— այդ էր պակաս:

— Երբ ինձ վունդեց,— շարունակեց Սանչան,— ընկա ոտքերը, աղաչեցի բացատրել ինձնից հիասթափվելու պատճառը, միայն սառնորեն պատասխանեց. «Ամուսինս այդպես է կամենում»: Եվ ոչ մի բառ չավելացրեց: Ճիշտ է, նա միշտ էլ բարեպաշտ է եղել, բայց հիմա իր կյանքը դարձրել է հարատև աղոթք:

Իշխանությունը հաճոյանալու համար դոն Բլասը հավատարմնություն սլալատի մի մասին էր միայն տիրացել ու ապրում էր այնտեղ, իսկ մյուս մասը հատկացրել էր կլարիսյան կրոնավորուհիներին: Միանձնուհիները, տեղավորվելով այնտեղ, միաժամանակ շարունակում էին եկեղեցու հետ կապված աշխատանքները: Գոննա Ինեսը ամբողջ ժամանակն անց էր կացնում նրանց հետ: Հենց որ դոն Բլասը դուրս էր գալիս տնից, բոլորն էլ վստահ էին, որ նա դարձյալ ծունր է իջել հավերժական պաշտամունքի խորանի առջև:

— Սիրում է դոն Բլասին,— կրկնեց դոն Ֆերնանդոն:

— Վտարմանս նախորդ օրը,— շարունակեց Սանչան,— դոննա Ինեսը ինձ հետ խոսեց...

— Ուրա՞խ է,— ընդհատեց դոն Ֆերնանդոն:

— Ոչ թե ուրախ, այլ կարծես անտարբեր է դարձել ամեն ինչի նկատմամբ, հանգիստ: Այն ժամանակից, ինչ ճանաչում եք նրան, շատ է փոխվել. կայտառությունն ու թևթևությունը անհետացել են, ինչպես քահանան է նկատել:

— Ստոր արարած,— բացականչեց դոն Ֆերնանդոն մեծ քայլերով սենյակում ետ ու առաջ գնալով,— այսպես է պահում իր երգումը, այսպես էր ինձ սիրում: Նույնիսկ չի թախծում, իսկ ես...

— Ինչպես ասում էի ձերդ սինյորուսթյանը,— շարունակեց միտքը Սանչան,— իմ վտարման նախորդ օրը դոննա Ինեսը բարեկամորար խոսեց ինձ հետ, շատ բարի էր, ինչպես Ալիոլոտում: Մեկ օր անց՝ «ամուսինս այդպես է ցանկանում»: ահա այն ամենը, ինչ գտավ ինձ ասելու և իր ձեռքով ստորադրված մի թուղթ տվեց ինձ. ութ հարյուր ռեալի թոշակ էր նշանակել:

— Ի՞նչ, սուր տեսնեմ այդ թուղթը,— ասաց դոն Ֆերնանդոն և համբույրնեհով ողողեց Ինեսի ստորադրուսթյունը,— իսկ իմ մասին խոստում էր:

— Երբեք,— պատասխանեց Սանչան,— նույնիսկ այնքան էր լուռ, որ մի օր, իմ ներկայությամբ, դոն Զեմը դիտողություն արեց նրան սիրելի հարեանին այդ աստիճան մոռանալու համար: Գունատվեց ու պատասխան չտվեց: Հենց-որ հորն ուղեկցեց մինչև դուռը, վաղեց մատուռում փակվելու:

— Հիմար եմ, ահա բոլորը,— բացականչեց դոն Ֆերնանդոն,— ամբողջ հսգով ատում եմ նրան: Այլևս չխոսենք... Ուրախ եմ, որ Գրենադ եմ եկել, հազար անգամ ուրախ եմ, որ քեզ հանդիպեցի... իսկ դու ի՞նչ ես անում:

— Ալբարասեն փոքրիկ գյուղում, Գրենադից կես մղոն հեռու, աշխատում եմ որպես վաճառականուհի,— և ապա ձայնն իջեցնելով ավելացրեց,— անդլիական գեղեցիկ ապրանքներ ունեմ, մաքսանենգներն ևն Ալպուժարից բերում: Սնդուկների մեջ սասը հազար ռեալից ավելի արժողությամբ ապրանք ունեմ: Երջանիկ եմ:

— Հասկանում եմ,— ասաց դոն Ֆերնանդոն,— Ալպուժար լեռների կտրիճներից ես սիրեկան ընտրել: Այլևս երբեք չեմ հանդիպի քեզ հետ: Վերցրու, մոտդ պահիր այս ժամացույցը, ինձնից հիշատակ թող մնա:

Սանչան պատրաստվում էր դուրս գալու, երբ դոն Ֆերնանդոն պահեց նրան.

— Իսկ եթե մոտը գնա՞մ:

— Խույս կտա ձեզնից, պատուհանից ցած կնետվի: Զգուշացեք, — ասաց Սանչան վերադառնալով դոն Ֆերնանդոյի մոտ, — որքան էլ ծպտվեք, միևնույն է, ութից տասը լրտեսներ անընդհատ թափառում են տան շորս բոլորը, ձեզ կբռնեն:

Ֆերնանդոն, թուլությունից ամոթահար, այլևս ոչ մի բառ չավելացրեց: Նա նույն րոպեին որոշում կայացրեց հաջորդ օրն իսկ մեկնել Մաժորկ:

Ութ օր անց, երբ պատահաբար անցնում էր Ալբարասեն գյուղով, իմացավ, որ ավազակները բռնել են Օ'Դոննել կապիտանին և մեկ ժամից ավելի բերանքսիվայր նրան պահել են ցեխի մեջ: Դոն Ֆերնանդոն տեսավ Սանչային, որը մտադրազ շտապում էր ինչ-որ տեղ:

— Ժամանակ չունեմ ձեզ հետ խոսելու, եկեք իմ հատից:

Սանչան փակել էր կրպակը և շտապում էր անգլիական կերպասները սե կաղնեփայտե մեծ սնդուկի մեջ տեղավորել:

— Գուցե այս գիշեր հարձակվեն մեզ վրա, հենց այստեղ, — բացատրեց Սանչան դոն Ֆերնանդոյին, — ավազակապետը մաքսանենգ ընկերներիցս մեկի անձնական թշնամին է: Առաջին հերթին կկողոպտեն այս կրպակը: Գրենադից եմ գալիս: Դոննա Ինեսից թույլտվություն ստացա ամենաթանկարժեք ապրանքներս պահ տալ նրա սենյակում, համենայն դեպս, բարի կին է: Դոն Բլասը չի տեսնի մաքսանենգային ապրանքներով լեցուն այս սնդուկը, տեսնելու դեպքում էլ Դոննա Ինեսը որևէ պատճառաբանություն կգտնի:

Շտապում էր դասավորել քողերն ու շալերը: Դոն Ֆերնանդոն նայում էր նրան, հանկարծ նետվեց դեպի սնդուկը, դուրս թափեց քողերն ու շալերը և տեղավորվեց այնտեղ:

— Խեղճ եք, ինչ եք, — սարսափած վրա տվեց Սանչան:

— Վերցրու, ահա հիսուն օնո, բայց թող շանթահար լինեմ, եթե դուրս գամ այս սնդուկից, մինչև չհասնեմ Գրենադի հավատարմնության պալատը: Ուզում եմ տեսնել նրան:

Սարսափի մեջ ինչ էլ ասաց Սանչան, շօգնեց, դոն Ֆերնանդոն չէր լսում նրան:

Խոսելու ընթացքում ներս մտավ բեռնակիր Զանդան՝ Սանչայի դարմիկը: Նա սնդուկը ջորու վրա բարձած տանելու էր Գրենադ: Աղմուկ լսելով, դոն Ֆերնանդոն շտապեց կափա-

րիչը ծածկել վրան: Ամեն վտանգ աչքի առաջ առած՝ Սան-
չան բանալիով կողպեց այն: Անզգուշութուն կլիներ սնդուկը
բաց թողնել:

Հունիսյան մի առավոտ, մոտ ժամը տասնմեկին, դոն
Ֆերնանդոն, սնդուկի մեջ ծվարած, մուտք գործեց Գրենադա
Քիչ էր մնացել շնչահեղձ լինելու: Հասան հավատաքննության
պալատ: Երբ Չանգան աստիճաններով վեր էր բարձրանում,
դոն Ֆերնանդոն հույս ուներ, որ արկղը կթողնեն երկրորդ
հարկում, գուցե նաև Ինեսի սենյակում:

Դռները փակվելուն պես քար լռություն տիրեց: Դոն
Ֆերնանդոն դաշույնի օգնությամբ փորձեց շրջել սնդուկի փա-
կանը: Հաջողվեց: Նրա ուրախությանը չափ չկար, հավանա-
բար Ինեսի սենյակում էր: Կանացի հագուստներ կային, ճա-
նաչեց մահճակալի մոտ կախված խաչը, ժամանակին տեսել
էր Ալկոլոտի փոքրիկ սենյակում: Մի օր, բուռն վիճաբանու-
թյունից հետո, Ինեսը նրան ուղեկցել էր իր սենյակը և այս
խաչի առջև հավերժական սիրո երդում էր տվել:

Արտակարգ շոգ էր, իսկ սենյակում իշխում էր խավարը:
Պատուհանի փեղկերը փակ էին, հնդկական նրբագույն մուս-
լինի վարագույրները վերևից թափվում էին մինչև հատակը:
Լռությունը աննշան շափով խզվում էր քիչ այն կողմ ցայ-
տող փոքրիկ շատրվանից, որ թափվում էր սև մարմարե խե-
ցու մեջ: Այս փոքրիկ շատրվանի շնչին ձայնից անգամ սար-
սրոում էր դոն Ֆերնանդոն, որն իր կյանքում բազմաթիվ
քաջագործությունների ապացույցներ էր թողել: Այժմ շէր
կարողանում պատկերացնել, որ սողոսկելով Ինեսի սենյա-
կը՝ բազմաթիվ հնարքներ որոնելուց հետո, վերջապես Մա-
ժորկում այնքան երազած երջանկությունը վերագտել էր
այստեղ: Դոն Ֆերնանդոյի զգացումը բացատրվում է իր վի-
ճակից ելնելով. տարագիր էր, դժբախտ, յուրաչիններից հե-
ռու, ջերմ սիրուց և անհուսության երկարատևությունից կի-
սախելագար: Վախենում էր նաև, որ Ինեսին դուր չգա իր
կատարած քայլը. ճանաչում էր նրան որպես բարեպաշտ և
երկշոտ անձնավորություն: Եվ դոն Ֆերնանդոն հուզվում էր:
Կամաչեի խոստովանել, եթե համոզված լինեի, որ ընթերցողը
անտեղյակ է Ֆրանսիայի հարավում ապրող մարդկանց զար-
մանալի և կրքոտ բնավորությանը: Դոն Ֆերնանդոն քիչ էր

մնում ուշագնաց լինելը, երբ եկեղեցու զանգերը դողանջեցին ժամը երկուսը: Անհուն լուսթյան միջից լսեց մարմարե աստիճաններով բարձրացող թեթև քայլերի ձայն: Մոտեցան դռանը: Ճանաչեց Ինեսի ոտնաձայնը և շհամարձակվելով առաջին իսկ պահից ոտնահարել իր պարտականությունների մեջ շթերացող կնոջ նվիրական զգացմունքները, թաքնվեց սնդուկի մեջ:

Օդը հեղձուցիչ էր, սև խավարն էր իշխում: Ինեսը փովեց անկողնու վրա, և դոն Ֆերնանդոն նրա միօրինակ շնչառությանից հասկացավ, որ նա արդեն քնած է: Միայն այդ ժամանակ համարձակություն ստացավ մոտենալ մահճակալին: Տեսավ Ինեսին, որ տարիներ շարունակ իր հոգու միակ տանջանքն ու մտահոգությունն էր հանդիսացելու Ինեսն իր նինջի անկեղծության մեջ՝ մեն-մենակ հանձնված իրեն, վախ ներշնչեց: Այս տարօրինակ զգացումը կրկնապատկվեց, երբ նկատեց երկու ստորվա բաժանումից հետո դիմագծերի անժանոթ սառը արժանապատվության դրոշմը: Մինչդեռ նրան տիրելու աննկատ երջանկությունը սողոսկում էր հոգու խորքը, ամառային թեթև հագուստի անփութությունը հրաշալի հակասություն էր կազմում այդ համարյա խստաբարո, արժանապատվությամբ լի կերպարանքի հետ: Նա հասկացավ, որ իրեն տեսնելուն պես Ինեսի առաջին քայլը պիտի լինի փախչել: Փակեց դուռը և բանալին պահեց մոտը: Վերջապես հասավ իր ճակատագիրը որոշող պահը: Ինեսը շարժվեց. պատրաստվում էր արթնանալ: Դոն Ֆերնանդոն միանգամից ներշնչում ունեցավ Ինեսի սենյակի պատից բերված խաչի առջև ծնրադրելու քնից ծանրացած կոպերը բացելով, Ինեսին թվաց, թե Ֆերնանդոն մեռնում է հեռվում, իսկ խաչի առջև երևացող պատկերը տեսիլք է: Մահճակալի մոտ ձգված, ձեռքերն իրար միացրած՝ գամվել էր տեղում:

— Խեղճ, դժբախտ տղա,— ասաց դողացող և համարյա խեղդված ձայնով:

Դոն Ֆերնանդոն, շարունակելով ծնկաչոք մնալ, կիսով չափ շրջվեց՝ նրան տեսնելու համար, և Ինեսին ցույց տվեց խաչը, բայց հուզմունքի մեջ մի քիչ ավելի շարժվեց: Ինեսը, որ ամբողջովին սթափվել էր, ըմբռնեց ճշմարտությունը և վաղեց դեպի փակ դուռը:

— Ինչ հանդգնութիւն,— ճշաց նա,— դուրս եկեք, դո՛ւն Ֆերնանդո:

Փախա՛վ սենյակի ամենահեռավոր անկյունը, փոքրիկ շատրվանի մոտ:

— Չմոտենաք, չմոտենաք,— նյարդային ձայնով կրկնում էր նա,— դուրս եկեք:

Առաքինութեան մաքրամաքուր կայծեր էին ճառագայթում նրա աչքերի մէջ:

— Ոչ, մինչև շուքս ինձ, դուրս չեմ գա: Երկու տարի շկարողացա մոռանալ քեզ, գիշեր-ցերեկ պատկերդ եմ կրում աչքերիս մէջ, դու չէի՞ր այս խաշի առջև երդվողը, որ ընդմիշտ իմը կլինես:

— Դուրս եկեք,— զայրացած կրկնեց նա,— այլապես կկանչեմ մարդկանց, և ձեզ էլ, ինձ էլ, կսպանեն:

Վաղեց գանգի մոտ, բայց դո՛ւն Ֆերնանդոն նրանից շուտ հասա՛վ և սեղմեց նրան գրկի մէջ: Դո՛ւն Ֆերնանդոն դողում էր, Ինեսն՝ զգաց այս ամենը և զայրույթի մէջ ամփոփած ուժերը միանգամից լքեցին իրեն: Դո՛ւն Ֆերնանդոն թուլ շտվեց, որ սիրո հուզումներն ու տվայտանքները իշխեն իր վրա, նա առաջնորդվեց պարտքի զգացումից: Ավելի շատ էր դողում, քան Ինեսը, թշնամաբար էր վարվել նրա հետ, բայց ո՛չ բարկութիւն նկատեց Ինեսի մոտ, ոչ էլ զայրույթ:

— Նշանակում է դու իմ հոգու հավերժական մահն ես տենչում,— ասաց Ինեսը,— սակայն հավատա գոնե խոսքիս. պաշտում եմ քեզ և միայն քեզ եմ սիրել: Իմ տառապալից կյանքում հարսանիքիս օրվանից չի անցել մի պահ, որ քո մասին չմտածեմ: Սարսափելի մեղք էի գործում, ամեն ինչ արեցի քեզ մոռանալու համար, բայց անօգուտ էր: Այս սուրբ խաշը, որ տեսնում ես այստեղ, անկողնուս մոտ, համարյա թե չի արտացոլում մեր Ամենափրկչի դեմքը, նա հիշեցնում է միայն Ալկոլոտի սենյակում տված երդումս, ձեռքերս դեպի իրեն կարկառած: Ախ, դատապարտված ենք մենք, դատապարտված առանց թողութեան: Ֆերնանդո,— ավելացրեց Ինեսը ինքնամոռաց,— գոնե մնացած մի քանի օրը երջանիկ լինենք:

Այս խոսքերը դո՛ւն Ֆերնանդոյի հոգում փարատեցին ամեն տեսակի վախ: Սկսվում էր նրա երջանկութիւնը:

— Ինչ, ներսում ես, դեռ սիրո՞ւմ ես ինձ...

Արագ փախչում էին ժամերը, օրը մթնում էր արդեն: Ֆերնանդոն նրան պատմեց իր հանկարծակի ներշնչման մասին, նախորդ առավոտյան տեսնելով սնդուկը: Հրապույրի պահերը չբացան մի տկնիթարթում, երբ սենյակի դռան մոտ քարձր աղմուկ լսվեց: Դոն Բլասն էր գալիս կնոջը երեկոյան զրոսանքի տանելու:

— Ասա, որ սաստիկ շոգի պատճառով քեզ վատ ես զգում,— հուշեց դոն Ֆերնանդոն Ինեսին,— ես նորից կփակվեմ սնդուկի մեջ: Ահա դռան բանալին, հակառակ կողմը պտտեցրու, ձեացրու, թե չես կարողանում բաց անել, մինչև սնդուկի կողպեքի ձայնը չլսես:

Ամեն ինչ բարեհաջող անցավ, դոն Բլասը այդ միջադեպը վերագրեց անտանելի շոգին:

— Խեղճ աղջիկ,— բացականչեց նա, ներողութուն խնդրելով հանկարծակի արթնացնելու համար: Գրկեց, տարավ անկողնու վրա, նրբագույն գզվանքներով տհաճութուն պատճառելով Ինեսին, և հանկարծ տեսավ սնդուկը:

— Սա՞ ինչ է,— ասաց խոթովելով: Ոստիկանական տնօրենի տաղանդը կարծես միանգամից գլուխ բարձրացրեց,— իմ տան մեջ այսպիսի բա՞ն,— հինգ-վեց անգամ կրկնեց նա, մինչ Ինեսը պատմում էր Սանչայի վախի և սրնդուկի մասին:— Տվեք բանալին,— խիստ տոնով պահանջեց նա:

— Չկամեցա պահել ինձ մոտ,— պատասխանեց Ինեսը,— ձեր ուղասավորներից մեկն ու մեկը կարող էր ձեռք քերել այդ բանալին, իսկ երբ այդպես վարվեցի Սանչան կարծես շատ ուրախացավ:

— Դեռ կտեսնենք,— բացականչեց դոն Բլասը,— այստեղ, ատրճանակներին արկղում, աշխարհի բոլոր փականքները բացելու հարմարանքներ ունեմ:

Մոտեցավ մահճակալի սնարին, բաց արեց զենքերով լցված մի արկղ և վերցնելով այնտեղից անդլիակահա կեռերով տրցակը, մոտեցավ սնդուկին: Ինեսը բաց արեց պատուհանի փեղկերը և կախվեց գոգին, ամեն վայրկյան պատրաստ ցած նետվելու, եթե հայտնաբերեր Ֆերնանդոյին: Դոն Բլասի հանդեպ տածած ատելության մոլուցքը Ֆերնանդոյի

ամբողջ սառնասրտութիւնը վերականգնեց: Նրա մոտ միտք ծագեց դաշույնի ծայրը պահել փականքի վրա. դոն Բլասը ապարդշուն պատեցնում էր անգլիական կեռիկները:

— Զարմանալի է,— ասաց նա բարձրանալով տեղից,— այս կեռերը երբեք չեն դաւաճանել ինձ: Սիրելի Ինես, մեր դրոսանքը հետաձգվում է, նույնիսկ քո կողքին ես ինձ երջանիկ չեմ զգա այս սնդուկի մասին մտածելով, այն ևրևի լի է հանցագործ թղթերով: Ինչպե՞ս չմտածել, որ բացակայութեանս ժամանակ թագավորից հրաման ստանալով իմ թշնամի եպիսկոպոսը չի սողսակի տունս խուղարկութեան: Գնում եմ գրասենյակ և անմիջապես կվերադառնամ գործակալներիցս մեկի հետ, նա ավելի լավ գլուխ կհանի:

Դուրս եկավ: Դոննա Ինեսը հեռացավ պատուհանի մոտից և փակեց դուռը: Զուր էր դոն Ֆերնանդոն աղաչում միասին փախչել:

— Քեզ հայտնի չէ դոն Բլասի դոնութիւնը, նա մի քանի րոպեում կարող է հաղորդակցվել Գրենադից շատ հեռու գտնվող բազմաթիւ գործակիցների հետ: Եթե իրոք կարողանայի փախչել քեզ հետ և դնալ Անգլիա: Երևակայիր, որ այս ընդարձակ տան ամենափոքր անկյունն անգամ ամեն օր ստուգման է ենթարկվում: Չնայած դրան, կփորձեմ թաքցնել քեզ: Եթե սիրում ես ինձ, խելամիտ եղիր, որովհետև քեզնից հետո ապրել չեմ կարող:

Նրանց խոսակցութիւնն ընդհատվեց դռան ուժեղ թակոցից: Ֆերնանդոն դաշույնը ձեռքին պահ մտավ դռան ետեւում: Բարեբախտաբար, Սանչան էր: Մի երկու խոսքով ամեն ինչ պատմեցին նրան:

— Բայց, տիկին, չե՞ք մտածել, որ դոն Ֆերնանդոյին թաքցնելուց հետո դոն Բլասը սնդուկը դատարկ է գտնելու: Այս կարճ ժամանակամիջոցում ի՞նչ կարող ենք լցնել այնտեղ: Բայց հուզմունքիս մեջ մոռանում եմ լավ լուր հայտնել. ամբողջ քաղաքն ալեկոծված է, իսկ դոն Բլասը՝ խիստ զբաղված: Կամավոր թագավորականներից մեկը Դոն Պետրո Ռամոսին՝ խորհրդականի պատգամավորին, Գրանդ-Պլաս սրճարանում վիրավորանք հասցնելով, սպանվել է նրա դաշույնից: Հենց նոր Պորտ դել Սուլի մոտ հանդիպեցի ոստիկանական պաշտոնյաներով շրջապատված դոն Բլասին: Թաքցը-

րեք դոն Ֆերնանդոյին, ամեն տեղ փնտրեմ ու գտնեմ Զանգային, նա կգա սնդուկը կտանի: Դոն Ֆերնանդոն թող մեջը նստի: Բայց կունենա՞նք պահանջված ժամանակը: Ուրիշ սենյակ տեղափոխեք սնդուկը, և մի լավ պատասխան գտեք դոն Բլասի համար, որպեսզի իսկույն շղաշունահարի ձեզ: Ասացեք, որ ես եմ տարել սնդուկը և ինքս եմ բացել: Կարեւորն այն է, որ զլուխներս շկորցնենք: Եթե դոն Բլասը ինձնից շուտ վերադառնա, բոլորս էլ կորած ենք:

Սանչայի երկյուղներն այնքան էլ չհուղեցին սիրահարներին, սնդուկը տեղափոխեցին մի մութ միջանցք, և ամեն մեկն սկսեց պատմել այս երկու տարվա ընթացքում անցկացրած օրերի մասին:

Այլևս որեէ հանդիմանություն չես լսի ինձանից,— ասում էր Ինեսը դոն Ֆերնանդոյին,— ամեն հարցում կհնազանդվեմ քեզ, նախազգում եմ, որ մեր կյանքը երկար չի տևելու: Պատկերացում չունես, թե դոն Բլասը ամենաշնչին պատճառից ինչպես է թունավորում իր և ուրիշների կյանքը. կհայտնաբերի, որ հանդիպել ենք և ինձ կսպանի... Իսկ ի՞նչ է սպասում ինձ այն աշխարհում,— շարունակեց նա մի պահ մտածելուց հետո,— հավերժական տանջանք,— հետո գրկեց Ֆերնանդոյին ու բացականչեց,— ամենաերջանիկ կինն եմ ես. եթե որեէ միջոց գտնես ինձ հանդիպելու, իմաց տուր Սանչային, հիշիր, որ Ինեսը քո ստրուկն է:

Ուշ գիշեր էր, երբ Զանգան եկավ սնդուկը տանելու. Ֆերնանդոն նորից էր տեղավորվել այնտեղ: Մի քանի անգամ ոստիկանական պաշտոնյաները հարցուփորձ արեցին նրան. ամեն տեղ փնտրում էին լիբերալ պատգամավորին ու շէին գտնում և ամեն անգամ թույլ էին տալիս Զանգային անցնել՝ պատասխան ստանալով, որ սնդուկը պատկանում է դոն Բլասին:

Վերջին անգամ Զանգային կանգնեցրին դերեղմանատուն մոտակայքի ամաչի փողոցում, որն առանձնացած էր տասներկու-տասնհինգ ոտնաչափ բարձրությամբ ցածրիկ պատով: Այստեղ էլ Զանգան որոշեց հանգստանալ: Ոստիկանական պաշտոնյաներին պատասխանելու ժամանակ արկղը դրեց պատին:

Վախենալով, որ դոն Բլասը կարող է ամեն վայրկյան

վերագառնալ, շատ արագ արձակեցին Ջանգալին, իսկ վերջինս Սնդուկը բարձրացնելու ժամանակ դոն Ֆերնանդոյին գլխիլձայր էր պահել: Այս դիրքում դոն Ֆերնանդոն անտանելի ցավեր էր զգում, բայց հույս ուներ շուտ տեղ հասնել: Հանկարծ զգաց, որ սնդուկը չի շարժվում, համբերությունն սպառվեց: Փողոցում ամայի լռութուն էր տիրում, ըստ իր հաշվարկների պիտի լիներ երեկոյան ժամը իննը: «Մի քանի դուկատով, — մտածեց նա, — կշահեմ Ջանգալի գաղտնապահությունը»: Ցավից պարտված՝ սկսեց շատ ցածր ձայնով խոսել նրա հետ:

— Սնդուկը շրջի՞ր հակառակ կողմը, այս դիրքով շատ եմ տանջվում:

Բնունակիրը, որ այս անպատեհ ժամին, դերեզմանատան պատին հենված, առանց այն էլ բավական հուզված էր, սոսկաց ականջին այլրան մոտ ինչ-որ ձայն լսելով: Նրան թվաց ուրվական է, և որքան ուժ ուներ սաքերում, փախավ: Սնդուկը մնաց պատի վրա ցցված: Գոն Ֆերնանդոյի ցավերն ուժգնանում էին: Ջանգալից պատասխան չստանալով, հասկացավ, որ լքված է: Որոշեց բացել սնդուկը, ուժեղ ցնցեց և պատի վրայից գլորվեց գերեզմանատուն:

Ցնցումից պիտակցությունը կորցնելով՝ դոն Ֆերնանդոն ուշքի եկավ մի քանի րոպե անց: Գլխավերևում աստղիկներ էին շողշողում, ընկնելու ժամանակ կողպեքը բացվել էր, ինքը գլորվել էր նոր փորված գերեզմանաթմբի վրա: Անմիջապես մտածեց ինեսին սպառնացող վտանգի մասին, այս մտքից վերականգնվեցին ուժերը: Արնաշաղախ մարմինն ամեն կողմից ճզմված էր, մի կերպ վեր կացավ և կամաց-կամաց սկսեց քալել: Շատ տանջվեց գերեզմանատան պատի վրայով անցնելու համար և մեծ դժվարությամբ հասավ Սանչայի մոտ: Տեսնելով արնաթաթախ Ֆերնանդոյին, Սանչան մտածեց, որ նա դոն Բլասի ձեռքն է ընկել:

Բայց եղելությունն իմանալուց հետո Սանչան ծիծաղեց.

— Պետք է խոստովանել, որ լավ գործ բացեցինք մեր զրլխին:

Ի վերջո եկան այն եզրակացության, որ օգտվելով գիշերվա խավարից, պետք է սնդուկը մի կերպ դուրս բերել գերեզմանատնից:

— Վերջ կլինի դոննա Ինեսի կյանքին, ինչպես նաև՝ իմին,— ասաց Սանչան,— եթե դոն Բլասի լրտեսներից մեկը վաղը հայտնաբերի այդ անիծյալ սնդուկը:

— Անկասկած, արյան հետքեր էլ կան այնտեղ,— ավելացրեց Ֆերնանդոն:

Ջանդան միակ մարդն էր, որին կարելի էր այնտեղ ուղարկել: Նրա մասին էին խոսում, երբ դուռը թակելով ներս մտավ ու զարմացավ, երբ Սանչան ասաց:

— Գիտեմ ինչ ես ասելու: Մարսանենդային ապրանքներով սնդուկս անտեր-անտիրական թողել ես գերեզմանատանը: Հավանական է, որ այսպիսի բան տեղի ունենա. այս երեկո, կամ վաղն առավոտյան դոն Բլասը քեզ հարցաբնության կկանչի:

— Վայ, կորած եմ,— ճշաց Ջանգան:

— Կփրկվես, եթե պատասխանես, որ հավատաքննության պալատից սնդուկն ուղղակի բերել ես ինձ մոտ:

Ջանգան շատ վրդովված էր զարմուհու ապրանքները կորցնելու համար, բայց ուրվտիանից էր վախեցել, վախենում էր դոն Բլասից, նա ի վիճակի չէր նույնիսկ ամենապարզ հարցերը բնկալել: Սանչան հատ-հատ կրկնում էր այն բոլոր նախադասությունները, որ պատասխանելու էր ուստիկանական տնօրենի հնարավոր հարցերին, այնպիսի պատասխաններ, որ ոչ որի չվնասեին:

— Ահա քեզ տասը դուկատ,— ասաց դոն Ֆերնանդոն միանգամից հայտնվելով,— բայց եթե նույնությամբ չկրկնես այն, ինչ ասաց Սանչան, միայն այս դաշույնով կմեռնես:

— Իսկ դուք ո՞վ եք; սինյոր,— ասաց Ջանգան:

— Մի դժբախտ նե գրո, որին հետապնդում են կամավոր թագավորականները:

Ջանգան կորցրել էր զլուխը, սարսափը կրկնապատկվեց, երբ դոն Բլասի պաշտոնյաներից երկու հոգի ներս ընկան: Նրանցից մեկը բռնեց Ջանգային և անմիջապես տարավ պետի մոտ: Մյուսը պարզապես եկել էր Սանչային հայտնելու, որ հավատաքննության պալատ են կանչում իրեն. գործն այստեղ այնքան էլ բարդ չէր: Սանչան կատակեց նրա հետ և պարտադրեց համտեսել Ռանչիոյի հրաշալի գինին: Ուղում էր նրանից գաղտնիքներ կորզել, որ դոն Ֆերնանդոն թաքըս-

տոցից լսեր ու տեղեկանար անցուդարձի մասին: Ոստիկանական պաշտոնակատարը պատմեց, որ Զանգան, ուրվականից վախեցած, մեռելի նման դույնը զցած, մտել էր կաբարե և պատմել էր իր հետ կատարվածի մասին: Լրտեսներից մեկը, որին հանձնարարված էր գտնել թագավորականին սղանող նեգրոյին, կամ, ինչպես ասում են, լիբերալին, զբռնելու էր այդ նույն կարարեում և վստիկով գնացել էր դոն Բլասին ղեկուցելու:

— Բայց մեր տնօրենը, որ աշալուրջ մարդ է,— ավելացրեց պաշտոնակատարը,— անմիջապես ենթադրեց, թե Զանգան գերեզմանատանը լսել է նեգրոյի ձայնը: Ինձ ուղարկեց սնդուկը վերցնելու, բաց էր և արյունով ներկված: Դոն Բլասն, այդ տեսնելով, նախ շատ զարմացավ, հետո անմիջապես ինձ ուղարկեց այստեղ: Գնանք:

«Ինեսն ու ես կորած ենք,— ճանապարհին ոստիկանական պաշտոնյայի կողքով քայլելիս մտածում էր Սանչան,— դոն Բլասը ճանաչել է սնդուկը. համոզված է, որ օտար մարդ է թափանցել իր տունը»:

Մութ գիշեր էր: Սանչան մտածեց փախչել: «Բայց ոչ,— մտածեց նա, ստորուլթյուն կլինի լքել միամիտ դոննա Ինեսին: Հիմա երեի չի կարողանում սլառասխանել ամուսնու հարցերին:

Հասնելով հավատաքննության պալատ, շատ զարմացավ, երբ իրեն ուղեկցեցին կորորդ հարկ՝ Ինեսի սենյակը: Կարծես շարագուշակ բեմահարթակ էին կառուցել. սենյակը շափից ավելի էր լուսավորված: Տեսավ դոննա Ինեսին՝ սեղանի մոտ նստած, դոն Բլասը կանգնած էր կողքին, իսկ շարաքաստիկ սնդուկը բաց ընկած էր նրանց առջև, արնաշաղախ: Երբ Սանչան ներս մտավ, դոն Բլասն զբաղված էր Զանգային հարցաքննելով: Նույն բույեին նրան դուրս տարան:

— Տեսնես՞՞ ի՞նչ է,— մտածեց Սանչան,— կարողացե՞լ է ճիշտ պատասխաններ գտնել: Դոննա Ինեսի կյանքը նրա ձեռքին է:

Համոզվելու համար նայեց դոննա Ինեսին, նրա աչքերում միայն հանդստուլթյուն ու հպարտության արտահայտություն նկատեց: Զարմացավ: «Այս վախկոտ կնոջ մատ որտեղի՞ց

այսքան քաջութիւն»։ Դոն Բլասի հարցերին տված առաջին իսկ պատասխանից Սանչան զգաց, որ սովորաբար իրեն այնքան լավ տիրապետող այդ տղամարդը ինչպե՞զարի պէս է պահում իրեն. վերջինս միայն մի բառ ասաց.

— Պարզ է։

Դոննա Ինեսն ու Սանչան անկասկած լսեցին այս բառը, քանի որ պարզորոշ էր արտասանել։

— Մոմերը շատ-շատ են, սենյակը հնոցի են վերածել,— ասաց Ինեսը և մտեցավ լուսամուտին։

Մի քանի ժամ առաջ արդեն Սանչային պարզ էր նրա ծրագիրը, հասկացավ այդ շարժումի իմաստը։ Հանկարծ ձևացրեց, թե ուժեղ ջղաձգումների մեջ է.

— Այս մարդիկ ուզում են ինձ սպանել, որովհետեւ փրկել եմ զոն Պեդրո Ռամոսին,— և ուժեղ բռնեց Ինեսի դաստակից։

Ջղային կեղծ ցնցումների մեջ Սանչայի կիսատ-պռատ արտասանած բառերից կարելի էր եզրակացնել, որ երբ Զանգան ապրանքներով լի սնդուկը տուն էր բերել, արնաշաղախ մի մարդ, դաշույնը ձեռքին, ներխուժել էր իր սենյակը։

— Կամավոր թագավորական եմ սպանել,— ասել էր նա,— մեռնողի բնկերը ինձ է փնտրում։ Եթե չփրկեք, ձեր աչքի առջև կմորթեն ինձ...

— Ախ, տեսք արյունը, ձեռքիս վրա է,— ճշաց Սանչան կարծես ինքն իրեն կորցրած,— ուզում են ինձ սպանել։

— Շարունակեք,— սառնորեն ասաց զոն Բլասը։

— Դոն Ռամոսն ինձ ասաց. «Հիերոնիմիտների վանքի վանահայրը իմ քեռին է, եթե կարողանամ վանք հասնել, փրկված եմ»։ Դողում էի Տեսավ սնդուկը, որտեղից հանում էի անգլիական վերջին քողերս։ Հանկարծ այնտեղից դուրս շարտեց մնացած կապոցները և տեղավորվեց սնդուկի մեջ։ «Կողպեցեք սնդուկը,— գոռաց նա,— և ասացեք, որ տանեն Հիերոնիմիտների վանքը, ժամանակ մի կորցրեք»։ Մի բուռ դուկատ նետեց իմ առջև, ա՛հա դրանք, ամբարիշտության վարձն է, նողկանք եմ զգում դրանցից...

— Թո՛ղ ստերդ,— գոռաց զոն Բլասը։

— Վախեցա, եթե շնազանգվեի, կսպաներ ինձ,— շարունակեց Սանչան,— ձախ ձեռքից բաց չէր թողնում դա-

շույնը, որից դեռ կաթում էր խեղճ կամավոր թագավորակա-
նի արյունը: Վախեցա, խոստովանում եմ, կանչել տվի Ջան-
գային, վերցրեց սնդուկը և բերեց վանք: Ես...

— Այլևս ոչ մի խոսք, այլապես կմեռնեք,— ասաց դոն
Բլասը, որ համարյա գուշակում էր, թե Սանչան ուզում է
ժամանակ շահել:

Դոն Բլասի մեկ նշանի վրա գնացին Ջանգային բերելու:
Սանչան նկատեց, որ անդգա դոն Բլասը այլևս չի տիրապի-
տում ինքն իրեն, կասկածում է այն անձնավորությունը, որին
հավատարիմ է կարծել երկու տարի շարունակ: Հեղձուցիչ
օղբ կարծես ճնշում էր դոն Բլասին, բայց հենց որ նկատեց
ոստիկանական պաշտոնյաների ուղեկցությամբ ներս մտնող
Ջանգային, կատաղած նետվեց նրա վրա, սեղմելով թևը:

Ճակատագրական պահը հասավ,— մտածեց Սանչան,—
այս մարդն է որոշելու զոհնա Ինեսի և իմ կյանքի ընթացքը:
Անձնուրաց կերպով նվիրված է ինձ, բայց քանի որ այս
իրիկվա դեպքերի առիթով սարսափահար է եղել՝ մի կողմից
ուրվականը, մյուս կողմից դոն Բլասի գաշույնը, աստված
գիտե, թե ինչեր է գուրս տալու»:

Դոն Բլասի տեսքից Ջանգան այնպես էր ցնցված, որ
սարսափած աչքերով նայում էր նրան առանց պատասխա-
նելու:

— Ախ, աստված իմ, ճշմարտությունը կորզելու համար
հիմա երգվել կտան նրան,— մտածում էր Սանչան,— իսկ նա
ծայրահեղ բարեպաշտ անձնավորություն է, երբեք չի
ստի:

Դոն Բլասը, որ իր պաշտոնավայրում չէր, մոռացավ վկա-
յին երգվեցնել: Ահեղ վտանգը, կամ Սանչայի հայացքը, մի-
գուցե իր իսկ սարսափի ուժգնությունն էր հրեկի պատճառը,
որ Ջանգան ուշքի եկավ և սկսեց խոսել: Այս ամենը ինչի՞ն
վերագրել, զգուշավորությա՞նը, թե՞ իրական հուզումին, բայց
նրա պատմությունը շատ խրթին դուրս եկավ: Ասում էր, որ
Սանչան պատվիրել է իրեն ոստիկանական սնօրենի պալա-
տից ետ բերել սնդուկը, որն այս անգամ ավելի ծանր էր
թվացել իրեն: Հոգնությունից ուժասպառ եղած, գերեզմա-
նատան կողքով անցնելու ժամանակ արկղը հենել էր պա-
տին: Աղաչական մի ձայն էր հասել ականջին, փախել էր:

Դոն Բլասն իր հարցերով տանջահար էր անում նրան, բայց կարծես ինքն էլ էր ուժասպառ եղել: Ընդհատեց հարցաքննությունը դիշերվա ժամը մեկին, հաջորդ օրը շարունակելու պայմանով: Ջանդաջի հարցը դեռ լուծված չէր: Սանչան խնդրեց Ինեսին թույլ տալ իրեն նրա սենյակին կից աշխատասենյակում քնել, որ ժամանակին զբաղեցնում էր: Հավանաբար դոն Բլասը չլսեց: Ինեսը շատ էր վախենում դոն Ֆերնանդոյի համար: Գնաց Սանչայի մոտ:

— Դոն Ֆերնանդոն ապահով է: Բայց, տիկին,— շարունակեց Սանչան,— ձեր կյանքն ու իմ կյանքը մի թելից են կախված: Դոն Բլասը կասկածներով է լցված: Առավոտյան լրջորեն կսպառնա Ջանդաջին և նրա խոստովանահոր՝ վանականի միջոցով. կխոսեցնի նրան, իսկ վանականը մեծ իշխանություն ունի նրա վրա: Իմ խոսքերը միայն առաջին պահերը կարող են փրկել:

— Կալ, դու փախիր, սիրելի Սանչա,— սովորական քնքշությունք խոսեց Ինեսը, նա ամենևին հուզված չէր իրեն սպառնացող վտանգի համար, որ մի քանի ժամ հետո պիտի որոշեր ճակատագիրը,— թույլ տուր մենակ մեռնեմ: Կմեռնեմ երջանիկ, Ֆերնանդոյի պատկերն ինձ հետ է: Կյանքն այնքան էլ մեծ հատուցում չէ հանուն այն երջանկության, որ ապրեցի երկու տարվա դադարից հետո: Հրամայում եմ, իսկույն հեռացիր: Կիջնես մեծ բակի կողմից և կթաքնվես դռան ետևում: Հուսով եմ, կփախչես: Միայն մի բան եմ խնդրում, այս աղամանդներով խաչը հանձնիր դոն Ֆերնանդոյին և ասա նրան, որ մեռնելիս օրհնում եմ այն միտքը, որ ծագեց նրա զլխում Մաժորկ վերադառնալու ժամանակ:

Արշալույսին, երբ հնչեցին ժամերգության դանդերը, դոննա Ինեսը արթնացրեց ամուսնուն և ասաց, որ գնում է Կլարիսների վանք, պատարագի առաջին մասը լսելու: Չնայած իր տան մեջ կատարվող անցուդարձին, դոն Բլասը ոչինչ չասաց, բայց ուղարկեց նրան շորս ծառաների ուղեկցությամբ:

Հասնելով եկեղեցի, Ինեսը կանգնեց միանձնուհիների ճաղապատ դռան մոտ: Քիչ հետո դոն Բլասի ծառաները, որոնց հսկողությանն էր հանձնված Ինեսը, տեսան, թե ինչպես բացվեցին ճաղապատ դռները և դոննա Ինեսը, ներս մտնելով,

հայանեց, որ գաղտնի ուխտով միանձնուհի է դարձել և երբեք զուրս չի գալու վանքից: Դոն Բլասը պահանջեց կնոջը, բայց արքայուհին արդեն հասցրել էր զեկուցել եպիսկոպոսին:

Եկեղեցական առաջնորդը հայրաբար պատասխանեց զոն Բլասի պայտույթին.

— Անկասկած, շատ հոշակավոր դոննա Ինես Բուստոսի Մոսկերան զույղն իրավունք շունի նվիրվելու բարձրյալին, եթե ձեր օրինական կինն է, բայց դոննա Ինեսը գտնում է, որ իր սմուսնական հարցում անճշտություններ են եղել:

Մի քանի օր հետո, երբ դեռ շարունակվում էր Ինեսի ամուսնալուծության դատավարությունը, նրան գտան անկողնում՝ դաշույնի բազմաթիվ հարվածներից խոցված: Իսկ հորն ու դոն Ֆերնանդոյին, որոնց զոն Բլասը մեղադրում էր զավադրության մեջ, պխատեցին Գրենադի հրապարակում:

ԼՌՆԵՍՏԻՆ ԿԱՄ ՍԻՐՈ ԾԱԳՈՒՄԸ

Ազդարարություն

Մի կին, որը կյանքի մեծ փորձ ուներ, մի օր սկսեց պնդել, թե սերը, ինչպես շատերն են ասում, միանգամից չի ծնվում:

«Ես կարծում եմ,— ասում էր նա,— և համոզված եմ իմ հայտնագործության մեջ, որ սիրո ծագման հարցում գոյություն ունեն իրարից խիստ տարբեր յոթ ժամանակաշրջաններ»: Եվ ասածը հաստատելու համար առաջարկեց լսել մի պատմություն:

Գյուղում էինք: Դուրսը հորդ անձրև էր տեղում: Շատ ուրախացանք, որ պատմություն ենք լսելու:

Գյուղի ծայրին առանձնացած գղջակի մեջ ապրող դեռատի աղջկա անտարբեր հոգում ամենափոքր միջադեպն անգամ մեծադույն հետաքրքրություններ կարող է ծնել: Օրինակ՝ Լրիտասարդ որսորդի հանկարծակի հայտնվելը գղջակի մոտակա անտառում:

Նման սովորական դեպքով էլ սկսեց էռնեստին զը Ս...-ի դժբախտությունը: Նա ապրում էր մեն-մենակ, ծերունի հորեղբոր՝ կոմս զը Ս...-ի հետ, Դրակի հորձանուտի տփին, գետի հոսանքը փշրող հսկա ժայռերից մեկի վրա ամրացած միջնադարյան գղջակում, որն իշխում էր Դոֆինեի* հրաշալի տեսարանին: Էռնեստինը ենթադրեց, թե պատահաբար հայտնված որսորդը աղնվական է: Շատ անգամներ երիտասարդի պատկերը վերամարմնավորվեց նրա ուղեղում. և հետո

ինչի՞ մասին կարելի է երազել այս հինավուրց կացարանում: Էռնեստինն ապրում էր ճոխության մեջ մխրճված, հրամայում էր անթիվ սպասավորների, սակայն քսան տարուց ի վեր, ինչ զղյակի տերն ու մնացած բնակիչները ծերացել էին, ամեն ինչ այստեղ կատարվում էր տեղը-տեղին, խոսում էին միայն կատարված իրողությունները պարստվելու համար և արևմտում ամենապարզ գեպքերի առիթով: Գարնանային մի երեկո, երբ օրն իր ավարտին էր հասնում, էռնեստինը, պասուհանի առջև նստած, գիտում էր մոտակա լճակն ու անտառը. գուցե տեսարանի աննկարագրելի գեղեցկությունն էր նրան մղում տխուր երազների անձնատուր լինելու: Հանկարծ կրկին տեսավ այն երիտասարդ որսորդին, ծաղկեփունջը ձեռքին, որին մի քանի օր առաջ արգեն նկատել էր մոտակա լճակի շուրջը սարածված փոքրիկ անտառում: Կանգ առավ, որսորդը կարծես իրեն էր նայում, և աղջիկը տեսավ, թե ինչպես նա համբուրեց ծաղկեփունջը ու նուրբ ակնածանքով տեղավորեց լճափին վեր խոցացող հսկա կաղնու փշակի մեջ:

Եվ այս աննշան գիպվածը ինչպիսի՞ մտքեր ծնեց նրա հոգում, կենսախինգ հետաքրքրություն ինչպիսի մտքեր էին դրանք, երբ համեմատում ենք այն միալար մտորումների հետ, որոնցով մինչ այդ հագեցած էր էռնեստինի կյանքը: Նոր կացություն է սկսվում նրա համար. կհամարձակվի՞ արդյոք վերցնել ծաղկեփունջը: «Աստված իմ, ինչպիսի՞ անզգուշություն,— մտածեց նա ցնցվելով,— հսկա կաղնուն մոտենալու ժամանակ եթե երիտասարդ որսորդը մոտակա անտառից դուրս գա և տեսնի ինձ. ի՞նչ ամոթ: Ի՞նչ կմտածի իմ մասին»: Իսկ գեղեցիկ ծառը միայնակ դրոսանքներով ժամանակ անընդհատ ձգում էր աղջկան, նա հաճախ էր գնում նստելու նրա հսկայական արմատների վրա, որոնք դուրս էին եկել խոտերի միջից՝ պատսպարվելու վիթխարի ծառի լայնատարած սաղարթի հովանու ներքո, և բնի շորս կողմը կարծես բնական նստարաններ էին կազմել:

Ամբողջ գիշեր աչք չփակեց էռնեստինը: Հաջորդ օրը, առավոտյան ժամը հինգին, երբ արշալույսը հագիվ էր գեմբի բողբոջ քայտի, նա բարձրացավ զղյակի աշտարակը: Հայացքով փնտրեց մոտակա լճակի հսկա կաղնին: Նկատելուն

պես անշարժ մնաց տեղում, մինչև իսկ կարծես շունչը կտրրվեց: Հուզաբուրբոք երջանկությունը հաջորդում էր առաջին երիտասարդության անհիմն ու համարյա աննպատակ կենսախնդրությունը:

Անցավ մեկուկես շաբաթ, էճնեստինը հաշվում էր օրերը: Միայն մեկ անգամ տեսավ երիտասարդ որսորդին. նա մոտեցավ իր սիրելի ծառին և առաջվա պես ծաղկեփունջը դրեց նույն տեղում: Մերունի կոմսսը Ս...-ն նկատել էր, որ եղբոր աղջիկն առանձնանում է զղյակի աշտարակում և ժամանակն անց է կացնում թուշունների վանդակի մոտ, սակայն պատճառն այլ է: Փոքրիկ լուսամուտի առջև նստած՝ փակ փեղկերի ետևից էճնեստինը տեսնում է մոտակա լճափին փռված փոքրիկ անտառն իր սղջ տարածքով: Նա վստահ է, որ անծանոթը չի նկատի իրեն, և այսպիսով, հանգիստ կարող է մտածել նրա մասին: Ուղեղում ծագած միտքը սկսում է տանջել աղջկան. եթե երիտասարդը տեսնի, որ իր ծաղկեփնջերը ուշադրության չեն արժանանում, կմտածի, թե արհամարհում են իր հարդալից վերաբերմունքը, որն, ի վերջո, սովորական քաղաքավարություն է, և եթե նա վեհ հոգու տեր մարդ է, ալլևս չի հայտնվի այս կողմերում: Անցնում է ևս շուրս օր, սակայն որքան դանդաղ: Հինդերորդ օրը, պատահաբար, հսկա կաղնու կողքով անցնելիս երիտասարդ աղջիկը չի կարողանում դսպել գայթակղությունը և մի հայացք է նետում փոքրիկ փշակի մեջ, որտեղ պետք է ծաղկեփնջերը լինեն: Դայակն այստեղ է. վախենալու պատճառ շունի: Էճնեստինը կարծում է թառամած ծաղիկների կգտնի այնտեղ: Աննկարագրելի է ուրախությունը. հազվագյուտ ծաղիկներ են դրանք, գեղեցիկներից ամենագեղեցիկը. շացուցիչ թարմ ծաղկեփնջի մեջ ոչ մի պսակաթերթ, նրբադույնն անգամ, չի թռչնել: Այս ամենին գողունի նայելուց հետո, դայակին շկորցնելով հայացքից, եղնիկի թեթևությամբ վազում է անտառով մեկ, ծառի շուրջը՝ հարյուր քայլ հեռավորությամբ: Ոչ ոք չկա շրջապատում: Վստահ լինելով, որ չեն հետևում իրեն, վերադառնում է հսկա կաղնու մոտ և համարձակվում է հիանալ դեղեցիկ ծաղկեփնջով: Օ՛, երկնային արքայություն, ծաղկեփնջին կասկած է փոքրիկ, հազիվ նկատելի թղթի մի կտոր:

— Ի՞նչ պատահեց, սիրելի էռնեստին,— հարցնում է վախեցած դայակը, լսելով նրա ճիշը, որ դուրս է թռել հայտնության պատճառով:

— Ոչինչ, բարի դայակ, ոտքերիս տակից լորիկ թռավ:

Տասնհինգ օր առաջ էռնեստինի մտքով անգամ չէր անցնի ստել: Նա կամաց-կամաց մոտենում է հրաշալի ծաղկեփրնջին, հակում է գլուխը, շառագունել են այտերը, կարծես բռնկվել են կրակով. շհամարձակվելով դիպչել թղթի կտորին, հեռվից է կարգում բովանդակությունը.

«Ահա մեկ ամիս է, ամեն առավոտ ծաղկեփունջ եմ բերում: Արդյոք այս մեկը նկատվելու կրջանկությունը կարժանանա՞»:

Երկտողում ամեն ինչ հրաշալի է, աջ թևքված հապճեպ ձեռագրով շարված բառերը խիստ վաշելուչ են: Չորս տարվա բնթացքում, ինչ դուրս է եկել Փարիզի Սեն-Փերմեն արվարձանի ամենահայտնի վանքից, էռնեստինը ավելի գեղեցիկ քան շի տեսել: Այտերը շիկնում են, մոտենում է դայակին և ստիպում է անմիջապես վերադառնալ զղջակ: Հնարավորին շափ շուտ հասնելու համար էռնեստինը սովորականի պես հովիտ դուրս գալու և լճակի շուրջը պտույտ գործելու փոխարեն, դեպի կամրջակ հասնող արահետն է բռնում. այն ուղիղ գծով զղջակ է տանում: Մտադրաղ է, ինքն իրեն խոստանում է այլևս այդ կողմերում չերևալ, նա վերջնականապես համոզված է, որ ինչ-որ մեկը համարձակվել է հենց իրեն հասցեագրել այդ սիրատոմսը: «Բայց և այնպես ծալված չէր»,— խոսում է նա մտովի: Այդ պահից սկսած ալեկոծվում է նրա կյանքը տաժանելի մտահոգություններից: Ինչ է, ուրեմբն հեռվի՞ց էլ չի կարող դիտել իր սիրելի ծառը: Պայքարի մեջ է մտնում պարտքի զգացման հետ: «Եթե լճակի մյուս ափը գնամ,— մտածում է նա,— այլևս չեմ կարող հույս գնել խոստումներիս վրա»: Ժամը ութին, երբ դռնապանը կամրջակի կրկաթյա ցանկապատն էր փակում, լսելով ճռոտքը, կտրծես միանգամից փարատվեցին բոլոր տեսակի վախերը նրա հոգում, և կտրծքը ճնշող հսկայական բեռից ազատեցին իրեն. հիմա արդեն այլևս չի թերանա պարտականությունների մեջ, եթե նույնիսկ իրեն շտիրապետելու լուրջությունն ունենա:

Հաջորդ օրը ոչինչ գուրս չբերեց նրան մթամած խոհերից-
ընկճված է, գեմքին գալուկն է պատել, նկատում է նաև
հորեղբայրը: Նա հնասճ կառքին ձիեր է լծել տալիս, գբոս-
նում են շրջակայքում, հասնում մինչև այն մեծ խճուղին, որ
տանում է Երեք վերստ հեռու գտնվող տիկին Դախսենի զըղ-
յակը: Վերադարձին կոմս Ս...-ն հրամայում է կանգ առնել
լճափին, մոտիկ անտառում: Կառքն առաջ է ընթանում կա-
նաչ խոտերի վրայով, կոմսն ուզում է տեսնել հսկա կաղ-
նին, որին համարում է Կառլոս 5-րդի ժամանակակիցը:

— Այդ մեծ աիրակալը,— ասում է նա,— Երբ Հոմբարդիա
էր գնում Դիդիե արքայի հողերը գրավելու, մեր լեռներով ան-
ցավ, նա տեսել է այս ծառը:

Եվ երկարակեցութունը վկայակոչելով՝ ութսունամյա ծե-
րունին կարծես երիտասարդանում է, էռնեստինը մտքով հե-
ռոններն է թափառում, անկարող է հետևել հորեղբոր պատ-
մության ընթացքին: Նրա այտերն այրվում են. ուրեմն մեկ
անգամ ևս պիտի դնա ծեր կաղնու մոտ, ինքն իրեն խոստա-
նում է շնայել փոքրիկ թաքստոցի մեջ: Ակամա, առանց մտա-
ծելու, աչք է պցում այնտեղ, տեսնում է ծաղկեփունջը և
գունատվում: Սև երիզանախշերով վարդեր կան փշա-
կում:

«Նա շատ դժբախտ ևմ, պեաք է ընդմիշտ հեռանամ: Նա,
որին սիրում ևմ, չի ցանկանում նկատել իմ մեծարանքը»:

Սրանք են այն բառերը, որ գծագրվել են ծաղկեփունջին
ամրացած փոքրիկ թղթի վրա: էռնեստինը, շկարողանալով
արգելել իրեն, նայում է այնտեղ և կարդում երկտողը: Եվ
այնպես է թուլանում, որ ստիպված է հենվել ծառին: Ար-
ցունքները հոսում են հեղեղի պես: Երեկոյան նա խոսում է
անձայն, ինքն իր հետ. «Կհեռանա ընդմիշտ և այլևս նրան
չեմ տեսնի»:

Հաջորդ օրը, ճիշտ կեսօրին, օդոստոսյան արևի ներքո,
Երբ հորեղբոր հետ դբոսնում էր սոսիների ծառուղում, լճա-
կի ափին նկատում է հսկա կաղնուն մոտեցող երիտասարդին.
Նա վերցնում է ծաղկեփունջը, նկատում լճի մեջ և անհետա-
նում: էռնեստինը մտածում է, որ նման վարմունքով նա
անտեսում է իրեն և իսկույն համոզվում է դրանում: Զարմա-
նում է, որ մի վայրկյան իսկ կասկածել է այդ հարցում,

անտարակույս արհամարհված զգալով իրեն՝ երիտասարդը իրոք հեռանալու է, և այլևս երբեք չի տեսնի նրան:

Բոլորն անհանդստացած են. դոյակի ուրախությունն է էռնեստինը, հորեղբայրը բարձրաձայն իր կարծիքն է հայտնում. աղջիկը նկատելիորեն կորցրել է հանգիստը, դիմադժերի ակնհայտ կծկվածությունը, որտեղ դժագրվում է առաջին երիտասարդության մեղմ զգացմունքը, այժմ տակնուվրա է արել նրա անմեղ դեմքը: Երեկոյան զբոսանքի ժամին էռնեստինը ամենևին չի առարկում, որ հորեղբայրն ուղեկցի իրեն մոտակա լճակի կանաչ բացատը: Այնտեղից անցնելու ժամանակ տխուր աչքերով, որ քիչ է մնում արցունքներ թափվեն, նայում է երեք ոտնաչափ դետնից բարձրացած փոքրիկ թաքստոցին, անշուշտ այնտեղ ոչինչ չհայտնաբերելու համոզմունքով: Նա պարզորոշ տեսել էր, թե ինչպես էր որսորդը ծաղկեփունջը նետել լճի մեջ: Բայց, ո՞վ դարձանք, այնտեղ ուրիշ փունջ կա:

«Ի սեր իմ մեծ դժբախտության, հաճեցեք վերցնել ձերմակ վարդը»:

Կարդալով այդ դարմանահարաշ բառերը, ձեռքն անգիտակցաբար դուրս է քաշում ծաղկեփնջի մեջտեղում զետեղված ձերմակ վարդը: «Ուրեմն շատ դժբախտ է»,— մտածում է նա: Այդ պահին հորեղբայրը կանչում է նրան, էռնեստինը դնում է նրա ետևից. կրջանիկ է:

Ձերմակ վարդը պահել է բատիստե փոքրիկ թաշկինակի մեջ, իսկ բատիստե այնքան նուրբ է, որ զբոսանքի ողջ տեվողության բնթացքում աղջիկը կարող է թափանցիկ կտորի տակից տեսնել վարդի գույնը. թաշկինակն այնպես է պահել, որ սիրելի վարդը չթառամի:

Տուն հատնելուն պես աստիճաններով արագ բարձրանում է մինչև դոյակի ամենաձայրի փոքրիկ աշտարակը: Վերջապես համարձակվում է տղատ նայել սաշտելի վարդին և հագեցնել հայացքը մեղմ արցունքի միջից, որ թափվում է աչքերից:

Ի՞նչ են նշանակում այս արցունքները: էռնեստինը չի հասկանում: Եթե կարողանար կռահել, թե այդ ինչ զգացմունք է նրանց ցած բերում, քաջություն կունենար զոհա-

բերել իր վարդը, որ մեծ խնամքով տեղավորում է փորրիկ կարմիր փայտե սևղանի վրա դրված թանկարժեք բյուրեղապակյա բաժակի մեջ: Բայց որքան էլ ընթերցողին ցավ պատճառի այն հանգամանքը, որ ինքն այլևս քսան տարեկան չէ, կգուշակի անշուշտ, որ ցավի հետ առնչություն չունեցող այդ արցունքները անսահման երջանկության հանկարծահաս տեսիլի անբաժան ուղեկիցներն են, որոնք կարծես ուզում են ասել. «Որքան լավ է սիրված լինելը»: Այնպիսի վիճակ է դա, որ կյանքի առաջին երջանկության հրապույրին չկարողանալով դիմադրել, էճնեստիկներ սխալվում է, նրա բանականությունը մոլորության մեջ է ընկել, երբ վերցրել է ծաղիկը: Բայց նա ի վիճակի չէ դեռևս զգալու և պախարակելու այդ անգիտակից քայլը:

Մեզ՝ ավելի քիչ երևակայություն ունեցողներին, ծանոթ է սիրո առկայության երրորդ շրջանը՝ հույսի հայտնությունը: Վարդը տեսնելով, էճնեստիկը չգիտե սիրտն ինչու է ասում. «Այժմ կասկած չկա, սիրում է ինձ»:

Բայց մո՞տ է արդյոք ճշմարտությանը: Մի՞թե էճնեստիկի սրտում բուն է դրել սերը: Այս զգացմունքը չի՞ բախվում արդյոք ամենապարզ դատողության կանոնների հետ: Ինչ, ընդամենը երեք անգամ է տեսել այդ մարդուն, և այժմ նա իրենից ջերմ արցունքներ է քամում: Նույնիսկ տեսել է նրան լճակի հանդիպակաց ափին, հինդ հարյուր քայլ հեռավորության վրա: Եթե առանց հրացանի և որսորդական զգեստի հանդիպեր նրան, չէր ճանաչի: Չգիտե անունը, նրա ով լինելը, այնինչ ջերմ զգացմունքները սնվում են անցնող օրերի մեջ, որոնց նկարագրությունը ստիպված եմ կրճատել, քանի որ վեպ ստեղծելու մտադրություն չունեմ: Նման զգացմունքները միայն այսպիսի մտքի արդյունք կարող են լինել. «Ինչ մեծ երջանկություն է սիրված լինելը», կամ դառնում են այսպիսի հարցերի քննարկման առարկա, որը դարձյալ շատ կարևոր է. «Կարո՞ղ եմ հույս փայփայել, որ ճշմարիտ սիրով կսիրվեմ: Նրա կողմից արդյոք խաղ չէ՞, երբ ասում է, թե սիրում է ինձ»: Չնայած էճնեստիկը Լեդիգիերների* կառուցած գղջակի բնակիչներից է և սերում է հռչակավոր զորապետի ամենաարի գինակիցների ընտանիքից, բնավ չի անդրադառնում նման հակասական հնարավորության. «Գուցեև հարե-

վան գյուղացու որդի է»։ Ինչո՞ւ, էոնեստինն ապրում է անսահման մենակության մեջ։

Անկասկած, էոնեստինը շատ հեռու էր իր հոգում իշխող զգացմունքների բնույթը ճանաչելուց։ Եթե կարողանար կռահել, թե ուր են առաջնորդում այդ զգացմունքները, երջանիկ կլիներ, դուրս գալով դրանց իշխանության ոլորտից։ Երիտասարդ գերմանուհին, անգլուհին, իտալուհին անմիջապես կզգային իսկական սերը, մեր խելամիտ դաստիարակությունը կողմնակից է ժխտելու սիրո առկայությունը երիտասարդ աղջիկների մոտ։ Էոնեստինը հեռավոր տափնապ էր զգում այն ամենի հանդեպ, որ կատարվում էր իր հոգում։ Երբ խորությամբ էր մտածում այդ մասին, միայն պարզ ընկերություն էր տեսնում։ Նա ընդամենը մեկ վարդ էր վերցրել և պատճառն այն էր, որ այդպես շվարվելու դեպքում կարող էր կորցնել ու վշտացնել իր նոց բարեկամին։ «Եվ հետո,— երկար մտածելուց հետո եզրակացնում էր նա,— չպետք է անբաղաքավարի լինել»։

Ամենաբուռն զգացմունքներից տակնուվրա է եղել էոնեստինի սիրտը։ Չորս դար թվացող շորս օրվա ընթացքում սրտամաշ սարսափն է համակել երիտասարդ մենակյաց օրիորդին։ Նա զղչակից դուրս չի գալիս։ Հինգերորդ օրը, շարունակ անհանդստանալով նրա առողջական վիճակի համար, հորեղբայրը ստիպում է միասին զբոսնել անտառում։ Ճակատագրական ծառի մոտ է, կարդում է ծաղկեփնջի մեջ թաքնված փոքրիկ թղթի բովանդակությունը։

«Եթե հարկ համարեք վերցնել այս բաղմերանգ կամելիան, կիրակի օրը կլինեմ ձեր գյուղի եկեղեցում»։

Էոնեստինը եկեղեցում տեսավ հազիվ երեսունհինգ տարին բոլորած շափաղանց համեստ հագնված մի մարդու, նույնիսկ նկատեց նրա խաչը։ Երիտասարդը բռնել էր ժամագիրքը՝ ձևացնելով, թե կարդում է, ոչ մի պահ աչքերը չէր հեռացնում էոնեստինից։ Պետք է ասել, որ ամբողջ պատարագի ընթացքում էոնեստինը կորցրել էր մտածելու ունակությունը։ Հնադարյան տերունական նստարանից դուրս գալու ժամանակ ձեռքից ցած գցեց ժամագիրքը և վերցնելիս քիչ մնաց ինքը ընկնելու։ Շիկնեց ձախորդության պատճառով։ «Անճարակի տեղ կզնի ինձ,— անմիջապես մտածեց նա,— և վատ կզգա,

որ մտածել է իմ մասին»: Իսկապես, այն պահից, ինչ տեղի ունեցավ այս փոքրիկ միջապեպը, նա այլևս չտեսավ անծանոթին: Կտոք բարձրանալուց հետո էռնեստինն իզուր ժամանակ շահեց դյուղի փոքրիկ տղաներին մանր պրամ բաժանելով, ոչ էլ եկեղեցու դռան առջև շատախոսող դեղջուկների մեջ նկատեց նրան, որին պատարազի ժամանակ էլ չէր հանդրդնել նայել: Էռնեստինը, որ մինչ այդ անկեղծության տիպար էր, ձևացրեց, թե թաշկինակն է մոռացել: Մառաններից մեկը դնաց եկեղեցի և տերունական նստարանի տակ երկար ժամանակ փնտրեց այդ թաշկինակը. բնական է, որ չէր գտնելու: Համենայն դեպս այս փոքրիկ խորամանկության պատճառով ձգված ժամանակը իզուր անցավ, նա այլևս չտեսավ որսորդին: «Պարզ է,— մտածեց նա,— օրիորդ Կ...-ն մի օր ինձ ասաց, որ գեղեցիկ չեմ և հայացքիս մեջ ինչ-որ գոռու ու վանող արտահայտություն կա, միայն ձախորդությունն էր ինձ պակասում, անկասկած, հիասթափվել է ինձանից»:

Տխուր մտքեր պաշարեցին նրան: Երկու-երեք ժամ հետո, մոտ ժամը չորսին, հորեղբայրը վերադարձավ այցելություններից: Էռնեստինն իսկույն վազեց լճակի երկարությունը ձգված սոսիների ծառուղին: Կիրակի էր, այդ պատճառով ճանապարհի ճաղապարդ ցանկապատը փակ էր: Բարերախտաբար նկատեց պարտիզպանին, կանչեց նրան, խնդրեց ջուրն իջեցնել նստակը և ուղեկցել իրեն լճակի հանպիպակաց ափը: Ցամաք զուրս եկավ կաղնուց հարչուր քայլ հեռու: Նստակը լողում էր լճի եղերքով, էռնեստինից ոչ հեռու: Հսկա կաղնու ամենացածր ճյուղերը հորիզոնական գիրքով տարածվում էին և հասնում համարյա մինչև լիճը: Հաստատուն քայլերով, մռայլ, սառնասրտությամբ և վճռական տեսքով մտեցավ ծառին: Կարծես գնում էր մահվան ընդսուռջ: Վստահ էր, որ թաքստոցում ոչինչ չի դռնելու: Իսկապես, նախորդ օրվա ծաղկեփնջից մնացել էր միայն մի թառամած ծաղիկ. «Եթե ինձնից դո՛հ լինեք,— մտածեց նա,— նոր ծաղկեփնջով կհայտնեն իր շնորհակալությունը»:

Վերադարձավ գլխակ, վազելով բարձրացավ իր ոտանձնարանը, հասավ աշտարակի ծայրը և երբ համոզվեց, որ ոչ-որ չի տեսնում իրեն, սկսեց հորդ արցունք թափել: «Օրիորդ դր Կ...-ն իրավունք ունեք,— ինքն իրեն ասում էր նա,— որ-

պեսղի գեղեցիկ երևամ, հինգ հարյուր քաջից պետք է նայենք ինձ: Լիբերալների այս երկրում հորեղբայրս հանդիպում է միայն գյուղացիների և քահանաների հետ, իմ վարվելակերպի մեջ էլ, նրանց նման, կոպիտ շարժումներ են ի հայտ եկել, միգուցև նաև անտաշություն: Հայացքս հրամայական, ինքնահավան և վանող արտահայտություն է ստացել»: Մոտեցավ հայելուն. տեսավ միայն արցունքի մեջ խեղդված մուգ կապույտ աչքեր: «Այս պահին անհնար է հրամայական, ինքնահավան արտահայտություն ունենալ: Ամբողջ կյանքում այդ բանը խանգարելու և ինձ և ոչ ոքի դուր չեմ գալու»:

Ճաշի ժամը հնչեց, արցունքները շորացնելու մեծ ջանք ցործադրեց: Վերջապես հայտնվեց հյուրասենյակում, այնտեղ էր նաև պարոն Վիյարը՝ ծեր բուսաբանը. նա սամեն տարի ութ օրով գալիս էր պարոն Ս...-ի մոտ, մի հանգամանք, որ բավական տհաճ էր իրենց սպասուհու՝ տան կառավարչուհու համար. նա ստիպված էր սեղանի շուրջն իր տեղը պիջել բուսաբանին: Մինչև շամպայնի շիբ բացվելը ամեն ինչ լավ ընթացավ: Սառցադուլը դրեցին էռնեստինի մոտ: Սառույցն արդեն հալվել էր: Կանչեց ծառային և ասաց.

— Փոխեք այս ջուրը և իսկույն սառույց լցրեք տեղը:

— Ահա հրամայական այն փոքրիկ շեշտը, որ շատ է սաղում քեզ,— ծիծաղելով ասաց բարետես հորեղբայրը:

«Հրամայական» բառը լսելով էռնեստինի աչքերն արցունքով լցվեցին, անհնար էր թաքցնել: Ստիպված դուրս եկավ հյուրասենյակից, դուռը փակելու ժամանակ լսվեց նրա խուլ հեկեկոցը: Մերուկներն ապշած մնացին:

Երկու օր հետո նա անցնում էր մեծ կաղնու կողքով. մոտեցավ, թաքստոցից ներս նայեց, կարծես ուզում էր վերհիշել այն տեղերը, որ այնքան երջանկություն էին պարգևել իրեն: Եվ ինչպիսի բերկրանք. երկու ծաղկեփունջ տեսավ: Վերցրեց դրանք փոքրիկ նամակների հետ միասին, դրեց թաշկինակի մեջ և վաղեց դղյակ, առանց մտահոգվելու, որ անձանոթը կարող էր թաքնված լինել անտառում և տեսնել իրեն, մի մտահոգութուն, որ մինչև այդ օրը երբեք չէր լքել նրան: Շնչակտուր, չկարողանալով այլևս վաղել, ստիպված ճանապարհի կեսին կանգ առավ: Հագիվ շունչը տեղն եկած, շարունակեց ամբողջ ուժով սլանալ: Վերջապես հասավ իր

ֆորրիկ սենյակը, թաշկինակի միջից հանեց ծաղկեփնջերը և առանց կարդալու հակիրճ գրությունները, ինքնամոռաց սկզբնեց համբուրել ծաղիկները, բայց գիտակցելով իր արարքը, շիկնեց: «Ախ, այսուհետև այլևս երբեք հրամայական տեսք չեմ ունենա,— ասում էր ինքն իրեն,— կվերափոխվեմ»:

Ի վերջո, երբ սրտի ուզածի չափ արտահայտեց գորովանքը գեղեցիկ ու ամենահազվագյուտ ծաղիկներից կազմված փնջերի նկատմամբ, կարդաց սիրագրերը: (Յուրաքանչյուր տղամարդ այստեղից կսկսեր): Առաջինը, որ կիրակի օրն էր գրված, ծամը հինգին, հետևյալ միտքն էր բովանդակում:

«Պատարագից հետո ինձ գրկեցի ձեզ տեսնելու հաճույքից, չի կարող մենակ մնալ ձեր կողքին, վախենում էի աչքերիս մեջ արտացոլված սերը բացահայտվեր, այն սերը, որ տածում եմ ձեր հանդեպ և այրում է ինձ»:

Երևր անգամ կարդաց այս բառերը. «այն սերը, որ տածում եմ ձեր հանդեպ և այրում է ինձ»: Հետո վեր կացավ, հայելու տոջն ղննեց աչքերի արտահայտությունը, տեսնելու համար հրամայական շեշտ կա՞ր այնտեղ, թե ոչ: Շարունակեց.

«Այն սերը, որ տածում եմ ձեր հանդեպ, և այրում է ինձ: Սթե ձեր սիրտը չեն գրավել մինչև հիմա, հաճեցեք ոչնչացնել փորրիկ նամակը, այն կարող է մատնել մեզ»:

Երկրորդ նամակը գրված էր երկուշաբթի օրը, մատիտով ու լայնակտանին վատ ձեռագրով: Սակայն էռնեստինն այլևս այն վիճակում չէր, որ գեղեցիկ, թեք ձեռագրով հմայվեր, նա շատ լուրջ մտահոգություններ ուներ և այս մանրուքը չէր կարող գրավել նրա ուշադրությունը:

«Եկա: Շատ երջանիկ էի զգում, երբ իմ ներկայությամբ ձեր մասին խոսեցին: Ինձ ասացին, որ երևի անցել եք լիճը: Տեսնում եմ, չեք ցանկացել վերցնել նամակս: Այն իմ ճակատագիրն էր որոշելու: Դուք սիրում եք, բայց ոչ ինձ: Իմ տարիքում խենթություն է ձեզ նման մի աղջկա հետ կապվել: Մնաք բարով, մեկընդմիջտ: Չեմ ցանկանում ավելացնել իմ գծրախառությունը, զգում եմ, որ ձանձրույթ եմ պատճառելու երկար ժամանակ գրադեցնելով ձեզ և գուցե ձեր աչքին ծիծաղելի թվամ»:

«Սիրո զգացմունք», ասաց էռնեստինը աչքերը երկինք հառելով: Քաղցր էր այդ պահը: Իր գեղեցկությունը հուշակված, ծաղիկ հասակում գտնվող աղջիկը դժուրված բացականչեց: «Նա համաձայն է սիրել ինձ, ախ, աստված իմ, որքան երջանիկ եմ»: Ծունկ շոքեց նախնիներից մնացած Կարլո Դուլչիի* աստվածածնի հրաշալի կերպարանքի առջև, որ Իտալիայից էր բերված: «Ա՛, այո, ևս առաքինի և բարի կլինեմ,— քացականչեց նա արցունքն աչքերին,— աստված իմ, հաճեցեք միայն ցույց տալ ինձ իմ թերությունները, որպեսզի կարողանամ ուղղել դրանք, այժմ ամեն ինչ հնարավոր է»:

Վեր կացավ, մի քսան անգամ կարդաց նամակները: Հատկապես երկրորդն էր երջանկության մեջ պահում նրան: Եվ նկատեց, որ երկար ժամանակից ի վեր իր սրտում բուն էր դրել մի ճշմարտություն. այն, որ ինքը երբեք չէր կարող կապվել քառասուն տարեկանից պակաս մարդու հետ: (Անձանոթն ակնարկել էր իր սարիքը): Հիշեց եկեղեցում տեսած նրա պեմբը. մի փոքր ճաղատ, հազիվ երեսունչորս-երեսունհինգ տարեկան: Բայց վստահ չէր. համարձակություն չէր ունեցել երկար նայել նրան, և որքա՛ն հուզված էր: Գիշերն աչք չփակեց: Երբեք չէր երազել այսպիսի երջանկություն: Վեր կացավ և ժամագրքի վրա անգլերեն գրեց. «Երբեք հրամայող չլինել: Այս ուխտը անում եմ 18... թվականի սեպտեմբերի 20-ին»:

Այդ գիշեր նա ավելի ու ավելի համոզվեց իր ճշմարտության մեջ. անհնար է սիրել մի մարդու, որ քառասուն տարեկան չլինի: Երազելով իր անձանոթ բարեկամի դրական հատկանիշների մասին, գլխում մի այլ միտք էլ ծագեց. բացի քառասուն տարեկան լինելու առավելությունից նա հավանաբար նաև աղքատ էր: Այնպիսի հասարակ տեսքով էր երեվացել եկեղեցում, հնարավոր չէ, որ աղքատ չլինի: Այս հայտնությունը նրան հասցրեց երջանկության գագաթնակետին: «Նա երբեք Սենտ-Ուբերի* տոնին մասնակցող մեր ծանոթների, այսինչի կամ այնինչի հիմար ու տհաճ արտահայտությունը չի ունենա, նրանք հորեղբորս պատվելու պատրվակով դալիս ևն, որ այժեր մորթել տան իրենց համար և սեղանի շուրջը, առանց հարցերի սպասելու, թվարկեն

իրենց երիտասարդական տարիներին հատարած քաջագործությունները: Տեր աստված, երանի աղքատ լինելու: Այս դեպքում երջանկությունս հատարյալ կլինի: Երկրորդ անգամ վերկացավ, վառեց լուսամփոփի մոմը և փնտրեց իր ապագայի մասին արված գուշակությունը, որ դարմիկներից մեկն էր գրել ինչ-որ դրքի վրա: Ահա այն, 17000 լիվրի գումար՝ ամուսնանալու ժամանակ, իսկ հետո՝ 40 կամ 50 լիվրի եկամուտ: Երբ այս թվերի շուրջն էր մտորում, հնչեց առավոտյան ժամը շորսը, ցնցվեց: «Հիմա երևի դրսում այնքան լույս կլինի, որ կկարողանամ տեսնել իմ սիրելի ծառը»: Բացեց պասուհանի փեղկերը և իրոք տեսավ սև դանգվածով հսկա կաղնին, որ ոչ թե արշալույսի առաջին ցուլերը, այլ լուսնի շողերն էին պարզեում նրան, արևածագը դեռ շատ հեռու էր:

Առավոտյան, երբ հագնվում էր, սկսեց մտածել. «Քառասուն տարեկան մարդու ընկերուհին չպետք է երեխայի պես հագնվի»: Եվ մեկ ժամից ավելի պահարանների մեջ փրնտրեց այնպիսի մի հագուստ, գլխարկ, գոտի, որոնք յուրօրինակ միասնություն կազմեին իրար հետ, և երբ հայտնվեց ճաշասենյակում, հորեղբայրը, դաշակը, ծեր բուսաբանը չկարողացան դսպել ծիծաղի պոսիկումը:

— Մոտեցիր տեսնեմ, էճնեստինս,— ասաց ծերուկ կոմս Ս...-ն՝ Սեն-Լուիի նախկին ասպետը, որ վիրավորվել էր Քիբրոնում,— այնպես ես հագնվել, կարծես ուզում ես բառասուն տարեկան կնոջ նմանվել:

Այս բառերը լսելով, նա շփկնեց և անսահման երջանկություն գծագրվեց դեմքին:

— Աստված թող ինձ սղորմա,— ճաշն ավարտելուց հետո ծերուկ բուսաբանին ասաց բարի հորեղբայրը,— գրազ եմ դալիս, պարոն, որ էճնեստինն այսօր երեսուն տարեկան կնոջ բոլոր շարժումներն է ձեռք բերել, այնպես չէ՞: Հատկապես սպասավորների հետ խոսելիս այնպիսի գոզտրիկ մայրական մի շեշտ է դնում խոսքի մեջ, որ ծիծաղելի լինելով հանդերձ, հմայում է ինձ: Համոզվելու համար երկու-երեք անգամ ստուգեցի:

Այս դիտողությունը կրկնապատկեց էճնեստինի երջանկությունը, և թե թույլ է տրվում մեղ օգտվել այս բառից՝ գազաթնակետին հասած երանություն մասին խոսելիս:

Ճաշից հետո դժվարութեամբ ազատվեց տան փոքրիկ հասարակութիւնից: Հորեղբայրն ու բարեկամ բուսաբանը Ճիրա հասունացած տեսքի մասին խոսելով չէին հոգնում բնափէննեստինը բարձրացալ վերնահարկ, դիտեց կաղնին: Քսան ժամ անցնելուց հետո առաջին անգամ ամպի մի սև շերտ եկալ մթնեցնելու իր երջանկութիւնը, սակայն չէր կարողանում հասկանալ այս հանկարծահաս փոփոխութեան պատճառը: Նախորդ օրը, հուսահատութեան մեջ, երբ ծառի փշակում երկու ծաղկեփնջերն էր դտել, անձնատուր լինելով հրապուրանքին՝ այնուամենայնիվ թույլացել էր ինքն իրեն հետեյալ հարցը տալուց հետո. «Ինչպի՞ս վերաբերվեմ բարեկամիս հետ, որ ինձ հարդի: Այդքան խելացի մարդը քառասուն տարեկան լինելու առավելութեամբ պետք է խստաբարո լինի: Եթէ սխալ քաջ կատարեմ, կդադարի ինձ հարգելուց»:

Մինչ էոնեստինը այս մենախոսութեամբ տարված, ամենամարտը վիճակում, որ ծնվում է դարմանքը վախին խառնած, հայելու առջև կանդնած երիտասարդ աղջկա լուրջ մտորումների պահին, նկատեց զոտուց ամրացած ոսկյա կեռիկը՝ նուրբ շղթաներով, որոնց ծայրերից կախված էին մատնոցը, մկրատը և փոքրիկ տուփը: Հիանալի մի զարդարանք էր դա, որոնցով դեռ նախորդ օրը հիանում էր: Տասնհինգ օր առաջ, ծննդյան տանին, հորեղբայրն էր նվիրել: Վախի և հուզմունքի պատճառն այն էր, որ հանկարծ հիշեց սպասուհու խոսքերը. այդ պարզն արժեր 850 ֆրանկ, դնել էին Փարիզի ամենահռչակավոր սակերչի՝ Լորանկոյի խանութից: «Ի՞նչ կմտածի իմ մասին բարեկամս, որ աղքատ լինելու պատիվն ունի, այսքան գովելաշատական զին ունեցող պարզը անտեսելով: Իսկական անտեսուհու հակումները ցուցադրելուց ավելի անհեթեթ բան չի կարող լինել. այդ են վկայում այս մկրատը, տուփիկը, մատնոցը, որ ամեն օր կրում եմ ինձ վրա, և իսկական տրնտեսուհին չի էլ մտածում, որ այս պարզն ամեն տարի ավելացնում է իր արժեքը»: Նա լրջորեն սկսեց հաշվել և համոզվեց, որ տարեկան հիսուն ֆրանկի եկամուտ է բերում:

Տնտեսութեան խնայողութեան վերաբերյալ արված այս գեղեցիկ դատողութիւնը, որ էոնեստինը ժառանգել էր հորեղբոր դղյակում երկար տարիներ ապաստան գտած խոռվարարի խստաբարո դաստիարակութիւնից, այս դատողութիւնը,

ինչպես նշեցի, նրան դուրս բերեց դժվար կացութիւնից: Գարակի մեջ թաքցրեց ղազեշտական արժեքի հասնող զարդը, հարկ համարեց անդրադառնալ իրեն ճնշող հարցին, ի՞նչ անել, որ չկորցնի այդ խելացի մարդու հարգանքը:

էռնեստինի դատողութիւնները (ընթերցողը դուցե զրանք պարզապես կրնդունի որպես սիրո ծագման հինգերորդ շրջան) մեղ շատ հեռուները կարող են տանել: Այս երիտասարդ աղջիկը իր լիռների օդի պես սուր, թափանցող, կենսախինդ միտք ունեւր ժամանակին խելացի համարված հորեղբայրը, որ տարիներ շարունակ ուղեղն զբաղեցրել էր միայնեկիւտ-երեք հարցի շուրջը, նկատել էր, որ սովորութիւն է դարձրել բարձր տրամագրութիւն ունենալու ժամանակ էռնեստինին կատակով ղ ի ն վ ո թ ա կ ա ն ա շ ք անվանել: Գայակն էլ էր նկատել, և այդ կատակը համարում էր ուրախ տրամագրութիւն արդիւնք: Գուցե այս որակումն էր, որ ավելի ուշ, երբ էռնեստինը հայտնվեց հասարակութիւն մեջ և համարձակութիւն ստացավ մտքերն անկաշկանդ արտահայտել, նրան մղեց հանդես գալու իր փայլուն դերով, Բայց այն ժամանակաշրջանում, որի հետքերով առայժմ ընթանում ենք, այդքան խելացի լինելով հանդերձ, էռնեստինը խճճվեց հենց իր դատողութիւնների մեջ: Քանի-քանի անգամ սրտեց ղնալ ծառի մոտ դրսնելու: «Միայն մի փոքրիկ սխալ, — ասում էր ինքն իրեն, դրսեորելով մանկական միամտութիւն, — կարող է բարեկամիս աշքից ինձ ղցել»: Սակայն շնայած իր ծայրաստիճան նուրբ փաստարկումներին, որտեղ ի գործ էր ղնում ամբողջ ուղեղը, ղեռես շէր տիրապետում բանականորեն ղզացմունքների վրա իշխելու ղժվարին արվեստին: Կամքից անկախ ծնված սերը, որ ամբողջութիւնամբ համակել էր խեղճ աղջկան, մերժում էր բանականութիւնը և մի փոքր ավելի ուշ, հանուն երջանկութիւն, ստիպեց նրան բռնել բախտորոշ ծառի ճամփան: Երկար վարանումներից հետո, մոտավորապես ժամը մեկին, սպասուհու հետ հասավ այնտեղ: Կամաց հեռացավ այդ կնոջ մոտից և պայծառ արտահայտութիւնը ղեմքին մոտեցավ ծառին. խեղճ երեխա: Կանաչ խոտերի միջով թռչկոտում էր կարծես, և ոչ թե քայլում: Մերով բուսաբանը ղիտողութիւն արեց սպասուհու միջոցով, երբ էռնեստինը վաղելով անցավ իրենց կողքով:

Սակայն մեկ ակնթարթում անհետացավ նրա երջանկությունը: Սառի փշակում մեկ ծաղկեփունջ կար, գեղեցիկ ու թարմ, նախ սրախացավ, հետո թախծեց: Պատճառն այն էր, որ քիչ առաջ իր բարեկամը եղել է այս կողմերում: Խոտերի մեջ ոտնահետքեր փնտրեց: Ուրախ էր նաև այն պատճառով, որ փոքրիկ թղթի փոխարեն երկար նամակ կար այնտեղ: Հայացքն անմիջապես գցեց ստորագրություն վրա, ուզում էր անունըն իմանալ: Կարդաց: Նամակն ընկավ ձեռքից, հետո՝ ծաղկեփունջը: Մահացու սարսուռ պատեց նրան: Նամակի տակ կարդացել էր Ֆիլիպ Աստեղանի անունը:

Պարոն Աստեղանը կոմս զը Ս...-ի զղջակում հայտնի էր որպես տիկին Դախսենի սիրեկանը: Տիկին Դախսենը ժամանել էր Փարիզից, չափազանց հարուստ կին էր, խիստ վայելչագեղ, ամեն տարի գալիս էր գավառը հուզելու. շորս ամիս շարունակ հանդգնում էր ժամանակ անցկացնել Աստեղանի զղջակում, որն իր ամուսինը չէր: Ամենախոցելի կեան այն էր, որ այդ կինը այրի էր, երիտասարդ, գեղեցիկ, և ոչինչ չէր խանդարում նրան ամուսնանալ պարոն Աստեղանի հետ: Ներկայացված բոլոր տխուր փաստերը ճշմարիտ էին, և տարբեր կերպարանքներով էին իրենց թույնը տարածում տիրահոչակ ու երիտասարդական սխալների հանդեպ խիստ թշնամաբար տրամադրված մարդկանց բանազրույցներում: Սրանք երբեմն այցելություն էին գալիս էռնեստինի հորեղբոր հինավուրց առանձնատունը: Այսքան մարդը և այսքան կենսախինդ երջանկությունը, որ առաջին անգամ էր տրվում կյանքում, անհնար էր մի քանի վայրկյանի ընթացքում վերածել նման անհուսալիություն և սիրտ հոշոտող դժբախտություն: «Դաժան մարդ, ուզեց խաղալ իմ սրտի հետ,—մտածում էր էռնեստինը,— ուզում էր իմաստավորել իր ուսի ժամերը, մոլորեցնել մանկամարդ մի աղջկա, երևի տիկին Դախսենին էր ուզում զվարճացնել: Իսկ ես մտածում էի ամուսնանալ նրա հետ, ինչպիսի երեխայություն, ինչպիսի ստորացում»: Եվ այս տխուր մտքերից էռնեստինն ուշաթափվեց երեք ամիս շարունակ ուշադրության կենտրոնում դառնալով ծառի մոտ: Կես ժամ հետո սպասուհին և ծերուկ բուսաբանը նրան գտան անշարժ վիճակում: Եվ երբ ուշքի բերին՝ կարծես իր վիշտն ամբողջացնելու համար, նա ստքերի տակ ըն-

կած տեսավ Աստեղանի ստորագրութեամբ նամակը: Կայծա-
կի արագութեամբ թռավ տեղից և ոտքը գրեց վրան:

Կատարվածի համար անուրոշ բացատրություն տվեց և
զետնից աննկատելիորեն վերցրեց շարաբաստիկ նամակը:
Երկար ժամանակ առիթ չէր դնում կարգալու, որովհետև դա-
յակը նրան պատվիրել էր նստել և մինչև վերջ չհետացավ մո-
տից: Բուսարանը դաշտում աշխատող գյուղացիներից մեկին
ուղարկեց կառք բերելու: Հարցերից խուսափելու համար էռ-
նեստինը ձեռքերից, թե ումից գլխացավ ունի և չի կարող
խոսել, այսպիսով հնարավորություն ունեցավ թաշկինակը
աչքերին պահել: Կառասպանը եկավ: Հենց որ էռնեստինը
կառք բարձրացավ, ազատ զգաց իրեն. անհնար էր նկարա-
գրել հսկու մեջ մխրճված ծանր վիշտը, մինչև տուն հասնելը
այն շրից նրան: Ամենածանր վիճակն այն էր, որ ստիպված
էր ինքն իրեն արհամարհել: Թաշկինակի մեջ պահած շարա-
բաստիկ նամակը այրում էր ձեռքերը: Մութն ընկել էր, երբ
ղզյակ հասավ: Աննկատ բաց արեց աչքերը: Ֆրանսիացի հա-
րավի գեղեցիկ դիշերվա մեջ կայծկլտացող աստղիկները մի
փոքր մխիթարեցին նրան: Զղարով հանդերձ հոգեկան խռով-
քի հետ կապված հուզմունքի պատճառը՝ նրա սարիքի պար-
զամտությունը թույլ չէր տալիս խորութեամբ ընկալել այդ
ամենը: Էռնեստինը երկու ժամ շարունակ վշտի գառնությունը
ըմպելուց հետո, հենց որ ինքն իրեն գտավ, զղյակ հասնե-
լուն պես այսպիսի արի որոշում կայացրեց. «Չեմ կարգալու
նամակը, ստորագրությունը բավական է, պիտի այրեմ»: Եվ
ձեռք բերած քաջութեան շնորհիվ կարողացավ դարձյալ հար-
գել իր անձը, քանի որ առերևույթ պարտված սիրո բաժինը
համեստորեն ներշնչել էր նրան, որ այդ նամակը միգուցե
բավարար չափով բացատրում էր պարոն Աստեղանի և տի-
կին Գաիոենի հարաբերությունների մասին:

Հյուրասենյակ մտնելուն պես էռնեստինը նամակը կրակի
մեջ նետեց: Հաջորդ առավոտյան ժամը ութից նստեց դաշ-
նամուրի առջև և սկսեց նվագել. երկու ամսից ավելի չէր
զբաղվել: Շարունակեց ուսումնասիրել Փեթիթոյի* հրատա-
րակած Ֆրանսիացի պատմության վերաբերյալ «Մեմուար-
ների» ժողովածուն և սկսեց արյունաբերու Մոնտյուկի հիշողու-
թյուններից երկար հատվածներ անգիր սովորել: Խորաման-

Պորեն կարողացավ ծերուկ բուսարանին համուկել շարունակելու բնագիտության դասընթացները: Տասնհինգ օր հետո իր բույսերի պես պարզ բարի մարզը անկարող էր լուկ աշակերտուհու հանդես բերած զարմանալի ընդունակությունների մասին. ուղղակի հիացած էր: Ինչ վերաբերում է էռնեստինին, ամեն ինչի նկատմամբ դարձել էր անտարբեր. բոլոր մտքերը նրան տանում էին դեպի հուսահատություն: Հորեղբայրը տափնապի մեջ էր. էռնեստինը ակնհայտորեն նիհարում էր և երբ թեթև հարբուխով հիվանդացավ, բարի ձերսունին, իր տարեկիցների սովորության հակառակ, չունեանալով կենսափորձ, որ կարող էր կուտակած լինել տարիների ընթացքում, կարծեց, թե էռնեստինը թոքերի հիվանդությամբ է տառապում: էռնեստինն ինքն էլ էր համոզված դրանում և շատ հանդիստ էր նա այն հույսն էր փայփայում, թե շուտով կմահանա և համբերությամբ էր զինվում:

Երկարատև ամսվա ընթացքում նրա սիրտը բացի ամենախոր կսկիծից, որ հետևանք է ինքն իրեն արհամարհելու, ուրիշ ոչ մի ապրում չունեցավ. նա կյանքի իմաստնությունից ոչինչ չէր հասկանում, մխիթարվեց միայն նրանով, որ աշխարհում ոչ ոք չէր իմանալու, թե ինչ է կատարվել իր սրտի խորքում, հատկապես այն դաժան մարզը, որ երկար ժամանակ զբաղեցրել էր իր ուղեղը, իր զգացածի հարյուրերորդ մասն անգամ չէր իմանալու Հուսահատության մեջ արիությունը չէր լքում նրան. նամակներն առանց կարդալու կրակն էր դցում, միայն հասցեներն էր կարդում և ճանաչում էր շարտարատիկ ձևապիրը:

Ինքն իրեն խոստացել էր երբեք չնայել լճակի ափին տաքածված կանաչուտի կողմը. հյուրասենյակի լուսամուտների առջև չէր նստում: Ֆիլիպ Աստեղանի անունը կարդալուց հետո անցել էր վեց շաբաթ, երբ մի օր բնական գիտությունների ուսուցիչը՝ բարի պարոն վիյարը, մտածեց այդ օրվա դասը նվիրել ջրային բույսերի թեմային: Նրա հետ նավակ բարձրացավ և զնացին լճափին տարածված հովիտը: Նավակ նըստելու ժամանակ էռնեստինը աչքի տակով նայեց հսկա կաղնուկ և համոզվեց, որ ոչ ոք չկա այնտեղ, բայց ծառի կեղևի բաց գույնը գրավեց ուշագրությունը: Երկու ժամ հետո, երբ վերադառնում էր դասից, կանգնեց հսկա կաղնու մոտ, հան-

կարծ ցնցվեց. ճանաչել էր Ֆիլիպ Աստեղանի որսորդական քաճկոնի գույնը, որ ծառի պոկված կեղևի տեղ էր դրել: Աստեղանը երկու ժամից ավելի անշարժ նստած էր կաղնու արմատին, կարծես չէր շնչում, անկենդան լիներ կարծես: Էռնեստինը նույնիսկ մտքում ասաց. «Կարծես մեռած լինի», և նրա ուշադրությունը լարվեց. «Եթե մահացած լինի, այլևս նրանով զբաղվելու անպատեհությունը չեմ ունենա»: Այս ենթադրությունը պատրվակ հանդիսացավ, որ մի քանի րոպե անձնատուր լինի սիրո անուրջին, որ սնունդ էր առել պաշտելի երևույթի տեսքից:

Հայտնագործությունը խիստ հուզեց նրան: Հաջորդ երեկոյան իրենց զղյակն այցելության եկած հարևան քահանաներից մեկը խնդրեց կոմս Ս...-ին մի քանի օրով փոխարինաբար իրեն տալ «Մոնիտորը»*: Մինչ ծեր սենեկապանը կզնար զբաղարանից այդ ամսվա «Մոնիտորների» համարները բերելու, կոմսն ասաց նրան.

— Բայց, հայր սուրբ, այս տարի կարծես էլ չեք հետաքրքրվում ամսագրով, վերջին շրջանում առաջին անգամն էք «Մոնիտորը» խնդրում ինձնից:

— Պարոն կոմս,— պատասխանեց քահանան,— իմ հարևանուհին՝ տիկին Դախսենը, մինչև հիմա ասպահովում էր ինձ բոլոր համարներով, բայց տասնհինգ օր առաջ մեկնեց այստեղից:

Անտարբերությամբ արտասանված այս բացատրությունը տակնուվրա արեց էռնեստինին, իրեն թվաց, թե վատ է զգում, թվաց, թե քահանայի խոսքերից սիրտը տրոփել սկսեց, ստորացած զգաց իրեն: «Ահա թե ինչ օրի եմ հասել և որքանով եմ կարողացել մոռանալ նրան»:

Այդ երեկոյան առաջին անգամ էռնեստինը ժպտաց. «Այնուամենայնիվ,— մտածում էր նա,— ինքը մնացել է գյուղում, Փարիզից հարյուր հիսուն վերստ հեռու, իսկ տիկին Դախսենին մենակ է ուղարկել»: Կաղնու արմատներին նրստած նրա անշարժ դիրքը դարձյալ պատկերացավ աչքին, և էռնեստինը հառաչեց, որ չի կարողանում ձերբազատվել այդ մտքից: Մեկ ամիս շարունակ նա երջանիկ էր զգացել իրեն, որ թոքերի հիվանդությամբ է տառապում: Հաջորդ օրը նրան

անակնկալ մատուցեց, երբ զգաց, որ սկսել է նկատել շրջապատը. լեռների դազաթին ձյուն էր նստել և երեկոներն սկսել էին ցրտել, հարկավոր էր զգուշանալ և տաք հագուստներ հագնել: Ամենապարզունակ հոգու տեր մարդն անզամ նույն զգուշավորութունը հանդես կբերեր: Էոնեստինն այդ մասին մտածեց միայն քահանայի խոսքերից հետո:

Սենտ-Ուբերի տոնը մոտենում էր, զոչակում պատրաստվում էին տարվա միակ ճոխ ընթրիքին: Հյուրասրահ իջեցրին Էոնեստինի դաշնամուրը: Հաջորդ օրը, երբ բաց արեց կափարիչը, ստեղների վրա նկատեց հետևյալ գրություն՝ մի բացիկ. «Ձայն շհանեք, երբ ինձ նկատեք»:

Այնքան հակիրճ էր գրությունը, որ նախքան կոահեր, թե ում ձեռքով էր գրված, արդեն հասցրել էր կարգալ: Ձեռագիրն ազավազված էր: Էոնեստինը, որ իր հոգու հպարտության համար պարտական էր պատահականությանը, կամ գուցե Գոֆինեի լեռների օդին, հավանաբար տիկին Դաիսենի մեկնումի մասին քահանայից նախքան տեղեկություններ ստանալը պիտի փակվեր իր սենյակում և հայտնվեր միայն տոնախմբությունից հետո:

Երկու օր հետո նշում էին Սենտ-Ուբերի տոնակատարությունը: Էոնեստինը, հորեզբոր դիմաց նստած, ըստ պատշաճի, հյուրասիրում էր հրավիրյալներին: Վայելուչ էր հաղնված: Սեղանի շուրջն էին համախմբվել շրջակայքի համարյա բոլոր բահոնաները, քաղաքագլուխները, գավառի ինքնահավան մարդկանց մի խումբ, որոնք միայն իրենց մասին էին խոսում, պատմում պատերազմում, որսի ժամանակ, նույնիսկ սիրո մեջ ցուցարբերած սխրագործությունների և մանավանդ իրենց տոհմերի հին ծագման մասին: Նրանք ամենևին չէին անհանգստանում, թե կարող էին վատ տպավորություն գործել զոչակի ժառանգորդուհու վրա: Էոնեստինի արտակարգ դալկությունը՝ միակցված դիմագծերի գեղեցկությանը, այնպիսի տպավորություն էր գործում, կարծես արհամարհանքով էր պատված դեմքը: Ինքնահավան երիտասարդները առիթ էին փնտրում խոսելու նրա հետ, սակայն դիմելուց հետո կարծես վախով էին համակվում: Ինչ վերաբերում է Էոնեստինին, նա իր դադափարներով շատ հեռու էր նրանց մակարդակին իջնելուց:

ճաշկերույթն սկզբում հարթ ու խաղաղ ընթացավ, առանց արտակարգ միջադեպի, էռնեստինն սկսել էր շունչ քաշել, երբ հանկարծ ճաշի ավարտին, աչքերը բարձրացնելով, իր դիմաց տեսավ հասուն տարիքի մի գյուղացու, որը կարձևո Դրակի ափերից ժամանած քաղաքացուի սպասավոր լինելու էրնեստինն այն տարօրինակ զդացումով համակվեց, որ արդեն զգացել էր բաճանաչի խոսքերից հետո: Բայց և այնպես դեռ վստահ չէր: Այդ գյուղացին նման չէր Ֆիլիպին: Համարձակութուն ունեցավ երկրորդ անգամ նայելու. էլ ոչ մի կասկած. նա էր: Մպալել էր անճոռնի երևալու աստիճան:

Ժամանակն է մի քիչ խոսել Ֆիլիպ Աստեղանի մասին, քանի որ այս պատմության մեջ նա հանդես է գալիս սիրահարի դերում, և գուցե հնարավորություն կտա մեզ պարզելու սիրո ծագման յոթ ժամանակաշրջանի տեսությունը: Երբ հինգ ամիս առաջ տիկին Դաիսենի հետ եկել էր Լաֆրեյ ամբոցը, այդ տիկնոջ մոտ հաճախող քահանաներից մեկը շափազանց գեղեցիկ մի արտահայտություն արեց: Ֆիլիպը վարձացավ հասարակ մարդու բերանից այդքան խելամիտ արտահայտություն լսելով և հարցրեց, թե ով է այդ արտակարգ մտքի հեղինակը:

— Կոմս դը Ս...-ի եղբոր աղջիկը, — պատասխանեց քահանան, — մի աղջիկ, որ մեծ հարստության տեր է գառնալու, բայց սխալ դաստիարակություն է ստացել: Տարի չի անցնում, որ Փարիզից մի սնդուկ գիրք շտանա: Շատ եմ վախենում սրա վերջը վատ լինի, նա պմուսնություն մտախն չի էլ մտածի: Ո՞վ կարող է հանձն առնել այդպիսի կնոջ հետ դրադվելու, և այլն, և այլն:

Ֆիլիպը մի բանի հարց տվեց, իսկ քահանան, չկարողանալով դսպել իրեն, սկսեց դավարանել էռնեստինի հաղվադյուտ գեղեցկությունը, որն անկասկած նրան կործանման էր հասցնելու: Նա այնպիսի ճշգրտությամբ նկարագրեց կոմսի դղյակում իշխող ձանձրույթը, որ տիկին Դաիսենը բացականչեց.

— Ա, շնորհ արեք, վերջ տվեք, պարոն քահանա, քիչ է մնում ձեր պատճառով սարսափով լցվեմ ձեր գեղեցիկ լեռների հանդեպ:

— Անհնար է շտիրել այն երկիրը, որտեղ այնքան բարիքներ են ծնվում,— ակնարկեց քահանան,— և այն դրամը, որ օղնելու նպատակով տրվեց մեզ, մեր եկեղեցու երրորդ գանդը դնելու համար, վստահեցնում է...

Ֆիլիպն այլևս չէր լսում նրան, մտածում էր էռնեստինի մասին, այն մասին, թե ինչ էր տեղի ունենում զգյալում առանձնացած երիտասարդ աղջկա հոգում, որ մինչև իսկ գյուղական քահանայի համար էր ձանձրալի: «Պետք է նրա համար զբաղմունք ստեղծեմ,— մտածեց ինքն իրեն,— ումանտիկ ձևով կսիրահետեմ նրան, նոր զգացմունքներ կծրնվեն խեղճ աղջկա սրտում»: Հաջորդ օրը որսի դնաց կոմսի զգյալի շրջակայքը: Նրան դրավեց անտառի բնական դիրքը, որ զգյալից անջատված էր լճակով: Գլխում միտք ծագեց էռնեստինին պատվել ծաղկեփնջերով: Մնացածը մեզ հայտնի է, թե ինչպես օգտագործեց ծաղիկներն ու նամակները: Երբ հսկա կաղնու մտ որսի էր գնում, անձամբ էր զբաղվում, մնացած օրերին սուլարկում էր իր սպասավորին: Ֆիլիպն այդպես էր վարվում զուտ մարդասիրությունից մղված, նույնիսկ մտքով չէր անցկացնում էռնեստինին տեսնելը: Դժվարին ու տհաճ վիճակ կստեղծվեր, եթե ներկայանար հորեղբոր զգյակը: Երբ Ֆիլիպը էռնեստինին առաջին անգամ եկեղեցում տեսավ, մտածեց, որ ինքը տասնութամյա կամ քսանամյա աղջկա դուր գալու համար բավականին տարեց է: Յնցվեց նրա դիմագծերի գեղեցկությունից, հատկապես այն ազնիվ պարզությունից, որ բխում էր նրա ողջ էությունից: «Այս բնավորության մեջ շատ անմեղություն կա», իսկ կարճ ժամանակ անց զգաց նաև նրա հմայքը: Երբ տեսավ, թե ինչպես տերունական նստարանից դուրս գալու ժամանակ ժամպիրքը ձեռքից վայր պեցեց և ջանաց գեանից բարձրացնել տվելի ձախորդ շարժումով, միակ երազանքը դարձավ սրժանանալ նրա սիրուն, հույսը չէր կորցնում: Մնաց եկեղեցում մինչև այն պահը, երբ էռնեստինը դուրս եկավ: Ֆիլիպին այժմ միայն մի միտք էր տանջում, որ այնքան էլ հաճելի չէ սիրահարված մարդու համար, ինքը երեսունհինգ տարեկան էր, իսկ մագերի նոսրությունը, որ ըստ բժիշկ Գալլի* պատկառելի ճակատի տպավորություն է թողնում, այնուամենայնիվ երեք-չորս տարով մեծացնում էր: «Եթե ծե-

բությունս առաջին հայացքից չի հասցրել ամեն ինչ փչացնել,— մտածում էր նա,— պետք է հավատա իմ սրտին, որ պեսզի մոռանա տարիքս»:

Նա մոտեցավ հրապարակի վրա բացվող գոթական փոքրիկ պատուհանին, տեսավ էռնեստինին, որ կառք էր նստում. գեղեցիկ էին հասակն ու աչքերը, նա ողորմություն էր բաժանում: Ֆիլիպին թվաց, թե մեկին է փնտրում: «Ինչո՞ւ,— մտածեց նա,— հայացքով հեռուներն է թափառում կառքի շորս կողմը հավաքված մարդկանց դրամ բաժանելու ժամանակ: Հնարավոր է, սր նրա մոտ հետաքրքրություն առաջացրած լինեմ»:

Տեսավ, թե ինչպես էռնեստինը հանձնարարեց սպասավորին վերադառնալ եկեղեցի, իսկ ինքն այդ ընթացքում հարբում էր նրա դեղեցկությամբ: Տեսավ, թե ինչպես շիկնեց, հայացքը շատ էր մոտեցել աղջկան, կառքը հազիվ տասը քայլ հեռավորության վրա էր կանգնած գոթական պատուհանից, տեսավ, թե ինչպես սպասավորը վերադարձավ եկեղեցի և սկսեց ինչ-որ բան փնտրել տերունական նստարանի տակ: Սպասավորի բացակայության ժամանակ նա համոզվեց, սր էռնեստինի աչքերը իրեն շրջապատող հասարակությունից այն կողմ էին նայում և հավանաբար փնտրում էին ինչ-որ մեկին, բայց այդ մեկը հնարավոր է Աստեղանը չլիներ, որ այդ երիտասարդ աղջկա աչքին ինքը գուցե հիսուն-վաթսուն տարեկան էր թվում, ո՞վ գիտե: Այսքան երիտասարդ, այդքան հարուստ, մի՞թե հարևան ազնվական շինականներից ոչ մեկը չէր համակրում նրան: «Մինչդեռ պատարագի ժամանակ ոչ մեկին չտեսա»:

Հենց որ կոմսի կառքը հեռացավ, Աստեղանը ձի նստեց, մի պտույտ կատարեց անտառում, խուսափում էր նրան հանդիպելուց, ուստի արագ ուղղվեց դեպի կանաչ թավուտը: Անկարագրելի էր նրա գոհունակությունը, երբ էռնեստինից առաջ հասավ կաղնու մոտ: Դեռատի աղջիկը քանի դեռ չէր հասցրել տեսնել առավոտյան ուղարկած ծաղկեփունջն ու նամակը, Աստեղանը վերցրեց դրանք և հեռացավ անտառի մեջ: Ձին կապեց ծառից ու սկսեց զբոսնել: Շատ հուզված էր Գլխում միտք ծագեց. կու՛չ եկավ ծառապատ բլրակի ամենախիտ մասում, լճակից հարյուր քայլ հեռու: Այս առանձնա-

վայրից, որ թաքցնում էր իրեն բոլոր հայացքներից, շնորհիվ անտառում գտնվող բացատի, նա կարող էր բացեիբաց տեսնել կաղնին ու լճակը: Ռրբան մեծ եղավ ուրախությունը, երբ, շատ ժամանակ շանցած, տեսավ էռնեստինի փոքրիկ մակույկը. այն սահում էր պարզկա ջրերի վրայով, կեսօրվա հովիկը մեղմորեն ճոճում էր նրան: Վճռական էր պահը. լճակի պատկերը և ինքը՝ էռնեստինը, որին քիչ առաջ տեսել էր եկեղեցում, ամբողջ գեղեցկությամբ դրոշմվեցին նրա հոգում: Կարծես այդ պահից իսկ էռնեստինը միանգամից դատվեց բոլոր կանանցից և իննթի պես սիրահարված, ապավինեց միայն նրա սիրուն: Ֆիլիպը նկատեց, թե ինչպես է նա փուլթով մոտենում ծառին, նկատեց նրա ախրությունը, երբ ծաղիկներ շտեսավ այնտեղ: Այնքան բերկրալի ու սրտաշարժ էր պահը, որ երբ էռնեստինը վազելով հեռացավ, Ֆիլիպին թվաց, թե ինքը սխալվել է ծաղկեփնջեր շփոնելու պատճառով նրա մոտ թախիժ նկատելով: Իր սիրո հաջողությունը կապում էր հետևյալ դատողության հետ. «Նավակից իջնելիս տխուր էր, և այդպիսին էր մինչև ծառին մոտենալը: Սակայն, — հուշում էր նրան հույսի բաժինը, — եկեղեցում թախծոտ չէր, բնդհակառակը, շողարձակում էր իր ողջ պայծառությամբ, դեղեցկությամբ, երիտասարդությամբ, մի փոքր հուղված էր, իսկ աչքերը հուրհրում էին ամենավառ մաքերից»:

Երբ էռնեստինը Ֆիլիպ Աստեղանի աչքից անհետացավ լճակի հակառակ ափի սոսիների ծառուղում, վերջինս դուրս եկավ պատսպարանից ամբողջովին կերպարանափոխված, կարծես նույն մարդը չլիներ: Ձին հեծավ և քառասրոփ հասավ տիկին Գաիսենի դռնակը: Երկու միտք էր զբաղեցնում ուղեղը. «Տխրեց, երբ ծառի փշակում ծաղկեփոնջ չգտավ: Այդ ախրությունը պարզապես չի՞ բխում հուսախաբ եղած փառասիրությունից»: Ավելի հավանական թվացող այս երկրորդ ենթադրությունը վերջնականապես համակեց ողջ միտքը և վերագարձրեց նրա երեսնհինգամյա մարդու բանականությունը: Շատ լրջախոհ էր: Մեծ բաղմություն էր հավաքվել տիկին Գաիսենի տանը: Երեկույթի ժամանակ վերջինս կատակով ակնարկեց նրա լրջախոհությունն ու ինքնահայեցումը.

— Չի կարողանում անցնել որևէ հայելու կողքով ու շնայել իրեն: Խորշում եմ մողայիկ երիտասարդների այդ սովորությունից: Մեծ առավելություն է ձեզ համար, որ զերծ եք դրանից: Ջանացեք ձեռք չբերել այդ սովորությունը, այլապես ձեր գլխին այնպիսի խաղ կխաղամ. հանել կտամ բոլոր հայելիները:

Ֆիլիպը խոռոված էր, շփտեր ինչպես քողարկեր շոյությունը մի երևույթի, որը, համենայն դեպս, արտահայտվում էր: Ի միջի այլոց, ճիշտ էր. նա զննում էր իրեն հայելիների մեջ. ուզում էր տեսնել ծեր էր երևում, թե՛ ոչ:

Հետևյալ օրը վերստին դարանակալեց բլրակի վրա, որի նկարագրությունն արդեն արել էնք, լճակն այստեղից շատ լավ էր երևում: Տեղավորվեց այնտեղ՝ դինվելով առաջնակարգ մի հեռադիտակով և հեռացավ ապաստարանից փակ դիշերի ն, ինչպես ասում են այդ կողմերում:

Հաջորդ օրը գիրք վերցրեց հետը, միայն թե դժվար է ասել, թե ինչի մասին էր կարդացել: Եթե գիրք չլիներ մոտը, դրա կարիքը պիտի զգար: Վերջապես, մոտ ժամը երեքին, աննկարագրելի հրճվանք ապրեց տեսնելով էոնեստինին. նա թևթևաքայլ առաջանում էր լճափի սոսիների ծառուղու կողմը, ուղղվեց դեպի մայրուղին, գլխին խալական լայնկր ծղոտե գլխարկ կար: Մոտեցավ շարաբաստիկ ծառին, ընկճված էր: Հեռադիտակի օգնությամբ Ֆիլիպը կատարելապես համոզվեց, որ ընկճված է: Տեսավ, թե ինչպես վերցրեց առավոտյան դետեղած երկու ծաղկեփնջերը, տեղավորեց թաշկինակի մեջ և կայծակի արագությամբ վազելով անհետացավ: Այս անշափ պարզ գործողությունը Ֆիլիպի սրտի հաղթանակը հասցրեց ավարտին: Էոնեստինի արարքն այնքան անմիջական էր, այնքան անսպասելի, որ Աստեղանը ժամանակ չունեցավ տեսնել նրա դեմքի արտահայտությունը. տխրություն, թե ուրախություն էր փայլում աչքերի մեջ: Ի՞նչ մտածեր այս տարօրինակ քայլի մասին: Մաղկեփնջերը ցույց կտա՞ր դայակին: Այս գեպքում էոնեստինը երեխայի պես վարված կլիներ, իսկ ինքն ավելի երեխա էր, որովհետև շատ լրջորեն էր դրադվում մի աղջնակով: «Բարեբախտաբար անունս չգիտի,— մտածեց նա,— միայն ես եմ իմ խենթություն վկան և ոչ ոք չի կարող ինձ մեղադրել»:

Ֆիլիպն անտարբեր հեռացավ պատսպարանից և մտախոհ դնաց ձին վերցնելու, որ կես վերստ հեռու մի գյուղացու տանն էր թողել: «Պետք է խոստովանեմ, որ շատ հիմարն եմ»,— մտածեց նա տիկին Դաիսենի բակում ձիուց ցած ցատկելու ժամանակ: Երբ դահլիճ մտավ դիմագծերն անշարժ էին, դարձացած ու սառած: Չէր սիրում այլևս:

Հաջորդ օրը փողկապը կապելիս Ֆիլիպն իրեն շատ ծերացած գտավ: Նախ, երեք վերստ ճանապարհ կտրելու և ինչ-որ ծառի նայելու համար թավուտում ծվարելու ոչ մի ցանկություն չուներ, բայց շէր էլ ուղում ուրիշ տեղ գնալ: «Շատ ծիծաղելի է»,— մտածում էր նա: Այո, բայց ո՞ւմ համար է ծիծաղելի: Նախ, ամենևին կարիք չկա խուսափել ճակատագրից: Նա սկսեց գեղեցիկ ոճով մի նամակ գրել և Վինգորի* պես նշեց իր անունն ու հատկությունները, կարծում էր հիշում էր այս գեղեցիկ նամակը, որը շարժանացավ ծառայելու իր նպատակին, առանց ընթերցվելու կրակի բաժին դարձավ: Ֆիլիպ Աստեզան անունը, որի մասին մեր հերոսն ամենաքիչն էր մտածում, միակ բանն էր, որ պատիվ ունեցավ նկատվելու: Չնայած իր այնքան խելամիտ դատողություններին, մեր խելացի հերոսը հազիվ էր իր սովորական թաքստարանում տեղ գրավել, երբ իր անունը այգպիսի ազդեցություն գործեց: Նա տեսավ, թե ինչպես նամակը բացելու ժամանակ էոնեստինն ուշաթափվեց: Ֆիլիպի դարձանքին շափ ու սահման չկար:

Հաջորդ օրն ստիպված էր ինքն իրեն խոստովանել, որ սիրահարված է. ապացույցը իր կատարած քայլերն էին: Ամեն օր գնում էր փոքրիկ անտառը, որտեղ շատ կենսախինդ ապրումներ էր անցկացրել: Տիկին Դաիսենը, որ շուտով Փարիզ էր վերադառնալու, Ֆիլիպից մի գրություն ստացավ. նա հայտնում էր, որ հիվանդ քեռուն այցելելու նպատակով տասնհինգ օրով հեռանում էր Դոֆինեից և գնում Բուրգոնյա: Ֆիլիպը ձիակառք նստեց, մեկ ուրիշ ճանապարհով հաջողությամբ ետ վերադարձավ և միայն մեկ օր չկարողացավ գնալ փոքրիկ անտառը: Տեղավորվեց կոմս դը Ս...-ի դղյակից երկու վերստ հեռու, Քրոսեի առանձնարաններում, տիկին Դաիսենի դղյակի հակառակ կողմը, որտեղից ամեն օր գալիս էր փոքրիկ լճի ափը: Երեսուներեք օր շարունակ եկավ այստեղ

ու շտեռավ էննեստինին, Եկեղեցում էլ չէր հանդիպում նրան, պատարապը մատուցվում էր զղջակում: Ֆիլիպը ծպտված թափանցեց մինչև նրանց զղջակը և Երկու անգամ բախտ վիճակվեց տեսնել նրան: Էննեստինի գեմքի ազնիվ ու միամիտ արտահայտությունը անհնար էր որևէ բանի հետ համեմատել: Եվ Ֆիլիպը մտածում էր. «Այսպիսի կնոջ կողքին Երբեք չեմ սպասվի»:

Աստեղանին ամենից շատ հուզում էր էննեստինի անսահման դալկությունն ու սուսնջահար տեսքը: Ռիչարդսոնի նման տասը հատոր կղբերի, Եթե ձեռնամուխ լինեի գրի առնել այն բոլոր խորհրդածությունները, որոնց մասին մի մարդ, Եթե դուրկ չէ դրացմունքից ու կյանքի փորձից, կարողանար բացատրել էննեստինի ուշաթափության ու տխրության պատճառը: Ի վերջո որոշեց ամեն ինչ Երես առ Երես լուսաբանել, դրա համար անհրաժեշտ էր զղջակ սողոսկել: Երկշտությունը, (Երեսունհինգ տարեկան հասակում էլ մարդ Երկշտ լինի) Երկար ժամանակ խոչընդոտ էր հանդիսացել նրա ճանապարհին: Իր որոշումները հնարավորին շափ կարողացավ կաշաղցնել, հենվելով բանականության վրա: Այդ ժամանակ, ոչ պատահականորեն, այլ մի երբորդ անձնավորության միջոցով, հայտարարվեց տիկին Դաիսենի մեկնումի լուրը: Ֆիլիպի ամբողջ հնարամտությունը միանգամից շքացավ. նա կարող էր այդ պահին էննեստինի սերը միայն նրա զայրույթի մեջ տեսնել: Հավանաբար Ֆիլիպն այդ զայրույթը բացատրում էր այն բանով, որ էննեստինը իր զարմանքն էր հայտնելու այդքան մեծահասակ մարդու կողմից սիրված տեսնելով իրեն: Այս պեպքում Ֆիլիպն իրեն արհամարհված պիտի զգար և այս տաժանելի զգացմունքը մոռանալու համար ստիպված պիտի լիներ դիմելու թատերական ներկայացման, նա դառնալու էր ավելի Լսամուլ ու դաժան՝ մտածելով, որ երիտասարդությունն իսպառ լքել էր իրեն:

Մի կիսա-պարոն, ինչպես ընդունված է ասել այդ կողմերում, լեռնային շրջանի քաղաքապետերից մեկը, որ Ֆիլիպի որսորդ-ընկերներից էր, համաձայնեց ծառայի անվան տակ նրան Ս... զղջակը տանել, այստեղ էլ էննեստինը ճանաչեց նրան:

էոնեստինն զգալով, որ նկատելիորեն շիկնում է, համակվեց դաժան մի գգացումով. «Հիմա կմտածի, որ առանց իրեն ճանաչելու անսահման սիրով եմ կապված նրա հետ, երեխայի պես կարհամարհի ինձ, կգնա Փարիզ, կմիանա տիկին Գաիսենին, այլևս իրեն չեմ տեսնի»։ Այս գծնի միտքը ուժ ներշնչեց նրան վեր կենալու և գնալու իր սենյակը։ Անցել էր երկու րոպե, երբ լսեց իր հարկաբաժնի նախասենյակի դռան ձայնը։ Կարծեց սպասուհին է և վեր կացավ որևէ պատրվակով նրան ետ ուղարկելու։ Երբ հասել էր սենյակի դռան մոտ, հանկարծ այն բացվեց և Ֆիլիպը նրա ոտքերի առջև ծնկաչոք ընկավ։

— Ի սեր աստծո, ներեցեր այն ամենի համար ինչ արել եմ, երկու ամիս է ընկել եմ հուսահատության գիրկը, կուղեի՞ք ինձ ընտրել որպես ամուսին։

էոնեստինի համար խիստ հաճելի պահ էր. «Ուզում է ամուսնանալ ինձ հետ,— մտածեց նա,— այլևս չպիտք է վախենամ տիկին Գաիսենից»։ Նա խիստ պատասխան էր փնտրում և որքան էլ ջանք թափեց, ոչինչ չստացվեց։ Մոռացության էին արվել հուսահատության երկու ամիսները, նա հասել էր երջանկության բարձունքին։ Սակայն այդ րոպեին լավեց նախասենյակի դռան ձայնը։ Էոնեստինը միայն այսքանը կարողացավ ասել.

— Դուք իմ պատվի հետ եք խաղում։

— Ոչինչ չասեր,— աղերսեց Ֆիլիպը դսպված ձայնով և ճարպկորեն սահեց էոնեստինի վարդագույն, գեղեցիկ անկողինն առանձնացնող միջնորմի ետևը։ Դայակն էր, շատ էր մտահոգված իր սանիկի առողջության համար, մանավանդ քիչ առաջ այնպիսի վիճակում էր տեսել նրան, որ լրջորեն անհանգստանալու առիթ ուներ։ Մեծ ջանք գործադրեց էոնեստինը այդ կնոջը հեռացնելու։ Իր սենյակում նա հնարավորություն ունեցավ համակերպվելու երջանկության զգացումի հետ և կարողացավ վերագտնել սառնասրտությունը։ Նա հրաշալի պատասխան էր պատրաստել Ֆիլիպի համար, որը դայակի գուրս գալուց հետո համարձակություն ստացավ դուրս գալու։

էոնեստինն այնքան գեղեցիկ էր սիրահարի աչքին, դեմքին այնպիսի խիստ արտահայտություն կար, որ Ֆիլիպն

առաջին իսկ բառերից համողվեց իր եղրակացությունների մեջ. մինչև այժմ ինչ երազել էր, միայն պատրանք էր եղել, սիրված չէր: Հանկարծ կերպարանափոխվեց, դարձավ հուսահատ մարդ: Այդ հուսահատությունը էոնեստինին խոցեց մինչև հոգու խորքը, այնուամենայնիվ ուժ գտավ իր մեջ նրան դուրս հրավիրելու: Միակ հիշողությունը, որ էոնեստինը պահեց այս սարօրինակ տեսակցությունից, այն էր, որ երբ Ֆիլիպն աղերսել էր իրեն թույլ տալ նրա ձեռքը խնդրելու, պատասխանել էր, որ ինչպես նրա գործերը, այնպես էլ զգացմունքները անընդհատ Փարիզ են կանչելու նրան: Ֆիլիպն այդ ժամանակ բացականչել էր, որ կյանքում իր միակ գործը էոնեստինի սրտին տիրելն է լինելու, որ նրա ոտքերն ընկած երգվում էր Դոֆինեից չհեռանալ այնքան ժամանակ, որքան նա կմնար այստեղ և երբևք չվերադառնալ այն ղղձակը, որ ապրել էր էոնեստինին ճանաչելուց առաջ:

էոնեստինը հասել էր համարյա երջանկության գագաթին: Հաջորդ օրը գնաց հսկա կազնու մոտ, նրան ուղեկցում էին դաշակն ու ծեր բուսարանը: Այնտեղ ծաղկեփունջ կար ու մի գրություն: Մեկ շաբաթ շարունակ հագիվ էր Աստեղանին հաջողվել համողել նրան իր նամակներին պատասխանելու, երբ էոնեստինն իմացավ, որ տիկին Դաիսենը Փարիզից վերադարձել է Դոֆինե: էոնեստինի սրտում խորին անհանգստությունը փոխարինեց ամեն տեսակի մտածմունքների: Հարևան գյուղի բանբասող պառավները, որոնք այս պատմության մեջ անգիտակցաբար որոշում էին էոնեստինի ճակատագիրը, վերջապես ասացին, որ տիկին Դաիսենը ղայրացած ու խանդից բորբոքված եկել է իր սիրեկանին՝ Ֆիլիպ Աստեղանին տանելու, իսկ սա, ինչպես ասում են, մնացել է այստեղ ճգնաժողովի դառնալու միտումով: Օրենքի խստություններին ընտելանալու համար քաշվել է Քրոսեի առանձնարանները: Ավելացնում էին նաև, որ տիկին Դաիսենը հուսահատ վիճակում է:

Մի քանի օր հետո էոնեստինն իմացավ, որ տիկին Դաիսենին չի հաջողվել հանդիպել Ֆիլիպին և ղայրացած վերադարձել է Փարիզ: Մինչ էոնեստինը ջանում էր համողվել այդ քաղցր իրականության մեջ, Ֆիլիպը հուսալքված էր. սիրո անսահման զգացմունքով էր լցված էոնեստինի հանդեպ և կարծում էր սերն անպատասխան է: Շատ անգամներ անդրա-

դարձավ իր կատարած քայլերին և խիստ եզրահանգման հասալ, իբր թե իր նախաձեռնումները խոցել են երիտասարդ սիրունու ինքնասիրութիւնը: Երկու անգամ որոշեց գնալ Փարիզ, երկու անգամն էլ քսան վերստ ճանապարհ անցնելուց հետո վերադարձավ իր խրճիթը, Քրոսեի ժայռերի մեջ: Հուլիսի մեջ լողալուց հետո, որի մասին այժմ խորհում էր որպէս թեթևաբարո արարք, մտածում էր հրաժեշտ տալ սիրային կյանքին և գտնում էր, որ կյանքի մնացած բոլոր հաճույքները ընդմիջտ փակված են իր առջև:

էռնեստինն սովելի երջանիկ էր. սիրված էր, սիրում էր: Սերն իշխում էր այդ հոգու մեջ, որին տեսանք յոթ տարբեր շրջանները հաջորդաբար անցնելու ճանապարհին: Այս շրջանները անտարբերութիւնը բաժանում են կրքից, իսկ այս հարցում պարզամիտը միայն մեկ փոփոխութիւն է նկատում և չի կարող էութիւնը պարզաբանել:

Ինչ վերաբերում է Ֆիլիպ Աստեղանին, նախկին ընկերուհուն կյանքի շեմին, որ կարելի է կանանց մոտ ծերութեան շրջան համարել, լքելու համար պատժում ենք՝ մատնելով նրան ամենադաժան վիճակին, դարձնելով նրան այնպիսի զոհ, որ երբևէ կարող է զգալ մարդկային հոգին: Էռնեստինը սիրեց, բայց Ֆիլիպը չկարողացավ հասնել նրան: Հաջորդ տարին էռնեստինին ամուսնացրին մի շատ հարուստ, բազմաթիվ շքանշանների տեր ասպետի՝ ծեր գեներալ-լեյտենանտի հետ:

ՄԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՇԼԻՆԹԵՐՈՒԼ (Ադոլֆ Հայնրիխ Ֆրիդրիս) (1765—1822 թթ.)— պատմաբան և գրադարանավար: Հրատարակել է քսանութնատորանոց գիրմանացիների մահախոսականներ, ուր տեղ է գտել նաև Մոցարտի կենսագրությունը—3:

«Versuch»— գերմ. փորձ:—4:

ՎԱՉՆՆՁԱՅԼ (Գեորգ Քրիստոֆ (1715—1777 թթ.)— կոմպոզիտոր, դաշնակահար, մանկավարժ և երգեհոնահար:—8:

ՇԱԽՏՆԵՐ (Յոհան Անդրեաս) (1731—1795 թթ.)— Ջալցբուրգում պայատական շեփորահար: Մոցարտի բնտանիքի բարեկամ:—9:

ԿԱՐՄԱՆՏԵԼ (Լուի Կարբոնջիս) (1717—1806 թթ.)— ֆրանսիացի նկարիչ և գրող:—11:

ՄԹԱՆՈՒԳԵՐ— նահանգի կառավարիչ կամ ղինվորական համայնքի ղեկավար: Տիտոս, որ հիմնականում արվում էր Օրանոի դուքսերին:—12:

Good libet (քվոդլիբետ)— բաղաձայն երաժշտական ստեղծագործություն կատակային բնույթի, հանրաճանաչ մեղփղիների և տերոսերի գուգակցության հիման վրա:—12:

Firma simpliciter (ֆտ.)— «կարծեցյալ միամիտ աղջիկը»:—13:

ՀԱՍՍԵ (Յոհան Ադոլֆ) (1699—1783 թթ.)— գերմանացի կոմպոզիտոր, օպերա-սերիայի մեծագույն ներկայացուցիչ:—13:

ՄԵՏԱՍՏԱՍՅՈՒՆ (1698—1782 թթ.)— իտալացի բանաստեղծ, սրտտորիաների, կանտատների և մեղոգրամաների հեղինակ, արիևտտայի հիմնադիր:—13:

ԲՈՆՆՈ (Ջուզեպպե Յոզեֆ) (1710—1788 թթ.)— իտալական ծայու մով ավստրիացի կոմպոզիտոր, օպերաների հեղինակ:—13:

ՄԱՔՏԻՆԻ (Պադրե Ջամբատտիստա) (1706—1784 թթ.)— իտալացի հոգևորական, կոմպոզիտոր և երաժշտության տեսաբան:—14:

ՅՈՄԵԼԼԻ (Նիկոլոս) (1714—1774)— իտալացի կոմպոզիտոր, գրել է օպերա-սերիաներ:—14:

ԹՈՄԱՍ ԱՆՎԵՅ (1756—1778 թթ.)— անգլիացի տաղանդավոր ջութակահար, կոմպոզիտորի որդի:—14:

ՔՈՐԻԱՍ (Մարիա Մագդալենա Մորելլի) (1727—1800 թթ.)— հրաշակված օլիմպիական Քորիլլա անվամբ, իտալացի իմպրովիզատոր երգչուհի, 1776 թ. Կապիտոլում օձվեց սրպես բանաստեղծուհի:—14:

Miserere— «Տեր, ողորմեա»։—14:

ՔՐԻՍՏՈՅՈՐԻ—Պապական տաճարի Էրզիչ։—15:

ԱՂԵՆԻՐԻ (Իրեդորթո) (1582—1652 թթ.)— իտալացի կոմպոզիտոր, հռչակավոր *Miserere*-ի հեղինակը։—15:

ԱՂԵՆԻՐԻ (Անտոնիո Քորեչի) (1489—1534 թթ.)— իտալացի նկարիչ, դիցարանական թեմաներով կապիների և Պարմի Էկեզեցու ու այլ տաճարների նկարազարդումների հեղինակ։—15:

ԲՈՔԵՐԻՆԻ (Լուիջի) (1748—1805 թթ.)— իտալացի կոմպոզիտոր, «Ստարատի», սոնատների, սիմֆոնիաների, արիոնների, կվարտետների և քվինտետների հեղինակ։—17:

Auratae Militiae eques— շքանշան, որ մինչև Մոցարտը ավստրիացի Կրածիշաններից ստացել է Քրիստոֆոր Գլյուկը։ Տրվում էր միայն ամենահռչակավոր իտալացի Կրածիշաններին։—18:

Il cavaliere filarmonico (իտ.)— Ֆիլհարմոնիայի ասպետ։—19:

Ascanio in Alba (իտ.)— «Ասկանին Ալբայում»։—19:

La finta Giardiniera— «Կարծեցյալ պարտիզպանուհին»։—19:

Il re pastore— «Հովիվ թագավորը» երկու գործողությամբ օպերա, Սանդրաչին այն անվանում է կանտատ։—19:

ԲԱՐՈՆ ՎՃՆ ԱՎԻՏՆՆ (Գոտֆրիդ) (1780—1803 թթ.)— Նիդերլանդական ծագումով ավստրիացի դիվանագետ և կոմպոզիտոր։ Հովանավորում էր Մոցարտին, Հայդին, Բեթհովենին։—22:

ԿԱՂԱՒՊՊԻ (Բալդասսարե) (1706—1785 թթ.)— իտալացի կոմպոզիտոր, կատակալին օպերայի վարպետ։ Նրեք տարի որպես պալատական կոմպոզիտոր Էզել է Պեսերբուրգում։—22:

ԿՈՒԼԻԵԼԻՄԻ (Պիետրո Ալեքսանդրո) (1728—1804 թթ.)— իտալացի օպերային Լրսոլտոյան խոշոր կոմպոզիտոր, նաև հոգևոր երաժշտության վարպետ, Էզել է Սուրբ Պետրոսի տաճարի խմբավարը։— 22:

ՍԱՐՏԻ (Զուգեպպե) (1729—1802 թթ.)— իտալացի կոմպոզիտոր և դիրիժոր։—22:

ՉԻՄԱՐՈՋՍ (Գոմենիկո) (1749—1801 թթ.)— իտալացի կոմպոզիտոր։—22:

ՊՈՐՊՈՐԱ (Նիկոլա Անտոնիո) (1686—1768 թթ.)— իտալացի կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ։ Նկարչիտանական օպերայի ամենահռչակավոր ներկայացուցիչը։—22:

ԳՈՒՐԱՆՏԵ (Յուանչեսկո) (1684—1755 թթ.)— իտալացի կոմպոզիտոր, հոգևոր երաժշտության և բազմաձայն գործիքային երաժշտության հեղինակ։—22:

ՎՆՈ (Լեոնարդո) (1694—1744 թթ.) — իտալացի կոմպոզիտոր, Էրզե-հոնահար, խմբավար և մանկավարժ։ Նկարչիտանական դպրոցի խոշորագույն ներկայացուցիչը։—22:

ԱՂԵՍՍԱՆԳՐՈ ՍԿԱՐԱՍՏԻ (Պիետրո Գասպարե) (1660—1725 թթ.)— իտալացի կոմպոզիտոր։—22:

ՎԻՆՉԵՅՈ ՄԱՐՏԻՆԻ (Վիսսենտե Մարտինի Սոլեր) (1754—1806 թթ.)—
իսպանացի կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ, հայտնի օպերա-բուֆ-
ֆաների հեղինակ։ Մառայել է Պետրբուրգում, գրել է սուսական օպերա-
ներ, հիմնվելով սուսական ժողովրդական երաժշտության վրա։—22:

Cosa rara— «Հազվագյուտ բան»։—22:

Le nozze di Figaro— «Ֆիգարոյի ամուսնությունը»։—23:

Don Giovanni— «Դոն Ժուան»։—23:

Così fan tutte— «Այսպես են անում բոլոր կանայք»։—23:

La clemenza di Tito— «Տիտուսի գթասրտությունը»։—23:

ԿԱՐԱՆԻՍ (Ժորժ) (1757—1808 թթ.)— ֆրանսիացի բժիշկ, իդեոլոգ-
ների խմբակցության (ակադեմիայի) անդամ։—23:

Խոսքը վերաբերում է «Կախարդական սրինգին»։—23:

ՄԵՆԳ (Անտոն Ռաֆայել) (1728—1779 թթ.)— նեոկլասիցիստական
ուղղությանը հարող գերմանացի նկարիչ, հիմնականում ապրել է Հոտ-
մում։—37:

ԳԻԳ (Գիլո Ռինի-Լե) (1575—1642 թթ.)— իտալացի նկարիչ։— 37:

ԿԱՐԼՈ ՄԱՐԱՍՏԻ (1625—1713 թթ.)— իտալացի նկարիչ, նկարում
է հիմնականում կրոնական թեմաներ։—37:

ՏԱՍՍՈ (Տորբվատտո) (1544—1595 թթ.)— ուշ վերածննդի իտալացի
քանաստեղծ, գլխավոր դործը՝ «Ազատագրված Երուսաղեմը», որով փոր-
ձել է աղգային էպոս ստեղծել։—36:

ԲԵՆԴԱ (Գեորգ Անտոն) (1722—1795 թթ.)— չեխ կոմպոզիտոր,
ստեղծել է գերմանական զիզզպիլներ և մեյրոդրամաներ։—37:

Վանինա Վանինի

ՊԱՊԻ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԿԱՐԲՈՆԱՐԻՆԵՐԻ ՎԵՐՋԻՆ
ՎԷՆՏԱՅԻ ՄԱՍԻՆ— Վենետան դադտնի կազմակերպություն էր, կազմված
կարբոնարիններից («ածխագործներ»), 19-րդ դարի սկզբին Իտալիայում,
որի նպատակն էր ֆրանսիական, հետագայում ավստրիական, բռնապե-
տությունից ազատել Իտալիան, ոչնչացնել այնտեղ բացարձակ ֆեոդալա-
կան ուժիմը և հասնել քաղաքական միավորման։ «Ածխագործներ» անու-
նը առաջացել է այն պատճառով, որ այդ կազմակերպության անդամ-
ները կառավարությունից հաճախ թաքնվում էին ածխագործների անտառա-
յին, լեռնային հյուղակներում։ Կարբոնարիները հատկապես սուր հայա-
ծանքների ենթարկվեցին Հոտմի Պասիի իշխանության օրոք, միջին Իտա-
լիայում 1870-ական թվականներից։—41:

ԳԵՐՄԱՆԱՅԻ ԱՆԿԱՆ ԻՇԽԱՆՆԻՄ— 19-րդ դարի առաջին կեսին Գեր-
մանիան բաժանված էր բազմաթիվ մանր պետությունների Յուրաբան-
չյուն իրենից ներկայացնում էր անկախ պետություն։—42:

ՍԵՆՏ-ԱՆՓ ԲԵՐԳ— «Սուրբ հրեշտակ» ամրոցը Հոտմի պետական
բանտն էր. միացած էր Վատիկանի պալատին։—42:

ՍՈՒՎԱ (Լուկիուս Կորնելիուս) (138—78 մթա.)— հռոմեացի զիկ-
առատոր։ Հաղթանակ է տարել Միթրիդատես 4-րդ թագավորի դեմ, եղել

Ք Հոտմի և Իտալիայի տիրակալ, Հոտմեական կարգերի մեջ բարեփոխու-
թյուններ է մտցրել, բայց վախենալով տապալվելուց՝ հրաժարվել է իշ-
խանությունից 79 թ. (մթա.) և հայտարարել, որ հոտմեացիները ար-
ժանի չեն ղեկավարվելու—43:

ԵՐԲ ԿԵՆԵՐԱԿ ԲՈՆԱՊԱՐՏԸ ՀԵՄԱՆՈՒՄ ԷՐ ԲՐԵՇԻԱՅԻՑ — Բրեշին
Իտալիայի հյուսիսում գտնվող փոքրիկ քաղաք է, որ ղավթել էին ֆրան-
սիացիները Նապոլեոնի իտալական արշավանքի ժամանակ (1796—
1797 թթ.)—50:

ՄՅՈՒՐԱՏԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ—Նապոլեոնի զորքի մարշալ Մյուրատը 1815
թվականի մարտին Նապոլեոնից ստանալով նեապոլիտանական արքայի
տիտղոս (1808 թ.), էլբա կղզուց կայսրի վերադարձից հետո հանդես
եկավ ազսարիացիների դեմ, առաջ քաշեց Իտալիայի անկախության պայ-
քարի յոդունդը: Նրա ելույթը անհաջողություն կրեց, Մյուրատի բանակը
չախջախվեց, իսկ ինքը փախավ Կորսիկա:—54:

ԿՈՐՅՈՒ—կղզի Հոնիական ծովում:—54:

ՊՐԵԼԱՏ—կաթոլիկ եկեղեցու ամենաբարձր հոգևոր կոչումներից մե-
կը:—60:

Մինա դը Վանգել

ԲՅՈՆԵԳՉԲԵՐԿՈՒՄ՝ ՓԷԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԿ-
ՐՈՒՄ—Քյոնիգրեքը արևելյան Պրուսիայի համալսարանական քաղաք
էր: Այստեղ է ծնվել փիլիսոփա Կանտոր և ոտմանտիկ գրող Հոֆմանը:—71:

1814 ԹՎԱԿԱՆԵՐ ԶՐԱՆՈՒԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ—Ռուսաստանում Նա-
պոլեոնի բանակի ջախջախումից հետո 1814 թվականին պատերազմական
գործողությունները տեղափոխվեցին Ֆրանսիա:—71:

ԱՎԿՈՒՍ ԱՅՈՆՏԵՆ (1758—1881 թթ.)—գերմանացի վիպասան,
բազմաթիվ սենտիմենտալ, բարոյադաստիարակչական վեպերի հեղինակ:—
72:

ԱԼԲԱՆԻ (Ֆրանչեսկո) (1578—1660 թթ.)—նկարիչ, բոլոնիական դրպ-
քոցի ներկայացուցիչ, ստեղծել է հովվերգական և դիցաբանական թեմա-
տներով կտավներ:—72:

ԲԱՆԻՆԲ—Ֆրանսիայի հյուսիս-արևմտյան մասում գտնվող առող-
ջարան:—74:

ԳԵԿԱՐՏ (ԻԼԵԵ) (1596—1650 թթ.)—ֆրանսիացի գիտնական, փի-
լիսոփա, մաթեմատիկոս, ֆիզիկոս:—75:

ՍՊԻՆՈՉԱ (Բարուխ) (1632—1677 թթ.)—հոլանդացի փիլիսոփա մա-
տերիալիստ, աթեիստ:—75:

ՅԵԿՏԵ (Յոհան Գոտլիբ) (1762—1814 թթ.)—գերմանացի փիլիսոփա
ֆիդելիստ, մանկավարժ, հասարակական գործիչ:—75:

ԿԱՆՏ (Էմանուել) (1724—1804 թթ.)—հայտնի գերմանացի փիլի-
սոփա իդեալիստ: Կանտի աշխատությունները գրված են բարդ ու խորթին
էզոպիկով:—75:

ՔՈՄՓԻՆՆ— Փարիզի մտտ գտնվող քաղաք, որտեղ Ֆրանսիացի թաղավորները նրա շրջակա անտառներում մեծ որսեր էին կազմակերպում:— 76:

ՊԵՐՐՅՈՆԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԸ— Քուրիենից ոչ հետո գտնվող գյուղ: Հայտնի է 11—13-րդ դարերում կառուցված միջնադարյան զոլակով: Վերականգնվել է 1862 թվականին:—76:

ՊԵՆԱՍԻԻ—Ֆրանսիայի հյուսիսում գտնվող գավառ: Ամենք նրա մեծ քաղաքներից է:—77:

ՊԷ ԼՈՂՆՆ (Արման Լուի) (1747—1793 թթ.)— հերցոգ, ֆրանսիական հեղափոխության ժամանակ ակտիվ մասնակցություն է ցուցաբերել, մեղադրվել է դավաճանության մեջ և մահապատժի ենթարկվել: Հռչակված էր սրամտությամբ, նրբաճաշակ շարժուձևերով և անթիվ սիրային արկածներով: 1822 թվականին լույս են տեսել նրա հիշողությունները:—77:

ՊԷ ՏԻԼԻ (ժակ-Պիեռ) (Ալեքսանդր) (1764—1816 թթ.)— ֆրանսիացի սղնջազարմ կոմս: 1828 թվականին հրատարակվել է նրա «Հիշողություններ 18-րդ դարի վերջին բարբերի մասին», որտեղ նկարագրում է պայտական ուրախ ու թեթև կյանքը:—77:

ՇԱՐՄԵՏ— ֆրանսիական գյուղակ, որտեղ Լրիտասարդ Ռուսոն տիրին զբնակարանի զոլակում ապրեց մի քանի տարի:—98:

ԹՈՐԵ ԴԵՒ ԳՐԵԿՈ— քաղաք Վեգուվի ստորոտին:

Սնդուկը և ոգին

ՆԱՊՈԼԵՈՆԻ ԳԵՄ ՄՂՎՈՂ ՎԵՀՍՊՈՆՄ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ— 1808—1813 թթ. իսպանական աղալային ազատագրական շարժում, որ մղվում էր նապոլեոնի գեմ:

ԳԵՐՎԱ— կոչվում էին իսպանական պարտիզանական այն ջոկատները, որոնք Իսպանիայում վճռական դեր էին խաղում նապոլեոնի մղած պատերազմի ժամանակ:—113:

ՅԵՐԳԻՆԱՆԻ— Յերգինանդ 7-րդ (1784—1833 թթ.)—Իսպանիայի թագավորը, նապոլեոնը գերի վերցրեց ու տարավ Ֆրանսիա: Իսպանիա վերադառնալուց հետո վարեց ծայրահեղ ուսակցիոն քաղաքականություն:—113:

ԿԱՊՈՒՅԻՆ— կաթոլիկ վանականների ուխտի անգամ, բնկերությունը հիմնադրվել է 1526 թվականին:—113:

ԿՈՐՏԵՄՆԵՐԻ ՕՐՈՓ— 1820—1823 թթ. Իսպանիայում տեղի ունեցավ բուրժուական հեղափոխություն, 1820 թ. նորից հիմնվեցին կորտեսներ (պառլամենտ):—114:

ԳՐՆ ԿԱՌԼՈՍ ՔՈՒԱՐՏՈ— Կառլոս 4-րդ Իսպանիայի թագավորը:—115:

ՀԻՆ ՔՐԻՍՏՈՆՅԱ— այդպես էին կոչում Իսպանիայում այն մարդկանց, որոնք արաբական տիրապետության օրոք մուսուլմանական կրոնը չընդունեցին և շամուսնացան մուսուլմանների հետ:—116:

ՀԵՂԱՓՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ— նկատի ունի 1820—1823 թթ. իսպանական հեղափոխությունը:—116:

ԳԵԼ ՊԵԼԱՐ ԿՈՒՅՍ ՄՍՐԻՍՄ— Սարազոսայի տաճարում արծաթե պատվանդանին կանգնած Աստվածածնի արձան—116:

ՀԻՆ ԿԱՍՏԻԼԻՍ— Իսպանիայի կենտրոնում գտնվող ֆեոդալական թագավորություն—117:

Էոնեափին

ԳՐԱԿ—Ալյայան լեռներից իջնող հորձանք, որ հասնում է մինչև Գրեշոբ:

ԳՈՅԻՆԵ— Ֆրանսիայի նախկին անկախ դավառներից մեկը—138:

ԼԵՒԻՊԵՐ (Ֆրանսուա) (1543—1626 թթ.)— ֆրանսիացի պետական գործիչ, կրոնական պատերազմի ժամանակ պայքարել է բողոքականների հետ, Հենրիխ 4-րդի կողմից նշանակվել է Գոֆինների փոխարքա—144:

ԿԱՐԼՈ ԳՈՒՈՒ (1616—1686 թթ.)— իտալացի նկարիչ, հիմնականում ատելիձեղ է մազոննաների և կաթոլիկ սրբերի կերպարները—149:

ՍԵՏ-ՈՒՐԵՐ— կրոնական տոն, Սուրբ Ուրբը հովանավորում է սրտորդներին, տոնում են նոյեմբերի 3-ին—149:

ՓԵՔԻՔՈ (Կլոդ Բերնար) (1772—1825 թթ.)— ֆրանսիացի գրականագետ, «Ֆրանսիայի պատմության հուշերի ժողովածու» գործի հեղինակը—154:

ՄՈՆԻՏՈՐ—պետական պաշտոնական լրագիր, հիմնված 1789 թ. մայիսին—156:

ԳԱԼ (Ֆրանց Իոսիֆ) (1758—1828 թթ.)— ավստրիացի բժիշկ, անատոմ, հոգեբանական գիտությունների ներկայացուցիչ, որը կապ է գտնում մարդկության հոգեբանական ունակությունների և գանդի վերին մասի կազմության հետ— 159:

ԼԻՆԳՈՐ— իսպանական գրականության մեջ և ժողովրդական բանահյուսությունում սիրահարված երիտասարդ, որը գիշերները սիրած աղջկա պատուհանի տակ կիթառով սերենազներ է երգում—163:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մոցարտի կյանքը	• • • • • • • •	3
Վանինա Վանինի	• • • • • • • •	41
Միճա դը Վանգել	• • • • • • • •	71
Սնդուկը և ոգին	• • • • • • • •	113
Էռնեստին կամ սիրո ծագումը	• • • • • • • •	138
Ծանոթագրություններ	• • • • • • • •	168

Մ Տ Ե Ն Դ Ա Լ

ՄՈՅԱՐՏԻ ԿՅԱՆՔԸ, ՉՈՐՍ ԵՌՎԵԼ

С Т Е Н Д А Л Ь

Жизнь Моцарта, четыре новеллы

(На армянском языке)

Издательство «Советакан ցրոք»

Ереван — 1982

Խմբագիր՝ Գ. Գ. Խաչատրյան

Նկարիչ՝ Ֆ. Յ. Աֆրիկյան

Պեղ. խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան

Տեխ. խմբագիր՝ Ա. Վ. Հովհաննիսյան

Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Պ. Հակոբյան

ИБ № 3415

Հանձնված է շարվածքի 12.03.1982 թ.: Ստորագրված է տպագրության
19.04.1982 թ.: Ծորմատ $84 \times 108 \frac{1}{32}$: Թուղթ՝ տպագր. № 2: Տառատեսակ
«Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր: 9,24 պայմ. տպ. մամ., 7,9
հրատ. մամ.: Տպարանակ 20.000: Պատվեր 427: Գինը՝ 65 կոպ.:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Советакан грох», Ереван—9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի
պետական կոմիտեի № 6 տպարան, Երևան, Թումանյան 23/1:

Типография № 6, Госкомитета по делам издательств,
полиграфии и книжной торговли Арм. ССР.

Ереван, ул. Туманяна, 23/1.

65 409.

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»